8-13
Ս 79

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

## ԳՐՈՑ ԺՈՂՈՎՈՂԻՆ

891.99-13

Արարեալ և շարադրեալ ՚ի Մխիթա-
րայ Վարդապետէ Սեբաստացւոյ
Աբբայ Հայր կոչեցելոյ:

Ըստ մտաց և իմացմանց մեկնութեանց Հարցն սրբոց և
Վարդապետաց Եկեղեցւոյ. Եւ ծանօթութեամբ Մեկնչաց
համաձայնութեամբ սրբ գրոց: Այլև վերահայեցմամբ Եբ-
րայականին բուն նշանակութեան, որ երևի ՚ի թարգ-
մանութիւնս բազմաց լեզուաց, Եօթանասնից Լատինա-
ցւոց, Յունաց, Ասորւոց, Արաբացւոց, և
Քաղդէացւոց:

Եւ տպագրութեամբ ՚ի լոյս ածեցեալ ՚ի յօ-
գուտ մանկանց Եկեղեցւոյ:

Ի Հայրապետութեան Տեառն Աբրահամու Հայոց
Կաթողիկոսի:

Յամի Տեառն. 1736: Ապրիլ. 16.

Ի ՎԵՆԵՏԻԿ.
Ի տպարանի Անտոնի Բօռթօլի:
Հրամանաւ Մեծաւորաց:

66

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ·

Առ բանս մեկնութեանց գրոց Ժողովողին ։

ՆԱխապետական հեղինակ դրոյս այսորիկ է Հոգին սբ ․ որ ներշնչեալ 'ի Սողոմոն, լեզու նորին եղեւ ո՛պ զգրիչ Հոգւոյն սրբոյ, որով ասացան բանք այսորիկ մատենի, եւ գրեցան ․ ըստորում եւ այլոց մարգարէից եղեւ ։ Ո՛պ եւ յառաջնում տան բացայայտի, ուր ասի ․ թէ բանք այսորիկ մատենի են բանք Սողոմոնի որդւոյ Դաւթի ։ Նա՛ Սողոմոն զբան մատենիս այսորիկ ո՛չ միայն քարոզեաց եւ ուսոյց ժողովրդեան, այլ նաեւ շարադրեաց, եւ գրեաց ․ ո՛պ զի նաեւ առ հեռակայս, եւ առ ա՛մ ազգս տարածեսցի ։

Առաջադրեալն այսորիկ մատենի է ցուցանել զունայնութի ամենից իրակութեց մարմնականաց՝ եւ զգայականաց, որք առ վերջին վախճան երանական կենաց ո՛չ վերաբերին ․ ո՛պ զի այսու մարդիք 'ի սիրոյ զգալեաց ճողոպրեսցեն՝ առ խոկումն եւ առ սէր իմանալեաց՝ եւ հոգեւորաց, եւ վերջնոյ վախճանի վերածիցին, եւ զա՛մ

մարմնաւորաց զկերպարանս իւրոյ ախտա_ մոյ՝ և առանց յօժարութեան յինքեանս տարեալ, զհամայնս զգայնական բարեխառ նութեան, և իւրոյ զոչնչականս 'ի գործ ածիցեն. և ամենահաւասարմամբ կրից՝ և մո_ լութեց բնութեան որք ձգեն 'ի յայս, զար գելուն բարեաց համահաւաքիցեն։ Այլ վերջապէս միշտ 'ի փառս նմա, և սրահ_ մանք պատուիրանաց նորին վարելով աներկծուածոյքն՝ զաներկծօղն նոյնն փա ռաւորիցեն, և այնու զճշմարիտ հան_ գիստ հոգւոյ՝ և մարմնոյ, նաև զառողջ ութիւն սրտի առատանայցեն։

Այլ թէպէտ բազումք մարգարէք խօսե_ ցան զկենաց բարեաց, և զպարզութեց մոլութեց, և զունայնութե իրաց մարմնա կանաց. բայց 'ի մէջ ամենից Հոգին սբ առատապէս եհեղ 'ի միտս սաղոմոնի խօ սել զունայնութեց ամենից վայելչութեց և փափկութեց աշխարհի. որպէս զի մարգիք 'ի նմանէ (որ զամ վայելչուն Ձեռ լիա_ պէս ունեցաւ յամենից կողմանց) լսելով զունայնութեանց ամենից վայելչութեց՝ դիւրապէս հաւատայցեն իւրոյ փորձի գիտողի։ Վասնզի սաղոմոն գրեթէ ձե_ ռամբ շօշափելով զամ վայելչութի, եր հմուտ, թէ զինչ իցէ այն. և մինչ նա սէր զօր ունայնութի, ուրեմն նմ որ պարտի գնել 'ի միտ՝ թէ իցէ այնպէս։ Ուստի եթէ մարգարէն Սողոմոն ասիցէր

զայս

զայս ամ, զոր ասաց սաղմոսն, կարէին ոմանք յիմարք ասել՝ թէ նա Հոմերէ ուխարայց էր, և ոչ երբեք վայելեաւ ըզ փափկութի և զյաջողութի, կամ զփարթամութիւն ծխ. և մի այնորիկ ասէ թէ սուտք են և ունայնք ։ Բայց սաղմոսնի՝ որ զամ վայելեաց և ունեցաւ, ոչ կարեն ասել զայս. քանզի որ խօսի՝ փորձ է ըն ամի. և բաց 'ի ներքնակմանէ Հոգւոյն սրբ նաև փորձիւ գիտէ զայն՝ զոր խօսի ։ և ոչ ըն ամի փորձ, փորձառուորաց օգնական լինի ։

Արդ գրոց սաղմոսնի եղև յոյժ վայելուչ. քանզի 'ի ձեռն գրոց առակաց ուսուցանէ զմանկունս՝ առաջադրելով նմա զնախկին և զՀաստատուն սկզբունս բարոյականութե ; և Համեստ վարուց և բարուց ։ Իսկ 'ի ձեռն գրոյս այսորիկ՝ որ կոչի Ժողովող՝ Հմտացուցանէ և ուսուցանէ ըզ պատանիս ոչ զղարդացելս, և զմի զունայնութե վայելչութե ծիս ընձեռելով ջանայ զնոսին յետս քարշելով յայնց՝ առ Հոգևորս և առ երկնայինս՝ որք են կայուն և մնացական բարիք՝ վերածել ։ Իսկ 'ի ձեռն երգոց երգոյն, ուսուցանէ զարս կատարեալս, և ոչ թէ 'ի զարգացմանէ առ կատարելութի իցեն ժամանեալք, 'ի ձեռն սիրոյ ընդ Ա.Յ միաւորել ։ Աստի գիրքն առակաց է սկսանողաց. Ժողովողն է զարգացողաց. և երգերգոյն կատարելոց ։

Իսկ գիրքն իմաստութեան 'ի կեանս Հայեցո֊
ղականութե ժամանեցելոց • և կամ պահո֊
ղական ամենեցունց ։

Նախապետական մասունք մատենիս են
երկու • Քզի 'իսկզբանէ մինչև 'ի եօթն
գլուխն՝ որ է արդար կէսն բանից մատե֊
նիս , խօսի զունայնութէ ամենից իրաց՝
որք են 'ի ներքոյ արեգական , 'ի ձեռն
պէսպէս բանից ։ Իսկ անտի մինչև 'ի վախ
ճան գրոյս ցուցանէ զՃշմարիտ երջանկու
թին և զճարին մարդոյն կայանալ 'ի յա
ռաքինութե և յածպաշտութե և յերկիւղի
Այն ։



Աթոռ և յարկ յոյժ պանծալի, քարոզողին Սողոմոնի·
Ժողովարան Իսրայէլի, ամենին դպրոց մին երկնելի·
ուր խոր իմաց նուրբ առակօք՝ զուգայնութեանց վճռելոյ:

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ

## Դժուարիմաց բանից և նկարագրական իմացուածոց գրոց Ժողովողին:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋՆՈՐԴ

ՅԱյսմիկ առաջնում գլխոյ՝ դնէ որպէս ըզ-
բնաբան բոլորի մատենին, նամ քարոզութեն
ըզայս բան՝ Ունայնութի ունայնութեց՝ ասաց
Ժողովողն, և այլն: Նա ցուցանէ զայն,
՝Նախ՝ 'ի շրջաբերութե երկնից, և շրջանաւորաց․ քան
զի բնաձայն՝ թէ արեգական, թէ հողմի, թէ գետոց, և
այլք՝ գնան՝ և 'ի շրջանս իւրեանց դառնան․ ուստի
և ոչ գոյ նոր ինչ 'ի ներքոյ արեգական: Երկրորդ՝
ցուցանէ զնոյն 'ի 13․ տան, 'ի գիտութեց և 'ի ջա-
նիցն գիտելոյ շնորհաբանութեց իւրոյ, որով ինքն ձանա

ջէաց

ընաց զունայնութիւն ամենից իրաց. և ցուցանէ նաև զգիտութիւն գոլ ունայնութիւն և տառապանս, եթէ ոչ լինիցի վերաբերեցեալ առ ճանաչումն ունայնութեան վայելչութեց աշխարհի, և առ երկնաւորն այ, և 'ի փառս նորա։ և մինչ ոչ վերաբերցի առ ած, որչափ յաւելեալ լիցի ոք 'ի գիտութեան՝ այնչափ յաւելեալ լինի 'ի ցաւս։

※ ԲԱՆ։ ※

ԲԱՆՔ ԺՈՂՈՎՈՂԻ ՈՐԴՒՈՅ Դաւթի՝ Սողոմոնի Արքայի Իսրայէլի յԵրուսաղէմ, Եկղեսիաստէս։

※ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ։ ※

Այսինքն, հետևեալ բանքս՝ են բանք և վճիռք ժողովողին, որ է որդի դաւթի. և կոչի սողոմոն. և է արքայ իէլի յեէմ։ Եւ բառս՝ եկղեսիաստէս, որ դնի 'ի վերջն, է կրկնումն առաջնոյ բառին, որ եղաւ՝ ժողովող. զի եկղեսիաստէս՝ թարգմանի ժողովող։ Եւ այս անունն՝ ժողովող՝ կմ եկղեսիաստէս՝ առատորեցաւ սողոմոնի վն երից։

Նախ՝ զի 'ի տխալ քնի զցրուեալ որդիսն իէլի 'ի զանազան վայրս անգիտութե օրինաց, և զվարատեալ ոչխարս տանն յակոբայ 'ի ծանօթութեց իրաւանց, և արդարութե՝ վերաժողովէր առ ինքն 'ի համա

լսա

լսարանի միում, զոր շինեալ էր առ այս վախճան. և անդէն ուսուցանէր նմա, և քարոզէր. և պարզ բանիւք և պէսպէս առակօք առաջի աչաց ունկնդրողացն դընէր՝ թէ որպէս պարտէին վարել զկեանս, զի վերջնոյ վախճանին իւրեանց՝ առ որ ստեղծեցեալ քէին, վերաժամանել կարիցէին :

Երկրորդ՝ կոչեցաւ ժողովող. վասն զի 'ի ձեռն աստուածատուր իմաստութեան զոր ունէր, զընթացս կենաց մարդկան, և զնմին գործողութիւնս նոցին, որք 'ի ձեռն բազմազանից վախճանաց ցրուեալք և փեռեկտեալք էին՝ համաժողովէր 'ի միութիւն վախճանի : Վասն զի անկարգացեալ անձն և հեռացեալն յիրաւանց, միշտ զընթացս իւր և զգործողութիւնս ունի ցրուեալս. վասն զի կամի հեշտանալ ըստ մարմնոյ, և համանգամայն կամի զի մի պատժիցի ըստ հոգւոյ. կամի հետևիլ ցանկութեան սրտին, և առնել զոր անօրինէ ինքեան ապականել բնութիւն իւր, և համանգամայն կամի զի մի ունիցի ընդդէմ ինքեան վրէժխնդիր զԱստուած. ըստ այսմ և 'ի յայլս բնաւս գործողութիւնս իւր՝ այլ անկարգ և անհրահանգ զերկուս ներհական վախճանս կալեալ՝ փեռեկտէ զիւր ինքն և ցրուէ. և սողոմոն 'ի ձեռն բանից իւրոց զայսպիսիս՝ որք զինքեանս փեռեկտեալս ունէին, համաժողովէր : Վարձեալ մարդիք մերթ զարծաթն ո՛չ զվերջին վախճան սիրելով, մերթ ըզ-

ցան

ցանկութեան մարմնոյ, և մերթ զփառս՝ նաև այսպիսեօք բաղձանօք և տենչանօք բաժանեցեալք և ցրուեցեալքէին. և Սողոմոն կամենաւորելով զբաղձանս նոցին՝ համաժողովէր զամ՝ իղձս և զտենչս նոցին առ միութեան վերջնոյ վախճանին. ուսուցանելով նոցա զոչ լինել անցաւոր սիրելեաց ինքեան և ոչ երբեք տենչալ՝ եթէ ոչ այնց միայն որք վերաբերին առ վերջին վախճանն, որ է Աստուած: Արդ՝ մինչ այսպիսաբար իւրաքանչիւրոք լինի ժողովեցեալ՝ի մի՝ միութեան վախճանի, հետևաբար նաև հաստատութին որ յայնպիսեաց անձանց բաղկանայ՝ ստանայ զկատարեալ միութի. և սոյն իսկապէս ժողովեցեալ՝ի մի: վասնզի այնպիսաբար համահաճաքեցեալքն, որքանոյ բազմութե և իցեն՝ իւրաքանչիւրն ունելով զմի և զնոյն բարի վախճան, միութ վախճանին կացուցանեն զմի ժողովուրդ ոք և ընտրեալ. և Սողոմոն առ այս ջանայր խրատել զամենեսեան, զի կացուցանիցէր զմի ժողովուրդ ոք և ընտրեալ. զոր միայն Ճշմարիտ Սողոմոնն, Յիսուս Քրիստոս Տէրն մեր կացոյց, գոլով ինքն իմաստութի, ճանապարհ՝ ճշմարտութի, և կեանք: և Սողոմոն թէպէտ կամեցաւ, բայց ոչ կարաց. զի միայն իմաստուն էր՝ բայց ոչ իմաստութի. նաև ոչ էր ճանապարհ. քանզի զոր ուսուցանէր՝ զնոյնն յինքեան և՝ի գործս իւր լիապէս ոչ ցուցանէր:

Իր

Նորորդ՝ ասի Ժողովող. զի ամ իմաստք բանից վերաբերեալք առ բարի կենս մարդկան, որովք կարգաւորին և կացուցանին մարդիկ 'ի գոյն բարւոյն բարոյականի, և 'ի գոյն բարւոյն քաղաքականի, յաստուածուստ ներշնչեալ համաժողովեցան 'ի միտս սողոմոնի, և անտի ողջ 'ի գետոյ մեծէ տարածեալ իմաստութի և գիտութի բարոյական 'ի նոսին՝ որք ըղձակերտէին զբարին վերաբերեցեալ առ կենսն երանաւէտն: Եւ առ այս ասէ սիրաք (47. 16) զնմանէ. Լցար իբրև գետ իմաստութբ. զի ամ իմաստութք որք էին առ բարին բարոյականի գոլոց մարդկանց՝ համաժողովեցան 'ի միտս քո, և լցեալ եղեր իբրև զգետ.

և այլն:

2: Ունայնութիւն ունայնութեանց ասաց Ժողովողն, ունայնութիւն ունայնութեանց, ամ ինչ ընդունայն է:

Այսինքն. Ժողովողն ասաց զայս, թէ ամենայն ինչ՝ որ է ընդ արեգակամբ, և անցաւոր, մինչ ոչ վերաբերի առ վերջին վախճանն, որ է երանութիւն, է ունայն. և այս ոչ միայն պարզապէս ունայն, այլ ունայնից ունայն, զի կարի ունայն: քանզի ողջ եթէ ասիցէ ոք վ ուրուք՝ թէ է վատթարաց վատթար՝ իմանի ասել, թէ է կարի վատթար. այնպէս և աստէն պարտ է իմանալ: Դարձեալ՝ ասի ունայնութի ունայնութեց. վ զի սէր արծաթոյն է ու-

նայն

նայն . սէր փառացն , և սէր հեշտութեանց
և այլք իւրաքանչիւրք իրք անցաւորք են
ունայնք . ուրեմն մինչ յայսքանեաց յու_
նայնութեանց համաժողովէք . ասի երկականա
պէս ունայնութի , առ 'ի բացատրել զնոյն՝
յարի նմա և այս , ունայնութեանց . և ասի
ունայնութի ունայնութեանց . զոր օրինակ , 'ի
հաւաքելն զբազում քարինս 'ի մի կոյտ , ա
սեմք զայն գոլ քարակոյտ . և յետոյ առ 'ի
բացատրել զնոյն՝ ասեմք քարակոյտ քա
րանց . այսպէս ևս խմն զասելն ունայնութի
ունայնութեանց . և այս Բ երկրորդական մեկ
նութե : Բայց թէ վն էր ունայնս կոչէ
զամ որ է ընդ արեգակամբ , լուր . զի որ
որ զբազում տիկս գինւոյ փքով միայն լը
ցեալս կուտիցէ 'ի մի վայր , և զայնս գի_
նեաւ լցեալս ասիցէ , ասէ ստաբար . այս
պէս և աշխարհս այս՝ որ զմեծութի , զփառս
զհեշտութի , զփարթամութի , և զայլս նմանս
անցաւորս և ունայնս՝ ասէ գոլ մեծութի
կամ փառք . և հետևաբար զմայլեցու_
ցիչ կամ զովացուցիչ բաղձանաց , ասէ
ստաբար : Վասն այնորիկ ամենեքենք 'ի ձեռն
անցաւորութե՝ ունայնացեալք և պակա
սեալք են 'ի մշտնջենաւորութե . 'ի ձեռն
փոփոխականութե՝ զրկեցեալք 'ի կայունու
թենէ . և 'ի ձեռն խաբէութե , մերժեցեալք
'ի ճշմարտութե : քանզի միշտ խաբեն ըզ
մարդիկ խոստանալով նոցա թէ յագեցու_
ցանեն զբաղձանս . և պակասին 'ի խոստ_
մանց

մանց՝ մինչ ոչ երբէք յագեցուցանեն ։ Նաւ ոչ միայն սոքին, այլ նաև կեանն մեր և առողջութի, կամ՝ հանգիստ և այլք նմանք են ունայնք. զի պակասին միշտ յայնմանէ, որ 'ի կայունութենէ՝ զոր պար_տէին ունիլ. և այս է օրինակի անօթոյ ջրոյ որ ասի ունայն՝ մինչ պակասի 'ի ջրոյն զոր պարտէր ունիլ ։ Նաւ այս ցուցանի. զի կեանն այն որ ոչ ունի զկայունութի, այլ գոլն իւր 'ի յանցաւորութե և 'ի պակասման կայանայ, ոչ է իսկական կեան. զի դատարկ է 'ի կայունութենէն՝ զոր պար_տէր ունիլ. իսկ կեանն մեր է այսպիսի. ուրեմն կեանն մեր ոչ է ճշմարիտ և լի կեան է արեգակամբ. այլ սուտ և ունայն. և է նման ամ ինչ որով վարիմք և կամ զորս վայելեմք, ոչ են այնոքիկ՝ որոց անուամբն անուանակոչին. որ ոչ ուրախութին է ճշմարիտ ուրախութի, և ոչ սուգն ճշմարիտ սուգ. ոչ հանգիստն է ճշմարիտ, և ոչ ցաւն. ոչ մեծութի, և ոչ աղքատութի. և ոչ այլք բնաւք որք են 'ի կարգի սոցին ։ քանզի միայն արտաքին ձայնիւ կոչին այնպիսիք. և 'ի ներքուստ ոչ ունին զայնոսիկ ։ ուստի են ունայնք 'ի նշանակութենէց անուանց իւրեանց ։ Բայց այսոքիկ ամենեքեանք ասացեալք 'ի հանդերձեալ կեանն՝ ունին 'ի ներքս իւրեանց զայնոսիկ, զորս արտաքուստ նշանակեն. վասն անդէն կեանն՝ է ճշմարիտ կեան, զո

րով

րով կայուն և մշտնջենաւոր . և հետևաբ՟ր
հանգիստն ճշմարիտ հանգիստ . և ցաւն
կամ՝ տանջանքն իսկական ցաւ . ըստ այսմ և
այլք բնաւք որք հետևին այնպիսւոյ կենի :
Նաւ աստ գիտելի է . զի թէպէտ ոմ՟ ցու
ցաւ , ամ՟ ինչ որ է 'ի ներքոյ արեգական՝
ոչ ունի զկայունութի՟ , և մ՟ այնորիկ ու
նայն . սակայն մ՟ առն բարեպաշտի , որ
զկեանսն , և զա՟մ գործողութիս և զկիրս իւր
շարակարգեալ է 'ի փառս ա՟յ՝ ոչ է ունայն .
վ՟զի այնպիսին ոչ երբէք կամի . եթէ ոչ
զայն՝ որք ը՟ պատուիրանացն ա՟յ վերա-
բերին առ ա՟ծ : և այսպէս թէ կեանսն , և
թէ ա՟մ գործողութիք , և կիրք իւրք ոչ են
ունայնք . այլ լիք են փառօքն ա՟յ , զի են 'ի
փառս Տ՟ն , և լիք են արդեամբք՝ որոց հե
տևին բարիք կայունք և յաւիտենականք :

3 . Ո՟չինչ աւելի է մարդոյ յա՟մ վաստակս իւր .
զոր վաստակի 'ի ներքոյ արեգական :

Այսինքն , մարդն որ աշխատեալ տաժա
նի առ 'ի ստանալ զփարթամութիս կամ
զփառս՝ և զայլս նմանս , զի՞նչ աւելի վերա
մնայ 'ի ձեռս նորա քան զայնս , որք են 'ի
ձեռս աղքատաց , կա՟մ նուաստից անձանց ,
և կամ քան զայնոսիկ որք ոչ երբէք ունե
ցան զի՞նչ բարի՝ կամ՝ զհանգիստ 'ի ներքոյ
արեգական . արդարև ոչինչ վերամնայ :
վ՟զի մինչ անցանեն ունեցեալ բարիքն ,
և հանգիստն , այնու իսկ հաւասարին ոչ
ունե

ունեցելոց. և այսու ունօղն և ոչ ունօղն համասարեալք՝ ոչ ինչ է աւելի ունողին քան ոչ ունողին։ Եւ զայս բանս ասէ՝ առ ՚ի ցուցանել զանցեալ բանն՝ զոր ասաց, թէ ինչ ընդունայն է։ Վասնզի եթէ լինէր աւելի ինչ վերամնալի վայելողաց զփառս՝ կամ զհանգիստ աշխարհիս՝ քան ոչ վայելողացն, ոչ էր թէ ինչ ընդունայն. ուստի ոչ ինչ աւելի մնալովն՝ ցուցանէ զստուգութիւն ունայնութեան ամենից վայելչութեանց տիս։

4։ Ազգ երթայ, և ազգ գայ, և երկիր յաւի֊տեան կայ ։

Այսինքն, եղեալքն ՚ի միջոցի հարիւր ամաց անցելոց՝ ոչ գոն ՚ի միջոցի հարիւր ամաց հետևեցելոց։ Քանզի մինչ աւելի քան զհարիւր ամն՝ հազիւ ապրի մարդն, յամում լրման հարիւր ամաց՝ աշխարհս մի անգամ դատարկանայ ՚ի նախասպէս եղելոց մարդկանց, և լցեալ լինի նորածին մարդկամբք. և այսպէս անցեալքն կոչին մի ազգ՝ որք գնացին. և նորածին ծնեալքն՝ միւս ազգ որք եկին. և այսու մտօք ասէ, ազգ երթայ. և ազգ գայ։

Նաև այն զոր ասէ Տէրն մեր. ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամ եղիցի. Մատ. 24. 34. իմացեալ լինի զայնց մարդկանց՝ որք էին կենդանիք յայնմիկ ժամանակի. և զկնի հարիւր ամաց այլք մարդիկք փոխանակ նոցա լինելոցք էին յաշխարհի։



ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Նա՛ զի յարէ, և երկիր յաւիտեան կայ. այսինքն
ընդ անցանելն ազգաց՝ երկիրն կայուն
մնայ, և ոչ անցանէ. վ՟զի անցեալ ազգն
որ երթայ, զերկիրն, կամ զաշխարհս ը՟
ինքեան ոչ տանի:

Նա՛ երկիրն ասի մնալ յաւիտեան՝ կրկին
կերպիւ. Նախ՝ զի աշխարհս ամ՟է այժմ,
յորում լինին ծնունդք և ապականութիւնք.
և է միշտ 'ի փոփոխութե՟ն, ըստ այսմ կա_
ցութե՟ն ասի մնալ յաւիտեան որքան տե_
ւայս՝ զի տևէ մինչև ցօր դատաստանին.
և տևումն այն կոչի յաւիտեան ժամա_
նաւոր, կամ յաւիտեան տևողութե՟ն կա_
ցութե՟ն աշխարհի: Երկրորդ, ասի երկիրն,
կամ աշխարհս մնալ յաւիտեան արձակա_
բար՝ և ըստ ինքեան, և ոչ ըստ կացութե՟ն
ներկայիս. և որքան տեւայս մնայ յաւի_
տեան արձակաբար. զի յետ յարութեան
մարմնոց՝ նորոգի և աշխարհս. և տևէ
'ի յաւիտեան:

5: Ծագէ արեգակն. և մտանէ արեգակն.
և 'ի տեղի իւր ձգի:

Այսինքն, յարևելից ծագի, և յարևմուտս
մտանէ. և անտի գնայ անցանելով ընդ
ներքին կիսագնդոյն երկրի: Ձգի 'ի տեղի
իւր. այսինքն յարևելս, և վերստին ծա_
գի: Նա՛ զայս մի այնորիկ յիշէ ասելն,
ամ՟ զի ցուցանիցէ, թէ արեգակն այսու
շարժմամբ մինչ առնէ զօր, միշտ շար_

ժի_

ժխոյն՝ զաւուրս կենաց մերոց որք են
թուոյ իբրու գերանդեաւ հնձէ, մինչև
զմեզ սպառեսցէ: Ահա թէ զայս բան, և
թէ զանցելոյ ամանն , և զհետևեցելոց
ամաց բանսն՝ զմեզ դնէ առ ՚ի ցուցանել
և հաստատել զունայնութիւն ամենից այնց
իրաց՝ որք են ՚ի ներքոյ արեգական , և
ոչ վերաբերին ՚ի փառս Այ:

6: ՚Ի ծագիլն խաւարն եղանէ ընդ հարաւ, և
պատի շրջանակաւ. պատելով պատի. գնայ հողմ.
և ՚ի շրջանս իւր դառնայ հողմ:

Այսինքն , մինչ ծագի արեգակն , թէ_
պէտ յարևելից ծագի, բայց դէպ ՚ի հա_
րաւային կողմն երևի ելքն . և առ այս
ասէ , եղանէ ընդ հարաւ: Բայց մինչ ՚ի մայրն
մտանէ ՚ի յարևմուտս՝ երևի դէպ ՚ի հիւս
իսային կողմն . ոպ̄ և յայտ իսկ է տեսո_
ղաց . և առ այս ասէ, պատի շրջանակաւ: Եւ
այս յայտ է մանաւանդ բնակչացն ՚ի պա_
ղեստին. զի անդէն առաւել երևի ՚ի ծա_
գիլն թեքեալ ՚ի հարաւ. և ՚ի մտանելն ՚ի
մայրն՝ թեքիլ ՚ի հիւսիս . և զայս առնեն
և ցուցանեն դիրք գաւառացն:

Դարձեալ. կարգ ընթացից արեգական
է , զի ՚ի ձեռն յատուկ ընթացից իւրոց
մինչ յարևմտից յարևելս ընթանայ, ան_
տուստ հարկաւորիցի ունիլ և զկողմնական
ընթացս , այսինքն ՚ի հարաւոյ առ հիւսիս
բարձրանալ զամիսս վեց . և ՚ի հիւսիսոյ

դէպ 'ի հարաւ. ցածանալ զամիսս վեց. և այնու կատարել զյատուկ ընթացս իւր յարևմտից յարևելս. և ամնէ չափ այսպիսոյ յատկի ընթացման արեգական: և մինչ այսպէս է, յամենում աւուր 'ի բարձրանալն՝ 'ի հարաւոյ դէպ 'ի հիւսիս անկանի. և 'ի միջոցի վեցից ամսոց այնպէս ընթացեալ պատճառէ զձմեռն, և զգարուն. և 'ի դառնալն 'ի հիւսիսոյ դէպ 'ի հարաւ, 'ի միջոցի վեցից ամսոց պատճառէ զամառն, և զաշուն: Նա՛ այսու զբոլոր կիսագունտն մեր լուսաւորէ. և իւրաքանչիւրոց գաւառաց ըստ ժամանակին զբարին իւր հաղորդէ:

Պատելով պատի: Այսինքն լիապէս պատի, թէ 'ի հարաւո՛յ դէպ 'ի հիւսիս բարձրանալով՝ զի 'ի բնաւէն գաւառս հասուցանիցէ զլոյս իւր, և պատճառիցէ զերկայնութի՛ւն, և զկարճութի՛ւն աւուրց. և թէ 'ի ներքին կիսագունտն անցանելովն՝ զի և զհակառակեայսն լուսաւորիցէ, առնելով 'ի նոսա զտիւ՛ մինչ առնէ 'ի մեզ զգիշեր:

Գնայ հողմ. և 'ի շրջանս իւր դառնայ հողմ: Այսինքն, որպէս արեգակն որ ընթանայ՝ դառնայ միշտ 'ի տեղի իւր, և վերստին ծագի, այսպէս և հողմն՝ որ 'ի յարեգականէ՝ և յատեղաց պատճառի, և մեծաւ թափով շնչէ, դառնայ 'ի շրջանս իւր: Բանզի եթէ հիւսիսային հողմն այս, և կամ գոլորշի նր̃ և նիւթն՝ որ յարեգականէ

կանէ և յաստեղաց պատճառի՝ ծնաւ 'ի
կողմն հիւսիսոյ, և շրջեալ դէպ 'ի հարաւ,
նոյնն յայլում ժամանակի վերստին դառ-
նայ 'ի շրջանս իւր, այսինքն 'ի նոյն տեղի,
և 'ի նոյն ծնունդ և կազմուած, և վերս-
տին շնչէ։ Բայց ոչ այնպէս՝ թէ լցէ նոյնն
ըստ անհատին, որպէս արեգակն որ է անա-
պական, այլ նոյն ըստ տեսակին. քանզի
նոյն բաղխումն օդոյն ոչ վերադառնայ.
նաև ոչ նոյն անհատական գոլորշին յոր-
մէ եղև հողմն առաջին. այլ զի նոյն ա-
րեգակն և աստեղք վերստին պատճառեն
զնոյն հողմն ըստ տեսակին. և այսպէս
հողմն դառնայ 'ի շրջանս իւր։ Իսկ զայս
դնէ աստէն առ 'ի ցուցանել զփոփոխա-
կանութիւն այնց ամենից՝ որք են ընդ արե-
գակամբ։ Որ զի մինչ նախ եցոյց զըն-
թացից արեգական՝ յորմէ պատճառին
փոփոխութիւնք 'ի ստորինս, կարգաւ առա-
դրեալ զհողմն, և զփոփոխութիւն նորին.
և զկնի յարէ զփոփոխութեանց ջուրց։

7։ Ամենայն ուխք 'ի ծով գնան. և ծով ոչ լնանի։ 'Ի տեղիս յոր ուխք գնան, անդ նոքին դառնան 'ի գնալ։

Այսինքն, ամ ուխք և գետք՝ որք և յայտ է, գնան միշտ 'ի ծով. բայց ծովն ոչ լնանի. և զպատճառն սորին ցուցանէ հետևեալ բանիւն. քանզի ասէ. 'Ի տեղիս յոր ուխք գնան. Այսինքն, ուր ուխք և գետք

բղխին, 'ի նոյն տեղին վերստին դառնան նոյն գետքն առ 'ի բղխել վերստին : Վ՟ն զի գետքն, որք աստի բղխեալ իջանեն 'ի ծով, անտի ընդ երակունս երկրի ունելով զճանապարհ, դառնան 'ի նոյն տեղի . և վերստին բղխին : Ուստի այն որ ասի, **անդ նոքին դառնան 'ի գնալ**, իմանի այսպէս . անդ նոքին դառնան 'ի բղխել : և քանզի ջուրն մինչ բղխի՝ իսկոյն սկսանի գնալ, վ՟նկ փոխանակ գնելոյ **'ի բղխել**, եդեալ է **'ի գնալ** :

Աստէն եւս իմն զասելն՝ զնոյն գետ վերստին դառնալ 'ի տեղի իւր, ըստ տեսակին, և ոչ ըստ նոյնոյ մասանց ջուրցն : և ոպ՟ 'ի ձեռն այլոց, նոյնպէս և 'ի ձեռն սորին ցուցանէ զանկայունութիւն և զփոփոխութիւն կենաց մարդոյն, և ամենից կացութեաց նորին, յորժամ ոչ վերաբերին 'ի փառս այ՟ :

**8 : Ամենայն բան ջանիւ . և ոչ կարասցէ այր խօսել : ոչ յագեսցի ակն տեսանելով . և ոչ լցցի ունկն լսելով :**

Այսինքն, թէ իմացուածք բանից լինին 'ի մեծ ջանիւ և աշխատութեամբ . և առանց ջանից և աշխատութեանց զոչինչ կարասցէ այր ոք խօսել . այսինքն իմանալ զբանն թէ որում պարտ է իմանել . և բացատրել զայն խօսիւք, ըստ որում բացատրելի է, և մեկնելի : Քանզի բանք իմաստութեան, և

և առակք իմաստնոց են ըստ ինքեանց խորհինք, և նրբաղնինք. իսկ միտք մարդկային՝ տկար և անզօր, և աղքատ 'ի տեսակաց իմանալեաց. 'ի ձեռն որոց կարիցէ դիւրապէս իմանալ: Վասն որոյ այնպէս պատրաստիլ պարտի առ այն, զի աշխատանօք և ջանիւ՛ շահեսցի զբազումն տեսակս իմանալիս, որով կարիցէ ըմբռնել զբանս. և զներքին զօրութիւն և զիմացուցած բանին: Այլ զայս մի՛ այսորիկ առաջադրէ, զի լսօղքն բանից խորոց մեծաւ ջանիւ աշխատիցին առ 'ի ըմբռնել զներքին իմացուցածս բանիցն: Ո՛չ յագեսցի ակն տեսանելով. և ո՛չ լցցի ունկն լսելով:

Այսինքն. ո՛չ ակն տեսանելով, և ունկն լսելով ո՛չ յագի. նոյնպէս և միտն մարդոյ գիտելով զիմաստութիւն իրաց՝ ո՛չ յագի. այլ միշտ տենչայ գիտել նաև զայլս, մինչև ժամանիցէ յերկինս. ուր տեսանելով զԱ՛ծ, ըստ ամի յագեսցի բոլոր հոգին, թէ ըստ իմացութե., և թէ ըստ կամացն: Ըստ այնմ՝ Սաղմոսի. 16. 15. յագեցայց յերևել փառաց քոց: Արդ՝ զայս ասելով թէ ակն ո՛չ յագի տեսանելով, ցուցանէ մեզ, թէ ո՛չ պարտին աշխատիլ մարդիք առ 'ի յագեցուցանել զաչս՝ և զականջս. և ո՛չ ջանալ տեսանել զիրս ունայնս՝ և լսել զբանս անօգուտս. այլ աշխատիլ և ջանալ առ 'ի իմանալ զբանս վերաբերեցեալս առ վերջին վախճան, որովք 'ի հան

դերձեալն յագեցի իմացութիւն, և կամք նոյնին տեսանելով զԱ՟ծ, 'ի յոր տեսանեն

զն՟մ, և ունին զն՟մ որոց ցանկան:

Նա՛ ծանիր, զի միայն մարդոյ ակն՝ և ականջն է որ ասի անյագ. և ոչ անասնոց. զի անասունք ոչ ունելով զմիտս՝ ոչ լինին հետաքրքիրք: Ա՟ն որոյ մինչ զբաւականն 'ի պէտս բնութեան իւրեանց տեսանեն, և լսեն՝ յագին զգայութիւնք ն՟ց. և 'ի յանդրադոյնս ոչ յառաջեն: Բայց մարդն ունելով զմիտ, 'ի ձեռն որոյ միշտ փափաքի գիտել՝ յառաջէ միշտ 'ի յանդրադոյնս. և ցանկայ տեսանել զնորս. և լսել զնորադոյնս՝ առ 'ի գիտել: Բայց զայս բնական փափաք, որ է ըստ ինքեան բարի (քանզի ցանկալն գիտել զգիտելիս օգտակարս՝ է միշտ բարի) մարդիք վատթարք 'ի գործ ածեն 'ի յայնս գիտելիս՝ որք ոչ օգտեն, և ոչ վերածեն առ վերջին վախճանն. այլ միայն բաւարարեն հետաքրքրութեան. և անցուցանեն զժամանակն զոր ունին՝ դատարկակեցութ՟բ. և այս է ունայնութիւն: Նա՛ եթէ 'ի գործ ածիցեն զտենչն գիտելոյ 'ի վնասաբեր գիտելիս, յայնժամ

է չարութիւն. ո՞չ և յայտ է:

9: Ո՛ր ինչ է որ եղեն. նոյն է որ լինելոց է. և զինչ է որ արարան, նոյն ինքն է որ առնելոց է:

Այսինքն, որ ինչ եղեալ է մինչև ցարդ,

որ-

որգոն բուսումն ծառոց . ծնունդ կեն_դանեաց, և այլք նմանք. առ յապայն ևս նոյնքն լինելոցք են. բայց ոչ նոյնք ըստ անհատին, այլ ըստ տեսակին : Եւ հետեւեալ բանն ևս նոյն է . և կրկնի, առ՚ի հաստատութիւն.

Քանզի ասէ, Եւ ինչ է որ արարածն, նոյն ինչն է որ առնելոց է . այսինքն նոյն ինքն է որ եղեալ է, և կամ լինելոց : Զի բառս, առնելոց, մինչ կրաւորապէս իմանի, դնելի է առնելոց . որով նշանակի՝ եղելոց, կամ լինելոց : Եւ զայս մինչ աստէն ասէ ՚ի հասարակի, թէ որ ինչ եղև, նոյնն և առ յապայն լինելոց է, ՚ի հետեւեալ բանսն մասնաւորապէս բացատրէ : Եւ բոլոր վախճան բանիցն է՝ ցուցանել զանկայու_նութիւն և զփոփոխականութիւն ամենից ե_ղելոց ՚ի ներքոյ արեգական :

10 : Եւ ոչ ինչ գոյ յամ առժամայն ՚ի ներքոյ արեգական : զի զոր խօսեսցի ոք և ասասցէ . ահա այս նոր է . յառաջագոյն եղեալ է յաւիտենից եղե_լոցն նախ քան զմեզ :

Այսինքն . ոչ ինչ գոյ ՚ի մէջ ամենից ան_ցականաց և առժամանակեայ իրաց ՚ի ներ_քոյ արեգական : Զի զոր խօսեսցի ոք . [illegible] զորմէ խօսեսցի ոք, և ասասցէ, ահա այս նոր է : Եւ այս իրաւի է . քանզի եթէ ասիցեմք, այս նոր ձի է . կամ նոր պա_լատ . կամ նոր այս ինչ իր, և կամ այն

ինչ

ինչ էր, ո՛չ է ճշմարիտ : Վասնզի նմանն նո_
ցին եղեալ է յառաջագոյն, և անցեալ .
որով իմանի՝ թէ նաև այս անցանէ :
Եւ յասացելոցս յայտ է, թէ զիրաց ժա_
մանակաւորաց և մարմնաւորաց է բանն .
բայց ո՛չ զյաւիտենականաց և զհոգևո_
րաց : Քանզի Ք՞ս ետ մեզ զնոր օրէն .
և զնոր սիրտ, և զնոր պարգևս խորհրդոց
եկեղեցւոյ . որք նաև ըստ տեսակին յա_
ռաջագոյն ո՛չ էին . նաև 'ի յարութեան տայ
զնոր կեանս, որ ո՛չ անցանէ . և այլն :
Յառաջագոյն եղեալ է յաւիտենից եղելոցն նախ_
տան զեղ : Այսինքն, զորմէ և իցէ իրէ
մարմնականէ եթէ ոք ասիցէ նոր, յառա_
ջագոյն նոյնն եղեալ է 'ի մէջ եղելոցն 'ի
հնումն, կամ 'ի սկզբան : Աստի զասելն՝
յաւիտենից եղելոց՝ իմա այսպէս . 'ի մէջ հա_
րիւրաւորականաց ամաց եղելոցն : Վասնզի
հարիւր ամն մի յաւիտեան կոչի . և բա_
զում հարիւրքն՝ յաւիտեանք ասին . և այս_
պէս յաւիտենից եղելոց ասելն՝ ցուցանէ
զեղեալսն 'ի յանցեալ դարս և յաւիտեանս :
Աստէն ծանի՛ր . զի ամ մարմնականք 'ի
ներքոյ արեգական ունին զտեսակ . զոր
միտն մեր բացաքարշեալ 'ի յանհատիցն՝
ըմբռնէ . և ունին զանհատական գոլ
յիւրեանս ինքեանս : Արդ՝ անհատական
գոլն իւրաքանչիւրոց մարմնաւորաց ան_
ցանէ . վասնզի այս ձի մեռանի . նաև այն
ձի . և այսպէս իւրաքանչիւրն . սակայն
տե_

տեսակն միշտ մնայ · վ̃զի փոխանակ մե_ռեալ ձիոյն ծնանի այլ ձի · և մինչ նաև այն մեռանի , ծնանի այլ ձի · և այսու տեւէ տեսակն ձիոյ ։ Որ օրինակ · գետն ունի յիւրեան զջուր՝ որ միշտ հոսի 'ի ծովն. բայց գետն ոչ ցամաքի · վասն զի որքան ջուրք հոսին յիւրենէ 'ի ծովն , այնքան ջուրք հետեւաբար իջանեն 'ի ծոց իւր · և այսպէս մասունք ջրոյ իւրոյ թէպէտ միշտ պակասին , բայց ինքն գետն վերամնայ 'ի ձեռն վերաեկելոց ջրոց ։ Նո՜ մինչ այս_պէս կայլեալ իմանամք զկրաց մարմնակա_նաց, իւրաքանչիւր անհատք մինչ ծնանին և լինին, ոչ կարեն ասիլ նոր՝ զի նմանն նոյն եղեալ է յառաջագոյն ։ Իսկ զտե_սակաց ոչ կարէ ասիլ նոր , զի նոքա 'ի սկզբանէ ոմ էին, նոյնպէս են և այժմ. և նոր տեսակ ինչ ոչ ստեղծանի ։ Որ ամծ հանգեաւ 'ի գործոց իւրոց · յի 'ի ստեղ_ծանելոյ զնոր տեսակս ։ Նո՜ թէպէտ զհո_գիս մարդկանց որք ծնանին՝ միշտ նորա_պէս ստեղծանէ · բայց հոգին ոչ է տե_սակ անհատից , զորմէ է բան մեր ։ Նո՜ այսքանս համառօտաբար ասացաւ առ_բարեպէս հասկացումն վերոյ ասացելոց ։

II ։ Ոչ գոյ յիշատակ առաջնոցն · բայց և ոչ 'ի վախճանի եղելոցն · ոչ գոյ նոցա յիշատակ հան_դերձ եղելոցն 'ի վերջինսն ։

Նախնիքն , անհատք մարդկանց՝ և այլոց իրաց՝

խրատ՝ որք եղեն յառաջագոյն , այժմ ո՛չ գոն ն՟ա յիշատակք։ Վասնզի թէ փառաւորք էին , և թէ անարգք. թէ փարթամք էին. և թէ աղքատք. թէ 'ի հանգստեան էին , և թէ 'ի նեղութ՟ե , այժմ ո՛չ գոյ յիշատակ ինչ զնոցանէ. այսինքն աստէն տուեալ փառքն ո՛չ օգտէ ն՟ա. նմանապէս և անարգանքն ո՛չ յամօթ առնէ զնոսին. զի նոքին որք անցեալք են, զոչ ինչ զգան յայնցանէ զորս առատրեմք ն՟ա գովու՟թ , և կամ պարսաւանօք։ Ի՛ յայսմանէ բա-ցառոցին մ՟քն , որոց կեանքն ո՛չ ունայ-նութ՟ք էանց . այլ լի արդեամբք , որք վերաբերեցեալք լինէին առ երանութ՟ին։ Սորա յիշատակն ն՟ա մնաց յազգէ յազգ. և՝ որքանիցս փառաւորեմք զնոսա յերկրի, և բարեխօս կալնումք , այնքանիցս իմա-նան զայնս, և բարեխօսեն վ՟ն մեր։ Բայց նոքա որք ունայնութ՟ք անցուցին զկեանս, կամ ըստ ա՟մի ո՛չ յիշին, և ո՛չ գոյ ն՟ա յի-շատակ . և կամ եթէ ոմանք վասն իրիք կատարելութ՟ե յիշին և գովին, ո՛չ են զգա-ցօղք այնց, և այսպէս նոյն էր վասն ն՟ա, թէ ո՛չ երբէք յիշեցեալք լինիցէին։ Ս՟ զի զի՛նչ օգուտ է արիստոտէլի տանջիլ և անարգիլ անդ՝ ուր է. այ՟ 'ի դժոխս. և գովութ՟ք փառաւորիլ անդ՝ ուր ոչ է. այ՟ 'ի վերայ երկրի։ Վասնզի զոր ինչ զգայ ոք, այն է իւր. և ո՛չ զոր ինչ ոչ զգայ։ Արդ՝ այսու կերպիւ խօսելով սողոմոն՝

կամի

կամի ասել, թէ որք ունայնութեան անցու-
ցանեն զկեանս, թէ առաջինք են քան
զմեզ՝ ոչ գոյ նց յիշատակ։ Եւ յարէ․ Եւ ոյց
նոչ ՚ի վախճանի եղելոց, այսինքն նաեւ ոչ
նոցին որք լինելոցն են յետ այսորիկ։ զի
նոքա եւս որք գան յաշխարհս յայս՝ զկնի
մեր, ոչ լինին յիշեցեալք յայնցանէ՝ որք
զկնի նոցա գան։ Նաեւ ըստ այսմ իմանա-
լի է այն մասն բնաբանին, որ ասէ․ Ոչ
գոյ նոցա յիշատակ հանդերձ եղելոցն ՚ի վերջինս․
ծր ՚ի ձեռն եղելոց մարդկանցն յետ նոցա՝
ոչ գոն եւս յիշատակք նց, որք զկնի մեր
գալոց են․ ոչ թէ ասիցէ ոք այսպէս․
ըստ որում երեկեան եղելոցն այսօր ոչ
գոյ յիշումն․ այսպէս եւ այնոցիկ որք ՚ի վա-
ղիւն լինելոց են՝ ՚ի միւսում աւուրն ոչ լինի
յիշումն։

12։ Ես Ժողովող, եղէ Թագաւոր ՚ի վերայ Իսրայէլի յԵմ։

Կոչէ զինքն ասելն՝ Ժողովող․ ոպ ՚ի վեր՝ ՚ի 1․ տան մեկնեցաւ։ Քանզի ժողովէր զմարդիկ, եւ ՚ի համալսարանի միում քարոզէր նց զայս ամ բան, նաեւ ՚ի գիրս զեղոյր զբանսն․ զի եւ առ հեռակայս տարածիցի։ Արդ՝ յայսմիկ բանի դրեթէ ասէ զայս․ Ես ժողովողս․ ծր ես քարոզօղս՝ որ ուսուցանեմ ձեզ զգուշանալ յունայնութենէ աշխարհիս, գոլով Թագաւոր, եւ ընկալեալ յոյժ զիմաստութիւն։

13։ Ետու զսիրտ իմ ՚ի խնդրել՝ եւ ՚ի քննել իմաս_տութբ վասն ամենայնի եղելոյ ՚ի ներքոյ արեգա_կան. վասնզի զբաղումն չար ետ Ած որդւոց մարդկան զբաղել ՚ի նմա։

Այսինքն, ջանացի յամէ սրտէ իմմէ առ ՚ի խնդրել՝ եւ առ ՚ի քննել իմաստութբ. եւ հանճարով զամենից եղելոց ՚ի ներքոյ ա_րեգական. եւ տեսանել՝ թէ արդեօք իցէ՞ իր ինչ՝ որ ըստ ինքեան իցէ բղձալի, կամ մնացական եւ կամ՝ համարելի արժանի իմիք գնոյ, բայց ոչ կարացի գտանել. վն զի բնաւ՛քն գոլով անկայունք մն լինելոյն ընդ արեգակամբ՝ ունայնութիւնք էին։ Բայց տեսանելով իմ զմարդիկ Ադս, զի ոմն վն հարստութե աշխատի, եւ զանտա_նելի վիշտս յանձն առեալ զբաղի՝ եւ ջա_նայ ժողովել զարծաթ. այլ ոմն վն փա_ռաց եւ մեծութե, եւ այլ ոմն վն հեշտու_թե եւ հանգստեան տանջի եւ զբաղի զի առունիցի, ասեմ, թէ։

Զբաղումն չար տուեալ է որդւոց Ած։ Այս չար, զի ունայնն եւ ոչինչն չար կոչի. եւ մինչ զունայնից իրաց զբաղի ոք, ասի զբա_ղումն այն չար։

Եւ յարէ, «որ Ած ետ նոցա». զի Ածէ տու_եալ զամն նիւթս զբաղմանց նց. այսինքն զարծաթ, եւ զոսկի. զկերակուր, եւ զհան_դերձ. եւ զայլ ամն. եւ որքան առայս միայն՝ ասէ Ած ետ։ Բայց որքան առայս՝ զի մար_

մարդիկ չարապէս զբաղեալ 'ի նոսա ոչ վերածեն զկիրառումն ստեղծուածոց 'ի փառս ա̅յ 'ի ներքոյ պատուիրանաց նորին , ոչ կարէ ասել՝ թէ Ա̅ծ տուեալ իցէ նմ̅ զնոյն չարաչար կիրառումն · զի այնէ 'ի վատթարութ̅է կիրառողին ։

Վասնզի ոչ եթէ որ տայցէ զողորմութի̅ ինչ աղքատի ումեք , և աղքատն վատթարութե̅ իւրով ոչ գնիցէ այնու զկերակուր առ 'ի ուտել և ապրել · այլ զթոյնս գնեալ ուտիցէ և մեռանիցի , տուօղն ողորմութե̅ ոչ ասի տուեալ նմա զթոյն · թէպէտ տուօք նորին գնեցաւ թոյնն · այսպ̅ և Ա̅ծ , որ տայ մարդկանց զարարածս՝ ո՛չ զի ապրեսցին և կեցցեն , և զարդիւնս բարեաց յաւիտենականաց շահեսցին , և նոքա չարաչար 'ի կիր առնուն զայնս , ոչ ասի տուօղ չարին · այլ միայն տուօղ իրաց բարեաց · որք 'ի յանզգամութեց մարդկանց՝ յեղաշրջին 'ի չարիս · ըստ որում ասի · Իմաստ 14 · 11 · Ստեղծուածք եղեն որոգայթք ոտից անզգամաց · այսինքն , պատճառաւ չարաչար կիրառման նոցին ։

14 ։ Տեսի մանկամայն զամ̅ն արարածս · զարարեալս 'ի ներքոյ երկնից ։ Նաև ամ̅ ինչ ընդունայնութե̅ է և յօժարութե̅ հոգւոյ ։ Ս̅ր տուփանք կամ տառապանք · և կամ բեկումն ոգւոյ ։

Կամի ասել · մինչ ա̅մ իրք աշխարհիս 'ի փառս ա̅յ ոչ 'ի գործ ածին , բնաւքն վն̅

ան_

անցականութե իւրեանց են ունայնք. և մինչ նաև սիրելն, են տառապանք ոգւոյ. զի հալեն և մաշեն զսիրտս սանձարձակաբար սիրողաց իւրեանց:

Աշ՛ աստէն երեք են՝ որք պարտին մտածել. զի ՚ի ներքոյ արեգական, թէ կեանք մեր, թէ փառք, և թէ հեշտութի, և կամ հանգիստ, և այլք նմանք. Նախ յիւրեանս ինքեանս են ունայնք՝ վն անկայունութե և անցականութե իւրեանց:

Երկրորդ՝ են և լինին ունայնք ՚ի կողմանէ կիրառողացն, յորժամ մարդիկ զկեանս իւրեանց ՚ի պատուիրանս Տն ոչ վարեն. և զիմ զոր ունին, և ունիլ կարեն, ՚ի փառս այ ոչ շարակարգեն:

Երրորդ՝ բայց ՚ի գոլոյն կրկին կերպիւ ունայն՝ նաև լինին տառապանք և բեկումն ոգւոյ ՚ի կողմանէ չարաչար կիրառողաց. զի յորժամ մարդիկ առաւել սիրեն զնա, և զմեծագունեղ մասն սրտից իւրեանց կապեն ընդ նոսա, և զպատուիրանս այ՝ և զփառս նր ՚ի հեռաստանէ ձմնաչեն:

Սակայն վն բարեսիրաց մարդկանց՝ ոչ են ունայնութիւնք երկրորդիւ կերպիւն առեալ. նաև ոչ տառապանք ոգւոյ: Քանզի թէպէտ առաջնով կերպիւն, զի ՚ի կողմանէ անցականութե իւրեանց են ունայնք. բայց որք բարիք ՚ի ներքոյ պատուիրանացն այ և ՚ի փառս նր ՚ի կիրառել.

զայնս,

զայնս, 'ի յունայնութեց՝ և յանցականաց արտահանեն զլիութի արդեանց՝ և զանանց կեանս. ոպ̄ ասէ Տր̄ մեր 'ի Ղուկ. 16. 9. Արարէք ձեզ բարեկամս 'ի մամոնայէ անիրաւութէ: Նաև ոչ են տառապանք հողւոյ արդարոց. վնզի նոքա ոչ հային անցաւորաց բարեաց. վն որոյ և ոչ երբեք 'ի նոցանէ խոցին: Վասնզի վայելչութիք, կամ բարիք անցաւորք և անկայունք հանգոյն փչոց՝ սուլորք են միայն զընդգրկօղս և զսիրօղս իւրեանց խոցել և տանջել. և զորս համբուրեն հանդոյն յուդայի, զնոսին միայն 'ի մահն յաւիտենական մատնեն:

15: Թերեւալն ոչ կարասցէ զզարդ տալոյ. և պակասեալն ոչ կարասցէ 'ի Թիւս անկանիլ:

Այսինքն, եթէ դէմքն ուրուք, կամ բերանն իցէ Թիւր, որքան և զարդարիցի արտաքուստ, ոչ կարէ 'ի ձեռն այնց զարդուց զարդարիլ և գեղեցկանալ այնպէս՝ զի Թիւրութն տգեղութին ծածկիցի: Վասնզի որքան և զարդարիցի գլուխն այն՝ որ ունի զԹիւր բերան, միշտ և հանապազ մնայ տգեղ Թիւրութբ բերանոյն: Նոյնպէս և պակասեալն յիմեքէ կատարելութէ, ոչ կարէ անկանիլ 'ի Թիւս կատարեցելոյ, և դասիլ 'ի կարգս նց. որգոն. որում պակասին աչք, կամ ականջ. և կամ ոտն, ոչ է հնար 'ի ձեռն զարդուց. կամ 'ի ձեռն բանից և գովութեց մարդ_

կանց դնել զնա 'ի թիւս նոցա, որք ունին զամբողջութիւն անդամոց և են կատարեալք: Այլ զայս բան մեր այնորիկ դնէ, աստէն Ժողովողն, զի 'ի յանցեալս բանս եցոյց զանկայունութիւն և զունայնութիւն եղելոց ընդ արեգակամբ. թէ փառք իցեն, թէ մեծութիւն, թէ հարստութիւն, և թէ հեշտութիւն: Այլ աստէն ասել կամի թէ այնոքիկ իմաստունք գոլով անկայունք, են ոչ զթխուրեալս, և ոչ զպակասեալս 'ի կայունութեանց և 'ի լնութեանց, և 'ի բանէ կատարելութեանց. ուրեմն որքան և զար_դարիցեն զնոսա մարդիկ սիրելով գովե_լով և իր ինչ համարելով, և որպէս զբարի ինչ հաշակելով, նոքին, զի իբր աշխարհիս, և վայելչութիւնք նոր, ոչ կարեն առնուլ զզարդ, և ոչ երբեք 'ի թիւս կատարեալ_լոց և կայունից լինել կարեն անկանիլ:

16: Խօսեցայ 'ի սրտի իմում ասել՝ թէ ահա մե_ծացայ քան զամենեսեան, որք էին յառաջ քան զիս յԵԷՄ. և ետու զսիրտ իմ գիտել զիմաստութիւն, և զգիտութիւն. և յաճախեցայ իմաստութիւն քան զամենե_սեան որք յառաջ եղեն քան զիս յԵԷՄ:

17: Եւ սիրտ իմ ետես զխորհուրդ իմաստութիւն, և զգիտութիւն: զառակս, և զհանճարս ծանեայ. առնելոյն և այս ցօժարութիւն է ոգւոյ.

Ի ձեռն երկուց եղելոց ասանց՝ զայս կա_մի ցուցանել. ես Ժողովող խօսեցայ, այս_ինքն խորհեցայ 'ի սրտի իմում ասել՝ թէ

ահա

ահա ես մեծացայ յոյժ՝ լինելով թագաւ_
որ և փարթամ՝ . և բաց յայտնեաց ետու
զսիրտ իմ իմաստութեն . և եղէ իմաստնա_
գոյն քան զա̃մ որք 'ի ներքոյ արեգական, և
հետևաբար սիրտ իմ ետես . զ̃ի ծանեաւ և
ճանաչեաց զբազում իմաստութիւնս , որ է ճա_
նաչումն իրաց բարձրագունից, և զգիտու_
թիւնս , որ է ճանաչումն իրաց բնականաց 'ի
ձեռն պատճառաց . նաև ծանեայ զառակս ,
որք են խրթնաբանութիւնք : Քանզի զոր
իցէ խրթնաբանութիւն կարէր ճանաչել և
լուծանել : Սոզի ըստ լսելն զբանն՝ զա̃մ
որ պարունակիւր 'ի նմին , խելոյն ըմբռ_
նէր միտք , և պատասխանէր . և զհանճարս
ծանեայ . որ է խոհեմութիւն և ուշիմութիւն ,
որք 'ի գործս , և 'ի կառավարմունս են
հարկաւորք և պիտանիք :

Սա յարէ ծանեայ թէ և այս յօժարութիւն է ոգւոյ ,
զ̃ի սակայն տեսի , զի ոչ միայն թագաւո_
րութիւն , և ա̃մ մեծութիւնք իմ ունայնու_
թիւնք են , այնու զի անցանեն . այլ նաև
զիմաստութիւն և զգիտութիւն զոր ունէ_
ցայ 'ի ներքոյ արեգական՝ տեսի , զի մինչ
ոչ վերածին 'ի փառս ա̃յ , և ոչ 'ի գործ
ածին առ ստացումն երկնային իմաստու_
թեն , որ է սիրել զԱ̃ծ , և զպատուիրանս
նորա պահել , ունայնութիւնք են , և յօժա_
րութիւնք հոգւոյ . զ̃ի տառապանք հոգւոյ :
Սա այս խրատ է . զի նաև գիտութիւն իր_
աց՝ մինչ ոչ վերաբերի առ Ա̃ծ , է ունայ_

նութեն • զի զոչ ինչ շահի մարդն յայն_պիսոյ գիտութէ , որ օգտիցէ ինքեան : Եւ մի պատասխանք հոգւոյ՝ ոչ այնու կերպիւ որպիսիք են այլք իրք աշխարհի , որք 'ի սիրիլն իւրեանց տառապեցուցանեն և տանջեն զսիրողս իւրեանց • (զի գիտունն որքան և սիրիցի՝ ոչ տանջէ զսիրողն իւր ) այլ այլով կերպիւ : Քանզի գիտութիւն որ ոչ 'ի գործ ածի 'ի փառս այ հանդերձ պահմանք ածային պատուիրանաց , տա_ռապեցուցանէ զգիտունն :

Նախ՝ այսու • զի ճանաչելով զպատշաճն և զանպատշաճն • զկանոնաւորեալն , և զանկանոնն , մինչ ինքն ոչ վարի ըստ ճա_նաչմանն առնելով զպատշաճն՝ և խորշե_լով յանպատշաճէն , առաւել տառապի և տանջի քան զայն որ ոչ ճանաչէ :

Երկրորդ՝ մինչ տեսանէ և 'լսէ , զի 'ի բանաւոր իրաց և 'ի պատշաճաւորաց փախ_չին , և առ անբանն՝ և յանպատշաճս դի_մեն՝ թէ 'ի բանս , և թէ 'ի գործս , տա_ռապի և տանջի : Բայց զայսպիսի տառա_պանս ոչ ունի ածասէր և առաքինի իմաս_տունն • քանզի տեսանելով զանբանաւոր և զանկարգ գործս և արարս այլոց , ոչ տա_ռապի , և ոչ շփոթեցեալ տանջի 'ի ներ_քուստ , այլ այ յանձն արարեալ զամ , 'ի յառաքինական գործս իւր պարապեալ հանգչի : Իսկ եթէ ունիցի զպաշտօն հով_ուութեն , և այնու ցանկացիցի մխատուց

ոչ

ուխտարացն, որպիսի էր սուրբն Պօղոս. որ ասէր. ո՞ հիւանդանայ՝ և ես ոչ հիւանդանամ. ո՞ գայթակղի՝ և ես ոչ տապանամ. 2.Կորն. 11. 29. Ոչ այնպէս վշտանայ զի զնեղքն խաղաղութին իւր կորուսանիցէ, և ոչ այնպէս ցաւի՝ զի զայն յախտանայ ոմն զկիրս կրեսցէ. այլ կամաւորապէս՝ և ՚ի փառս Տն վշտանայ, որ ոչէ մի կրից, այլ կամաց. այլ կամաւորութե առաքելական ինքեան՝ ՚ի մեծութէ սիրոյն որ առ Ած։

Երրորդ՝ վշտանան և տառապին անբարեպաշտ գիտունք նաև այսու. զի որքան յառաջանան ՚ի գիտութիւնս, այնքան աւելի տեսանեն զինքեանս պակասեցելս ՚ի բազմագունից գիտելեաց. և ՚ի ձեռն անյագ տենչանաց մնաց ցանկան զի գիտիցեն զամ. և մինչ ոչ լինի այս՝ տառապին։ Նաև մերթ մինչ զիր ինչ որ է բարձրագոյն քան զինքեանս՝ հետազօտեն ՚ի ճանաչել, որգոն, զնախագիտութիւնն Այ՝ և զնախասահմանութի, և կամ զայլոց նմանեաց. և ընդ ոչ կարելն ըմբռնել զամ պարագայս նոցին՝ տառապին և տանջին. և այսու որքան յառաջեն ՚ի գիտութիւնս, այնքան յաւելուն ՚ի ցաւս. որպ յիշի ՚ի հետեւեալ տանն։ Բայց բարեպաշտ գիտունն ոչինչ կերպիւ ՚ի ձեռն ասացելոցս տառապի. զի մի ոչ գիտելոյն զամ՝ ոչ ցաւի, մինչ ունի զյոյս ՚ի հանդերձեալն գիտել զամ. և զբարձրագունից իրաց քան

զինքն ոչ լինի հետապօտող. և թէ մտածիցէ զիմեքէ՝ զայն զոր կարէ՝ ըմբռնել. և զայն զոր ոչ կարէ բնականաւ լուսովն՝ գիմէ 'ի լոյսն հաւատոյ. և այնու հանդարտաբար զմիտ ինչ ստուգապէս ըմբռնել, և տեսանէ. քանզի յինքեան ստոյգ է, թէ Ած զոչ ոք խաբէ:

18 : Մանզի 'ի բազում իմաստութեան է յոլովութիւն գիտութեան. եւ որ յաճախանայ 'ի գիտութիւն, յաճախանայ 'ի ցաւս :

Ոյինքն, մինչ սատ 'ի յանցեալ տանն՝ թէ նաև գիտութիւն է տառապանք հոգւոյ, ասաէն տայ զպատճառն՝ և ասէ. քանզի 'ի բազում իմաստութեան լինին գիտութիւնք բազմաց իրաց. և այսու որքան աւաճել իմաստնանամք, զայնքան առաւել բանս իմանամք և ճանաչեմք. և մինչ լինի այս առանց վերաբերելոյ 'ի փառս նոյ, յայնժամ յաճախանամք 'ի ցաւս 'ի տեսանելն մեր զիրս անպատշաճս, և զբանս յիմարականս՝ թէ 'ի մեզ, և թէ 'ի յայլս: և հետևաբար տեսանեմք զմեզ տգէտս բազմաց այլոց գիտելեաց. և 'ի ձգտելն մեր 'ի գիտել զբարձրագոյնս՝ զոր ոչ կարեմք գիտել՝ ցաւիմք և տառապիմք. որպէս 'ի վեր անդր լիապէս մեկնեցաւ:

Դարձեալ որ անկարգաբար վարէ զկեանս և ունի զգիտութիւն, այնու իսկ արդիւնաւորի յինքեան զմեծագոյն պատիժս, զոր

Տն

Տն վճռոյ, զոր ասէ : Որ գիտիցէ զկամս Տն իւրոյ, եւ ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նր, արբցէ գան բազում : Ղկ. 12. 47 :

Նշմար դիտելի է · զի ՚ի լուսանցս Ածաշնչի Ոսկանայ վարժապետին եղեալ կայ այս բան, թէ յոլով անարժանութիւն · Իբրու թէ կամի ասել · ՚ի բազում իմաստութե է յոլով անարժանութիւն · սակայն ոչ է այնպէս · զի զբանն զայն զոր ՚ի լատինէն առեալ է առ ՚ի դիւրացուցանել զՏէին շարադրութիւն, ՚ի թարգմանելն վրիպմամբ սխալեալ է · և փոխանակ դնելոյ՝ ստգտանութիւն, եդեալ է անարժանութիւն · քանզի ՚ի լատինն դնի այսպէս · ՚ի բազում իմաստութիւն է յոլով ստգտանութիւն · այսինքն ցաւ · կամ՝ սրտմտութիւն · և այսպէս զնոյն միտ բանի ունին Եբրն և Յունայն :

## ԳԼՈՒԽ Բ։

Մինչև ցայս վայր վարդապետեաց շարունա_
կութեանց ժամանակաչափարարաց . և հասեալ առ
իմաստութեն՝ եթէր և շայն պատապանք հո_
գւոյ : այժմ տանի զինքն առ փափկութիւն և հեշտու_
թիւն . և այս մինչև 'ի 8. տունն : և անտի առ փոր_
ձառութիւն առ 'ի փորձել , թէ արդեօք 'ի նոսին կա_
րիցէ՞ գտանել իր ինչ հաստատուն . և մինչ նաև 'ի նո_
սին տեսանէ զունայնութի , դարձուցանէ զինքն 'ի
12. տունն՝ վերստին առ իմաստութիւն : և անտի են
և վերստին գտեալ զունայնութի , 'ի 18. տուն՝
դառնայ առ նոսա որք գտանչեն զինչս վասն յետ_
նամնայեցն :

### ※ ԲԱՆ։ ※

Ասացի 'ի սրտի իմում , եկ և փորձեցից զքեզ յուրախութեան . և տեսից 'ի բարութե . այսինքն, և զմայլեցայց 'ի բարութե . ահա և այս ընդունայնութիւն է։

### ※ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ։ ※

Այսինքն , սաղօմն 'ի քարոզէն , և զու_
նայնութե իրաց անցաւորաց 'ի քայլա_
րէն

րելն՝ իբրև զօրինակ ինչ առ ցուցումն վար
դապետութեան իւրոյ, կալնու զինքն. և
ասէ. Ահա ես եղէ թագաւոր, նաև հա-
րուստ, նաև իմաստուն. բայց ոչ գտի 'ի
սոսին զիր ինչ, որ իցէր առանց ցաւոյ և
ունայնութեան. և զկնի սոցա՝ շրջելով մտօք
իմովք աստ և անդ, թէ ուր արդեօք և
յորպիսի իրս կարելի է գտանել զիր ինչ
կայուն, որ հանգուցանիցէ զսիրտ մար-
դոյ, ասացի 'ի միտս իմ և 'ի սրտի իմում
առանձին իմ. ով դու, եկ և փորձեցից
զքեզ յուրախութեան, և զմայլեցուցից 'ի
պէսպէս բարութիւնս ժամանակաւորաց ի-
րաց. և թերևս 'ի նոսին իցէ իրինչ յագե
ցուցիչ բաղձանայդ: Բայց նաև նոքին
ամենեքեան էին ունայնութիւնք: Ուրեմն ով
ունկնդիրք բանից իմոց, մի լիցի ձեզ՝ թէ
խաբիցիք. զի ահա ես 'ի համայնս իրս
փորձեցի. և ոչ գտի զինչ 'ի նոսա՝ բաց 'ի
յունայնութէ, և 'ի տառապանաց: Ո՛
որոյ խնդրեցէք զայնս՝ որք են 'ի վերոյ ա-
րեգական. այսինքն զերկնայինս, որք են
կայունք. և ոչ զերկրաւորս:

2: Զծաղրն ասացի զբօսանս. և ուրախու-
թե, զինչ առնես զայդ:

Այսինքն, մինչ 'ի խրախութե, կամ 'ի
յերաժշտութե գուսանաց՝ ծաղրն և ծի-
ծաղելն և խրախանալն ներկայանային
ինձ, տեսանելի զնոսա արտաքուստ իր ինչ.
սա-

սակայն ո՛չ ալիքն, և կամ պղպջակքն 'ի ջեռն ուռուցման երևին մեծ իմն . կամ լիք, բայց մինչ պատառին, իսկոյն յայտ_նի լինի դատարկ գոլն նց . նոյնպէս են և սորա ։ Մ՛ որոյ և ես զծաղրն և զծիծա_ղելն՝ տանցի, որ կոչեցի զբօսանս . այսինքն ալիք, կամ ուռուցք . զի ունելին զնմա_նութի ուռուցեալ ալեաց, կամ պղպջա_կաց . որք մակերևութիւ մեծք, և 'ի ներքս դատարկք են ։ Այս սոտ գիտելի է . զի բառս զբօսանք, 'ի բազում տեղիս 'ի յԱծա_

շունչ գիրս մեր նշանակէ զալիս ։

Այլ զուրախութեան ասացի՝ զի՞նչ առնես . Այս_ինքն, և զուրախութին կոչեցի պատրող, և կամ հնարագէտ գող . և ասացի նմա, զի՞նչ առնես ։ Վասնզի ո՛չ մինչ խաբեբայ ոք, և կամ հնարագէտ գող՝ եկեալ առ մեզ կամիցի զիր ինչ հնարիւք հանել 'ի մէնջ, սովոր եմք ասել նմա, զի՞նչ առնես ո՛վ խաբեբայ և նենգաւոր . և կամ ասեմք, ընդէ՞ր կամիս նենգել զիս և խաբել . բայց այսմ ոճի է և ասելն առ ուրախութիւնն՝

թէ զի՞նչ առնես ։

Արդ՝ ժողովողն մինչ այսու բանիւ զծաղրն կոչեաց ուռույց, և կամ ալիք . և զուրախու_թիւնն որ լինի 'ի գինարբուս և 'ի խրախ_ճանս՝ անուանեաց պատրող և խաբեբայ, հետևի զի փոխեցէ զմիտն, և զայլ իմն խորհեցի կամ փորձեցէ ։ Ապա հետևե_

ցուցանէ զբանն . և ասէ ։

3 ։ Յետ այդ ասացի, Թէ սիրտ իմ ձգեսցէ իբրեւ գինի զմարմին իմ․ *այսինքն, սիրտ իմ յետս ձգեսցէ 'ի գինւոյ զմարմինն իմ․* Եւ առաջնորդեսցէ իմաստութեամբ․ *այսինքն, և առաջնորդեսցէ առ իմաստութիւն․* Եւ զօրանայ յանմտութեան․ *այսինքն, և զգուշանայցէ 'ի յիմարութենէ․* մինչեւ տեսից՝ որ իցէ բարին որդւոց մարդկան, զոր արասցեն 'ի ներքոյ արեգական․ 'ի թիւ աւուրց կենաց իւրեանց ։

*Ծանիր, զի այս տուն, կամ 'ի դպրաց, և կամ 'ի յանհմուտ սրբագրողաց վնասեցեալ է 'ի շարագրութեն իւրում․ որոյ վս ըստ որում տեսաք 'ի թարգմանութիւնս այլոց լեզուաց․ որպէս լատինացւոց, յունաց, ասորւոց, քաղդէացւոց․ և արաբացւոց․ ըստ այնմ մեկնողաբար որ ինչ էր, եդաք աստէն․ ոմ զի ընաբանն մնացէ 'ի նշանակութի․ և այնու կարողասցի մեկնել ։ վս զի եղեալն, ոչ ինչ կերպիւ նշանակէր զինն համաձայն անցելոց, և կամ հետևեցելոց բանից ժողովողին ։*

*Արդ՝ յայսմիկ տան զայս կամի ասել․* Յետ այդ ասացի․ *որպէս քննեցի և հետազօտեցի և խորհեցայ զայս, զի զմարմին իմ յետս քարշեցեմ 'ի գինւոյ, և 'ի խրախճանաց, և յուրախութենէ․ և տայցեմ զնա, կամ զսիրտ իմ իմաստութեն Ճարտարապետականի, որ վերաբերի առ շինուածս ապարանից․ և առ կարգաւորութիւնս իւրոց մարմնականաց․ և*

*զգու_*

*զգուշանայցեմ ՚ի յիմարութենէ․ որ ՚ի յան_ կարգաւորութենէ որ և իցէ իրաց․ և թերևս ՚ի յայսպիսի կարգաւորմունս արհեստա_ կանս, որք են կարի յոյժ ազնիւք՝ և ըստ իւրեանց ըղձալիք, դատանիցեմ զիս ինչ կայուն և հեռի ՚ի յունայնութենէ։ Աւասիկ յարէ․*

Մ՛ինչև տեսից որ իցէ բարին որդւոց մարդկան ՚ի ներքոյ արեգական ՚ի թիւ աւուրց կենաց իւրեանց․ *այսինքն, ալարից և զայսոսիկ, և թերևս գտից զմինն որ իցէ բարի որդւոց մարդկան ՚ի ներքոյ արեգական, ՚ի կեանս իւրեանց։ Բայց նաև ՚ի նոսին ոչ եգիտ, զի որում յետ թուեցոյն զնոսա ՚ի մետասաներորդ_ տանն՝ ասէ․ և ահա ամ̅ մնոտի է և տա_ ռապանք հոգւոյ․ և այլն։*

4 ։ Յաճախեցի ինձ արարս․ շինեցի ինձ ապա_ րանս․ տնկեցի ինձ այգիս։

5 ։ Արարի ինձ պարտէզս, և դրախտս․ և տնկեցի ՚ի նոսա ծառս ամենապտուղս։

*Արդ՝ զամենից զայսցանէ զորոց խօսի՝ ոչ ըստ որում են ՚ի յազնիւ նիւթոց՝ խօսի՝ և կամ ըստ որում են ապարանք, այգիք և պարտէզք, այլ ըստ որում իմաստութ̅բ ճարտարապետականաւ, և ՚ի գերազանց աստիճանի համեմատութ̅բ մասանց առ մասունս, և մասանցն առ բոլորն՝ արար զայնս՝ և կերտեաց՝ խօսի։ և այսպէս աս_ տէն զիմաստութենէ և զհամեմատութենէ որ էր*

էր 'ի կարգս ամենից շինուածոց և արա-րից իւրոց՝ կամի բացատրել. և եզրակա-ցուցանել՝ թէ նաև այս իմաստութ՟ն կար-գաց և համեմատութ՟եց է՝ ունայն, մինչ զանցականաց իրաց լինի այն. վասն զի 'ի պակասիլն կարգաւորեցեալ իրաց՝ լաւ է և կարգն, և կորնչի: Բայց թէ այս կարգ որ է 'ի ձեռն համեմատութ՟ե մասանց առ բոլորն, և մասանց առ միմեանս՝ լինիցի 'ի գործս բարոյականս. ք՟զ 'ի յայնս գործս մեր՝ որք 'ի կամաց մերոց յառաջագային՝ յայնժամ ո՛չ է սնոտի, այլ է կայուն և կատարեալ իմաստութ՟ն. որ և կոչի ար-մատ անմահութ՟ե. զի կամաւոր գործք մարդոյն մինչ համեմատին իրերաց, նաև բոլորին՝ այսինքն մարդկութ՟են որ է շա-րակարգեցեալ առ անմահական կեանս՝ են բարիք կայունք և արդիւնաւորք առ կեանսն անմահական:

Բայց ժողովողն որ ասէն ունայնութ՟ն և սնոտի կոչեաց զայս իմաստութ՟ն կարգաց և համեմատութ՟եց որ էր 'ի կերտուածս, 'ի ծառայս՝ և 'ի պաշտօնեայս իւր. տիկինն Սաբայ 'ի տեսանելն զայնս. ք՟զ զգեղեց-կութ՟ին այնց կարգաց, յիմարեցաւ. ք՟զ անդր քան զչափն զարմացաւ: Ոչ վասն նիւթոյն՝ իբրու թէ յոսկւոյ էին, կամ յարծաթոյ, մինչ նաև ինքն ունէր զմեծ բազմութ՟ն ոսկւոյ և արծաթոյ. այլ վ՟ն կարգացն միայն: Ուրեմն քրիստոնեայն

որ-

որքան զարմանալ պարտի 'ի վերայ կարգաց
Ճշմարիտ Ժողովողին Ք՟Ի · որ ոչ զկորս_
տական քարինս , զոսկիս և զարծաթս
կարգաւորեաց · այլ զանմահ հոգւոց ըզ
գործս և զարարս 'ի ձեռն պատուիրանաց
իւրոց և 'ի ձեռն խաչի և մահուան իւրոյ
կարգաւորեաց : Նոյն առ այս Տէրն մեր ա_
սաց , Թագուհին հարաւոյ յարիցէ 'ի դատաստանի
ընդ ազգիս ընդ այսմիկ · եւ դատապարտեսցէ զսա ·
զի եկն 'ի ծագաց երկրի լսել զիմաստութիւն Սո_
ղոմոնի · եւ ահա մեծ քան զՍողոմոն է աստ · Մատ.
12. 42 : Արդ՝ մինչ զօրութի՛ն բանին բա_
ցայայտեցաւ , այժմ զբառսն որք են յայ_
տնիկ տունս , բացատրեսցուք :

Յաճախեցի ինձ արարս · այսինքն մեծամեծս գործս՝
և կերտուածս բազմացուցի վասն իմ :
Զայս դնէ 'ի հասարակի, և հետևի 'ի մաս_
նաւորի յիշել՝ զապարանսն , զայգիս , ըզ
պարտէզս , և զդրախտս : Դրախտին
իմանի այն՝ յորում տնկին ծաղկունք, և
ծառք · և պարտէզ է այն՝ յորում լինին
բանջարեղէնք : Իսկ փայտք ամենապը
տուղք՝ են պէսպէս պտղոց ծառք · զորս
տնկեաց 'ի պարտիզի և 'ի դրախտին զորս
շինեաց · և 'ի բնաւս սոսին դոյր զարմա_
նաքանչ կարգ և համեմատութի · որ զմիտս
մտադրաբար հայեցողաց ապշեցուցանէր :

6. Արա_

6: Արարի ինձ աւազանս ջրոյ՝ առնել ՚ի նոցանէ
զանտառս զուարճացեալ ծառոց:

7: Ստացայ ծառայս՝ և աղախնայս. և ընդոծինք
եղեն ինձ. և ստացուածք անդէոց, և հօտից բա֊
զումք եղեն ինձ. քան զամենեսեան եղելոց յառա֊
ջագոյն քան զիս յԷՄ:

8: Ժողովեցի ինձ զարծաթ, և զոսկի. և ստա֊
ցուածս բազումս քան զթագաւորաց. արարի ինձ
գուսանս, և երգեցիկս՝ արս, և կանայս: և զփափ֊
կութիւնս որդւոց մարդկան. արարի ինձ մատռուա֊
կեալս՝ արս, և կանայս:

9: Եւ մեծացայ առաւել քան զամենեսեան եղ֊
եալսն յառաջ քան զիս յԷՄ. և իմաստութիւն
յաւելաւ ինձ:

*Այսինքն, արար և զբազում աւազանս ջուրց, և զջրբուղխս ՚ի պարտիզի և ՚ի դրախտի իւրում, առ ՚ի զուարճացուցանել. կամ առ ՚ի ոռոգել և ՚ի դալարուն պահել զամ̄ ծառս դրախտին. ՚ի յոր ոչ միայն էին ծառք պտղաբերք, այլ նաև մայրի ծառք, և նոճիք, առ ՚ի լինել հովանի և ՚ի զարդ դրախտին. և առ այս նաև սակս բազմութեն ծառոյն՝ ասէ զնա անտառս. և ջուրք աւազանայն ոռոգէին ոչ միայն զբազմութիւն ծառոց, այլև բուսոց և ծաղկանց:*

*Հետևեալ տանց բանքն յայտնիք են. և բառին անդէոց, իմա զջոկս կովուց և եզանց. քանզի ո̄մ ջոկք ոչխարաց՝ հօտք կոչին,*

կոչին, այսպէս և ջոկք մեծամեծ կենդա-
նեաց, որք կովուց և եղանց՝ անդեայք կո-
չին: և 'ի սոսին ևս էին մեծաւունեղ
կարգք:

Նոյնպէս և 'ի գուսանս, որք են երգօղք՝
և զքնարս հարկանօղք, եդեալէր զկարգ
զարմանալի. թէ ըստ որքանութեանց, և
թէ որպէս և որո՛վ եղանակաւ պարտ էին եր-
գել: Նմանապէս և 'ի տակառապետսն
որք էին վերակացուք գինւոյ՝ և տրամա-
բաշխօղք՝ եդեալէր զկարգս:

Եւ ասէ. Մեծացայ քան զա͞մ՝ ոչ միայն որքան
առ փարթամութիւն. այլ մանաւանդ որ-
քան առ իմաստութիւն կարգին և համե-
մատութեան զոր եդեալէր 'ի յ͞ամ իւր իւր.
որք այնպէս էին, զի զուշք խելահաս տե-
սօղ՝ առանց մեծի հիացուցման և ապշե-
ցուցման անցուցանէին:

10: Եւ զա͞մ ինչ զորս խնդրեցին աչք իմ, ոչ
զրկեցայ 'ի նոցանէ. և ոչ արգելի զսիրտ իմ յա͞մ
ուրախութենէ. զի սիրտ իմ ուրախ եղև յա͞մ վաս-
տակս իմ. և այն եղև բաժին իմ յա͞մ վաստակոց իմոց:

Այսինքն, զորս խնդրեցին մարդկային և
բնական իղձք և յօժարութիւնք իմ, 'ի յայնց
ոչ զրկեցայ. այսինքն ոչ յետս քարշեցի
զիս. (աստէն իմա խօսիլ զանմեղից ըղձից,
և զյօժարութեանց առ անմեղ իրս) այլ
յառաջացուցի զյօժարութիւնս. և ստացայ
զա͞մ. և վայելեցի, առ 'ի տեսանել թէ
ար-

արդեօք լցէ 'ի նոսա՝ 'ի մինն, կամ 'ի միւսն կայուն բարի ինչ և յաջողուցիչ բաղձանաց. բայց ոչ գտի. զի բնաւքն էին սնոտիք և տառապանք հոգւոյ:

Վա՜յ յարէ. զի սիրտ իմ ուրախ եղև յամ. վաս-տակս իմ. այսինքն, զիմ զոր ստացայ՝ վայե-լեցի. և 'ի յիմ լոյս որոց մե աշխատե-ցայ և զօրս ունեցայ, ինուին ուրախացայ՝ և հրճուեցայ:

Վա՜ այն եղև բաժին իմ յամ. վաստակոց իմոց : գր և այն անցաւորապէս ուրախանալս միայն՝ եղև բաժին իմ, և կամ մասն: Վա՛ այսու-աներ կամի, թէ խաբեցայ ես, և 'ի զուր աշխատեցայ ստանալ զայն իմ. քանզի նոքա ոչ գոլով կայունք, և ես ոչ գոլով անմահ, իրքն այնոքիկ և իմ կարգք նո-ցին այնքան զարմանալիք և գեղեցիկք՝ ոչ միացին ինձ բաժին և մասն, 'ի փարձ վաստակոց և աշխատանաց իմոց. այլ բա-ժինն իմ եղև 'ի նոցանէ միայն 'ի կիր ա-նուլս և ուրախանալս 'ի նոսին. արդ՝ մինչ նաև այն խնդոյն էանց, զի երեկեան ա-ուր ուրախութիւն ոչ գոյ այսօր, հետևի թէ եղէ ես այժմ զզրաչխատ մշակ. ո՛վ յիմէ սրտէ աշխատի և ծառայէ այնպիսւոյ Տն՝ յորմէ յերեկոյին դատարկաձեռն և առանց վարձուց արձակի:

Վա՛ զայս իմ այսպէս եզրակացուցեալ, կամի ունկնդրողաց իւրոց զայս ծանու-ցանել՝ թէ ահա ես զիմ կարելի բարիս

աշխարհի ստայոյ , և վայելեալ զայնս փորձեցի . և այսու ոչ միայն գիտութե̄ իմով , այլ նաև փորձիւ վերահասու եղէ զզուլոյ նոցին ունայնք և սնոտիք : Ուրեմն դուք որք ոչ կարէք առ ձեռն բերել զա̄մ բարիս անցաւորս՝ զի փորձիւ ճանաչիցէք զունայնութիւն , մի վարկէք՝ թէ իցեն իր ինչ . և մի յանկայք ունիլ . այլ ինձ փորձիւ գիտողիս հաւատացեալ՝ յաւիտենական և անանց բարեացն լերուք փափաքօղք . երկնչելով յա̄յ, և զպատուիրանս նր̄ պահելով : Ըստ որում զայս 'ի վախճանի գրոյն յիշէ :

11 : Եւ հայեցայ յա̄մ արարս իմ , զոր արարին ձեռք իմ . և 'ի վաստակս՝ զոր ջանացայ առնել . և ահա ա̄մ ունայն է . և յօժարութիւն ( կա̄ տառապանք ) ոգւոյ . և ոչ ինչ է առաւելութիւն 'ի ներքոյ արեգական :

Ահա աստէն զունայնութիւն ամենից վերոյասացելոց բացայայտէ . և զուրախութիւն ևս որ 'ի վաստակս իւր , զոր 'ի վեր անդր յիշեաց և կոչեաց բաժին իւր . ասէ սնոտի և տառապանք ոգւոյ : Վասնզի ասելով ա̄մ , տայ իմանալ և զայն :

Բայց թէ ասիցես . ուրախութիւն զիա՞րդ կարէ լինել տառապանք և ցաւ : Պատասխանեմ . ո̄չ գինին 'ի յըմպելն երևի ուրախարար . բայց մինչ ըմպօղն թափէ յինքենէ զգինին, սկսանի տխրել ինքեան

տրտ-

տրտմութիւն ինչ և տհաճութիւն · զոր աշ_
խարհօրէն կոչեն մախմուրութիւն , որ է
ցաւ և տառապանք · այսպէս և ուրախու_
թիւն զոր զգամք 'ի յանցաւոր իրս , ընդ
անցանելն, և ընդ թափելն 'ի մէնջ՝ միշտ
տառապանքն տիրէ ոգւոյ, և սրտի մերոյ·
և լինիմք ոմ՟ն զմախմուր :

Այլ իմաստունք յոյժ բարեպէս զգան
զայս · իսկ յիմարքն թէպէտ մտօք ոչ
զգան զայս ցաւ · բայց բնութ՟բ զգան ·
և առ այս իսկոյն 'ի դեղ ինքեանց որոնեն
զայլ ուրախութիւն · զի զառաջնոյ ուրա_
խութեն զցաւ՟ն փարատեսցեն · ոմ՟ն և մախ_
մուրն 'ի գինւոյ՝ որոնեն զայլ գինի · զի
զառաջնոյ ըմպեցելոյ գինւոյ զմախմու_
րութիւն փարատեսցէ : Արդ՝ ոմ՟ն նա՝ որ
զմախմուրութեն ցաւ՟ն միշտ գինեաւ բժշ_
կէ , լինի գինեմոլ, և եղծի յիւրեան ին_
քեան· այսպէս և նոքին ոյք զանցելոյ ու_
րախութեն ցաւ՟ն միշտ ուրախութ՟բ անցա_
կանօք կամին բժշկել , լինին ունայնա_
մոլք · և ըստ ամ՟ի եղծանին 'ի հոգեկան
կեանս իւրեանց :

Այլ ոչինչ է առաւելութիւն 'ի ներքոյ արեգական :
Կամի ասել, 'ի մէջ ուրախութեն և ոչ ու_
րախութեն · 'ի մէջ փառաւորութեն և ան_
փառաւորութե · 'ի մէջ մեծութեն և նուաս_
տութեն · 'ի մէջ փարթամութեն և աղքա_
տութեն · 'ի մէջ փափկակեցութեն և խոշո_
րակեցութեն · և այլոց նմանեաց՝ ոչ է 'ի

մինն առաւելութի ինչ քան 'ի միւսն · զի փարթամութին ոչ է աւելի ինչ քան զաղքատութին · և ոչ ուրախութին աւելի ինչ քան զոչ ուրախութին : Որպէս եթէ, ասիցէ ոք` թէ 'ի հայելւոջ երևեալ մարդն` ոչ է առաւել քան զոչ մարդն · և կամ ստուերն հացին ոչ է աւելի յագեցուցիչ քան զոչ հացն : Վասնզի հաճատարապէս ունայնք են այնոքիկ ամենեքեանք` որք են 'ի ներքոյ արեգական :

Իսկ` յասացելոցս իմանի միշտ նաև այս · թէ իրքն` որք 'ի փառս Այ և առ բարին հանդերձելոյ կենին յաւիտենականի 'ի գործ ածին , և լինին, ոչ են ունայնք · զի լինին առ այնպիսի վախճան` որ է 'ի վերոյ արեգական : Վասնզի մինչ գործն 'ի վախճանէն առնու զանուն , այնք գործողութիւք մերք` որք 'ի յերկրի վախճանաւ երկնայնոյ փառաց լինին` են երկնայինք · և այնու գործք և արարք 'ի վերոյ արեգական:

12 : Եւ հայեցայ տեսանել զիմաստութիւն , և զբօսանս և զանզգամութիւն · ( վասնզի ո՞վ է մարդ որ երթայցէ զհետ խորհրդոց Իւրոց · զոր ինչ արար):

'Ի վեր անդր ժողովօղն մինչ ցուցեալ էր զունայնութի ամենից իրաց` նաև կարգաց նոցին և համեմատութեց, զորս մարդիք գնեն իմաստութբ 'ի յիրս անցականս , յայսմիկ տան դառնայ վերստին առ իմաստութի և առ գիտութի · և բաղդատէ զայն ընդ-

ընդ յիմարութեն և մոլորութեն. և դատանէ զիմաստութիւն յոյժ առաւել գերազանց քան զյիմարութիւն. և յետոյ յառաջ ընթացեալ՝ 'ի 15. տամն ցուցանէ և զիմաստութիւն զայն, որ առ Ա՟ծ ոչ վերաբերի,
զոլ աճելոյդ և ունայնութի։

Վ՟ն որոյ զբանս այսորիկ տան իմաստ այսպէս. Հայեցայ տեսանել զիմաստութիւն և զխոտորումն և զանզգամութիւն : Այսինքն, Հայեցայ և քննեցի՝ և 'ի կշիռ համեմատութեն եդի զիմաստութիւն և զզգօսանս. այս զփքացմունս, կամ զմոլորութիւն. և զանզգամութիւն. այսինքն զյիմարութիւն, կամ զանգիտութիւն. և տեսի, զի կարի տարբերք էին. այս յոյժ գերազանց և ազնիւ էր իմաստութիւն քան զանգիտութիւն. և այս այնքան՝ որքան լոյսն ազնիւ է քան զխաւարն : Վ՟ն որոյ ո՜վ ունկնդիրք իմ, ջանացարուք հետևիլ իմաստութեն և ստանալ զայն, և ոչ մնալ 'ի յիմարութեն. վ՟ն զի ոչ ոք մարդ առանց հետևելոյ իմաստութե և հանճարոյ՝ իւրովք բնականօքն, և կամ ըստ սնոտիմանն բնութեն իւրոյ ընթանալով կարէ վարել զուղիղ կեանս:

Ասէ յարէ. Զանզի ո՞վ է մարդ, որ երթայցէ զհետ խորհրդոց խորոց զոր ինչ արար. այս ո՞վ է այն մարդ, որ առանց հայելոյ 'ի լոյս բանին, և առանց անսալոյ իմաստութեան՝ երթալ կարիցէ զհետ ուղիղ խորհրդոյն այն 'ի քննաւս գործս իւր՝ զորս առնէ. և

կամ զհետ ուղիղ խորհրդատուութե օրի_
նաց՝ և պատուիրանացն ա՞յ : Այլ զի մարդն
խռով խնքեամբ միշտ սխալի և թիւրի
ո՞չ զգիծ առանց քանոնի քարշեցեալ ·
իսկ ըստ քանոնի ա՞ծային օրինաց և իմաս
տութե ընթացեալ՝ կարէ լինիլ ուղիղ
'ի գործս իւր :

Այլ աստ գիտելի է · զի մանիկս այս որ
մեկնեցաւ , ո՞չ փարենթազիզաւ զատե_
ցեալ իմն է 'ի կարգէ շարադրութե · և
հետևեալ տունն անմիջապէս հետևի ան_
ցելոյ մասին · այսպէս · Հայեցայ տեսանել
զիմաստութի , և զշփոթանս , այսինքն զփքաց_
մունս · և զանզգամութի , այ՞ զանգիտութի :

13 : Եւ տեսի , թէ է առաւելութի իմաստութե
քան զանմտութե · որպէս առաւելութի լուսոյ
քան զխաւարի :

Այսինքն , բաղդատեցի զիմաստութին
ընդ յիմարութեան · և տեսի՝ զի այնքան
աւելի՛ էր իմաստութին քան զյիմարու_
թին՝ որքան լոյսն քան զխաւար :
Այլ աստ գիտելի է · զի իմաստութիւնս
այս երկրաւոր , որ բաղդատեցաւ յի_
մարութե է որպէս զլոյս՝ եթէ բաղդա_
տիցի ա՞ծայնոյ և երկնաւորի իմաստու_
թե՝ այնքան նուաստանայ՝ մինչ զի երևի
որպէս զխաւար :

14: **Իմաստնոյ աչք 'ի գլխոյ իւրում.** այսինքն 'ի գլխոջ իւրում. **և որ անմիտն է՝ ընդ խաւար գնայ. և ծանեայ՝ զի մի դիպուած է յամենեսին 'ի նոսա:**

Այսինքն, որպէս աչքն որքան է 'ի գլխոջ մարդոյն, տեսանէ մարդն, և ուղիղ ընթանայ. այսպէս և միտն մարդոյ, որ է աչք հոգւոյն՝ որքան է 'ի վերայ մարդոյն՝ 'ի համայնս գործս և 'ի բանս իւր՝ ուղղապէս վարէ զկեանս: Եւ զայս ունին իմաստունքն, որք միշտ զուշն իւրեանց և զմիտն ունին 'ի վերայ իւրեանց:

**Եւ որ անմիտն է, ընդ խաւար գնայ:** այսինքն, անմիտն և յիմարն ոչ ունի 'ի վերայ իւր զմիտն իւր՝ որ է աչք հոգւոյն. ուստի ոպ զկոյր ընդ խաւար գնայ:

**Եւ ծանեայ՝ զի մի դիպուած է յամենեսին 'ի նոսա:**

Այսինքն. բայց տեսի և ծանեայ, զի թէ յիմարին, և թէ իմաստնոյն մի դիպուած է. զի միով և նոյնով դիպուածով մահուանին: Եւ աստ իմանի բանն զայնմանէ իմաստնոյ, որ ոչ 'ի փառս Տ՟ն և 'ի ծառայութի նր՟ 'ի գործ ածէ զիմաստութին. որոյ վ՟ճ և լինի նոյնոյ թէուրեմն ը՟ յիմարին. և 'ի ներքոյ նոյնոյ դիպուածոյ: Բայց որք 'ի փառս Տ՟ն 'ի գործ ածեն զիմաստութիւն, և են հանդերձ սր՟ գործովք իմաստունն, նոցին և անմտին ոչ է նոյն դիպուած. քանզի առաքինի իմաստնոյն

մարմնաւոր մահն է սկիզբն հոգևոր կե_
նաց. իսկ յիմարաց մահն է սկիզբն յաւի_
տենականին դատապարտութեան։ Եւ այլն։

15։ Եւ ասացի ՚ի սրտի իմում, թէ որպէս դէպ
դիպուած է անմտին՝ և ինձ դիպեսցի. և ընդէ՞ր ի_
մաստնացայ. զաւելորդս խօսեցայ ՚ի սրտի իմում.
զի և այն ևս ունայնութիւն է. վասնզի անմիտն
յաւելորդացն խօսի։

Այսինքն, Ժողովողն մինչ ետես՝ զի նոյն դիպուած է իմաստնոյն և անմտին, ասաց ՚ի սրտի իւրում. թէ մինչ այսպէս է, ՚ի զուր է իմ իմաստութիւն իմ, եթէ ոչ վե_րաբերցի առ Ա՛ծ և առ կեանն երանա_կան. և զայս ՚ի վերայ իւր ասելով նաև զայլս խրատէ. և կամի ասել. որ իմաս_տունն է, պարտի ՚ի գործ ածել զիմաս_տութիւն ՚ի փառս այ. ապա թէ ոչ՝ աւե_լորդ իմն է այնպիսի իմաստութիւն և հա՛_սարակ անմտութեան. և զոր ինչ խօսի զի_մաստութէ այնպիսի անբարեգործ իմաս_տունն՝ վասն իւր աւելորդ իմն է և անօ_գուտ։ և զի զաւելորդս և զանօգուտս խօսիլն է ունայնութի. ուստի ասէ. զի և այն ևս ունայնութիւն է։ Եւ առ ՚ի ցուցանել՝ թէ այնպիսի իմաստունն է անմիտ, ասէ։ Որ անմիտն ՚ի յաւելորդացն խօսի. այս զանօգ_տից։ Եւ նոյն էր՝ թէ ասիցէր. որ խօսի զաւելորդս և զանօգուտս, կամ խօսի զաւելորդաց և զանօգտից՝ է յիմար. իսկ իմաս_

իմաստութիւնն այն որ ոչ է երկիւղած յոյ և առաքինի, զոր ինչ և խօսիցի զիմաստութե, (թէ և մերթ վասն այլոց իցէ օգուտ) մն̃ իւր է աւելորդ և անօգուտ. և զանօգտից իւրաց խօսի որքան առ ինքն. ուրեմն այնպիսի իմաստութիւնն է յիմար։

Այս աստ ծանիր, զի յատուկ է անմտաց խօսիլ զանօգուտս և զաւելորդս, արտահանեալ զայնս ՚ի գանձարանաց սրտից իւրեանց, որք լի են աւելորդ և անօգուտ իրօք։

16։ Քանզի ոչ գոյ յիշատակ իմաստնոյ ընդ անմտին յաւիտեան. վասն զի աւուրքն իսկ յառաջին որք գալոց են, ամ̃ ինչ մոռացեալ եղև. և զիարդ մեռանիցի (այ̃ և զի մեռանի) իմաստունն ընդ անմտին։

Այսինքն. ՚ի յապագայ ժամանակի ոչ վերանայ յիշումն և յիշատակն իմաստնոյն՝ ոմ̃ և անմտին. զի նոյնոյ թէութե են, և սա է. յաւիտեան. այ̃ ՚ի յապագայ յաւիտենական ժամանակաց՝ և ՚ի միջանկենաւորութե։ Վասն զի ոչ գոլով իմաստութե՛ն այն ՚ի փառս Տն̃, զոչ լինի բարի յիշատակ թողու. իմաստնոյն. և քանզի ՚ի յաւուրս որք գալոց են, ամ̃ այսպիսիք մոռացեալք լինին։

Այ զիարդ մեռանիցի. այ̃ քանզի մեռանի իմաստունն ընդ անմտին. և է հաւասար նմա։ Աստի ոմ̃ բարի յիշատակ անմտին

ջնջե-

ջնջեցեալէ, այսպէս և այնպիսւոյ իմաստ
նոյն։

17։ Եւ ատեցի միանգամայն զկեանս իմ. վա̄ն
զի չար էր 'ի վ̄ր իմ արարածն. որ արարեալն 'ի
ներքոյ արեգական. զի ա̄մ ինչ ընդունայնութիւն է,
և յօժարութիւն ոգւոյ։

Այսինքն, կեանն որ 'ի փառս ա̄յ ոչ լինի վարեցեալ, է ունայն. և գոլով ունայն՝ է չար. և մինչ է չար՝ 'ի հարկէ և ատելի։ Եւ զայս ես 'ի վ̄ր իւր ասելով խրատէ զունկնդիրսն։

Եւ յարէ. վասն զի չար էր 'ի վ̄ր իմ արարածն՝ որ արարեալ 'ի ներքոյ արեգական։ Ոչ կամի ասել՝ թէ արարածքն որք են 'ի ներքոյ արեգական են չարք, մինչ ըստ ինքեանց են բարիք՝ ըստ որում են ստեղծուածք ա̄յ և էակք. այլ ասէ. չար էր 'ի վ̄ր իմ. զ̄ի որքան առիւ, և վ̄ս իմ։ Կամ զի յորժամ զստեղծուածս, և կամ զկեանս մեր ոչ բարեպէս՝ այլ չարապէս 'ի կիր առնումք, 'ի մեզ, և վ̄ս մեր լինին չարք։ Զոր օրինակ, մինչ ցրտացելոյ ուրուք ողորմեալ ոք տայ զհուր՝ զի այնու ջերմանայցէ. նոյն հուրն բարի է ըստ ինքեան, նաև նմա՝ որում տուաւ, եթէ այնու ջերմանայցէ. բայց եթէ ցրտացեալն՝ այնու հրով զինքն այրիցէ, վասն նր̄ չար ասի հուրն. և այլն։ Զի ա̄մ ինչ ունայնութիւն է և յօժարութիւն ոգւոյ. ա̄յ տառապանք և բեկումն

կումն հոգւոյն ։ Այսինքն իմն ինչ որ 'ի փառս այ̃ ոչ 'ի գործ ածի, ունայնութիւն է։

18 ։ Ա՞տեցի զա̃մ վաստակս իմ. զոր ջանա_ցայ 'ի ներքոյ արեգական. վասն զի թողում զայն մարդոյ, որ լինելոց է զկնի իմ։

Աստէն ևս զբանն 'ի յանձն իւր առակեալ՝ խօսի. և 'ի սմին տան զբանն իւր վերածէ առ այնս՝ որք յիմարաբար ջանան ժողո_վել զփարթամութիւս. և զորս ստանան, ոչ 'ի գործ ածեն 'ի փառս այ̃. այլ միայն ագահութե̃ ունիլ փափաքին ։ և վասն զի ինքեանք ոչ են անմահք զի վայելիցեն, ուստի թողուն յետնամնացից՝ զորս ոչ գի_տեն՝ արդեօք չարք լինելոցք են թէ բա_րիք. իմաստունք լինելոցք են թէ ան_միտք ։ և մինչ այսպէս նոյն վաստակն՝ ո̃պ աշխատանքն և ջանն զորս 'ի գործ ածեն, 'ի զուր է և ունայն. հետևի զի իցէ և ատելի ։

Ուստի ասէ. Ատեցի զա̃մ վաստակս իմ. իբրու թէ ասիցէ, ատելի է այնպիսի ջանն և վաստակն՝ որ 'ի գործ ածի առ ստացումն փարթամութեանց։ Բայց եթէ ջանն առանց մեղաց և թարց ագահութեան իցէ, և վախ_ճանն բարի, ո̃պ եթէ համարեցեալ դրամքն 'ի փառս այ̃ շարակարգիցին բարեաւ կեր_պիւ, այնպիսի ջանն ոչ է ատելի և ունայն։

19 ։ Եւ ո՞վ գիտէ , իմաստուն լինիցի , թէ անմիտ · եւ իշխեսցէ ամենայն վաստակոց իմոց զոր ջա-նացայ · եւ յորս իմաստնացայ ընդ արեգակամբ · սակայն եւ այն ունայն է ։

Այսինքն · որք գանձեն վասն որդւոց , ո՛չ գիտեն՝ թէ որդիքն անառակք եւ մսխօղք լինին՝ թէ շահածուք եւ բարեաց պահօղք ։ եւ մինչ ոչ գիտեն , զորքան իմաստութիւն եւ զխոհեմութիւն ՚ի գործ ածեն առ ՚ի գան-ձել զբազումս՝ եւ առ ՚ի շինել զմեծածախ պալատս վասն որդւոց , նաեւ նոյն իմաստու-թիւնն եւ խոհեմութիւնն , որ ՚ի գործ ածաւ առ ՚ի թողուլ զաւակացն զմեծութիւն , կամ զթագաւորութիւն , է ունայն ։ Եւ մինչ զբանն ՚ի յանձն իւր առակէ , ասէ · յորս իմաստնացայ · ըստ զորս իմաստութեամբ շահեցայ եւ ստացայ · եւ կամ շինեցի եւ կարգաւորե-ցի առ ՚ի ժառանգեցուցանել որդւոցս , նաեւ նոյն իմաստնանալս՝ ունայն է եւ ու-նայն , մինչ ոչ գիտեմ թէ որդին իմ ար-դեօք պահօղ եւ վայելօղ պարտի լինել , թէ մսխօղ եւ եղծօղ այնց ամենից ։ Եւ այս իսկ յայտ եղեւ նաեւ ՚ի սաղոմոնի՝ որ զայնքան հզօր եւ զկարգաւորեալ եւ զփառաթագաւորութիւն եթող որդւոյ իւրում ռոբովամայ · սակայն ՚ի միջոցի սակաւու ժամանակի ՚ի ձեռն յիմարութեան որդւոյն՝ գրեթէ ժ ազգի անշքեղացեալ ատրկացաւ թագաւորութիւնն այն մեծ ։

20 : Եւ դարձայ հրաժարեալ սրտիւ իմով, յամ
վաստակոց իմոց՝ զոր վաստակեցի ընդ արեգակամբս :

Այսինքն, մի՛ որոյ սիրտն իմ դարձաւ և հրաժարեցաւ յամ վաստակոց իմոց. իբրու թէ ասիցէ՝ զզուեցաւ սիրտ իմ 'ի վաստակոցս. զի յամենից զորս աստացայ աշխատանօք. և ոչ կարեմ սիրել զնոսա որպէս զարդիւնս ինչ իմոց քրտանց. զի զսէրն իմ յետս դարձուցի 'ի նոցանէ հրաժարել սրտիւ: Եւ պատճառն հրաժարման էր այն՝ զոր ասաց 'ի վերոյ, թէ որոց թողում զայնս՝ ոչ գիտեմ, թէ իմաստունք լինելոց են՝ կամ յիմարք. և միայն զոչ գիտելն զարժանաւորութիւն ժառանգողաց՝ բաւական պատճառ համարի առնելոյ զջանն առ 'ի ժողովել զինչս մի այլոյ:

21 : Զի է մարդ՝ զի վաստակ նորա արդարութեամբ եւ իմաստութեամբ է. (ըստ այլոց, գիտութեամբ, և իմաստութեամբ է:) եւ մարդ՝ որ ոչ ջանացաւ. զի և մարդոյ որ ոչ ջանացաւ 'ի նմա՝ տայէ նմա զմասն իւր. սակայն եւ այն ընդունայնութիւն է, եւ չարութիւն մեծ :

Այսինքն, լինի բազմիցս և այս. զի ոմն մարդ գիտութեամբ և իմաստութեամբ, կամ արդարութեամբ, զի առանց ագահութեան 'ի ձեռն իմաստութեան շահի զգանձս բազումս աշխատանօք իւրովք. և 'ի վախճանի թողու զայնս մարդոյ՝ որ ոչ ջանացաւ 'ի նմա.

Զի

իբր այնպիսւոյ մարդոյ թողու, որ դատար
կակեաց է և փափքուս. և ըստ ամի առանց
ջանի ուրուք առ խմն բարի : Այլ ասելն
տայց նմա զմասն իւր, նշանակէ զթողուլն
զամ ստացուածս իւր այնպիսւոյ դա_
տարկապորտի:

Այլ յարէ. սակայն և այն ընդունայնութիւն է
և չարութիւն մեծ: Քանզի շրջումն լինի իրն,
մինչ ջանացողն և շահօղն զայնս իրս՝ զուրկ
է 'ի վայելելոյ. և այն որ ոչ ջանաց և ոչ
աշխատեցաւ, նաև ոչ կամի երբէք աշխա
տիլ, չարաչար վայելէ, և ուտէ զայնս:

22 : Քանզի զի՞նչ օգուտ լինի մարդոյ յամ
վաստակս իւր. իբր 'ի ձեռն ամ վաստակոց
իւրոց : և յօժարութիւն սրտի իւրոյ. իբր 'ի ձեռն
տառապանաց սրտի իւրոյ. յորում ինքն ջա_
նայ 'ի ներքոյ արեգական, իբր 'ի յորս ինքն չար_
չարի 'ի ներքոյ արեգական:

Այլ ասէն կամի ասել՝ թէ մինչ ումեմն
անառակի և դատարկապորտի թողու
զինչս իւր, զի՞նչ օգուտ լիցի ինքեան այն
քան աշխատիլն մարմնով, տառապիլն սր
տիւ, և չարչարիլ 'ի ձեռն ջանից ժողովե_
լոյ զինչս 'ի ներքոյ արեգական:

23 : Զի ամ աւուրք նր ցաւոց, և տրտմութիւն
շփոթմունք իւր. և 'ի գիշերի ո՛չ ննջեաց սիրտ նր.
սակայն և այն ունայնութիւն է:

Այսինքն, ամ աւուրք նորա են աւուրք
ցաւ_

ցաւոց. և զբօսանք նր՟, զի զբաղմունք նր՟ են զբաղմունք տրտմութեան: Աստէն բառս այս՝ չեօսանք, դնի փոխանակ զբաղմանց որք են նման աւելաց ջուրց. և որպ՟ յայլուր՝ այսպէս և աստէն զաւելման զբաղմանց նշանակէ:

Եւ յարէ. Եւ 'ի գիշերի ոչ ննջեաց սիրտ նր՟. զի ոչ հանգչի սիրտն. զի որ ունի զջան ժողովելոյ զինչս, ոչ միայն 'ի տուընջեան, այլ և 'ի գիշերի ոչ հանգչի սիրտն. զի սէր արծաթոյն է անողորմ դահիճ, որ հանապազ տանջէ զայնս՝ զորս միանգամ կալեալ է և արկեալ 'ի գուբ բանտի իւրոյ:

24: Ո՛չ ինչ գոյ բարի մարդոյ՝ բայց զոր ուտիցէ՝ և ըմպէ. և զոր ցուցանէ բարի անձին իւրում 'ի վաստակսն իւրում. սակայն և զայն տեսի՝ զի 'ի ձեռանէ այ՟ է:

Կամի ասել. մինչ առաւել աշխատին մարդիք առ 'ի կուտել զբազում դրամս, յայնց որքան և բազումք իցեն, ոչ գոյ վն՟ ինքեանց այլ օգուտ և բարի՝ եթէ ոչ այս՝ զի անտի ուտիցեն և ըմպիցեն համեստաբար՝ և վասն պիտանաւորութեան բնութեն, և ոչ վն՟ որկրամոլութեն՝ որ է վնաս: Ուրեմն մինչ ունին զայնքան՝ որքան բաւական է ինքեանց 'ի պէտս կերակրոց՝ և ըմպելեաց, առաւել և ունայն է ձգտիլն առառաւել փարթամութի: Ըստ այսմ Պօղոսի, ունիմք զկերակուր, և զհանդերձ. և այ_

սու

նու շատասցուք · 1. Տիմոթ. 6. 8 ։ Յորում բանի իմացեալ լինի այս՝ թէ փարթամութիւն քրիստոնէից՝ է ունիլ զկերակուր եւ զհանդերձ. իսկ աւելի քան զայս որոնելն է ունայնութիւն կամ ունայնասիրութիւն ։ Ասէ յարէ · Ա՛ զոր ցուցանէ բարի անձին իւրում ՚ի վաստակսն իւրում ։ Այսինքն ՚ի յընչիցն զորս ստացաւ՝ գոյ ինքեան եւ այս · զի ՚ի ձեռն վաստակոց իւրոյ ցուցանիցէ անձին իւրում զբարիս · եւ այս յայն ժամ լինի, մինչ ազատէ մարդն ՚ի յագահութէ̃, եւ ՚ի սիրոյ դրամոց ։ ուրեմն որ ագահութեա̃ ժողովէ, ոչ ցուցանէ անձին իւրում զբարի · զի միշտ ՚ի հնոցի սիրոյ արծաթոյն եռեալ զինքն տոչորէ · նաեւ զպիտոյս անձին իւրոյ՝ եւ ընտանեաց, կա̃ անբաւականաբար տայ · եւ կա̃ եթէ տայցէ ըստ բաւականին, տանջի վա̃ պակասեցման թուոց դրամոյն։ Որդ՝ մինչ եցոյց թէ այլ բարի ոչ գոյ մարդոյն ՚ի յընչիցն՝ եթէ ոչ համեստաբար ուտելն անտի՝ եւ ըմպելն, եւ բարի առնել անձին իւրում ոչ ընկղմելովն ՚ի սէր բազմացուցման դրամոց, եւ տանջիլ նոքօք · յարէ եւ զայս ։ Աճոյն եւ զայն տեսի՝ զի ՚ի ձեռանէ ա̃յ է ։

Ասէ այս երեք կերպիւ · նախ՝ զի պարգեւ ա̃յ է, թէ ոք ունիցի զինչս բազում՝ եւ ոչ լինիցի ագահ եւ արծաթասէր , յորմէ բանի իշխանութիւն ուտելոյ եւ ըմպելոյ ։ Երկրորդ՝ պարգեւ ա̃յ է , զի զինչս իւր

հա_

համեստաբար՝ և ՚ի փառս ՟այ ՚ի գործ ա-
ծեալ, այլ զբարի բաժինն ՚ի գոյից իւր
ոց, և ՚ի փառս ՟այ ուտիցէ և ըմպիցէ։
Երրորդ, զի եթէ ոք նաև զմին ունիցի,
զօրս համարի կարել ուտել՝ և ըմպել՝ և
ապրիլ, ոչ կարէ կեալ և ապրիլ այնու՝
եթէ ոչ կամիցի Ա՟ծ, և պարգևեսցէ նմա
զայն՝ զի այնու հացիւն կեցցէ. քանզի ա-
ռանց ՟այ զհացն զայն զոր ունի, կամ ոչ
կարելոյն ուտել՝ մեռանի ՚ի սովոյ. կամ
եթէ ուտիցէ, ոչ տայ նմա հացն այն
զկազդուրն և զկեանս ։ և առ այս ասէ սբ
գիրն. ոչ միայն հացիւ կեցցէ մարդ. այլ ամ
բանիւ որ ելանէ ՚ի բերանոյ ՟այ. Մատթ. 4. 4։
Այսէս, բանիւն ՟այ թէպէտ հացի կարէ
մարդն կեալ. բայց հացիւն առանց բա-
նին ՟այ և կամացն՝ ոչ կարէ կեալ։

25 ։ Քանզի ո՞վ իցէ, որ ուտիցէ և ըմպիցէ
առանց նորա ։

Այսինքն, առանց մասնաւոր կամացն
՟այ ։ Քանզի եթէ Ա՟ծ ոչ կամիցի. թէ
այս հաց՝ այս մարդոյ լինիցի կերակուր
և սնուցիչ, մարդն այն ոչ կարէ ուտել
զայն հաց՝ և կամ ապրիլ ։ Քանզի Ա՟ծ
որ ետ ստեղծուածոց իւրոց կարել առ-
նել, ոչ երբէք կարեն առնել՝ և զկարո-
ղութիւն իւրեանց ՚ի գործ ածել, եթէ ոչ
տայցէ ն՟ց Ա՟ծ զհրաման, զի զունեցեալ
կարողութիւնն ՚ի գործ ածիցեն. որդ-ոն,

հայն որ ունի զկարողութիւն յագեցուցա_նելոյ և սնուցանելոյ, ոչ երբէք կարէ յա_գեցուցանել՝ կամ սնուցանել՝ եթէ ոչ մաս_նաւոր հրամանաւ՝ և ակնարկմամբն այ։

26։ Ոի մարդոյ բարւոյ առաջի երեսաց նո_րա ետ զիմաստութիւն և զգիտութիւն, և զուրախութիւն․ և մեղանչականին ետ զզբաղումն, յաւելուլ և ժո_ղովել՝ և տալ բարւոյն առաջի երեսաց այ․ սակայն և այն ունայն է, և յօժարութիւն ոգւոյ։

Այսինքն, Ած զանձինս բարիս միշտ ա_ռաջի երեսաց, զի առաջի աչաց իւրոց ունի․ վ՞զի սիրելիքն միշտ առաջի աչաց և նախախնամութե և գթութե սիրողին են։ Ուստի գրեթէ ասէ․ Ած մարդոյ բարւոյ՝ որ է առաջի երեսաց իւրոց, զի հաճոյ է իւրեան և սիրելի, ետ զիմաստու_թի, և զգիտութի, որով մարդն այն բա_րի՝ 'ի կուտուած գրամոց ոչ չարչարի, և ապահովութե ախտիւ ոչ վշտագնի, գիտե_լով յայ առեալ իմաստութիւն՝ թէ մեծ խելագարութիւն է մարդոյ ծառայել ոսկ_ւոյ և արծաթոյ, և կապել զսիրտ իւր ընդ այնոց, որք կորստականք են, և անկայունք։ Ուստի զորինչ տայ Ած նմա 'ի դոյից աշխարհիս՝ թէ սակաւ իցէ, թէ յոլով, անզմնազմնաբար ընդունի, և 'ի գործ ածէ միշտ զայնս 'ի փառս այ․ և ճանաչէ, թէ յայնց ունի զայս միայն, զի ըստ այ կամայն ուտիցէ և ըմպիցէ համեստաբար՝

և

և առանց որկրամոլութե. և առ այս վախ
ճան միայն ունի, զի ապրեալ այնու՝ ծա_
ռայեսցէ այ. և համապազ ունի ՚ի մտի,
թէ Նա է որ կերակրէ զինքն միջնորդութե
այնց ունեցելոց՝ զորս տուեալ ՚ի կեանս
իւր. և ոչ թէ իւրն ջան, և կամ ունեցեալ
գոյքն. որք թէ և ոչ իցէին, Նա նմանա_
պէս կերակրէր զինքն այլով միջոցիւ:
Որդ՝ Նա մինչ տայ արանց բարեաց զայս_
պիսի գիտութի, հետևի նաև տալ զու_
րախութի: Ոչ՞ պատճառն է. զի յայս_
պիսւոյ գիտութե միշտ ծնանի ուրախու
թի: վն զի ո՞ է այն՝ որ տեսանիցէ զինքն
միշտ ՚ի ձեռանէ այ սն զորդի ՚ի ձեռանէ
հօր կերակրիլ՝ և ոչ ուրախանայցէ: Նաև
ասի մծ տալ բարեաց զուրախութիւն.
քանզի բարիքն զայն զոր ունին, չարաչար
՚ի գործ ածել ոչ գիտեն. և զինքեանս ոչ
զյիմար և զխելագար ՚ի ծառայութի մա_
մոնայի ոչ դրամէն. այլ ինքեանք որպէս
զՏր ազատաբար ՚ի վն գոյից իւրեանց
իշխեն և թագաւորեն. վն որոյ հետևի՝
զի համապազ ուրախք իցեն:
Ոչ՞ մեղանչականին ետ զբաղմունս յաճախել և ժո_
ղովել՝ և տալ բարւոյն առաջի երեսաց այ: Այս_
իմքն, իսկ այնց՝ որք ոչ են բարիք, այլ
մեղաւորք, և Նա տուեալ նց զպարապմու_
թի գոյից, և զհարստութի, տուրքն այն՝
թէպէտ ի որում յայ, ոչ է զբաղմունք,
այլ չարչարանք և տանջօղ գանձի. բայց

մեղաւորս չարաչար 'ի գործ ածեալ՝ առնէ զայնս ինքեան զպատգամսն, որ տանջօղ և չարչարօղ. և որքան առ այս՝ աւէ Ած տալ մեղանչականին զպատգամսն ։ Որք՝ մեղաւորն և յիմարն մինչ ընկալնու յոյ զակաւ ինչ առատութեն գոյից, նոյնն լինի ինքեան աւիթ սկսանելոյ այնուհետև ապահովութե յանձնելն և ժողովել. քանզի 'ի յունէին զհազար դահեկան՝ սկսանի ձգել զնիրան 'ի ակն երկուց հազարաց. և անտի յառաջ ընթացեալ, ոչ երբէք ասէ՝ շատ է ինձ և բաւական ։ և այսու համապատ 'ի յապահութէ որք 'ի յանօղորմ դահճէ տանջի առ 'ի ջանալ ժողովել զպատգամսն. և մինչ բազմացուցեալ զգոյս իւր՝ հասուցանէ 'ի մեծագոյն թիւս, ինքն մեռանի. և տայ բարուց առն. որ վերամնան գոյքն իւր 'ի ժառանգութի առն բարուց ։

Իսկ զի գնի տալ, ոչ թէ ինքն ապահութեն ժողովօղն տայ, այլ Ած պատժեալ զապահն, զժողովեալ գոյս նր տայ արանց բարեաց ։ Այլ երբեմն Ած զպատգամութիս ոսկւոյ՝ և արծաթոյ հեթանոսաց, զորս ապահութ ժողովեալքն, եա առն բարւոյ, որ արքայն դաւթի. զոր 'ի պատերազմի կորացուցեալ՝ արար, զի զնմ թշնամիս յաղթեալ՝ զգանձս նոցին և զնմ փարթամութիս առ ինքն գրաւիցէ ։

Իսկ յարէ. Աղօթի Երեմայ ։. զի ցուցէ, թէ

թէ նախախնամութեամբ ոչ լինի այն. և ոչ թէ ագահն կամաւ խուրշ տայ զգոյս իւր առն բարւոյ: Արդ՝ 'ի 21. տան ստացեալ էր՝ թէ երբեմն գոյք և ինչք իմաստնոց ջանացողաց և աշխատողաց՝ վերամնան յետոյ 'ի ձեռն դատարկապորտ անձանց. և անուանեալ էր ունայնութիւն զայնպիսի ժողովումն. ուստի ասէն եդ նաև չհակադարձն նորին. և եցոյց թէ նաև երբեմն գոյք ագահաց գնան 'ի ձեռս արանց բարեաց. և ոմ զայնպիսի ժողովումն կոչեաց ունայնութիւն, նմանապէս և մանաւանդ զայսպիսի ժողովումն կոչէ ունայնութիւն, և յօժարութիւն ոգւոյ. զի տառապանք, և կամ անկարգ տուփմունք հոգւոյ: Բայց գիտելի է. զի ունայնութիւն նորին ծագի աստուստ միայն, զի բարեպէս ժողովեցեալն՝ 'ի ձեռս անարժանից գնայ: Իսկ ունայնութիւն սորին ծագի միայն աստուստ, զի չարապէս ժողովեցաւ 'ի յագահէն:

## ԳԼՈՒԽ. Գ:

ՅԱՅՍՄ գլխոյ ցուցանէ զանկայունութիւն իրաց 'ի չորսն ժամանակին, ըստ որում են համայնք Երկրաւորք: Առ նախ 'ի չորսն յաջորդութեանց եւ փոփոխութեանց. քանզի իրք ժամանակաւորք այլայլութեամբ ժամանակին անցանեն. եւ ըստ ժամանակին լինին բարիք, եւ չարք, օգտակարք, եւ վնասակարք. եւ պէսպէս բազմազան օրինակօք մինչեւ 'ի 14. համարն: եւ անտի մինչեւ 'ի 16. ցուցանէ, թէ իրք ժամանակաւորք բաղդատարկեալք, եւ կայուն արեգակնամանց նը, են ունայնք: Երրորդ՝ անտի մինչեւ 'ի 18. համարն՝ ցուցանէ, թէ ժամանակին զհամայնս փոփոխելով՝ հերևբար ներածէ զբանաւորութիւնս, եւ զբանաւորս, ընդ որոց թագաւորեն եղեռնութիւնք եւ եղեռնագործք. եւ պատուասէրն, կամ մերժեն աստուածէնութիւնք եւ աստուածէնք: Չորրորդ՝ 'ի 18. համարէ մինչեւ 'ի վերջն բացայայտէ զմահուանէ մարդոյ, որ հանգունաբար մեռանի. ընդ անասնոց:

※ ԺՈՂ. Գ: ※



Ամենայնի ժամանակ է եւ ժամ ամենայն իրաց 'ի ներքոյ երկնից:

2: Ժամանակ ծնանելոյ. եւ ժամանակ մեռանելոյ: ժամանակ տնկելոյ, եւ ժամանակ խլելոյ:

# ※ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ։ ※

Այսինքն , երբ աշխարհիս են ունայնք նաև մ՚ն այսորիկ , զի իւրաքանչիւր իր լինի պիտանի իւրում ժամանակին, և արտաքոյ ժամանակին է անօգուտ և մերժելի ։ Ուրեմն կարի ունայն է ․ որովհետև կախի օգուտն իւր ՚ի ժամանակէն , որ է փոփոխական ։ Նա՛ զայս եդեալ՝ հետևի ․ և շարայարէ զչորեքտասան օրինակս ։ որոց առաջինն է ․ Ժամանակ ծնանելոյ, և ժամանակ մեռանելոյ ։ Այսինքն , որք ծնանին, և կամ՝ ծագին բնականաբար ; որպէս ունին զժամանակ ծնանելոյ և ծագելոյ , նոյնպէս ունին և զժամանակ մեռանելոյ , և շիջանելոյ ։ Վասնզի մարդ , և անասունք մինչ են յղանեցեալք յարգանդի՝ է ժամանակ՝ զի ծնցին ․ ո՛չ մարդն ծնանի յիններորդի ամսոջ յղանեցման ։ և ո՛չ է ժամանակ ծնանելոյ, նմանապէս է և ժամանակ մեռանելոյ ․ քանզի ծերանայ ․ և ՚ի ծերութե՟ է ժամանակ մեռանելոյ , ո՛չ ՚ի լրման Թ ամսոյ յղանեցման իւրոյ էր ժամանակ ծնանելոյ ։ Ըստ այսմ իմա և զանասնոց, և զամենից բուսոց , և զծագմանց իրաց բնականաց ․ զի որք ՚ի ժամանակի ծագին, նոքին ունին և զժամանակ պակասելոյ ։ Նա՛ զայս ասաց սաղօմօն զամենից իրաց բնականաբար ծագողաց ․ և զկնի սորա յարէ զիրաց արհեստականաց , ասելով,

ժամանակ տնկելոյ, և ժամանակ խլելոյ։ Այսինքն. պարտիզպանն 'ի ժամանակին յորում պարտ է տնկել այս ինչ տունկ՝ եթէ ոչ տնկիցէ, ոչ բուսանի. ուրեմն և զխլելն զայն եթէ 'ի ժամանակի իւրում առնիցէ, է բարի. այլազգ՝ է չար։

3։ Ժամանակ սպանանելոյ, և ժամանակ բժշկելոյ. ժամանակ քակելոյ, և ժամանակ շինելոյ։

Այսինքն, մինչ զոչխարս վասն ուտելոյ սպանանեմք, է ժամանակ սպանանելոյ. բայց մինչ ոչ է լինելոց 'ի պէտս մարդկանց, ոչ է ժամանակ սպանանելոյ։ Այլ եթէ իցէ հիւանդ, է ժամանակ բժշկելոյ։ Ըստ այսմ և 'ի քաղաքականսն՝ ժամանակ է սպանանելոյ զմարդն՝ մինչ ծանր յանցանօք եղեալ է մահապարտ. և ժամանակ բժշկելոյ՝ մինչ է վիրաւոր, և ոչ մահապարտ։ Ժամանակ շինելոյ. յր̃ մինչ ոչ ունիմք զտունս։ և ժամանակ քակելոյ. մինչ հնացեալ է տունն՝ և մերձ է 'ի կործանումն։

4։ Ժամանակ լալոյ. և ժամանակ ծիծաղելոյ. ժամանակ կոծելոյ, և ժամանակ կաքաւելոյ։

Այսինքն, է ժամանակ լալոյ, մինչ ունիմք զմեռեալ 'ի տան։ և է ժամանակ ծիծաղելոյ, մինչ նորածին մանուկ յաւելեալ լինի 'ի տան։ Ժամանակ է կոծելոյ. յորժամ ունիմք 'ի սուգ։ և ժամանակ է կա-

քաւե

քաշելոյ. յորժամ եմք 'ի խրախութեն։

5։ Ժամանակ ցփելոյ քարինս։ Այսինքն, մինչ շինուածն եղերի, զաւելեալ քարինսն արտաքս ձգեմք։ Եւ ժամանակ ժողովելոյ. այս մինչ պարտիմք ձեռնարկանել շինուածոց, ժողովեմք զքարինս։ Ժամանակ գիրկս արկանելոյ. այս մինչ քաղցեալք եմք. եւ առողջք, է ժամանակ գիրկս արկանելոյ. այս ուտելոյ զկերակուր։ Եւ ժամանակ հեռանալոյ. այս մինչ յագեալք եմք, եւ կամ հիւանդք, է ժամանակ հեռանալոյ 'ի կերակրոց։

6։ Ժամանակ խնդրելոյ։ Այսինքն, մինչ ձմեռն է, խնդրեմք զխարոյկ՝ զի ջերմանայցեմք։ Եւ ժամանակ կորուսանելոյ։ այս, մինչ ամառն է, 'ի բաց բառնամք զխարոյկն։ Ժամանակ պահելոյ, եւ ժամանակ արտաքս հանելոյ։ այս մինչ առողջք եմք, է ժամանակ պահելոյ 'ի ներքս 'ի մեզ զհամ արեան մեր։ Բայց մինչ եմք հիւանդք ապականութեամբ արեան մերոյ, յայնժամ է ժամանակ արտաքս հանելոյ զմասն ինչ արեան մերոյ։

7։ Ժամանակ պատառելոյ, եւ ժամանակ կարկատելոյ։ Այսինքն, մինչ լսեմք (ըստ որում էր սովորութիւն 'ի հնումն) զհայհոյութիւն ինչ 'ի բերանոյ ուրուք, կամ զգուժալիր համբաւ ինչ, է ժամանակ պատառելոյ զհանդերձն մեր. բայց յորժամ հանդերձն մեր

հնա-

հնացեալ է, և կամ պատահմամբ պատռ_
ռեցեալ, է ժամանակ կարկատելոյ։ Ժամանակ լռելոյ. և ժամանակ խօսելոյ։ Այսինքն. մինչ եմք առաջի մեծամեծաց, կամ յեկեղեցւոջ, է ժամանակ լռելոյ. բայց մինչ եմք զբօսանաց այլպէս ընդ ընկերաց մերոց, յայնժամ է ժամանակ խօսելոյ։

8։ Ժամանակ սիրելոյ, և ժամանակ ատելոյ։

Այսինքն, մինչ է ամառն, է ժամանակ սիրելոյ զցրտաշունչ հողմն հիւսիսոյ. և մինչ է ձմեռն, է ժամանակ ատելոյ զնոյնն։ Ժամանակ պատերազմի, և ժամանակ խաղաղութեան։ Այսինքն, մինչ կարօղ եմք կալ ընդդէմ թշնամւոյն, որ կամի զգաւառս մեր աւերել, է ժամանակ պատերազմելոյ։ Իսկ մինչ գաւառին մերոյ մերձակայ իշխանք և թագաւորք ոչ են մեզ վնասակարք. և կամ յորժամ ոչ ունիմք զկարողութիւն ընդդիմանալոյ հակառակորդին մերոյ, է ժամանակ խաղաղութեան։ Բայց այսամ որ ասացաւ, ոչ առ այլ ինչ վերաբերի՝ եթէ ոչ առ այս, թէ ամենեքեան որք են ընդ արեգակամբ, են ունայնք. և ոչ են ըստ ինքեանց ըղձալիք. նաև ոչ վն մեր են միշտ բարիք։ Վասնզի ըստ ժամանակին գոլով բարիք պիտանիք և ըղձալիք, հետևի զի ոչ ինքեանց իցեն ունայնք։ Վասն զի եթէ ոմն յիմար վարկիցէ թէ խորտիկքն ըստ ինքեանց են բարիք և

ըղձալիք, ասել կարեմք նմա զայս · եթէ այդպէս է, ուրեմն կեր զայն նաև յայնժամ, մինչ յագեալես այնու՝ մինչև ՚ի յըռնգունս քո · և մինչ նա ոչ ուտէ զայն, այնու իսկ ասէ՝ թէ ոչ է բարի, և ոչ ըղձալի · և այսու թէպէտ բերան նորա խօսի զնոյնոյ խորտկէ գոլ բարի, բայց գործովն մինչ հրաժարի ՚ի յուտելոյ, ասէ զնոյնն ոչ գոլ բարի · և այսպէս եզրակացուցանի թէ խորտիկն այն է ունայն, և ոչ կայուն բարի ։ Վասնզի եթէ ոչ իցէր ունայն, յամենայն ժամանակի, և ամենից, և յամենայն տեղւոջ պարտ էր լինել բարի ։ Ըստ այսմ իմանալի է և զայլոց ընչից, զորս մարդիք յիմարաբար կոչեն բարիք և ըղձալիք · և ոչ զանազանեն առանց փաստի և բանի փարին զնոքօք ։

Նաև աստ գիտելի է · զի ՚ի ներքոյ իւրաքանչիւրոց ասութեց իմաստնոյն, որ զժամանակն պատեհաւորիչ իրաց կարգեաց չորեքտասան օրինակօք, պարունակին անթիւ բանք · և մեք զմի միայն բան եդաք իւրաքանչիւրոցն վասն օրինակի · ՚ի ձեռն որոց և այլք նմանքնոցին իմանին · որպէս անդ՝ ուր ասացաւ, ժամանակ պահելոյ, և ժամանակ արտաքս հանելոյ, մեք եդաք օրինակ զարիւնն · բայց իմանի նաև արծաթն · զգեստն · որդին · ծառայն · և այլք անթիւք, որոց կարէ հանդիպիլ զի ՚ի բաց հանելն զայնս ՚ի մէնջ իցէ բարի ի ժամու

ժամանակին։ Ըստ այսմ իմա և զայլոց օրի-
նակաց իմաստնոյն. որ կամի ասել, թէ
իրք աշխարհիս ոչ կարեն ասիլ բարիք՝ ե-
թէ ոչ 'ի ժամանակի իւրում։

9. Զի՞նչ առաւելութիւն է արարողին, յորս ինքն ջանայ։

Այսինքն, և զի՞նչ օգուտ է մարդոյն, որ աշխատանօք առնէ զի հրճուեսցի այսու, կամ այնու. հի՞կէն, խորտկօք, կամ կերպասեայ զգեստուք. կամ արծաթով. և այլովք նմանեօք։ և իրաւի ոչ ինչ օգուտ, և կամ առաւելութիւն է ունիլն զայնս, որով հետև հանդիպի ժամանակ, զի զայնս հերքել՝ և 'ի բաց հանելն է բարի. և պահելն չար։

Բայց եթէ անմիտ ոք ասիցէ, թէ ես ցանկամ՝ և տենչամ ունիլ զանցաւորս ըստ որում անցաւոր, և ըստ որում այսօր է ինձ բարի ունիլն զայնս՝ և վաղի՞ն չար։

Պատասխանեմ. ըստ արտաքին բառիցդ իրաւի կարես երևակայել այդպէս, և համանգամայն ցանկալ. բայց զներքին նշանակութիւն բառիցդ՝ եթէ ունիցիս 'ի հոգիդ և 'ի միտս քո, ոչ կարես տենչալ և ցանկալ անկայուն և փոփոխական բարեաց. զի առարկեցեալն կամաց և բաղձանաց մարդոյն է կայուն և ճշմարիտ բարին, և ոչ փոփոխականն և սուտն։ Վասն որոյ 'ի կամիլն քո զայնս փոփոխականս՝

զաւ

զառժամանակեայ դիւրութի տեսեալ 'ի
նոսա, զանց առնես մտածել զանկայու_
նութիւն և զունայնութիւն՝ որ է 'ի նոսա.
և այսու ստաբար ո՛չ առ կայուն բարի
ինչ՝ դիմես տենչանօք առ նոսա. և կամ
ո՛չ զանսասուն՝ զանկայունութիւն ո՛չ ըմբռ
նեալ՝ դերևս 'ի ձեռն զգայական ցանկու
թեան՝ որ ոչ ունի զաչս. և միայն զներ_
կայ ախորժելին ըմբռնեալ, զհետևեալ
դառնութիւն ո՛չ տեսանես։

10: Տեսի զամենայն զբաղումն, զոր ետ Ած
որդւոց մարդկան զբաղնուլ 'ի նմա։

Այսինքն, տեսի միանգամայն զտառա_
պանս, կամ՝ զվիշտս, զորս ետ Ած որդւոց
մարդկան զբաղիլ և տառապիլ 'ի ստեղ_
ծուածս. կամ՝ 'ի վիշտս։ Վասնզի բարիք
ժամանակաւորք տուեալ մեզ յԱյ 'ի կեր
առնուլ զայնս վերահայեցմամբ առ կեանն
յաւիտենական, և միանգամայն ճանա_
չելով զանկայունութի նոցին՝ մեծաւ տեն
չանօք դիմել առ կեանն յաւիտենական 'ի
ձեռն բարեաց գործոց։ Բայց մինչ մար_
դիք ո՛չ 'ի գործ ածեն զայնս այնու կեր_
պիւ, այլ զներհակն կալեալ՝ սիրեն զնս,
և կապակցին ընդ նոսա, և զայնս որպէս
զկայուն բարի համարեալ՝ մոռանան զբա_
րին կայուն, և զկեանն յաւիտենական,
նոյնք բարիքն տուեալք յԱյ՝ լինին նոցա
վիշտք և տառապանք։ Վասնզի մինչ բոլոր
սէրն

սէրն և խիղճն իւրեանց տարածեալ և ցրուեալ լինի 'ի նոսին, ոչ միայն ոչ կալնուն այնուհետև զփոյթ զյաւիտենականաց կենաց, այլ նաև տանջին և տառապին 'ի ձեռն ժամանակաւորաց բարեաց։ Որանկի ա̄ղ որ ունի զծարաւ ջրոյ՝ և ոչ դիմէ առ ջուրն աղբեր՝ որ պղտորեցանէ, այլ առ ջուրն ծովու, որքան ըմպէ անտի, այնքան առաւել ծարաւի և տառապի․ այսպէս և մարդն որ ունի զտենչ և զծարաւ կայուն բարեաց, և դիմէ առ անցաւոր և փոփոխական բարիս, որքան վայելէ զայնս՝ այնքան առաւել ծարաւի և տանջի, և ոչ երբէք զհանգիստ որում տենչայ՝ գտանել կարէ։

11. Զամ ինչ արար Այծ բարի 'ի ժամանակի իւրում․ Եւ աշխարհն զամ յաւիտենականն ետ 'ի սիրտս նոցա, որպէս զի մ' գտցէ մարդ զարարածն, զոր արար Այծ 'ի սկզբանէ մինչև ցկատարած։

Աստէն եզրափակէ զնախկին ասացեալսն․ և կամի ասել, թէ Ա՛ծ զամ մարմնաւոր ստեղծուածս, զորս արար վ̄ն մարդոյն, այնպէս արար՝ զի իցեն բարի 'ի ժամանակի իւրում․ և ոչ միշտ, և ոչ յ̄ ինքեանց․ և ոչ երբէք յագեցուցանիցեն զբաղձանս մարդոյն։ Եւ այս վ̄ն այսորիկ, զի վայրագոյն ստեղծուածոց ոչ վայելէ երջանկացուցանել զվերնագոյնս։ Արդ՝ եթէ սոքա յագեցուցիչք իցէին, մարդն 'ի ձեռն սոցին

սոյն պարտ էր երջանկանալ, որ է ան_
հանդէպ ։ Բանզի ոչ վայելէ անմահու_
թեն հոգւոց մարդկան երջանկանալ իրօք
անցաւորօք և ապականելեօք ։ վասն որոյ
առեղծուածք մարմնաւորք որքան առ
մարդն՝ արարան յոյ բարի 'ի ժամանակի
իւրեանց, և ոչ միշտ և ըստ ինքեանց ։
Եւ այլ բան ։ Մարմնաւոր առեղծուածք
արարան յոյ առ 'ի ծառայել մարդոյն՝ և
ոչ առ 'ի տիրել ․ իսկ անկայունութք և
փոփոխականութք մանաւանդ ծառայեն
մարդոյն քան կայունութք ․ զի 'ի ձեռն
անկայունութեն իւրեանց ստիպեն զմար_
դիկ ոչ յարել 'ի առեղծուածս անցաւորս․
այլ զնոսին ծառայեցուցեալ ինքեանց՝
յարել 'ի յանստեղծ բարին ․ ըստ 'ի յԱծ․ և
ծառայել նմա առ 'ի ստանալ զկեանն ե_
րանական ։

Այլ սոս դիտելի է ․ զի առեղծուածք
մարմնաւորք՝ ըստ որում են 'ի բնութեան
իւրաց և յիւրեանս յինքեանս նկատեցեալք,
են բարիք ․ զի են էակք ․ բայց ըստ որում
վերաբերին առ կիրառումն մարդոյ, և
սուտաբար համարին բարիք կայունք, և չա_
րաչար 'ի գործ ածին, յայնժամ ասին
ունայնք, և կամ պատրողք ։ և իրաւի են
ունայնք, թէ վն այսորիկ՝ զի են յոչնչէ․
և թէ վն այսորիկ՝ զի են անցականք և
անկայունք, և զբան էակին կայունաբար
ոչ ունին, որովհետև պակասին 'ի գո_
լոյ ։

լոյ ։ Իրաւի են և պատրօղք · զի զայնս զորս ոչ ունին՝ նր յագեցուցանել զբաղձանս մարդոյ, երևեցուցանեն զինքեանս ունել ։ Սակայն որքան առ այս՝ մանաւանդ մարդն յիմարութք խուրալ պատրի, քան թէ երբ աշխարհիս զնա պատրիցեն · քանզի անբան և անզգայ ստեղծուածն արարողաց զոչ ոք խաբէ, բայց միայն նիւթականապէս · զի 'ի ձեռն մարդոյ լինի նիւթ խաբեցման մարդոյ ։ Իսկ ըստ որում նոյնք ստեղծուածք 'ի բարեպաշտիցն միշտ բարեպէս 'ի գործ ածին, նր ծառայեն ծառայողացն այ, որքան առ այս՝ են առաւել բարեգունեղք · զի առ որ վախճան ստեղծեցան յայ, և 'ի սեռի էակի եղեն բարիք, վերաժամանեն առ նոյն վախճան ։ Քանզի Ա՟ծ զոչ ինչ ստեղծուած արար զի ըստ ինքեան ինչ նիւթ մեղաց · և կամ տխրող բաղձանաց մարդոյն, և յետս քարշող զնա 'ի ծառայութենէն այ · այլ մարդիկ 'ի ձեռն կամաց յեղաշրջեն զստեղծուածսն 'ի վախճանաց իւրեանց ։

Ա՛յ յարէ · Ա՛յ սահման զամ յամենայնեանս էր 'ի սէրտս նոցա · նր զճանաչումն իւրաց կենսաղոյս ետ 'ի սիրտս մարդկանց · քանզի Ա՟ծ թէպէտ արգել մարդկանց սիրել զիրս աշխարհի զփոփոխականս, սակայն զամ եղեալս յսի՝ և զկենդանիս՝ և զժամանակաւորս ետ 'ի քննութի սրտից նց, և մատոյց զամ էակս ամ զաւարկեցեալ գիտու-

տութեն, և ճանաչման որդւոց մարդկան. որպէս զի քննեալ և ճշմարտութեամբ ճանաչեալ զնոսին՝ վերաբերիցեն այնու զինքեանս առ Ա՟ծ :

Որպէս չէ մ՛ գոյէ մարդ շարադրածն ըստ արարչին : Այսինքն · այնքան բազումք են գիտելիք, և այնքան ամփոփագունեալք են կարգք նոցա՝ զի մարդն ոչ կարէ գտանել · որ ոչ կարէ գիտելով եզերել զընթացս՝ ըստ որում են յիւրեանս ինքեանս :

Այս յարէ · Իմաստութեան մնայ չափաւորած : որ, մարդն ոչ կարասցէ գիտելով գտանել զամենայն՝ որք արարան յայս 'ի սկզբանէ մինչև 'ի վախճանն : Նաև 'ի սկզբանէ աշխարհի մինչև 'ի կատարած՝ մարդիք աշխատելով առ 'ի գիտել զամ, ոչ կարասցեն բնաւից թէութեանց կարգաց և որպիսութեանց ստեղծուածոց վերահասու լինիլ :

Այս ասէ գիտելի է · զի ստեղծուածք թէպէտ են անկայունք, և փոփոխականք · և վասն այսորիկ ոչ է պարտ սիրել զնոսա և յարիլ 'ի նոսին · բայց իսկական ճանաչումն նոցին՝ թէ զիարդ անկայունք են, և կամ որպէս ծնանին՝ և ապականին, և կամ թէ որքան յարմարագոյն և բարեգոյն կարգաւ կարգաւորեցեալք են յայս, ոչ է ապականացու, և ոչ է անցական · քանզի ստացեալ ճանաչումն միշտ մնայ 'ի հոգւոջ · և այսպէս առ իսկական ճանաչումն ստեղծուածոց յարելն ոչ է չար · այլ բարի

Իսկ եթէ ասիցես. մինչ ճանաչիցեմ զնմ եղեալս, և զկարգ նոցին՝ և եղերիցեմ, տակաւին կարեմ ճանաչել և զայլս. զի իմացութին որքան յառաջանայ առ՚ի իմանալ, առաւել զօրանայ քան տկարանայ։ Պատասխանեմ, թէ Ած զայնպիսի աշխարհ ստեղծեաց, և զայնքան զարմանահրաշ կարգս եդ ՚ի նմա, զի մարդն որքան և զօրգանայցէ գիտութբ, ոչ կարասցէ գտանել զվերջին գիտելիս ՚ի յարարածս այ. ճր գիտել զնմ, և եղերել, թէև զբազում հազարաւոր ամս ապրեցի։ Իսկ զայս արար Ած այնմ, զի մարդն ՚ի միոյ կողմանէ զտկարութի իւրոց ճանաչեալ՝ խոնարհեսցի. և ՚ի միւսոյ կողմանէ զկարողութի, զիմաստութի, և զբարութի ստեղծողին ճանաչիցէ. և այնու ՚ի սէր նորին վառիցի։

12։ Ծանեայ՝ զի ոչինչ բարի ՚ի նոսա. բայց ուրախ լինել՝ և առնել զբարիս ՚ի կեանս իւրեանց։

Այսինքն. ՚ի կիրս փոփոխականս՝ զորոց ունայնութեց մինչև ցայս վայր խօսեցաւ, ասէ, ոչ ինչ բարի կարէ գտանել, եթէ ոչ այս՝ զի մարդն ճշմարիտ ուրախութբ ուրախ լինիցի առնելովն միշտ զգործս բարեաց։

Իսկ ծանիր, զի ուրախ լինելն՝ յարելով ՚ի յիրս անկայունս, և զմայլելովն ՚ի խրախճանս՝ և յայլս նմանս, ոչ է ճշմարիտ ու-

րա-

րախութի՟ւն . այլ սուտ . մ՟ն այնորիկ յարէ
զկնի ուրախութե՟ն, և տանել շնորհս ՚ի կեանս
խորամ . որով իմանի ասել . ՚ի ձեռն գործոց
բարեաց ուրախ լինիլ ։ Քանզի մինչ որք
այսու կերպիւ է ուրախ , միշտ զ՟մ զոր
ունի և ըմպէ, ՚ի փառս ա՟յ և համեստա-
բար ունի և ըմպէ . և այնու գրեթէ ՚ի
ձեռանէն ա՟յ առեալ ունի և ըմպէ . և
այս այնպէս՝ իբրու թէ Ա՟ծ ձեռամբ իւր
ով ՚ի բերան նորին դնէ զկերակուրն . և
աստուստ ծագի մեծագունեղ ուրախութի՟
նմա՝ որ այսու կերպիւ ունի և ըմպէ .
զ՟ր որում նաև ՚ի վեր անդր յիշեցաք յերկ-
րորդում գլխոջ, ՚ի 24. տանն . վասն որոյ
յարէ զկնի ։

13 ։ Եւ ամենայն ա՟ն մարդ որ ուտէ և ըմպէ, և տեսանէ շնորհս յա՟մ վաստակին իւրում, այն պարգև ա՟յ է ։

Իբրու թէ ասէ , քանզի ա՟մ մարդ՝ որ ո՟չ
մարթի ուրախութե՟բ ունել և ըմպել, և տե-
սանէ զբարիս յա՟մ վաստակս իւր . ա՟յ ՚ի
ձեռն վաստակոց և դայից իւրոց առնէ
զբարի գործս , տալով զողորմութի՟ւ . և
կամ ո՛և իցէ կերպիւ ՚ի փառս ա՟յ ՚ի գործ-
ածելով զինչս իւրս , և զուտելն և զըմ-
պելն, սոյնպէս տուրք և պարգևք ա՟յ ։ Ե՟ւ
իրաւի մեծ պարգևք ա՟յ է այս ։ Քանզի
տեսանեմք ՚ի յաշխարհասէրս՝ և ՚ի յա-
գահս , որք մինչ սիրեն զարծաթ՝ և զիրս

անցաւորս՝ ոչ երբէք ճշմարիտ ուրախութբ ուրախանան ՚ի նոսին ․ այլ միշտ ճշմարտապէս տանջին ․ եւ ստաբար ՚ի խրախութեն կարծեն ․ եւ ջանան կեղծել՝ եւ երեւեցուցանել զինքեանս ուրախանալ ՚ի յայնս ։

Վասնզի որ զաշս իւր յեցուցէ ՚ի վր գոյնաւորին՝ ոչ երբէք տեսանէ զնա ․ բայց հեռացուցեալ յայնմանէ՝ տեսանէ ․ այսպէս եւ որք զմիտս իւրեանց ունին յեցուցեալ ՚ի վր իրաց անցականաց՝ ոչ երբէք կարեն ուրախանալ ՚ի նոսին ։ Սակայն որք բարիք՝ որք զմիտս իւրեանց հեռացուցեալ են ՚յանցաւորաց բարեաց, ոպ յարծաթոյ, ՚ի յուտելոյ՝ եւ յըմպելոյ, եւ յայլոց նմանեաց, եւ կեր առնուլն զայնս վն պիտոյից մարմնոյ ՚ի փառս Տն միայն՝ եւ իբրու ՚ի ձեռանէն նր ընկալեալ՝ կարեն ուրախանալ ՚ի նոսին ․ եւ ուրախութիւն այս ոչ ծագի յայսմանէ զի ուտեն եւ ըմպեն ․ այլ յայսմանէ զի իբրու ՚ի ձեռանէն ԱՅ առեալ՝ ՚ի փառս նր ուտեն եւ ըմպեն ։

14 ։ Ճանաչեցի՝ զի զամ՝ զոր արար ԱԾ ․ այնոքիկ կան յաւիտեանս ․ ՚ի նոսա ոչ ինչ գոյ յաւելուլ՝ եւ ՚ի նոցանէ ոչ ինչ գոյ ՚ի բաց բառնալ ։ եւ արար ԱԾ, զի երկիցեն յերեսաց նր ։

Այսինքն, ԱԾ որ արար զերկին եւ զերկիր, այնոքիկ կան յաւիտեան ․ եւ որքան առ այս իմանի բառս յաւիտեան՝ յատկապէս ։ քանզի

զի երկին և երկիր նմանօղք են 'ի յաւի_
տեան՝ նաև զկնի դատաստանին։ Իսկ եթէ
բառս յաւիտեան՝ իմանիցի նաև զտեսակաց
կենդանեաց՝ և բուսոց, իբրու թէ նաև
նք գոլով արարեցեալք՝ նման յաւիտեան,
յայնժամ կալեալ լինի յաւիտեանն զյաւի_
տենէ կենցաղոյս՝ որ է սկսեալ 'ի ստեղծ_
մանէ աշխարհիս. և եղերի յաւուրն յետ_
նում, մինչ շարժումն արեգական և լուս_
նի լռեն։

Դադարեալ. մարդն 'ի միջոյ կենդանեաց,
առնու զյարութիւն, և տևէ 'ի յաւիտեան,
ոչ միայն ըստ տեսակին, այլ և ըստ անհա_
տին. և այս վն անմահութեն հոգւոյն։
Իսկ անբան կենդանիքն, և բոյսքն՝ որքան
տևէ կենցաղս՝ տևեն և նոքա ըստ տեսա_
կին, թէպէտ ըստ անհատին ապականին.
և 'ի լռելն շարժման արեգական և լուսնի՝
մինչ ծնունդ և ապականութիւն դադարի,
կորուսմամբ անհատից նոյն կորնչին և
տեսակքն. և ոչ նման 'ի վր երկրի։

Սակայն այլով կերպիւ առեալ՝ իմնապէս
ընաւք մարմնաւորք որք արարան յՌ.Ձ,
նման յաւիտեան. զի մարդն նմայ. երկին
և երկիր նման. իսկ տեսակք կենդանեաց
և բուսոց թէպէտ յինքեանս ոչ նման,
բայց 'ի վախճանի իւրեանց որ է մարդն
իմնապէս նման. քանզի արարան վն մար_
դոյ։ Իսկ մարդն նմանօղ, ասեն և նոքա
նման 'ի մարդոյ՝ որ է վախճան իւրեանց։

Ո՞չ բայց յայսմանէ նաև պարունակաբար մեան 'ի մարդոյ. զի մարդն զօրութբ պարունակէ յինքեան զայնս ամն, որպ տասնթիւն պարունակէ զօրութբ զինն, և զութն, և զայլս. և այս միայն է տարբեր. զի աստէն հանդերձ ապականելութբ պարունակէ. և յետ յարութեան առանց ապականելութն:

Ո՛չ յարէ. 'Ի նոսա ոչինչ գոյ յաւելուլ. և 'ի նոցանէ ոչինչ գոյ 'ի բաց բառնալ: Ա՛յսինքն, երկինք և երկիր այնպէս կատարեալք են, զի զպակասութի ինչ ոչ ունին՝ որպէս զի յաւելցի 'ի նոսա իր ինչ առ 'ի կատարելև ոչ զաւելորդութի ինչ ունին, որպ զի առ 'ի գեղեցկացուցանել զայնս՝ աւելորդն 'ի բաց բառնիցի: Որ սա այժմ իմա և զտեսակաց կենդանեաց՝, և բուսոց, և ամ իրաց՝ որք են յաշխարհի. զի ոչ զաւելորդ ինչ ունին, և ոչ յիմէքէ որ պատկանի ինքեանց՝ պակասին: Զի Ա͞ծ զամ ինչ չափով, թուով, և կշռով արար. (ը͞ս որում ասի՝ Իմաս. 11. 21.) և որպ բոլոր տիեզերս, այսպէս և իւրաքանչիւր իրք որք են 'ի նմա, ըստ թէութն էութնց իւրեանց՝ են կատարեալք: քանզի նաև մժեղն ը͞ս որում մժեղ, և ը͞ս որում այնպիսի էակ, ոչ զաւելորդ ինչ ունի, զի հարկ լիցի բառնալ զայն 'ի նմանէ. և ոչ յիմէքէ՝ որ ինքեան իցէ պիտանի՝ պակասի, զի զայն յաւելեալ նմա Ա͞ծ՝ զպակասութն նր լցուցանիցէ: Վասն զի

գործքն

գործքն այ են կատարեալք. և կատար-
եալն է այն՝ որ ունի զայն ամ՛, որ ինքեան
պատկանի. և ոչ ունի զինչ, որ ինքեան
անպատկան գոլով աւելորդ համարեցի։
Այս ծանիր, զի եթէ նաև կատարելութի՛
ինչ առբերցի ումեմն էակի, որում ոչ
պատկանի այն, գոլովն նմա աւելորդ՝ մա-
նաւանդ եղծէ զնա քան թէ կատարելա-
գործէ. որգոն. եթէ ծառոյ միում մնա-
լոյն ծառ, առբերիցի քայլողական
կարողութի՛. և այնու ծառն այն ընթա-
նայցէր, աւելորդ էր կատարելութի՛ն այն
նմա, և եղծէր զնա. քանզի ծառն այն
փոփոխելով զտեղին, ոչ կարէր զարմատն
՚ի խորս երկրի արձակել, և իսկոյն չորա-
նայր։ ըստ այսմ իմա և զայլոց էակաց։
Այս յարէ ամէն. Ասէ տէր ԱԾ, չէ երկիցէն
յերեւոյ նր։ Այսինքն, ԱԾ զտիեղերս այն
պիսի կատարեալ և գեղեցիկ արար, ամ
զի մարդիք որք ունին զմիտս՝ ճանաչելով
զայնպիսի կատարեալ գործս այ, գովի-
ցեն և օրհնիցեն զարարօղն. և երկիցեն
՚ի նմանէ. և երկնչելով խոտորիցին ՚ի չա-
րէ, և առնիցեն զբարի։ Արդ՝ ՚ի յանցեղուն՝
զփուշացոյց զունկնդիրս իւր՝ ՚ի ձեռն կա-
մաց և բաղձմանց ոչ յարիլ ՚ի ստեղծու-
ածս, այլ միայն ՚ի ձեռն իմացումն և մտաց
ճանաչել՝ և յարիլ ՚ի նոսա, և այնու առ
ճանաչումն և առ սէր արարչին նմ ձգիլ.
իսկ աստէն նոյնոյ արարածոյ զկատարե-

րութ̃ի և զգեղեցկութ̃ին դնէ առաջի նոցա, զի մինչ 'ի ձեռն մտաց և ձևացման յարելով 'ի նոսա՝ երկիցեն յոյժ, և զպատուիրանս նր̃ պահիցեն։

15։ Որ լինելոյն էր՝ արդէն իսկ եղև․ և որում լինելն պարտ էր, ահա եղև։ և Ա՜ծ խնդրեսցէ զհալածեալն։

Այսինքն, որ եղեալն էր, արդէն իսկ է․ որգոն, արեգակն որ յերէկեան աւուր եղեալ էր 'ի մերում կիսագնդոջ՝ այսօր ևս արդէն է։

Նա յարէ․ Եւ որում լինելն պարտ էր, ահա եղև։ Այսինքն, արեգակն որ պարտ է վաղիւն ևս լինել 'ի վ̃ր կիսագնդոյն մերոյ, արդէն իսկ է․ քզ̃ ահա այսօր է։ Նոյն այս բանս նոյն է ընդ այսմ․ անցելոյ ժամանակի եղեալքն՝ այժմ 'ի ներկայիս են։ Նմանապէս և ապագայ լինելոցքն այժմ 'ի ներկայիս են։ Վ̃ զի այս տեսակ կենդանեաց, կամ բուսոց, կամ շարժմանց երկնից՝ և լուսաւորաց՝ 'ի յանցեալ ժամանակս էին․ զի գոյր մարդ․ գոյր առիւծ․ գոյին ծառք․ և այլն։ արդ՝ այժմ ևս նոյնքն ըստ տեսակին գոն․ զի Թէպէտ այս մարդ, և այն առիւծ մեռանի․ բայց յաջորդաբար ծնանելով այժմ գոն մարդ, առիւծ, և այլն․ և առ յապայն ևս որքան առիւծք, արջք, և ծառք լինելոց են, նոքին ևս այժմ գոն արդէն ըստ տեսակին․

զի

զի գոյ այժմ առիւծ, արջ. և այլն ։ Ըստ այսմ իմա և զայլոց ։

Բայց թէ զիարդ լինի՝ զի անհատքն ապականին, և տեսակն միշտ մնայ, ահա յարէ զպատճառն, և ասէ ։

Ս. Աղձ խնդրեսցէ զհալածեալն ։ Այսինքն, անհատք կենդանեաց, և այլոց իրաց՝ որք մեռանին և ապականին՝ շարժումն երկնից պատճառէ զայնպիսի ապականութի̃, և զմահ. և այսպէս 'ի բռնութէ̃ շարժման երկնից հալածեցեալք լինին անհատքն, և մեռանին, կամ ապականին ։ Սակայն Ա.ծ վերախնդրէ զայնս հալածեալս, փոխանակ նց առնելով ծնանիլ զայլս անհատս առ'ի լցուցանել զտեղիս նոցին. և այսպէս տեսակն նց միշտ մնայ կայուն ։

Օ՛ր օրինակ, զառիվայլութի̃ խրամատից ջուրց գետոց միշտ հալածէ զմասունս ջուրց, և առնէ հոսիլ 'ի ծովն ։ բայց Ա.ծ խնդրէ զհալածեցեալսն՝ բղխեցուցանելով յականսն գետոց միշտ զնոր ջուրս՝ զի լնուցուն զտեղին մասանց ջուրց հոսեցելոց 'ի ծովն. և այսպէս գետն մնայ միշտ գետ և կայուն. և որինչ էր գետն յերեկեան աւուրն՝ է և այսօր. նաև որինչ ելոյ է 'ի վաղիճն՝ է և այսօր ։

Դարձեալ. սոյնս առեալ լինի նաև մանաւորապէս մբ մարդոյն. զի մարդն ունելով զհոգի անմահ, կարէր նաև ըստ մարմնոյն ստանալ զանմահութի̃, եթէ պա-

պահեալ լիցէր զպատուիրանն իմ ։ Բայց մինչ նախանձու բանսարկուին մեղաւ, և այնու եմուտ մահ մարդոյն յաշխարհ , այս էր մեծագունեղ հալածումն , զոր կրեաց մարդն ՚ի բանսարկուէն · և զի էր ՚ի մեծի պատուի , և եղև այժմ հաւասար անասնոց ըստ մարմնոյն · քանզի ոչ անհատք անբանից մեռանին , այսպէս և անհատք մարդոյն ։ սակայն Քս ոչ ՚ի ներկայիս վերանորոգէ զլուսացագնացեալ՝ և զհալածեցեալ անհատս մարդկանց՝ զնոր անհատս առնելով ծնանիլ · նոյնպէս և յաւուրն յետնում խնդրեսցէ զընաւս հալածեցեալսն զայնոսիկ · զի զնմ անհատս մեռեալս ՚ի մարդկանէ , յարուցանելով ։ Մանզի խնդրեն զհալածեցեալսն՝ ոչ այլ ինչ է , եթէ ոչ յետս դարձուցանել անտի՝ ուր հալածանօք աքսորեցեալ եղև ։ Արդ՝ բանսարկուն զմարդն ՚ի մահն աքսորեաց · ուրեմն և Քս խնդրեսցէ անտի , դարձուցանելով ՚ի մահուանէ ՚ի կեանս ։

16 ։ Տեսի ՚ի ներքոյ արեգական տեղի դատաստանի · և անդ ամպարշտի · և տեղի արդարոյ · և անդ բարեպաշտի ։

Աստէն իմաստունն հայելով զանկարգութիւնս որք լինին ՚ի մէջ մարդկանց , ՚ի յայսպիսի կարգաւորութեան լցեալ տիեզերի , զարմանայ , և յիշեցուցանէ մարդկանց ·

կանց․ իբրու թէ ասիցէ։ Աստուած զամենայն ստեղծուածս իւր այնպէս կարգաւորեաց, զի իւրաքանչիւրոյն որ ինչ վայելէր, զայն ունիցէին, և ուր զետեղիլ պատշաճիւր նոցա՝ անդ իցէին․ իսկ մարդիկ որք են յետի՝ ընդէ՞ր և կամ զիա՞րդ թիւրեն զգործս իւրեանց, առնելով զայնս որ ոչ վայելէ իւրեանց, և լինելով յայնս տեղիս որ ոչ պատշաճի իւրեանց։ Ո՞րդ՝ն, տեղին դատաստանի, այսինքն դատաստանարանն՝ ուր արդարութիւն և իրաւունքն պարտի ջատագովիլ՝ է տեղի արդարոյ․ և անդ արդարք միայն պարտին նստիլ․ սակայն տեսի, այսինքն գտացի՝ զի բազմիցս ՚ի տեղւոջ դատաստանի, այսինքն ՚ի դատաստանարանի նստին ամբարիշտք, և ո՛չ զդատաւոր և զքննիչ իրաւանց և արդարութեանց՝ որոց են թշնամիք, լինին վճռատուք։

**Եւ յարէ․ Եւ տեղի արդարոյ․ եւ անդ բարեպաշտ։** Այսինքն, և ՚ի տեղւոջ արդարութեան, և անդ ամբարշտութիւն կամ անիրաւութիւն․ քանզի տեղին դատաստանի է տեղի արդարութեան․ և ՚ի նմին արդարութեան պարտին լինել ամենայն վճիռք․ և տեսանէր՝ զի անիրաւութեամբ լինէին վճիռքն․ ուստի զարմանայ, և զթիւրութիւն մարդկանց բացայայտէ, ասելով․ փոխանակ արդարութեան զանիրաւութիւն վճռեն։ Եւ աստէն բառս այս՝ բարեպաշտ, ՚ի սխալմանց գրչաց երևի մուծեալ ՚ի մերում Աստուածաշնչի․ փո_

փոխանակ բառիս անճարեկապաշտ · զի է ընդ_դէմ զօրութեան նշանակութեան բանին · եւ յոչ ումեք թարգմանութեան երեւի այն:

17: Ասացի անդ ՚ի սրտի իմում, եթէ զար_դարն եւ զամբարիշտն դատէ ԱԾ · վասնզի ժա_մանակ է ամ՟ իրաց · եւ ՚ի վերայ ամ՟ արարածոց ժամ է եւ ժամանակ:

Աստէն յայտնի է բանն, զի սաղօմն զայս պիսի անկարգութիւնս տեսեալ՝ դատա_ստանին Այ յանձնէ: Եւ ասել կամի զերկուս: Նախ՝ թէ Ած դատապարտելոց է անա_չառ վճռով զայնպիսի անիրաւ դատաւ_որսն: Երկրորդ՝ թէ ամ իրաց է ժամ եւ ժամանակ · այ, Ած որ այժմ իսկոյն ոչ պատժէ զնոսա, ոչ է վն այսորիկ՝ իբրու թէ չէին նոքա իսկոյն երկնաւորք Հրով ՚ի նմին դատաստանարանի պատժելիք · այլ վն այսորիկ՝ զի մինչենաւՀորի պատժոյ եւ դատապարտութեան նց գոյ ժամ եւ ժա_մանակ կարգեալ յԱյ:

18: Ինք ասացի ՚ի սրտի իմում վասն խօսից որդ_ւոց մարդկան, եթէ որոշէ զնոսա ԱԾ · եւ ցուցա_նէ, թէ անասունք են նոքա:

Կամի ասել աստէն զայս: զկնի այլոց բա_նից իմոց՝ ասացի ՚ի սրտի իմում · այ մտա_ծեցի եւ տեսի զբանից եւ զխօսից մարդ_կան · եւ ծանեայ զի Ած որոշեալէ զմար_դիկս ՚ի յանասնոց ՚ի ձեռն խօսից՝ եւ բանից նց:

նց ։ Իբրու թէ ասիցես · զմարդն 'ի ձեռն
բանի և բանականութեն յորմէ լինի խօ_
սիլ՝ Իծ տարորոշեալ է 'ի յանասնոց ։ որպ
և մեք այժմ ասեմք, թէ մարդն բանա_
կանութեբ տարբերի 'ի յանասնոց ։ և որպ
մեք 'ի յասելն զայս՝ իմանամք և ցուցա_
նեմք, թէ մարդն 'ի ձեռն այլոց մնացելոց
գործոց իւրոց, որպ 'ի ձեռն սոցին, զի ուտէ
ըմպէ, ննջէ, քայլէ, շնչէ, տեսանէ, լսէ,
շօշափէ, և զայլս նմանս առնէ՝ հաւասա_
րի անասնոց · այսպէս իմանալի է ասելն
և հետևեալ բանն, զոր ասէ ։

Եւ ցուցանէ, թէ անասունք են ։ որպ, բայց 'ի
բանականութէ և 'ի խօսիցն, 'ի ձեռն այլոց
մնացելոց 'ի մարդն, ցուցանէ՝ թէ անա_
սունք են ։

'Ի յայլս թարգմանութիս դնի այսպէս ·
Նման անասնոց են, որպ, բայց 'ի բանականու_
թէն՝ այլովք մնացելովքն հաւասար և
կամ նման անասնոց են ։ Եւ զայս վար_
դապետութի դնէ իմաստունն առ այս, զի
մարդիկ տեսեալ զինքեանս բաց 'ի բանէն
հաւասարիլ անասնոց, խոնարհեսցին,
նաև ջանայցեն միշտ վարիլ բանիւ և հան
ճարով, զի այսու զանազանիցին 'ի յանասա_
նոց · և զպատիւ իւրեանց պահիցեն ։ ապա
թէ ոչ՝ ըստ մի լինին հաւասար անբա_
նից ։ Աստի յարօղքն 'ի սէր աշխարհիս,
և պարապեալքն միշտ 'ի յուտել՝ 'ի յըմպել՝
և 'ի հեշտանալ՝ անփոյթ լինելով զիրաց
հո_

հոգևորաց, և զայնց որք յարմարին բա_
նականութե՟, են կամաւոր անասունք ։
Քանզի թէպէտ Ա՟ծ զայնպիսիս 'ի ձեռն
բանականութե՟ որոշեաց 'ի յանասնոց,
բայց նոքա զնոյն բանականութիւն, և զօ_
րէնս և զկանոնս նորա կամաւ բացամեր_
ժեալ, ըստ ա՟մի հաւասարեն զինքեանս
անասնոց ։

19 ։ Զ՟ի նոցա սակայն դիպուած է՝ և որդւոց
մարդկան ։ և դիպուած անասնոց, դիպուած է նմ՟ ։
որպէս մահ սորա՝ նոյնպէս և մահ նր՟ ։ և հոգի է
յամենեսին՝ և զի՞նչ առաւել է մարդ քան զանա_
սուն. և ոչ ինչ. վասնզի ա՟մ ինչ ընդունայն է ։

Այսինքն, և սակայն թէ նք՟ որք անա_
սունք են. և թէ որդւոց մարդկան՝ է դիպ_
ուած. իբր ապականիլ, կամ հիւանդա_
նալ, կամ վիրաւորիլ. և այլք նմանք ։
Քանզի մարդն բաց 'ի բանական հոգ_
ւոյն, որ ոչ մեռանի և ապականի, և բաց
'ի գործոյն զորս 'ի ձեռն մասանց հոգւոյն
առնէ. իբր մտօք և կամօք. այլովք ունե_
ցելովքն նոյնոյ դիպուածոյէ ընդ անաս_
նոց. զի որ ինչ նք՟ կարէ պատահիլ, կա_
րէ պատահիլ և մարդոյն ։ Վասն զայս
հասարակ եղեալ՝ իջանէ առ մասնաւորս,
ասելով ։

Զ՟ի դիպուած անասնոց՝ դիպուած է նոցա. որպէս
մահ սորա՝ նոյնպէս և մահ նր՟. իբր նմանաբար
մեռանելին ։ և պատճառն է. զի և 'ի տուր_

ա_

առութիս շնչոյ են նմանք . և կեանն՝ թէ միոյն՝ և թէ միւսոյն կախի 'ի շնչոյն . որ եթէ արգելանիցի, մեռանին : վ՟ որոյ զայս զօր ետ, թէ նմանաբար մեռանին, յա_ րէ զպատճառն՝ ասելով :

Նա՛ հոգի է յամենեսին . զ՟ քանզի շունչ է 'ի յամենեսին՝ վ՟կ նմանաբար մեռանին :

Նա՛ այս յայտ է աստուստ . զի թէ 'ի ձեռն խեղդեցման, և թէ 'ի ձեռն հիւանդու_ թե, և այլոց նմանեաց, մինչ շունչն, թէ մարդոյն, և թէ անասնոց արգելանի, մեռանին . և բանական հոգին որ 'ի մարդն, ընդ պակասիլ շնչոյն՝ ոչ վերանայ 'ի մար մինն, այլ իսկոյն ելանէ 'ի վեր . զ՟ կայա_ նայ իւրով ինքեամբ վ՟ անմարմնութե և անմահութե իւրոյ . և երթայ առ 'ի ներ_ կայանալ առաջի ատենին այ : Իսկ անասնոց շունչն միայն է, և ոչ ունին զհոգի բանական . ուստի ընդ արգելանիլն՝ ելա_ նէ շունչն 'ի վայր . զ՟ դադարի 'ի գոլոյ . որպ 'ի 21 . տանն ասէ :

Նա՛ յայսմիկ տան բառս՝ հոգի, փոխանակ շնչոյ դնի 'ի մեզ . իսկ 'ի յայլս Թարգմա_ նութիս գրի շունչ :

Նա՛ յարէ . Նա՛ ոչ ինչ առաւելեալ մարդ քան զանասուն, և ոչինչ . վասն զի ամ ինչ ընդունայն է :

Այսինքն , բաց 'ի բանականութենէն , որպ 'ի վեր անդր յիշեաց , մարդն ոչ ունի զինչ աւելի քան զանասունն . և այսու՝ թէ մարդն , և թէ անասունն վ՟ անկայու_ նու_

նութեան, և մահկանացու գոլոյն իւրեանց՝ ընդունայնութիւն են. զի անկայունք և անցականք յայսմիկ կենի։

20։ Ամենայն ինչ 'ի մի տեղի երթայ։ Ամ՟ ինչ 'ի հողոյ եղև. և ամ՟ դառնայ 'ի հող։

Այսինքն, թէ մարդն ըստ մարմնոյ, և թէ անասունք, և թէ բոյսք, և այլքն մինչ ամենեքեանք 'ի նիւթոյ են՝ առնիւթն գնան և 'ի նա վերադառնան։ Այս նոյն է բանն զոր յարէ. Ամենայն ինչ 'ի հողոյ եղև. և ամ՟ դառնայ 'ի հող։

21։ Եւ ո՞վ գիտէ զհոգիս որդւոց մարդկան՝ եթէ ելանեն 'ի վեր. և զշունչ անասնոց՝ եթէ իջանէ յերկիր 'ի խոնարհ։

Այսինքն, կամի ասել, թէ մեք ամենեքեանք գոլով որդիք Աբրահամու, ունելով զօրէնս և զգիրս մարգարէից՝ որք յԱյ՟ առեալ գրեցին, ուսեալք եմք և գիտեմք, թէ հոգի մարդոյ որ ելանէ, գնայ 'ի վեր առ Ած՟, ո՛չ զի տայցէ զհամար գործոց իւրոց։ Վն՟ որոյ և միշտ քարոզեմք զգործոց բարեաց, և աշխատիմք առ այնս, զի 'ի ներկայանալն մեր հոգւով մերով առաջի Այ՟՝ անդատապարտելի գտանիցիմք։ Բայց 'ի մէջ այնքանեաց բազմութեանց ազգաց հեթանոսաց՝ որք են յաշխարհի, ո՞յք են որք գիտիցեն զայս, և որքանք. արդարև յոյժ սակա՛ւք ոմանք։

Այս

Այս աստ գիտելի է. զի ՚ի մէջ հեթանոսաց՝ թէպէտ զայս մասս բանի՝ թէ շնչոյ անասնոց իջանէ ՚ի վայր. որ ընդ մարմնոյն ապականի, եւ պակասի՝ գիտէին. բայց զառաջին մասն՝ թէ հոգի մարդոյն ընդ պակասիլ շնչոյն ելանէ ՚ի վեր, եւ երթայ առ ՚ի յանդիման լինիլ առաջի այ, ոչ գիտէին. այլ համարէին եւ զհոգին կորնչիլ եւ ապականիլ: Այս պատճառն այսորիկ անգիտութե էր, զի զստեղծօղն հոգւոց իւր զած ոչ ճանաչէին: Աստի ՚ի մէջ հեթանոսաց այնք փիլիսոփայք որք զգոլն այ ծանեան եւ ճանաչեցին, նաեւ զանմահութե հոգւոց մարդկանց տեղեկացան. ուստի եւ գրեցին, եւ ՚ի ձեռն պատճառաց ջատագովեցին: եւ այսպիսիք եղեն պիթագորաս, պղատոն, կիկերոն, հերակլիտոս. եւ այլք բազումք:

22: Ես տեսի, զի ոչինչ գոյ բարի՝ բայց ուրախ լինել մարդոյ յարարածս իւր. (այսինքն ՚ի գործս իւր) քանզի այն է բաժին նր. զի ո՞վ ածցէ զնա տեսանել՝ որինչ լինելոց յետ նորա:

Զայսմանէ նաեւ ՚ի վերանդր յիշեցաւ. բ. գլուխ. 24: Արդ՝ կամի ասել՝ թէ բաց ՚ի ուրախ լինելոյն ՚ի վերայ բարեաց գործոց՝ զայլ բարի ոչ ունիմք յաշխի յայսմիկ: վն զի միայն բարի գործքն են, որք մնան կայունք. ուրեմն ՚ի վն նոցին եղեալ ուրախութինն է միայն՝ որ լինի կայուն, եւ

Ճշմարիտ. բայց ՚ի վ՟ր այլոց անցականաց
իրաց ուրախանալն է անկայունն և ունայն,
զի որում և իրքն են ունայնք և անկայունք։
Իսկ յարէ. Վ՟ասնզի այն է բաժին ն՟ր. զ՟ի այն
միայն է մնացական բաժինն իւր, և պը_
տուղն. կամ՝ վարձն և արդիւնն այնքա_
նեաց տառապանաց իւրոց, որովք տա_
ռապի յաշխարհի յայսմիկ։

Մ՞զի աշխարհս է ո՞չ զանդաստան մի.
և մեք ո՞չ զմշակս. որք աշխատիմք և գոր_
ծեմք զանդաստանս զայս ՚ի բոլոր ընթացս
կենաց մերոց։ արդ՝ ո՞չ մշակին այն մի_
այն լինի օգտակար բաժին, և վարձ աշ_
խատանացն՝ զոր առեալ յանդաստանէն
ընդ ինքեան տանի ՚ի տուն իւր, և ո՛չ եր_
բեք այն՝ որ մնայ ՚ի յանդաստանի, այս_
պէս և մերս օգտակար և բարի բաժին
յաշխարհէ աստի է այն միայն՝ զոր տա_
նիմք ընդ մեզ. զ՟ի գործք բարիք. և ո՛չ
այնք զորս աստէն թողումք և գնամք.
որպիսիք են տունք, պալատք, այգիք.
հարստութի՟ք, և այլք նմանք. մանա_
ւանդ՝ զի միաւանգամ ո՛չ եմք դառնալոց
յաշխարհս յայս, ո՞չ զի առիցեմք, թէ_
պէտ այժմ զինչ մեր թողումք և գնամք,
բայց մինչ միաւանգամ դառնամք, վերս_
տին զայնս վայելել կարեմք։

Իսկ առ այս յարէ. Զի ո՞վ ածցէ զնա առ՚ի
տեսանել որ ինչ լինի յետ ն՟ր։ Ո՛ յախուքն, ո՛վ
ածցէ զմահուամբ գնացեալն՝ վերստին
յայս

յայս աշխարհ, առ՚ի տեսանել և վայելել զայն ամ, զոր եթող 'ի կեանս յայս զկնի մահուան․ արդարև ոչ ոք։ Քանզի Ա՟ծ միայն կարէ յարուցանել զմեռեալս․ և ոչ այլոք․ իսկ Ա՟ծ ոչ ածէ զմարդն յայս աշխարհ առ՚ի վերստին վայելել զայն ամ զոր եթող․ քանզի զմեռեալն՝ եթէ բարի իցէ և արդար, ածէ 'ի յարքայութիւն․ իսկ եթէ չար, իջուցանէ 'ի դժոխս։ Ուրեմն մեռեալն յոչ ումեքէ ածեալ լինի վերստին յայս աշխարհ առ՚ի վայելել զայնս՝ զորս եթող և գնաց։

## ԳԼՈՒԽ․ Դ․

Յայսմիկ գլխոյ ցուցանէ զանազանութի ըղձակերպելոյն թափառելոյն, կամ դիւելն․ կամ զանազանութի թափառելոյ ։ Այս զայս ցուցանէ վէց բանիւք ։ Առաջին՝ զի անդի, այսինքն 'ի թափառարելոյն և կամ 'ի տիրելոյն ծնանի երեքեակն բանաւորութի․ այսինքն զերադասութն անձնեայց․ և այս 'ի յառաջին երեք դասն ։ Երկրորդ՝ զի անդի ծնանի նախանձ․ և զայս 'ի 4․ դասն ։ Երրորդ՝ զի ծնանի և ծուլութի․ կամ անհոգութի․ և ագահութի, որով զգայեհս, և զանազանեհս գաւառաց․ և այս 'ի 5․ դասն, և 'ի հեշտանալն ։ Չորրորդ՝ ծնանի ջան նախագահելոյ այլոց, և լինելոյ եպս_

կան ոք, և միայն. և առ այս ասէ. *լաւէ երկու քան զմի.* 'ի 9. տուն: Հինգերորդ՝ ցուցանէ, թէ ցայսմանէ ըղձէ եղանակաւորութիւն ծագի յիմարութիւն. և զայս՝ 'ի հետևեալ տունս: Վեցերորդ՝ ցուցանէ չքաւորութիւն, և շահաւորութիւն թագաւորութեան. զի բազմիցս ծերութեամբ և յիմարն ընկեցեալ լինի 'ի թագաւորութենէ, և աղքատն թագաւորէ. և զայս 'ի 14. տուն: Եօթնե և եղբայրացուցանէ, թէ 'ի յայնս սովորին համբարտութիւն և կամ երջանկութիւն գտանէ ոք: Ութե 'ի վախճանին ասէ. *ոչ լինի լաւագոյն քան զածպաշտութիւն.* յորում կայանայ ճշմարիտ խաղաղութիւն, և երջանկութիւն:

## ※ ԲՈՒՆ. ※

Եւ դարձեալ տեսի միանգամայն զամ զրկութիւնս՝ որք լինէին ընդ արեգակամբ: և ահա արտասուք զրկելոցն. և ոչ ոք էր՝ որ մխիթարէր զնոսա. և 'ի ձեռաց զրկողաց նոցա զօրութիւն.

## ※ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ. ※

*Սողոմոն մտածեալ և տեսեալ, զի յաշխարհի յայսմիկ բազմիցս լինի նաև այս անիրաւութիւն. զի որք ունին զուժ, և են բռունք, կամ վե գոլոյն իշխանք. կամ վե գոլոյն փարթամք. և կամ վասն գոլոյն ընդունելիք առաջի պետաց, անիրաւեալք՝ զնոյն ուժն և զկարողութիւն՝ 'ի գործ*

գործ ածեն առ ՚ի վնասել անմեղաց. և մինչ անմեղքն զրպարտեցեալք կրեն զվնաս՝ և արտասուեն, ոչ ոք է որ մխիթարէ զնոսա. Զի ոչ ոք է որ ջատագովէ։ և այս հանդիպի՝ կամ վ̃ն այսորիկ՝ զի տեսօղքն գոլով կոյրք՝ ոչ ճանաչեն զանմեղ գոլն զրպարտեցելոյն, վ̃ն որոյ և ոչ ջատագովեն. և կամ (թէ և գիտիցեն զզրպարտեցեալն զայն գոլ անմեղ) վ̃ն այսորիկ ոչ ջատագովեն, զի մի՛ գուցէ այնու փառքն և պատիւն իւրեանց պակասիցի. և կամ զի մի՛ գուցէ նաև ինքեանք խոշտանկիցին՝ ՚ի բռնաւորէն, և ընդ անմեղին զրպարտեցելոյ նաև ինքեանք զրպարտիցին, և զտուժանս կրեսցեն։ Որդ՝ այս ա̃յ նկարագրին իմացեալ՝ վերաբերի առ ա̃մ անմեղս զրպարտեցեալս՝ և տուժեցեալս, և առ համայնս անիրաւս՝ որք բռուն լինին անմեղաց, և վնասեն. և առ ընաւս որք տեսանեն զայն, և կարեն ջատագովել. բայց կամ վ̃ն փառաց, և կամ վ̃ն երկիւղի լռեն։ Սակայն ըստ ներքին նշանակութե̃ վերաբերի առ Ք̃ս, որ գոլով անմեղ՝ զրպարտեցաւ ՚ի հրէից՝ և ՚ի բռնաւորութե̃ց քահանայից. և ՚ի մահ դատապարտեցաւ. և յայնմիկ ժամանակի ոչ ոք ՚ի յայնքանեաց բազմութե̃ց մարդկանց ճանաչողաց զանմեղութիւնն, ջատագովեաց զնա հրապարակաւ, ո̃պ զի այնու մխիթարեսցի Ք̃ս ՚ի չարչարանս իւր։ Ըստ այնմ, ոչ ոք էր ընդ իս. և

մխիթարիչ ինչ ոչ՛ք գտաւ. Սաղմ. 68.21 ։ Եւ զայս մարգարէական հոգւով տեսեալ սողոմոնի, այնքան դատապարտելի վճռեաց զայսպիսի անիրաւութիւնս, և այնքան մեծագոյն աղետից արժանի եցոյց զչարչարիլն անմեղին Քի, մինչ զի զմեռեալս լաւագոյն համարեցաւ քան զկենդանիս. զի մեռեալքն ո՛չ զկենդանիս մերձաւորապէս ո՛չ տեսանէին զաղէտս չարչարանացն Քնի։ ուստի յարէ և ասէ։

2 ։ Ես գովեցի առհասարակ զմեռեալսն, որք յառաջագոյն մեռանն, քան զկենդանիս, որք կենդանիքն են ինքեանք մինչև ցայժմ։

Նմա՛ զնոյնն որ արդէն ասացա՛ւ ՚ի վերոյ. թէ գովելիք են, և կամ լաւք են այնք մեռեալք քան զկենդանիս՝ որք զայսպիսի անիրաւութիս, կամ՝ զաղէտս տեսանեն։ Նաև կենդանեացն լաւ էր թէ իցէին մեռեալք, քան թէ մնալով կենդանիք՝ տեսլին զանմեղն զպարտեցեալ։ Եւ աստուստ այս իմանի՝ թէ այնքան մեծագունեղ չար է զպարտելն զանմեղն, և չարչարելն զնա. նաև աղէտն չարչարցելոյ անմեղին, մինչ զի լաւ է մարդն մեռեալ՝ որ ոչ գոլով կենդանի, զաղէտն զայն ոչ տեսանէ, քան զմարդն կենդանի որ գոլով կենդանի՝ զայսպիսի չարիս, և կամ զաղէտս տեսանէ ։ Եւ այս է կերպ ինչ ասութե, որով ծանրութի եղելոյն իմա_

իմանի ։ ո՞չ ոք մ՟ն ծանրութիւն աղէտին որ հանդիպի 'ի ժամանակի իւրում, ասէ ․ երանի մեռելոց՝ որք մեռան և ոչ տեսին զայս աղէտ ․ կամ զայս գերութիւն , և հրկիզութիւն, և այլն ։

Որդ՝ սաղօմոն հոգւոյն տեսեալ զանար֊գաբար բեւեռին որդւոյն ա՟յ առեցեալ մարմնոյն 'ի վ՟ր խաչին , առ՚ի յուցանել զմեծութիւն աղէտին 'ի վ՟ր Տ՟ն իւրոյ , և զմեծութիւն չարութեանն հրէից , գովեաց զմեռեալս քան զկենդանիս այնորիկ ժամանակի, որք տեսին յաշխարհի զայնպիսի աղէտ, և զանիրաւութիւն ։ Նոյն յառաջացուցեալ զբանն առ՚ի առաւել յուցանել զծանրութիւն իւրին զօրմէ խօսի, ասէ 'ի հետևեալ տանն ։

3 ։ Նա՛ լաւագոյն քան զերկոսեան ( ա՟յ քան զկենդանիս՝ և քան զմեռեալս,) որ չև ևս է լեալ ․ որ ոչ ետես զա՟մ արարած չար ( ա՟յ զա՟մ գործ չար,) որ արարաւ, ( ա՟յ գործեցաւ) 'ի ներքոյ արեգական ։

Նոյն ասա գիտելի է ․ զի ծանրութիւն աղէտից չարչարանաց փրկչին , և անիրաւութե՟ն հրէից, որ եղև 'ի ներքոյ արեգական ․ ա՟յ 'ի տան աշխարհիս այսորիկ՝ 'ի նմին ժամանակի՝ որք կենդանիք էին, առաւել հուպք էին , և առաւել մերձաւորապէս կարէին զգալ զայնպիսի ծանր աղէտն , և զմեծ անիրաւութիւն, որ եղև 'ի տան աշխարհիս

Որ օրինակ, եթէ 'ի տան միում լինիցի հեղումն արեան անմեղի ուրուք, որ առաւել հուպ և մերձ է սպանեցելոյն, առաւել ցաւի: Իսկ որ հեռակաց է, և ոչ 'ի մերձուստ տեսանէ՝ ոչ այնքան ցաւի: Արդ՝ որք մեռեալքէին յայնմիկ ժամանակի, թէպէտ նաև նոքա էին 'ի տան աշխարհիս. բայց հեռի էին 'ի տեղւոջէն՝ ուր եղև սպանումն Ք.ի անմեղին. ուստի և ոչ այնքան զգացին զաղէտն, որքան զգացին նոքա, որք գոլով կենդանիք՝ էին մերձակայք: Սորոյ գոլելք էին և լուք այսպիսիք մեռեալք հեռակայքն քան զկենդանիսն, որք գոլով կենդանիք՝ էին մերձակայք անմեղի սպանեցելոյն: Բայց ո̃պ առաւել քան զերկոսեանն լաւագոյն է նա՝ որ յայնմիկ ժամանակի՝ յորում եղև այն մեծագունեղ աղէտն և անիրաւութիւն՝ ոչ գտանիցի 'ի տանն յայնմիկ. այսպէս և առաւել լաւագոյն էին նոքա քան զերկոսեանն՝ որք չև ևս էին լեալք. քանզի որք տակաւին ոչ էին ծնեալք 'ի ժամանակի չարչարանացն Ք.ի, ոչ գոլով եկեալ յաշխարհ, և ոչ գոլով էակք, ոչ զգացին երբէք զայն աղէտ, և ոչ առին զսուգ, ո̃պ կենդանիք և մեռեալք. և այլք ամ̃ք առեղծուածք. ո̃պ արեգակն, և լուսին, և այլք:

Նմ̃ յարէ. Որ ոչ եղև զան արարած չար, ո̃պ ոչ ծնեալքն ոչ գոլով յաշխարհի՝ ոչ ինչ կեր-

կերպիւ զգացին՝ կամ տեսին զայսպիսի չար արարս հրէից, որ արարաւ և գործեցաւ, մինչ զՏ՟րն փառաց 'ի խաչ հանին ։ Եւ զայս ա՟մ բաղդատութի, ո՟պ 'ի յանցեալ տամնն ասացաք, գնէ որքան առ այս միայն, զի ցուցէ զմեծութի աղէտից, և զծանրութի անիրաւութէց եղելոց. և ոչ թէ արհամարհաբար ասէ, լաւ է մեռեալն քան զկենդանին. և լաւագոյն քան զերկոսեանն է ոչ ծնեալն ։

4 ։ Եւ՟ տեսի զա՟մ վաստակս. և զա՟մ արիութի՟ արարածոյն. ( այ՟ գործոյն ) զի նոյն ինքեան նախանձ առն 'ի մերձաւորէ իւրմէ ։ Սակայն և այն ունայնութի՟ է, և յօժարութի՟ ոգւոյ. ( այ՟ տառապանք ոգւոյ ։ )

Ետես սողոմոն զա՟մ վաստակս և զաշխատանս, և զա՟մ արիութի՟, այ՟ զա՟մ քաջութի գործոց, կամ արարից ոմանց անձանց, որք աշխատանօք, և քաջութե՟ իւրեանց արարին յաշխարհիս յայսմիկ զերևելի իմն գործ. այ՟ կամ զմեծ յաղթութիւնս ընդդէմ թշնամեաց. կամ շարադրեցին զմեծամեծ բանս իմաստութե՟. և կամ շինեցին զմեծածախս պալատս, և կամ զիմն այլ նման սոցին. և աստուստ ընդդէմ նոյնոյ շինողի, կամ յաղթողի առն 'ի մերձաւորէն ծնանի նախանձ. զի մերձաւորն տեսեալ զքաջութի և զմեծութի գործոյն զոր արար, սկսանի նախանձիլ. որ մանաւանդ

պարտ

պարտ էր խնդալ. զի եղեալ գործն այն քաջութեան, է առաւելեցեալ խնդութեան: Բայց մինչ նաև նախանձու մրցանաւորին կարէ լինել առաւելեցեալ, հետևի թէ քաջագործութիւն այն է ունայնութիւն և տառապանք ոգւոյ: Ըստ այս իրաւի է՝ մինչ գործն քաջութեան ոչ շարակարգի ՚ի փառս Աստուծոյ. վասն զի որք ՚ի փառս մարդկան առնեն, և համարին զինքեանս ՚ի ձեռն այնց գովել՝ սիրել և պատուել ՚ի մարդկանց, բազմիցս հանդիպի՝ զի այնու քաջագործութիւնք լինիցին առաւելեցեալք ատելութեան և նախանձու մրցանաւորին. և մերթ նաև չխասին. քանզի մրցանաւորն նախանձեալ նմա ջանայ որքան կարէ չխասել նմա առ զովացումն նախանձու:

Դարձեալ. կարէ իմանել նաև որքան առ այս, թէ ունայնութի և տառապանք ոգւոյ է քաջագործութիւն այն, և կամ ջանն հանճարեղութեան, կամ ո՛ և իցէ կատարելութեան, որ լինի ՚ի մարդն ՚ի նախանձուէ մրցանաւորին. զի մինչ մարդն միայն վասն այնորիկ ջանայ առնել զգործ ինչ երևելի, և աշխատի առ այն, զի գերազանցիցէ զընկերաւն, լինելովն առաւել իմաստուն կամ հանճարեղ քան զմրցանաւորն: Ըստ իրաւի նաև այս է ունայն. քանզի պարտիմք վասն այսորիկ աշխատել ՚ի գործ ինչ երևելի և կատարեալ, զի են Աստուծոյ ինքեանց ըղձալիք, և ոչ վասն այսորիկ զի գերազանցի-

ցիցեմք այնու զընկերաւն, որ է ունայն փախձան. և գործ տղայոց, որք ոչ անձե-ցուցանեն զջան ուսմանն՝ եթէ ոչ առ այս՝ զի գերազանցիցեն զընկերաւն:

5: Ոնչֆան բուսոյն եհար զԽաղխոյ խարըդ. և եկեր զմարմինս խոր, ասելով:

Այսինքն, ծոյլն, որ և է խակ անզգամ, ոչ աշխատի առ'ի շահիլ զինչ. որպ զի այ-նու բարեպէս ապրիցի. և մինչ չքաւորի և ոչ ունի զպաշտական ապրուստ, այլ այն քան սակաւ, զի կարօտի ուտել և զմին բաղկաց իւրոց, նմանեալ լինի զնմանէ թէ բուռն եհար զբաղկաց իւրոց, և եկեր: Իբրու թէ՝ այնքան կարօտ լինի, մինչ զի եթէ հնար իցէր, և ոչ ցաւիցիւր մինն, ուտէր զայն:

Այս այս խրատի է, զի անզգամ ծոյլքն, և մանաւանդ հոգևոր ծոյլքն՝ վ̄ն կարօտու-թե՝ իմնապէս ոչ միայն զմիս բաղկաց, այլև զբոլոր մարմին և զհոգին ուտեն: քանզի բազմիցս մարմնաւոր ծոյլքն զպի-տոյս մարմնոյն ոչ պատրաստելով վ̄ն ծու-լութե, անկանին 'ի տկարութի, և 'ի նմին մեռանին. և այսպէս ուտեն զինքեանս. իսկ հոգևոր ծոյլքն՝ որք առ գործս բար-եաց հեղգանան, ըստ նմի չքաւորեալք 'ի շնորհաց՝ անկանին 'ի բազմազան մեղս. և 'ի նմին մեռեալք վ̄ն ծուլութե իւրեանց՝ զանձինս իւրեանց ուտակեն:

Բայց

Բայց մինչ խրատատուն ասէ այնպիսւոյ անզգամին, աշխատեա՛ զի կերիցես ։ Պատասխանէ. լաւ է առանց աշխատելոյ զայս սակաւիկս՝ զոր ունիմ, ունել հանգստութե՟, քան աշխատիցիմ, և ո՟չ բաւականին ունիցեմ ։ Որպէս թէ ասիցէ, ՚ի ունիլն իմ զերկու բուռն ալեր՝ որ բաւական է ինձ վ՟ միոյ աւուր, լաւ է ունիլ զմի բուռն առանց աշխատութե՟, քան զերկու բուռն հանդերձ աշխատութե՟ ։ Իսկ հոգևոր ծոյլքն զօրութե՟ ասեն՝ լաւ է հանգստութե՟ իջանել ՚ի դժոխս, քան աշխատելով ջանիւ՛ առաքինութե՟ ելանել յերկինս ։

Բայց ընդդէմ այսպիսեաց ծուլից՝ թէ հոգևորաց, և թէ մարմնաւորաց, որոց սակաւ՛ն առանց աշխատութեան ախորժ թուի, ասելի է. եթէ սակաւագոյնն է առաւել ախորժելի, ուրեմն ամենևին ոչ ունիլն ևս առաւել ախորժելի ։ զի մինչ զհանգիստ խնդրես, և ՚ի յաշխատութենէ փախչիս, ընդ ոչ ունիլդ նաև զսակաւն, ըստ ոմն ազատ լինիս յաշխատութենէ ։ Մ՟ որոյ ընդ գալն սովու, որ ըստ հնոյ առակին, ընդ դրունս աշխատողաց ոչ անցանէ, ՚ի տունս քո միայն զիջեւանս առնէ ։ Այլ առ հոգևոր ծոյլսն վերաբերեալ՝ ասացեալ լինի, թէ յաւուր դատաստանին բանք անիծիցն Տ՟նի, որք ընդ դրունս ականջաց աշխատողաց առ գործս բարեաց՝ ո՛չ անցանեն, ՚ի հանգստացեալ տան անձին

քում

քում զմշտնջենաւոր օթեւանս առնես ։

6։ Բարի է լիութիւն բռան միոյ հանգստեամբ, քան զլիութիւն երկոց բռանց՝ ջանիւ և յօժարութեամբ ոգւոյ։ (այլ և տառապանօք ոգւոյ։)

Այս է բան և պատասխանի անզգամի ծուլին՝ զոր առնէ ընդդէմ խրատատուին. որ ՚ի յանցեալ տանն մեկնեցաւ։ Եւ աստէն զգուշանալի է, զի մի՛ գուցէ վարկիցի՝ թէ սողոմոն ասէ զայս ՚ի դիմաց իւրոց. քանզի ՚ի դիմաց անզգամին խօսի, և ո՛չ զանզգամական բան մերժէ զայս ։ Եւ այն բան, որ ՚ի գիրս առակաց՝ ՚ի 17. գլխոջ, ՚ի 1. տան ասի, Լա՛ւ է պատառ մի հեշտութեամբ և խաղաղութեամբ, քան տուն լի բազում բարեօք հանդերձ խռովութեամբ։ Կարի տարանջատ է ՚ի սմանէ. զի անդէն ասել կամի՝ լա՛ւ է սակաւն խաղաղութեամբ և առանց մեղաց և թշնամանելոյ զայլս՝ քան զտունս լի մարմնաւոր բարեօք հանդերձ մեղօք և թշնամանութեամբ. որ է կարի տարբեր յայսմանէ ։

7։ Դարձայ և տեսի ունայնութիւն ՚ի ներքոյ արեգական։

8։ Էր մի է, և ո՛չ երկրորդ. և որդի՝ և եղբայր ո՛չ գոյ նորա. և ո՛չ է վախճան ամենայն վաստակոց նորա. (այլ և ո՛չ է վերջ՝ կամ դադարումն աշխատանաց նորա։) Եւ աչքայն այն նորա ո՛չ յագի մեծութեամբ։ Եւ արդ՝ ո՞ւմ ջանամ ես. և զրկեմ

զանձն

զանձն իմ 'ի բարութենէ. զի և այն ընդունայնութիւն է, և զբաղումն չար:

Իմաստունն աստէն խօսի զայնց ունայնութեանց, զորս ետես 'ի յայնս ագահս, որք զժառանգս ոչ ունին. այսինքն ոչ զորդի. և ոչ զեղբայր. բայց զաշխատանս և զջանս իւրեանց ոչ վերջացուցանեն առ 'ի յաճելուլ զփարթամութիւն. և ոչ երբէք յագին աչք նոցա բազմութեամբ դրամոց, և մեծութեամբ. այլ որքան առաւել բազմանան գոյք նոցա, այնքան առաւել սաստկանան բաղձանք նոցա առ ամենայնի:

Ասէ յարէ. Ասացի՝ ո՞ւմ ջանամ ես, և զրկեմ զանձն իմ 'ի բարութենէ, այսինքն 'ի հանգստութենէ հոգւոյ՝ և մարմնոյ, և սրտի: Աստէն կամի ասել. թէ նոյն ագահն, ոչ ասէ 'ի միտս իւրում զայս, թէ ես ո՞ւմ ժողովեմ, որովհետև ոչ ունիմ զժառանգ. և ընդէ՞ր զրկեմ զիս 'ի հանգստութենէ սրտիս:

Ասէ զկնի մինչ յարէ. Եւ և այն ընդունայնութիւն է և զբաղումն չար. կամի ասել՝ թէ նաև ոչ մտածելն զայս՝ թէ ում ժողովեմ, է մեծագոյն յիմարութիւն և ունայնութիւն. և չար զբաղմանց՝ և ծանր տառապանաց պատճառ:

9: Լաւ են երկուք քան զմի. որոց գոն վարձք բարիք 'ի վաստակս նոցա:

Աստէն ցուցանէ զանզգամութիւն նոցին,

որք

որք միշտ կամելով գերազանցել զայլս իշխանութբ, կամ փարթամութբ, կամին լինել եզական, և միակն 'ի մէջ բազմաց ։ Նաև զանզգամութի նոցին՝ որք ոչ համաձայնելով ընկերաց 'ի ձեռն սիրոյ և քաղաքավարութեն, լինին միայնակ՝ ոչ ունելով ընդ ումեք զսէր և զբարեկամութի, կամ զընկերութի ։ Նոյն ասելովս, որոց գոն վարձք բարիք, ցուցանէ, թէ մինչ երկու են ։ զի մինչ ունի ոք զընկեր և զբարեկամ բարի, յայնժամ բազում բարիք, և օգտակար արդիւնք լինին երկոցունցն ևս ։ Վասնզի զոր ինչ 'ի միասին լինելով կարեն առնել, զնոյնն 'ի միայնակ գոլն ոչ կարեն ։ որգոն, եթէ բեռնաճարելի է դրաստն, մինչ երկու են, կարեն բառնալ ։ բայց մինն միայն ոչ ։ Ըստ այսմ օրինակի և այլք անթիւք, որով երևի թէ երկուցն գոն վարձք բարիք ։ զի 'ի գոլոյն երկու, կամ բազումք, ծագին բազում օգուտք և բարիք ։ Նոյն 'ի հետևեալ բանսն յառաջ բերէ նաև զերիս օգուտս և զարդիւնս ։ և զմի ընդհանրականագոյն օրինակ ։ Նոյն յարէ նաև զայս, թէ Հայ ձոյն ։

Արդ՝ ասի լաւ են երկու ։ նախ՝ առ 'ի նշանակել զմիաբանութի ՛ և իցէ անձանց երկուց՝ կամ՝ բազմաց՝ որք իցեն բարեկամք իրերաց յանուն Տն ։ զորոց ասէ Տէրն, անդ եմ ես 'ի մէջ նոցա ։ Մատթ. 18. 20 ։ Երկրորդ, առ 'ի նշանակել զհաճատն՝ և

զգործն,

զգործն, որք են երկու 'ի միում · յորոց ծագին արդիւնք բազումք ։ Երրորդ, զմիաբանութիւն կրօնաւորաց 'ի մենաստանի, որք իրերաց գոլով օգնականք, եւ օրինակք բարիք՝ ծագին անտուստ բազում օգուտք եւ արդիւնք ։

10 ։ Զի եթէ գլորիցի մինն, կանգնեսցէ զնա ընկեր իւր · Եւ վա՜յ միոյն, եթէ գլորիցի · ո՛չ գուցէ միւս, որ յարուսցանիցէ զնա ։

Այսինքն, զբարութիւն երկուցն ցուցանէ իմաստունն նախ՝ այսու · զի եթէ մինն, կամ ըստ մարմնոյ, եւ կամ ըստ հոգւոյ գլորիցի, միւսն կանգնէ զնա ։ Եւ՝ յարէ · վա՜յ միոյն · այսինքն վա՜յ այնմիկ որ ոչ զբարի ընկեր ունի · եւ ոչ զԱծ ։ Եւ կամ ունի զընկեր, բայց ոչ զԱծ · որով իմանի թէ ունեցեալ ընկերն է միայն ըստ մարմնոյ ։ Քանզի միշտ այսու թէութիւն լաւ են երկու քան զմինն՝ զի իցեն օգնականք միմեանց 'ի հոգեւորս եւ 'ի մարմնաւորս · եւ ոչ միայն 'ի մարմնաւորս · որ հասարակ է մարդկանց եւ անասնոց ։

Դարձեալ · վա՜յ միոյն, այսինքն՝ որ միայն զհաւատ ունի՝ եւ ոչ զգործ բարի · կամ միայն զգործ բարի · բայց ոչ զհաւատ ։

Դարձեալ · վա՜յ միոյն՝ որ միայն մնաց եւ ընտրութեան իւրոյ հաճանի, եւ ըստ այնմ առնէ · եւ ոչ կամի ըստ խրատու վերնագունին իւրոյ, կամ իմաստնոց առնել զգործ

զգործ իւր, մինչ առ ձեռն պատրաստ ունի զնոսին։

Դարձեալ. վայ միոյն՝ որ վա ժամանութն իւրոյ ընդ ոչ ումեք միաբանի։

11. Եւ եթէ ննջեսցեն երկոքեան, ջեռուսցանեն զմիմեանս. իսկ մին՝ զիարդ ջեռնուսցու։

Աստէն զննջելն 'ի միասին՝ օրինակի վասն բերէ. և ոչ թէ զննջելոյն 'ի միասին խրատ ինչ տայ։ Վասնզի այն ոչ է իր ինչ հարկաւոր, կամ պիտանի, և կամ պատշաճ ամենից. այլ բազմիցս նաև անպատշաճ, և ապօրինաւոր, կամ որոգայթաւոր։ Այլ թէ առ ինչ է օրինակն, ծանիր. զի առ 'ի ստանալ զկեանս բարիս՝ երեք են պիտոյք 'ի կողմանէ մերմէ. Նախ՝ ոչ գլորիլ 'ի մեղս. և կամ եթէ գլորիցիմք, կանգնիլ. և որքան առ այս էր բան անցելոյ տան։ Երկրորդ՝ զի ջերմեռանդապէս աշխատիցիմք առ 'ի առնել զգործս բարեաց. և որքան առ այս է բան այսօրիկ տան։ Երրորդ՝ զի հզօրեղապէս ընդդիմանայցեմք մարմնոյ՝ աշխարհի, և սատանայի, որք միշտ բռնացեալք ընդդէմ մեր՝ կամին խոտորեցուցանել զմեզ 'ի բարեաց, և առ քարշել 'ի չարն մեղաց. և որքան առ այս ասէ 'ի հետևեալ տան։ Արդ՝ մինչ 'ի յանուն Տն՝ ուր են երկու 'ի միասին, ընդ գլորիլն միոյն 'ի մեղս՝ միւսն կանգնէ զնա, հետևի զի առ 'ի գործել զբարիս՝

 յոր-

յորժամ լինին երկու 'ի միասին, կամ բազումք, զմիմեանս ջերմեռանդացուցանիցեն առ գործս բարեաց. Թէ հակադարձական բարի զուգաւորութ͞ը, Թէ բարի օրինակօք. և Թէ յիրերաց ամաչելով 'ի հեղգանալոյ. կամ 'ի գաղջանալոյ առ գործս բարեաց: Քանզի երկու բարի ընկերք՝ մինչ են 'ի միասին, եԹէ մինն լինի փոքր ինչ գաղջ 'ի խօսելոյ զիրաց ա͞ծայնոց, և յօժարիցի առ դատարկաբանութիւ՝ ամաչէ 'ի բարի ընկերէն, և սկսանի ջերմանալ առ բարի զուգաւորութիւ. և այսպէս ջերմանան 'ի միմեանց երկու բարի ընկերքն:

Սակայն չար ընկերաց, որոց մինն 'ի խօսելն զիրս ունայնս, և կամ զբանս բամբասանաց, և դատողութե, միւսն խկոյն խնդութ͞ը կամակից եղեալ նմա ընդ առաջ ելանէ, և յօժարութ͞ը լսէ. նաև համաձայն բանից նորա զպատասխանիս առնէ, ո՛չ միայն ոչ կարէ ասիլ՝ լուռ են երկու, այլ նաև ասի, Թէ մինչ վայ է միոյն, կրկին վայ է այնպիսեաց երկուցն. որք զպարանոցաւ միմեանց փարեալք՝ ընկղմեն զիրեարս 'ի ծովն դժոխոց:

Նա՛ յարէ. [illegible]. վա͞յ անձն այն որ միայնակ է, դժուարին է ջերմանալ օր ը͞ս օրէ 'ի սէր բարւոյն՝ հասարակաբար խօսելով: Թէպէտ 'ի մասնաւորի մտածեալ՝ երբեմն ամենք գոլով միայ-

միայնակ, ամենայն մասնաւոր օգնականու-
թեան ջերմացան 'ի գործս բարեաց, նաև
ընդդիմացան բռնութեան դիւաց. որպ՟ յայտ է
'ի մեր հարս անապատի, որոց բազումք
միայնակ 'ի քարանձաւս ճգնեալ' գերա-
զանցեցին զբազմօք սրբովք որք եղեն 'ի
յընկերութեան:

Ամէն ատեն և զհաւատոյ և զգործոց բար-
եաց, որք զիրեարս ջերմացուցանեն' նաև
կատարելագործեն' և կենդանացուցանեն.
և մինն միայն ոչ ջերմանայ. վս՟ զի հաւատք
առանց գործոց, և գործք առանց հաւա-
տոյ մեռեալք են. որպ՟ ասէ Յակոբոս.
2. գլուխ:

12: Եւ եթէ բռնասցի մին, երկուքն կալցեն
ընդդէմ նորա. և առասան երեքկնեալ ոչ վաղվա-
ղակի խզեսցի:

Այսինքն, եթէ դևն ընդդէմ նց՟ ելա-
նիցէ, գոլով երկու' կարեն զդէմ ունել
դիւին, և յաղթահարել զդևն. և այս
բազում կերպիւ:

Նախ' զի վս՟ իւրեանց աղօթեն բարի ըն-
կերքն. և մինչ 'ի միաբանութեան գոլով ա-
ղօթեն, միշտ լսէ Տ՟ծ, ըստ այնմ: Եթէ
երկուք 'ի ձէնջ միաբանեսցին յերկրի վասն ամ՟ իրաց'
զինչ և խնդրեսցեն, եղիցի նոցա 'ի հօրէ իմմէ որ
յերկինս է. Մատթ. 18. 19:

Երկրորդ' զի խոնարհութբ՟ յիւրեանց զխոր-
հուրդ և զխրատ հարցանեն ընդդէմ
դիւին.

դիւէին . և յայսմանէ կարի նուաղի զօրութեան դիւէին ընդդէմ նոցա:

Երրորդ՝ զի զՔս ունին 'ի մէջ իւրեանց այսպիսի երկու , և կամ բազում բարի ընկերքն . որպէս ասէ Տէրն . Ուր իցեն երկու , կամ երեք ժողովեալ յանուն իմ , անդ եմ ես 'ի մէջ նոցա . Մատթ. 18. 20: Իսկ մինչ զՔս ունին, այսու իսկ անյաղթելի լինին . վզի լինին , առասանն երեքկնալն՝ որ ոչ վաղվաղակի խզեսցի : Քանզի երկու բարի ընկերք , կամ բազում բարի ընկերք . որպիսիք են բազում բարի կրօնաւորք , սիրով Քսի միաբանեալք , և իրերաց օգնականք 'ի հոգևոր գլորմունս լեալք , և զմիմեանս 'ի սէր առաքինութեան յորդորեալք, և ընդդէմ բռնութեանց դիւական յարձակմանց իբրու բանակ Տն անյաղթելի ախոյեան կանգնեալք , են որպէս զերկու առասան. իսկ Քս՝ որ լինի 'ի մէջ նոցա , այնու լինին երեք . և այսպէս որպէս առասան հաստատուն. որպիսի է հաստատուն պարանն նաւի, որ 'ի յերից պարանաց 'ի միասին եդելոց ոլորի և հիւսի , դժուարաւ խզի . նոյնպէս և որք միաբանեալք են սիրով Քսի , ոչ երբէք յաղթահարին 'ի դիւաց :

Դարձեալ գիտելի է . զի զոր ինչ կարեն առնել բազումք մինչ են 'ի միասին, զնոյն իւրաքանչիւրն ոչ կարէ առնել մինչ է առանձին . և վզի այսորիկ միշտ բարի է երկուքն քան զմին : Որ օրինակ , զօրք ձա_

կա_

կատուն՝ 'ի միասին զոր ինչ առնեն՝ զնոյնն 'ի գոյն իւրեանց առանձին և ցրուեցելք՝ ոչ երբէք կարեն առնել: Սա այսմ օրինակի իմանալի է զբարութ̃է միաբանութ̃ե եղբարց, և զվնասուց տարաձայնութ̃ե, թէ 'ի հոգևորս, և թէ 'ի մարմնաւորս:

13: **Լաւ է մանուկ աղքատ և իմաստուն՝ քան զթագաւոր ծեր և անմիտ. որ ո՛չ ևս իմանայ հայել: մի**, որ ոչ 'ի միտ եառ շրջահայեաց լինել, և կամ նախատեսող զգործոց իւրոց, և զկառավարութ̃եց:

Սատէն կամի ցուցանել զազնուական իմաստութ̃ե. քանզի թէպէտ պիտոյ է թագաւորին գոլ փարթամ, և գոլ հասուն և կատարեալ հասակաւ, բայց թէ յիմար իցէ, և անշրջահայեաց, ոչ ինչ օգնէ հասակն և փարթամութ̃իւն. և միշտ լաւագոյն է աղքատ մանուկն որ ունի զիմաստութ̃ի և զշրջահայեցութ̃ի, քան զնա: Նոյն այս յայտ է 'ի յովսէփ, որ թէպէտ աղքատ մանուկ էր, բայց իմաստութ̃բ թագաւորեաց: Նմանապէս և մարգարէն դաւիթ. որ գոլով աղքատ և մանուկ՝ լաւագոյն գտաւ իմաստութ̃ըն, քան զսաւուղ, որ էր փարթամ՝ և ծեր, բայց անշրջահայեաց:

14: **Զի՞ ելէ 'ի տանէ կապանաց ելցէ այլ ոմն առ 'ի թագաւորել. զի և 'ի թագաւորութեանն իւրում եղև աղքատ:**

Նատէն կամի ասել զայս : Իմաստուն աղ-
քատն թէև նախապէս բանտարկեցեալ
իցէ, 'ի ձեռն իմաստութեն, և կամ վասն
իմաստութեն իւրոյ հանեալ լինի 'ի բան-
տէ առ 'ի թագաւորել . ուր հանդիպեցաւ
նահապետին յոլովից : Իսկ յիմար փար-
թամն, թէև 'ի թագաւորէ ծնեալ իցէ՝
և թագաւորեալ, վն իւրոյ յիմարութեն
լինիլ կարէ աղքատ : Եւ այս երևեցաւ
'ի սեդեկիա, և 'ի ռօբովամ . որք որդիք
թագաւորաց էին՝ և թագաւորեցին . բայց
վն յիմարութեն, 'ի թագաւորութեն իւր-
եանց եղեն աղքատք . և սեդեկիա եղև
նաև գերի : Եւ աստուստ յայտ է ազնու-
ութի և օգտակարութի իմաստութե, և
վնասն յիմարութե : Եւ զի 'ի յանցեալ
տամն՝ եդ զիմաստուն աղքատ մանուկն
լաւագոյն քան զթագաւորն ծեր և ան-
միտ : և յայսմիկ տան ասել կամի զայս :
Այս, զի իմաստուն աղքատն նաև եթէ
իցէ 'ի բանտի, ելցէ և թագաւորեսցէ .
իսկ նա, զի անմիտ ծեր թագաւորն 'ի թա-
գաւորութեն իւրում եղանի աղքատ . և
կամ լինի բանտարկեցեալ . որպէս եղև
Սեդեկիա :

15 : Տեսի զամենայն զմն կենդանիս՝ որք շր-
ջին 'ի ներքոյ արեգական . համդերձ երիտասարդաւն
երկրորդաւ, որ յառնելոցն է փոխանակ նր :

Նատէն իմաստունն տեսանելով նաև զնոր

իմն

իմն տեսակ ունայնութեան՝ զարմանայ , և
այնու բացայայտէ զունայնութիւն բաղձա֊
նաց մարդկանց, որք կամին թագաւորել։
Ոչ կամի ասել զայս · ո՛վ դու որ կամիս
թագաւորել՝ զի մարդիք սիրիցեն՝ պատուէ
ցեն՝ և փառաւորիցեն զքեզ ՚ի վեր քան
զամ՛ ոք , և զկնի քո շրջիցին · ՚ի զուր է
այդ՝ և ունայն։ Վանզի զորքան ես երի֊
տասարդ, իրաւի պատուեն զքեզ · և զկնի
քո շրջին · բայց մինչ ծերանաս, ոչ հային
յերեսս քո · և ոչ այնքան փառաւորեն
զքեզ, և ոչ այնքան զկնի քո գան , որքան
փառաւորեն զնա՝ որ զկնի քո թագաւո֊
րելոց է։ ուստի շրջին զկնի նր, որ է երկ֊
րորդ երիտասարդ · և զնա առաւել պատ֊
ուեն քան զքեզ · և ՚ի նմանէ առաւել եր֊
կնչին քան ՚ի քէն։ զի դու որ էիր առա֊
ջին երիտասարդ՝ արդէն ծերացար · մն
որոյ մինչ տեսանեն զքեզ մերձեցեալ ՚ի
դուռն գերեզմանի, շրջին ը երկրորդի ե֊
րիտասարդին՝ թ ը նմ, որ զկնի մահուանդ
լինելոց է թագաւոր փոխանակ քո։
Որդ յայտնիկ տան, բառիւն՝ կենդանէ՝ ի֊
մանի մարդն · և բառիւն՝ հանդերձ՝ իմանի
բառս, ընդ։ ուստի գրեթէ ասէ · տեսի
՚ի ներքոյ արեգական զամ՛ մարդիկ, որք
շրջին ընդ երկրորդի երիտասարդին , որ
լինելոց է թագաւոր փոխանակ նր · զի
փոխանակ ծերացելոյ թագաւորին և ասէ
զնա երկրորդ երիտասարդ · զի ծերացեալ

Թագաւորին եւ էր երբեմն երիտասարդ՝ եւ ծերացաւ. որում սա բաղդատեցաւ՝ ասի երկրորդ երիտասարդ։ Նա՛ կամ այսպէս. երիտասարդն որ երկրորդաբար զկնի ծերոյն Թագաւորելոց է։

Ըստ այսմ եղեւ նաեւ սիրտ ժողովրդեանն իջել ընդ աբիսաղոմայ. զի համարելով թէ զկնի դաւթի, որ էր ծերացեալ՝ նա Թագաւորելոց է վն ազնուութն անձին, զնա առաւել սիրէին, եւ պատուէին քան զդաւիթ. եւ այնու՝ մինչ նա ընդդէմ հօրն հակառակեալ՝ կամեցաւ Թագաւորել, գրեթէ բնաւքն զհետ նր եղեն։

16։ Ո՛չ գոյ վախճան ամ ժողովրդեանն. ամենեցուն որք եղեն յառաջագոյն քան զնոսա։ Նաեւ յետինք ո՛չ լինիցին ուրախ 'ի նմ նր. զի եւ այն սնոտի է, եւ յօժարութիւն ոգւոյ։

Կամի ասել. ո՛չ գոյ թի՛ւ ամ ժողովրդեանն որք եղեն յառաջքան զայս երկրորդ երիտասարդս՝ որ Թագաւորեաց. բայց գոլով անցեալք եւ մեռեալք՝ ո՛չ ցնծան եւ ո՛չ ուրախանան 'ի վր Թագաւորելոյն սորա։ Օ՛րօրինակ, այնք բազմութիւք որք էին 'ի ժամանակի Թագաւորելոյն սաղոմոնի, ո՛չ ցնծացան, եւ ո՛չ ուրախացան 'ի վր Թագաւորելոյն ռոբովամայ. զի մեռեալքէին. այլ միայն նորա ուրախացան՝ որք յետոյ եկին յաշխարհ. եւ էին 'ի նմին ժամանակի յորում ռոբովամ՝ Թագաւորեաց։

րեաց ։ Այլ նաև սոյն յետինքս որք ու-
րախացան ՚ի վ̃ր ն̃ր մինչ Թագաւորեցու-
ցին, զկնի սակաւուց յորժամ՝ սկսաւ պա-
հանջել ռօբովամ ՚ի նմանէ զհարկս, սկսան
տրտմիլ, և ո՛չ միայն ոչ ուրախանալ ՚ի վ̃ր
նորա, այլ նաև թշնամի լինիլ նմա. և
ապստամբիլ ՚ի նմանէ. և հակառակ նմա
կացուցանել զայլ Թագաւոր ։ և առ այս
յարէ. ՚Նաև յետինքն ո՛չ ուրախ լինէին՝ ՚ի վ̃ր ն̃ր.
ք̃զ, ո՛չ միայն մեռեալ և անցեալ ժողո-
վուրդքն որք են նախկինք, ո՛չ ուրախանան
՚ի վերայ երկրորդաբար Թագաւորողին,
այլև յետինքն, ք̃զ ՚ի ժամանակին յայնմիկ
եղեալ ժողովուրդքն՝ որք ՚ի Թագաւորե-
ցուցանելն ուրախանային, ՚ի պահանջելն
Թագաւորին զհարկս՝ ո՛չ ուրախանան ՚ի
վերայ ն̃ր ։ Եւ ո՛չ միայն ոչ ուրախանան,
և ո՛չ սիրեն զնա, այլ նաև ատեն՝ յորժամ
զսիրելի արծաթն նոցին հարկապահան-
ջութ̃բ հանէ ՚ի քսակաց սրտից նոցին ։
Արդ՝ մինչ այսպէս է, և իրն այսու կեր-
պիւ հանդիպի Թագաւորաց, յարէ. Զի
և այն ունայն է և յօժարութիւն ոգւոյ. ք̃զ տառա-
պանք հոգւոյ ։ Եւ՛ այսու ունայն և սնո-
տի գոլ ցուցանէ նաև զԹագաւորելն ։ զի
ոչ՛ք յարակայականաբար սիրէ և կամ
պատուէ զնոսա. որովհետև անցեալքն,
ք̃զ յառաջքան զինքն եղեալ ժողովուրդքն
գոլով մեռեալք՝ ո՛չ պատուէին զնա ։ Ապա-
գայ ժամանակի ժողովուրդն մինչ գայ-
ցէ,

ցէ, յայնժամ ինքն մեռեալ է. և այսպէս նաև 'ի նոցանէ ոչ սիրի և ոչ պատուի: Իսկ ներկայ ժամանակի ժողովուրդքն, թէպէտ 'ի թագաւորեցուցանելն սիրեն և պատուեն. բայց 'ի պահանջելն զհարկս՝ նաև նոքա ատեն. և անպատիւ առնեն զնա: Արդեամբ մնոտի է բաղձանն թագաւորելոյ:

17: Զգոյշ լեր ոտին քում, որով երթաս 'ի տուն այ. և մերձ լիցին 'ի լսել: (այլ, և մերձ լիցիս 'ի լսել:)

Աստէն մինչ եղերեաց ձառել զոմանց անզգամականաց գործոց՝ որք եղանին 'ի ներքոյ արեգական. և եղերեաց ցուցանել զունայնութիւն թագաւորութեանց ծխ. սակս առ վախճանական բարին վերածելոյ զմարդիկս, այսինքն զունկնդիրս իւր, ասէ. Զգոյշ լեր ոտին քում. այսինքն մինչ յամուամաւոր երթաս 'ի տունն այ, զգոյշ լեր՝ զի ոտք քո ուղղաբար ոչ սխալեսցին. այլ մտածեա թէ ու՞ր էր և առ ինչ երթաս 'ի տունն այ. և յայնժամ գտանես, թէ առ 'ի լսել զբանս օրինաց և հրամանաց, որք քարոզին անդ. և մինչ զայս գտեր, մտածեա և զայս՝ թէ առ ինչ և վասն էր պարտիս լսել. և խոկոյն տեսանես՝ զի վն պահելոյ զայնս. և մինչ զայս առնես, այսինքն պահես զօրէնս, յայնժամ բարւոք զգուշութիւն եղեալ է ոտին քում. և արդիւնաւոր

է

է զնաւն քո ։ Նա՛ զի յարէ ․ Մերձ լիցին 'ի լսել ․ այլ ատիւքդ յառաջ շարժեա զքեզ , զի մերձ լինիցիս քարոզողին առ 'ի լսել ։ Նաև իմանի մերձ լինիլն՝ ուշադիր գոլն բանից օրինաց և քարոզութե զորս լսէ ։

18 ։ Ոչ լաւագոյն է հնազանդութիւն քան զպատարագս անզգամաց ․ Վասնզի ոչ են գիտակ չարիս առնելոյ ։

Կամի ասել՝ թէ ոմանք անզգամք անփոյթ գոլով 'ի լսելոյ զօրէնս՝ և հնազանդելոյ այնմ՝ պահելով զայնս , յուսացեալք են 'ի տուրս իւրեանց , կամ 'ի զոհս խոյոց և զոհարակաց զորս մատուցանեն այ ։ Բայց այս ոչ ինչ է ․ քանզի զորքանս տուրս և զպարգևս գանձուց տայցեն տանն Տն , և զորքանս զոհս մատուսցեն , ոչ օգտէ նոց , մինչ զօրինայն այ ոչ ունին զփոյթ լսելոյ և պահելոյ ։ Նա՛ քանզի պահումն օրինաց և պատուիրանայն այ է հնազանդութիւն առ ԱԾ ․ վն որոյ ասէ ․ լաւագոյն է հնա_
զանդութի քան զտուրս անզգամաց ։

Նա՛ յարէ ․ Վասնզի ոչ են գիտակ զչարիս առ_նելոյ ․ այլ քանզի անզգամքն ոչ կամին յատ_կապէս՝ և բացայայտաբար գիտել զայս ճշ_մարտութի , թէ հնազանդելն Այ ոչ յայլ ինչ կայանայ՝ եթէ ոչ 'ի պահելն զհրամանս և զօրէնս նորա ։ Այսպէս վար_կեն՝ թէ տրօք և ողորմութե , կամ զոհիւք լինին հնազանդօղք այ ․ և կամ ասելովն բերանով և մտօք , թէ հնազանդ եմ այ ,

այնու

այնու լինին հնազանդօղք ա՟յ. և այսպէս մոլորելով միամ անգէտք առնելոյ զբարիս: Քանզի այսու միայն առնեմք զբարիս. զի զպատուիրանն ա՟յ պահիցեմք. և այնու զմերն հնազանդութիւն ա՟յ ընծայիցեմք.

# ԳԼՈՒԽ. Ե.

Յայտնէ գլխոյս ուսուցանէ զկերպ աղօթելոյ և պաշտելոյ զԱ՟ծ. և զերիս [illegible]: Նախ` զի մ' յանդգնաբար շատախօսիցէ մարդն առաջի ա՟յ: Երկրորդ` զի մ' անխոհեմաբար ուխտիցէ ընդ ա՟յ, այլ այնպէս` զի զնոյնն բարեպէս կատարիցէ և լցուսցէ: Երրորդ` ցուցանէ յարգելի գոլ ա՟ծային նախախնամութեան նորա յայնժամ մինչ թոյլ տայ զի աղքատք կրիցեն զզրկանս. և արդարութեան բռնաբարիցի յանիրաւաց: Եւս [illegible] [illegible] զունայնութէ երազոց: Եւս 'ի 9. տանն ունանի ցուցանել զունայնութէ ագահութէ, ըստ որում ո՛չ երբեք յագի ագահն. և բազմիցս գումարէ զենչս 'ի հարստութ [illegible]. տեսանէ 'ի 17. տանն եղբարթակէ զհանգստութեն ոչ հայանալ 'ի բազմութեանս ընչից, այլ 'ի համեստ, և 'ի չափաւոր [illegible] նոցին:

## ※ ԲԱՆ: ※

Մի՛ փութար բերանով քով. և մ՛ վաղվաղեսցէ սիրտ քո հանել զբան առաջի այ. զի Ած յերկինս է. և դու յերկրի. վասն այսորիկ եղիցին բանք քո սակաւք:

## ※ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ: ※

Այսինքն, պարտէ խօսել միշտ խորհրդով և ընտրութեամբ. և ոչ ըստ որում տան զգայական երևակայութիւնքն, և կամ որ ինչ գայ 'ի լեզուն. և կամ զոր ինչ մատուցանէ ախտան բարկութեն. կամ ատելութեն, և նախանձուն: Իսկ նա՝ որոյ բերանն փութայ 'ի խօսել. և սիրտն ոչ ունելով զսանձ՝ վաղվաղէ հանել արտաքս զբանս և զխօսս, ոչ կարէ ընտրութ̃բ. և խորհրդով, և կամ ըստ իրաւանց՝ և օրինացն այ հանել զբան 'ի բերանոյն. զի փութացողն 'ի գործ ինչ, որոյ բարութիւն կայանայ 'ի կարգաւորութեան, ոչ կարէ զնոյն գործն կարգաւորապէս առնել: Այս որքան առ այս՝ գրեթէ ասէ. մի՛ փութար 'ի խօսելդ, զի ունիցիս զմիջոց խորհրդածելոյ և ընտրելոյ զբանդ:

Այս յարէ. Աստուածն այ. և այլն. զի ցուցանիցէ, թէ Ած միշտ գոլով ներկայ՝ տեսանէ և լսէ զբանս քո. և է դատաւոր ա-

նա-

նաչառ. և ըստ որում գտանէ զթիւրու՟ն
և զանիրաւու՟ն 'ի բանս քո, դատէ զքեզ։
Խ՛ Թեպէտ բանք քո ըստ արտաքին ձայ_
նին ընդ օդս ցնդին, բայց ը՟ որում կար_
գեցեալք էին բառք բանից քոց առ'ի
նշանակել, նոյն կարգքն, թէ ուղիղ իցեն,
կամ թիւր, 'ի դատաստանականի մատե_
նին ա՟յ անջնջելաբար գրին. և ըստ այնց
զվարձս, կամ զպատիժս ընդունելոց ես։
Խ՛ յարէ. Ոչ Ա՟Ծ յերկինս է. և այլն։
Կամի ասել։ Մ`իայն ա՟յ, որ է յերկինս,
յատուկ է, զի զոր ինչև խօսիցի, միշտ իցէ
ուղիղ. մինչ նա ոչ կարօտի, զի նախ՝ խոր_
հիցի, և ապա խօսիցի, ո՟պ զի մի սխալի_
ցի։ Բայց մարդոյն՝ որ է յերկրի, յատուկ
է ներհակն, այ՟ս, զի զոր ինչ և խօսիցի ա_
ռանց ընտրութե՟ և խորհրդոյ բանին,
միշտ իցէ սխալ։ Վ՟զի ա՟մ բանք մարդոյ՝
ոյք ելանեն 'ի բերանոյ, 'ի ձեռն մարմ_
նաւոր գործեաց՝ և յերևակայու՟եց կազ_
մին, և 'ի սրտէ յառաջգան. և յորժամ
բանականութ՟ին, ընտրութ՟ին, և վերա_
հայեցումն առ բնական և առ Ա՟ծային
իրաւունսն՝ ոչ կարգաւորէ զայնս, միշտ
եղանին սխալականք և թիւրք, ըստ թիւ_
րութե՟ զգայականի յօժարութե՟. որ մինչ
զուրկ է 'ի բանէ, և 'ի կանոնէ իրաւանց,
է չար գանձարան բնաւից ախտից և մո_
լութեանց։ և ըստ Տ՟ն բանի՝ այնպիսին
'ի չար գանձուց սրտի իւրոյ միշտ հանէ

զչա_

զչարիս ։ որպէս ասի Մատթ. 12. 35 ։
Դարձեալ. յորժամ խորհուրդք և յօժա_
րութիւնք մարդկայինք ոչ ուղղին 'ի բա_
նականութ̃է ը̃ս ա̃ծային օրինաց և իրաւ_
անց , մարդն ո̃պ զխարդախօղ ջրաղացա_
պան՝ որքանիցս ըստ որում կերպի և իցէ
զջուրն բաժանիցէ , և 'ի զանազան ճա_
նապարհս դիցէ , ա̃յ խորհիցի և տրամա_
բանիցէ զիրէ իմեքէ՝ միշտ դիտէ 'ի ջրա_
ղաց իւր տանիլ զջուրն . ա̃յ առ մարմնաւոր
օգուտն և առ դիւրութիւն վերաբերել
զիրն ։ Քանզի որքանիցս բանն մեր ու_
նի ինքեան գործի զմարմնաւոր զգայու_
թիւս , միշտ առ մարմնաւորս ձգին հա_
մայնք բանք և խորհուրդք իւրք ։ Իսկ
յայնժամ միայն է ազատ յայսմանէ մո_
լորութ̃է , յորժամ ըստ ա̃ծային օրինացն
խորհի ։ և որքան առ այս սաղմոսերգուն,
երանեալ ասէ զնա՝ որոյ կամքն է 'ի յօ_
րէնս Տ̃ն . և 'ի յօրէնս Տ̃ն խորհի , ա̃յ ը̃ս
օրինաց Տ̃ն խորհի . և նմանեցուցանէ զնա
ծառոյ՝ որ տնկեցեալ լինի 'ի գնացս ջուրց։
Իսկ յարէ . Եղիցին բանք քո սակաւք ։ ա̃յ, որք
առանց ընտրութե̃ն խօսին , և վաղվաղէն
հանել զբանս՝ խօսին զբազումս . իսկ որք
ընտրութ̃բ խօսին , բանք նոցին գոլով
եզերեցեալք և չափաւորք՝ լինին սակաւք։
Իսկ առ այս ասէ , Վասն այսորիկ եղիցին բանք
քո սակաւք . իբրու թէ ասիցէ . պատճառաւ
ընտրութ̃բ խօսելոյդ մինչ հետևիցի քեզ
խօ_

խօսիլ սակաւ, հետևեսցի. զի նաև այսէ բարի ։ Քանզի սակաւն որ է ընտիր և օգտակար, միշտ նախընտրելի է քան զբազումն, որ է յոռի և վնասակար ։

2 ։ Բանալի հասանէ երազ՝ ՝ի բազմութիւն հոգ_ յութեն. և ձայն անզգամի ՝ի բազմութեն բանից ։

Կամի ասել, թէ որպէս ՝ի փորձութենէ, կամ ՝ի վշտացն զորս կրեմք ՝ի յաւուրն, ՝ի գի_ շերին յայնմիկ հասանին և հանդիպին մեզ նեղացուցիչ և վշտացուցիչ երազք. քանզի պատկերք նեղութեց և վշտաց աւուրն մնան յերևակայութե մերում. և զի այնմ ՝ի գիշերի ծնանին յայնց ահացուցիչ և վշտացուցիչ երազք. այսպէս և ՝ի բազ մութենէ բանից՝ որք ոչ են զիրաց իմաստ_ նոց, ծնանին և յառաջադային ձայնք անզգամի. այսինքն զրոյցք անզգամի, և խօսք յիմարականք ։ Արդ այսպէս՝ շատախօսն, թէև ոչ իցէ անզգամ, կամ յիմար, մինչ շատախօսէ, և առանց ընտրութե վաղ_ վաղէ հանել զբան՝ յայնմանէ շատախօ_ սութե ծնանին այնպիսիք խօսք և բանք, որք առ անզգամս և առ յիմարս վերաբե_ րին. և են միայն պտուղք նոցին ։

3 ։ Որպէս ուխտես ուխտս առ Աստուած. մի՛ յամեր հատուցանել զայն. Քանզի ո՛չ են կամք յանզգամսն. արդ՝ դու՝ զոր ուխտեսն՝ հատո՛ ։

Աստէն զերկուս կանոնս տայ զուխտից ։

Նախ՝

Նախ՝ զայս. զի ըստ որում, և ոչ լինիցի ուխտն՝ ըստ այնմ հատուցանիցի, և կատարիցի. զի եթէ զպահս ուխտեաց պահել, զնոյնն կատարիցէ և հատուսցէ. և ոչ 'ի բաց թողլով զայն՝ փոխանակ նորա զողորմութիւն տայցէ աղքատաց. և համարիցի այնու կատարել զուխտն ։ Նաև, եթէ ուխտեաց կատարել զայն զկնի տասն աւուր, ոչ յառաջացուսցէ, կամ յապաղեսցէ մինչև 'ի մետասան օրն. և կամ անդր քան զայն. ըստ այսմ իմա և զայլոց պարագայից ։

Երկրորդ՝ տայ զայս կանոն, զի մի զանխոհեմ, և կամ զանպատշաճ իրս ուխտիցէ ոք. ոչ յեփթայէ ուխտեաց զոհել զոյ զնա որ նախապէս ընդ առաջ ելանիցէր ինքեան. և հանդիպեցաւ զի դուստրն իւր ել ընդ առաջ. և այսու որպէս 'ի ուխտելն եղև անխոհեմ, այսպէս և 'ի կատարելն զուխտն եղև անխոհեմագունեղ ։ Աստի ասէ. ոչ են հաճոյ յանդգնանս. զի ոչ են կամք ըստ 'ի յանդգնամական ուխտս ։ Վասն զի Ն.Ծ ոչ երբէք կամի զի ուխտիցէ ոք առնել զինչ գործ անխոհեմ, և կամ անըզգամական ։ Վասն որոյ կարի անզգամք են նոքա՝ որք երդմամբ ուխտեն առնուլ զվրէժ 'ի նմանէ որ մխացեաց ինքեանց. Վասն զի ուխտեն զայն՝ որ ոչ է կատարելի և հատուցանելի ։

Աստի ասէ. Աւրդ՝ զոր ուր ուխտեցար՝ հատո՛ ։

յն զայնպիսի ուխտ արա՛, որոյ լցուցումն և կատարումն իցէ բարի, և այնու իցէ հատուցանելի և կատարելի ։ Աստի որք ուխտեն զանպատշաճս և զապօրինաւորս, իսկոյն այնու մեղանչեն առ Ած․ զի ուխտն վերաբերի միշտ առ Ած, և ուխտեցեալն է ոմն զպարգև ինչ որ մատուցանի Այ։ Վն որոյ մինչ ուխտեցեալ իրն է ապօրինաւոր և ատելի Այ, գրեթէ այն՝ յորմէ զարշի Ած, մատուցանի Այ․ որ է մեծագունեղ մեղք ։ Իսկ եթէ զայնպիսի ապօրինաւոր ուխտն նաև կատարիցեն՝ մեղանչեն կրկին մեղօք․ որգոն․ եթէ ոք ուխտեաց այրել զտուն ուրուք, և այրիցէ․ բայց 'ի մեղաց չարաչար ուխտելոյն, մեղանչէ նաև մեղօք վնասելոյ ընկերին։ Իսկ եթէ ոչ այրիցէ, վերամնայ պարտաւոր միայն առաջին մեղացն, յն չարաչար ուխտելոյն ։

### 4 ։ Ո՛չ է բարի է քեզ ոչ ուխտել, քան ուխտել՝ և ոչ հատուցանել ։

Այսինքն, թէպէտ զօրինաւոր և զբարի գործողութիւն ուխտելն Այ, և հատուցանելն՝ է մեծ բարի․ բայց ոչ հատուցանել զուխտեալն, (կամ վն այսորիկ, զի գոլով զապօրինաւորաց՝ ոչ է հատուցանելի․ և կամ վն այսորիկ, զի ուխտողն զօրինաւոր և զհատուցանելի ուխտն փոխելով զկամս իւր ոչ կամի հատուցանել՝) այնքան մեծագոյն չար է, մինչ զի ոչ ուխտելն որ

լաւ

ըստ ինքեան զոչ իմն բարութիւն ունի՝ , բաղդատեցեալ առ այն մեծագունեղ չարն՝ ասի բարի։

5 ։ Մի՛ տար զբերան քո առ՚ի մեղանչել մարմ_նոյդ քում. և մի՛ ասիցես՝ թէ առաջի երեսաց այ տգիտութիւն է. զի մի՛ բարկասցի ած ՚ի վր բարբա_ռոյ քոյ։ և ապականեսցէ զգործս ձեռաց քոց։

Կամի ասել. մի՛ բանար զբերան քո առ՚ի ուխտել զայնպիսի իր, որով վնասի մար_մինդ. յն, առ՚ի մեղանչել և վնասել մարմ_նոյդ. մի՛ բանար զբերանդ ուխտելով զան_կարելիս, կամ զայնպիսիս՝ որք առանց վնասելոյ մարմնոյդ ոչ կարեն կատարիլ։ Որգոն, եթէ ոք ուխտիցէ զմի եօթնեակ ոչ երբէք ննջել. կամ զաւուրս ութն զոչ ինչ ճաշակել. և զայլս նմանս սոյն, որք զմեծ և զերևելի վնաս առբերեն մարմ_նոյն ։ Վասնզի ած թէպէտ կամի զի ՚ի սէր իւր վշտանկիցեմք զմարմինս մեր, բայց ոչ կամի, զի կամօք մերովք՝ կամ անբա_նաւոր ուխտիւք դահիճք լինիցիմք մեզ. և առնիցեմք զայնպիսիս, յորոց անմիջա_բար և հաւաստապէս հետևին ծանրա_գոյն և մահաբեր վնասք մարմնոյ։

Ասացի անմիջաբար՝ և հաւաստապէս. քանզի եթէ ՚ի բանաւոր ճգնութենէ՝ և կամ յուխտից միջնորդաբար՝ և անհաւաս_տի կարծեօք վնաս ինչ առհետևիլ վար_կիցի մարմնոյն, մի՛ այնպիսեաց կարե_

ընականաց վնասուց՝ ո՛չ պարտիմք ՚ի բաց կալ յուխտելոյ զիրս բանաւորս . և ո՛չ ՚ի ձգնութենէ և ՚ի խոշտանգելոյ զմարմինս մեր, առ ՚ի հնազանդեցուցանել զնա հոգւոյն և օրինացն այ, հեղգանալ : Արդ՝ մինչ այսու բանիւ խրատեաց ոչ ուխտել զիրս անխոհեմս, և զվնասակարս՝ յարէ զկնի, և ուսուցանէ ոչ զանց առնել զուխտիւ ՚ի ձեռն ունայն և պատրուակեալ պատճառաց : Ուստի ասէ .

Եւ մ՛ ասիցես, թէ առաջի այ անգիտութիւն է .

յն, ո՞ր ոմանք մարդիք ՚ի խօսիլն զոմանս ուխտս, և կամ ՚ի բերելն զպատրուակեալ բանս և զպատճառս առաջի ուրուք առ ՚ի ջատագովել զինքեանս, և անպարտաւոր ցուցանել, միշտ զայս ասեն ՚ի միտս իւրեանց՝ թէ նա՝ առաջի որոյ զմեզ ջատագովեմք, ո՛չ գիտէ զներքին բանս՝ և զխորհուրդս մեր : այսպէս ևս եթէ նաև մեք առաջի այ զոչինչ պատճառս՝ և զպատրուակեալ բանս առբերելով ջանայցեմք զմեզ անմեղադրելի կացուցանել . և կամ ոչ պարտաւոր երևեցուցանել առ կատարումն և առ վերահաստուցումն ուխտից, այնու իսկ ասեմք, թէ առաջի այ անգիտութի է . յն ասեմք, կամ դնեմք ՚ի միտ՝ թէ Ած ո՛չ գիտէ զներքին խորհուրդս մտաց, և զծկտումն կամաց մերոց . որ է մեղք ծանրագոյն : Վս որոյ ՚ի սմին բանի գրեթէ ասէ . մ՛ խորդախութ զանց

առ-

առնիցես կատարել զայն զոր ուխտեցեր ·
Ով Տ՛ բարձրեալդ ԱՅԾ 'ի ձ՟ր բարեխօսութեան քոյ · տր
'ի մ՟տ ներքին ատայօդ բանից քոց , որով
կամիս ոչ պարտաւոր դնել զքեզ ։

Սու յարէ · Սա պարտականեայէ զգործս ձեռաց քոց ·
ցի մինչ բարկանայ Տ՟Ծ 'ի մ՟տ ներքին չար
յօժարութեանց քոց , և 'ի մ՟տ խարդախա_
կանաց բանից , 'ի պատժելն զքեզ արդա_
կանէ · և ունայնացուցանէ զիւր արտաքին
գործս քոյս զբարեպաշտականս · և կամ
զիւր բարեգործութիւնս քոյս որք են առ
արտաքս ։ վասն զի որ սրտիւ ոչ է ուղիղ
առաջի նր , 'ի ձեռն արտաքին գործոց
բարեաց ոչ կարէ հաճոյանալ նմ ։

6 ։ Սատանդէ բաց յաճախութեանց երազոց՝ է և
ընդունայնութեան բանից բաղձանաց · առնյայն գոտ
յոյ երկինք ·

Կամի ասել , թէ ոչ է պարտ հետևիլ ,
կամ հաւատալ երազոց · վ՟ն զի որքան ոք
հետևի առ 'ի ընծայել զհաւատ երազոց ,
ըստ յաճախութեն և բազմապատկութեն
երազոցն յաճախի և ընդունայնութիւն բա_
նից ։ Որանզի սկսանի խօսիլ զունայն
բանս , ասելով , թէ ես զայս ինչ իր տե_
սի յերազի · ուրեմն այն ինչ իր հանդիպի
ինձ , բարի , կամ չար ։ Որք ամենեքեանք
ունայնութիւնք են , և մոլորք · և զհետևօղս
իւրեանց մոլորեցուցանեն ։ վ՟ն զի երբեմն
'ի դիւաց · և երբեմն 'ի գոլորշեաց պէսպէս

երեւակայմունք լինին 'ի նմքեն · որոց ո՛չ է պարտ հաւատալ · այլ զմեզ միշտ նախախնամութեան այ̄ յանձնեալ՝ միայն յայ̄ երկնչիլ · և ո՛չ 'ի յերազոց · զորոց, ըստ խելագար կարծեաց պառաւանց, կամ դիւթից ասացեալ լինին՝ համանշանելով, թէ զայն ինչ իր տեսանելն յերազի՝ է գուշակումն չար պատահմանց · և այլն ։ Քանզի մինչ 'ի ներքոյ նախախնամութեան այ̄ եմք միշտ, և այնպէս հաւատամք, թէ առանց այ̄ ոչ ինչ չար կարէ հանդիպիլ մեզ՝ յայսմանէ հեռուի, զի միայն յայ̄ երկնչիցիմք, և միշտ նախախնամութե̄ նորա զմեզ յանձն առնիցեմք ։

7 ։ Եթէ զզրդարդութի̄ աշխատոյ և զյանձնտանջութի̄ երանից, և զարդարութի̄ տեսցես յերկրի, (զի, և զարդարութի̄ն տապալեալ տեսցես յերկրի ·) Դ՝ զարմասցիս 'ի Ք̄Ս երայն · քանզի զբարձրանս 'ի Ք̄Ս բարձանց պահէ · և զբարձրութի̄ 'ի վերայ նորա ։

Կամի ասել · եթէ տեսանիցես զանմեղ ազքատն զրպարտեցեալ, և զիրաւունս բռնաբարեցեալ 'ի յանիրաւաց · և զարդարութի̄ն տապալեալ 'ի չարաց, Դ՝ զարմանար · զի մի՛ երկմտիր 'ի վերայ նախախնամութեան այ̄ · և մի՛ զարմանալով ասեր, թէ ընդէ՞ր այ̄ թոյլ տայ, և կամ՝ զիա՞րդ լռէ այ̄, և զչարմն ոչ պատժէ իսկոյն ։ Եւ զկնի յարէ զպատճառն ասելով ։

Քան_

Որպէս Իշխանութիւնք 'ի վերայ իշխանաց պահէ, և Իշխանութեամբ 'ի վեր նոցա։ Եւ այս մեկնի կրկին կերպիւ։

Նախ՝ այսպէս. Իշխանութիւնք, որպէս զմեծ իշխանս 'ի վերայ փոքր իշխանացն եդեալ է Աստուած, որք զվայրագոյնս իշխանս զրկել պատժել, և հալածել կարեն. ուստի մինչ վայրագոյն իշխանքն կեղեքեն զաղքատս, և անիրաւեն 'ի նոսա, նոքեանք եւս 'ի վերնագունեն կեղեքին, և զզրկանս կրեն։ Եւ մինչ մեծագոյն իշխանքն անիրաւելով առ վայրագոյնս՝ զրկեն զնոսա, 'ի ձեռն նոցա եւ պահէ Աստուած Իշխանութեամբ. որպէս զթագաւոր. քանզի նաև թագաւորն զայնս վերնագոյնս իշխանս, եթէ արդարադատ իցէ, արդար պատժովք պատուհասէ. և եթէ անիրաւ իցէ, կողոպտէ և զրկէ զնոսա անիրաւաբար, որպէս և նոքա զվայրագոյնս իշխանս զրկեցին։

Երկրորդ՝ մեկնի այսպէս. Աստուած զհրեշտակս որք են բարձունք՝ պահապան և վերակացու եդեալ է 'ի վերայ բարձանց. որ 'ի ձեռն իշխանաց. զի զամենայն զոր գործիցեն իշխանքն, առաջի նոցա կացուցանիցեն. և ինքն Աստուած որ է բարձրութիւն, է 'ի ձեռն հրեշտակաց, և 'ի ձեռն իշխանաց. և իւրով արդարութեամբն 'ի ժամանակի իւրում դատելոց է զայնպիսի չար իշխանսն. որ որում և ներկայացուցանեն առաջի իւր վերակացու հրեշտակք զամենայն անիրաւութիւնս նոցա։

8. Առաւելութիւն երկրի, 'ի վերայ ամ. է թագաւոր անդաստանի գործեցելոյ։ (Եւ ընդհանուր տիեզերաց համատարածին ամ. 'ի ծառայ յաջողակելոյն։)

Ծանի՛ր, զի այս բան, և առաւելութիւն երկրի, 'ի թարգմանութեան յունաց գոյ. և ոչ 'ի լատինս. և է ընդ ութերորդի տանս և ոչ ընդ եօթներորդի տան. և մեկնիլ կարէ այսպէս. Առաւելութիւն երկրի. որ է զտարածութիւն, կամ զմեծութիւն աշխարհի զոր տեսանես, 'ի վեր է ամ. որ 'ի վերայ բոլոր աշխարհի, Ած է թագաւոր և Տէր նր. որ տանուտէր որ է տէր անդաստանի իւրոյ գործեցելոյ։ Վ՛ն զի բոլոր Ած է որ զգործեցեալ անդաստան ինչ ոյ. զոր 'ի ձեռն ծառայից իւրոց հրեշտակաց հերկէ՝ սերմանէ, հնձէ. և զոր որ պարտի գործիլ յայսմիկ անդաստանի առ 'ի առնել զնա պտղատու, գործէ։ Աստի եթէ ուրեք փոխանակ բարի պտղոյ փուշ բուսցի՝ գիտէ ինքն. և առնէ այցելութիւն այնց. և 'ի ձեռն մշակաց իւրոց կապէ 'ի խուրձս, և արկանէ 'ի հնոցն։ Վ՛ որոյ դու մի երկբայիր զնախախնամութենէն ոյ, որ թոյլ տայ գտանիլ փուշ 'ի յանդաստանի իւրում. Դարձեալ. նաև ոմ իշխանք, և թագաւորք են մշակք ոյ, որք գործեն յայսմիկ անդաստանի նր. և ինքն ած յոյժ բարեպէս ճանաչէ զմշակս իւր՝ և զգործս նց, և գիտէ թէ ովք են որք հաւատար-

մա-

մաքառ մշակեն. և ոյք են որք փոխանակ սերմանելոյ և հերկելոյ, զբուսուցեալ պտուղսն եղծեն և ապականեն. և զանդաստանն լինքեանց համարեալ՝ ըստ չարահաճ կամաց իւրեանց զոր ինչ յօժարին՝ առնեն, առանց հայելոյ ՚ի կամս Տեառն անդաստանին։

Մի՛ լինիր դու համապարծ ՚ի ծանր յափշտակելոյ։ Այս բան յայլս Թարգմանութիւնս ոչ գոյ։ Բայց մեկնիլ կարէ այսպէս. ոչ, բայց դու լեր հաւատարիմ մշակ. և մի՛ խարդախութեամբ գործեսցես յանդաստանի Տեառն քոյ, և զայս հաւատարմութիւնս պարտիս առնել, զի մի ծանրապէս պատժիցիս. զի Տէր անդաստանին մինչ զանհաւատարմութիւն քո տեսանէ, դու զծանր յափշտակութիւն իրաց քոց կրես։ Քանզի ոչ միայն զքեզ ՚ի մշակութենէ հանէ, այլ նաև զամ̃ ինչս տան քոյ յափշտակէ և առնու ՚ի վճար վնասուցն, զորս արարեր անդաստանի նորա։ Աստի լեր հաւատարիմ զգուշանալով՝ զի մի՛ դուցէ զծանր յափշտակութիւն կրիցես մերկանալովդ յամենից ունեցելոց։ Արդ՝ այս բան այսու մտօք է իմանալի, և ոչ այնպէս իբրու թէ ասիցէ, լեր հաւատարիմ ՚ի ծանր յափշտակելոյ զայլոցն. զի ը̃ն գիրն նաև զթեթև յափշտակութիւն՝ որով ոք յափշտակէ զայլոցն, արգելու, որպէս և յայտ է։

9: Որ սիրէ զարծաթ, ոչ յագեսցի արծաթով. եւ որ սիրեաց զարծաթ 'ի բազմութիւն իւրում զարդեանս. (զի 'ի բազմութեան արդեանց.) ունայն եւ այն ընդունայնութիւն է:

Կամի ասել. որ սիրէ զարծաթն, զի զկուտումն դրամոց եւ ոսկեաց, ոչ յագի նովաւ. քանզի ո՛չ յայտ է ամենեցուն, որքան առաւելանայ թիւն դրամոց, այնքան սաստկանայ ստէպ եւ քաղցն դրամոց 'ի յագահն: Իսկ որ ոչ այսու կերպիւ սիրէ զարծաթն, զի կուտելով զայն, այլ՝ այլով կերպիւ, զի բազմացուցանելով զհօտս ոչխարաց. զագարակս՝ եւ զանդաստանս՝ ուստի ելանեն բազում արդիւնք. եւ կամ շինելով զտունս՝ եւ զպալատս, զորս 'ի վարձու տալով բազմանան եկամուտք, այնպիսին սիրէ զարծաթն 'ի բազմութիւս արդեանց. զի 'ի բազմութեան ցորենոյ, գինւոյ, ձիթոյ, եւ այլոց: Սակայն նաեւ այն է ընդունայնութիւն. զի նաեւ այն է ագահութի: Եւ որքան բազմանայցեն արդիւնք ագահին, ոչ յագի ագահն. քանզի զարծաթն ոչ սիրելով 'ի տեսակի արծաթոյ, ոչ է ազատ յարծաթասիրութէ, մինչ սիրէ զայն 'ի բազմութիւս արդեանց իւրոց. եւ այս ամ խմնցեալ լինի զայնց, որք սիրեն զբազմութիւս արդեանց, եւ կապեն զսիրտս իւրեանց ընդ այնց:

10։ Ի բաղձումն արդարութեան. (այսինքն ար-
դարեանց.) յաճեցան՝ որք առաքէին զնա. եւ զի՞նչ է
արդութեն նմա առ՚ի նմանէ. վասն զի անձկեն փե-
տանելոյ աչք խոր են։

Ա՜յ սաստ ծանիր. զի բանս այս, արդարու-
թե, ՚ի սխալմանց գրչաց է մնացեալ ՚ի մե-
րում ածաշնչի. զի փոխանակ բանին՝
արդեանց, գրեալ է արդարութե։ Ա՜յ սա-
տէն կամի ասել զայս, թէ դու որ բազ-
մայողանես զարդիւնս. որ զցորեան, զգի-
նի, զձէթ, և այլն, ըստ բազմութեց նո-
ցին բազմանան քեզ և ծառայք, և մշակք.
և նոքա ուտեն զայնս, և յագին. և զի՞նչ
օգուտ է քեզ. որովհետեւ դու միայնակ
ոչ կարես ուտել և ըմպել զայնքան ար-
դիւնս՝ զորս ժողովես ՚ի շտեմարանս։

Նոյն յարէ.

Ա՜յ զի՞նչ է արութեն նմա առ՚ի նմանէ. որ զի՞նչ
գործ քաջութե է ժողովողի ադաշին՝ ՚ի
յայնքան արդեանց. խրատէ ոչինչ. քանզի
նաև ինքն զայնքան ուտէ, որքան մինն ՚ի
ծառայից. և թերևս պակաս քան զնա.
և թող զայն՝ զի ինքն զհոգս և զզբաղմունս
շուրջ զարդեանցն ունելով մեծաւ տա-
ռապանօք ուտէ և ըմպէ. իսկ ծառայն
ուրախութբ և հանդերձ երգովք։ Արդեօք
զի՞նչ գործ խոհեմութե, կամ զօրութե
է ինքեան առնելն զայս, զի արդիւնքն
իցեն բազումք, մինչ այլք հանգստութբ,
և

և ինքն ցաւօք ունէ զայնս ։ Ա՛յ զի ոչ մնայ իմն ինքեան աւելի քան ծառային՝ եթէ ոչ այս միայն, զի տեսանէ զայնքան բազմութիւն հօտից, կամ ցորենոյ՝ գինւոյ և ձիթոյ իւրև իւր · բայց նաև այս ոչինչ է · զի տեսանելովն իւր ոչ ուտին այնք ։ Ա՛ղի աչքն է միայն սկիզբն տեսանելոյ, և ոչ երբեք ուտելոյ ։

Ուստի յարէ · **Վասնզի ակնկալն տեսանելոյ աչաց էն ։** Ա՛յսինքն աչքն է միայն գործարան և սկիզբն տեսանելոյ, և ոչ ուտելոյ ։ Ա՛յ մի այսորիկ մինչ ագահն ցանկայ տեսանել զբազմութիւն գոյից՝ և արդեանց, այսու իսկ գրեթէ տայ աչացն զորոմայն և զբաղձանս · և աչքն ոչ կարելովն ուտել՝ ոչ երբեք յագի ։ և առայս ասացաւ ՚ի մեր անդր · 1 · 8, թէ աչքն ոչ յագի տեսանելով ։ մի որոյ կարի յիմարք են նք՝ որք մերատրեն աչաց իւրեանց զքաղցն և ըզ ատըն · և նա ոչ կարելովն ուտել և յագիլ, յաւիտեան մնայ սովեալ · և որքան մատուցանեն նմա զգոյս և զարդիւնս, կամ զայլս նմանս տեսութեն առարկեցեալս, նա ոչ կարելովն ուտել՝ առաւել սաստկանայ ատըն ՚ի նմա ։

**11 · Քաղցր քուն է ծառայի, եթէ սակաւ, և եթէ շատ կերիցէ · և որ յագի մեծատանն, չէ՛ նմա հանգիստ ՚ի քուն մտանել ։**

Ա՛յսինքն, եթէ սակաւ ունէ ծառայն, քաղ

քաղցր ննջէ. զի ոչ ունի զհոգս և զզբաղ_
մունս. իսկ եթէ շատ ուտիցէ, նաև այ_
նու տակաւին քաղցր 'ի քուն լինի. զի գո_
լով ազատ 'ի զբաղմանց՝ ուժեղ է ստա_
մոքսն. նաև հանապազորդ աշխատութիւն
օգնէ մարսողութեան. ուստի շատ ուտե_
լովն ոչ ննջէ անհանգիստ. զի յոլովութիւն
կերակրոց ոչ վնասեն նմա։

Ի՞ յարէ. Ի՞ որ յաճի ծծանաւոր, չէ՛ նմա
համարձակ 'ի քուն մտանել։ Պտ, իսկ որ գոլով
մեծատունն յագի ուտելովն, նա զբազմու_
թեց արդեանցն խորհելով, զպտղոց ան_
դաստանաց՝ և այգեաց խոկալով, զան_
հաւատարմութեց մշակացն և ծառայիցն
մտածելով՝ չէ՛ նմա համարձակ, Պտ հանգիստ
'ի քուն մտանել։

Ի՞ այս խրախճանք. քանզի մեծատունք
զփափկագոյնս զգենլով՝, և զբազմահամ
կերակուրս ուտելով՝ աւելի յափշտակել
կամին յաշխարհէ քան զբաժին իւրեանց։
Իսկ մշակք, և ծառայք, կամ աղքատք
գրեթէ նուազ քան զբաժինն իւրեանց
ունին. վասն որոյ 'ի մեծատանց, և 'ի տեարց
բառնի հանգիստ քունն՝ և տրի ծառայից,
և աղքատաց. և այսու հաւասարին։

Ի՞ բաց յայսցանէ, մեծատունք զբազմա_
տեսակ կերակուրս և զխորտիկս ուտելով
ծանրացուցանեն զստամոքս իւրեանց. և
ոչ կարելով զայնս մարսել՝ չարչարին նաև
այնու. և մերթ նաև ենթարկին պէսպէս
ցաւոց

ցաւոց և հիւանդութեանց. որպէս և յայտ իսկ է:

12. Ո՞ր հիւանդութիւն՝ որք ազդեն ի մեղքոյ աղբ֊ տաղան ? Թմրութիւն պահելոյ ուժոյ՝ առ ի նմանէ չարոյ եղբօրն: (որ առ ի չար և ի մեղս ան֊ ձին իւրում: )

Այս կամի ասել՝ թէ բազմիցս ունի և զայս օրէն ցաւոց և հիւանդութեան ՚ի մար֊ մնի. որ զայս մոլեգնութիւն, և զախմարու թիւն. զի մեծաւ սիրով ժողովէն զգանձս և զփարթամութիւնս. և պահէն զայնս ՚ի մեղս անձանց իւրեանց: Նոյն թէ որ լինի ՚ի մեղս և ՚ի չար անձանց իւրեանց, ծա֊ նիր: Որքանմ հանդիպի ումեք, զի ոչ ախիլ ընչից՝ ախի և զոռոզութիւն. և ձեռնար֊ կէ ՚ի մեծամեծ գործս. և հանդիպեալ նմա ձախորդութիւն ինչ՝ կորուսանէ զամ: և առ այն կարի ցաւելով՝ լինի մեղս ան֊ ձին: Որքանմ ևս պատճառաւ բազմութե ընչից՝ առնէ զճանապարհս երկարս, գնա֊ լով ՚ի հեռաւոր տեղիս. և ՚ի ճանապարհին կամ ՚ի ծովն ընկղմելով. և կամ ՚ի յաւա֊ զակաց սպանեցեալ լինելով՝ լինի ՚ի մեղս անձին: Ըստ այսմ և այլովք բազմազա֊ նիւք դիպուածովք բազումք կրեն զմեծ մեղս յանձինս իւրեանց պատճառաւ ըն֊ չից՝ և հարստութեանց: Որպ նաև այս հան֊ դիպի երբեմն. զի ոմն առաւել փարթա֊ մանալով՝ այնու իսկ սաստկաց թշնամի կե֊ նաց իւրոց, կամ զաւազակս, կամ զժա֊ ռանգս,

ռամկաց, և մերթ նաև զբռնաւորս, որք վասն բերելոյ 'ի ձեռս իւրեանց զնոյն փարթամութի, կամ սրով, և կամ թիւնօք սպանանեն զնա։

13 ։ Եւ կորնչէ մեծութիւն նորա, և նա 'ի զբաղման չարի. ծնանի որդի. և ոչինչ գոյ 'ի ձեռին նորա։

Այսինքն, այսպիսոյ մեծատան գոյքն և ինչքն կորնչին. ընդ նմին նաև ինքն՝ վասն ընչիցն՝ 'ի չարաչար զբաղմունս չարչարեալ և տառապեալ 'ի բոլոր կեանս իւր, այնու չարչարանօք և տառապանօք կորնչի. այսինքն մեռանի: Եւ այսու զի ինքն չարչարանօք վճարեաց զկեանսն, նաև ինչքն՝ որոց վասն չարչարեցաւ, կորնչին. կամ յանզգակաց յափշտակեալ լինելով. և կամ այլովք պատահմամբք. և որդին որ ծնաւ 'ի նմանէ, զոչինչ գտանէ զի ժառանգիցէ։ Եւ առ այս յարէ. Ծնանի որդի. և ոչինչ գոյ 'ի ձեռին նորա. այսինքն ոչ գոյ իր ինչ հայրենական, զի ժառանգիցէ։

14 ։ Եւ որպէս ել յորովայնէ մօր իւրոյ մերկ, դարձցի երթալ որպէս և եկն. և զոչինչ առցէ 'ի վաստակոյն իւրմէ, երթէ երթայցէ 'ի ձեռին իւրում։ այսինքն 'ի ունեցելոցն զոչինչ առցէ ընդ իւր. ո՛չ զի ասիցի թէ 'ի ձեռին իւրում ունէր զինչ 'ի յերթալն. այսինքն 'ի ելանելն յաշխարհէս։

Աստէն բանն յայտնի է ըստ ինքեան։ Քանզի զայս ասելով կամի ցուցանել,

թէ

թէ մարդկանց մեծագոյն ախտ՝ եւ մեծ ցաւ, եւ մեծագունեղ յիմարութին է այս. զի ցանկան ժողովել զմեծութի եւ զհարստութի այնքան տառապանօք եւ զբաղմամբ. եւ ո՛չ զգան, եւ կամ ո՛չ մտածեն՝ թէ յայնց աւելորդաբար ունեցելոց զոչ ինչ օգուտ ընդունելոցք են. այլ զամ թողեալ՝ գնալոցք են: ուստի յարէ:

15: Սակայն եւ այն անտի չար է. զի որ օրինակ եկն՝ նոյնպէս երթիցէ. եւ զի՞նչ օգուտ է նմա ՚ի վաստակոյն, զոր ջանայ հողմոյ:

Այսինքն, զի՞նչ օգուտ է նմա ՚ի յայնքան աշխատանացն զոր ջանայ առ՚ի տալ առաջի հողմոյ. զի տարցէ զնա ընդ օդս եւ ցրուեսցէ: Որպէս զի ոմն որ աշխատեալ սերմանեսցէ զցամաքս, եւ մեծաւ ջանիւ ժողովեալ զայնս ՚ի դաշտի միոջ դիցէ առաջի հողմոյ ուժեղաբար շնչողի, զորս հողմն առեալ ցրուեսցէ, ասի զնմանէ ջանայօղ հողմոյ. կամ զաշխատանաց պտուղն տուօղ հողմոյ. այսպէս են եւ մեծատունք, որք ջանան ժողովել, եւ աշխատին առ այն. եւ յետոյ մինչ մեռանին, զամ աշխատանաց զպտուղն տան հողմոյ:

16: Զի ամ աւուրք նր ՚ի խաւարի եւ ՚ի սուգ. եւ սրտմտութե՛ բազմաւ՝ հիւանդութե՛, եւ ցասմամբ:

Այսինքն. ամ աւուրք ժողովողին զինչս, եւ սիրողին զփարթամութիս՝ են ՚ի խաւա-

րի

րի տրտմութեն, եւ յերկիւղալից մտածու-
թե · զի միշտ մտածէ , զի՞նչ արդեօք եղեն վաճառքն զորս յղեալ է յերկիր հեռաւոր · արդեօք շահի՞ զինչ այնու , թէ վնասի · եւ այլն ։ Եւ սոքա են ոչ զխաւար , յորում անցուցանէ զկեանսն իւր արծաթասէր փարթամն ։ Եւ սմա հետեւի սուգ մինչ երբեմն ՚ի վաճառուցն ոչ շահի զինչ · եւ կամ կրէ զվնաս · եւ սգոյն հետեւի սրտմտութի բազում ։ զի յոյժ բարկանայ՝ մինչ վնասին ինչքն · եւ երբեմն այսպիսւոյ սգոյ եւ բարկութեն հետեւի նաեւ հիւանդութիւն , եւ ցասումն · յդ մելամաղձական տրտմութի , որ է տեսակ իմն հիւանդութե · յորում թէեւ ոչ կամիցի տրտմիլ՝ վերահասանին նմա ՚ի մելամաղձութենն տրտմութի , եւ ցասումն · յդ դառնութիք սրտին · որով ոչ կարէ վարիլ ընդ ումեք քաղցրութի ։

17 ։ Ահա՝ զոր տեսի ես զբարին՝ որ է լաւն · ուտելն եւ ըմպելն · եւ տեսանել զբարութիւն յամ վաստակսն իւրում · զոր ջանայ ՚ի ներքոյ արեգա-
կան · ՚ի թիւ աւուրց կենաց իւրոց , զոր ետ նմա ած · վասն զի այն է բաժին նորա ։

Կամի ասել , թէ ՚ի փարթամութե զայս միակ բարիս տեսի՝ որ է լաւ քան զամ · զի փարթամն կարիցէ հանդարտ սրտիւ ուտել զհացն · եւ տեսանել , յդ եւ գտանել զբարութի ինչ յամ աշխատանաց իւրոց՝ զոր աշխատեցաւ ՚ի ներքոյ արեգական ·

և ետ նմա ա̅ծ զփարթամութիւն : Այս՛ գտանելն զբարի ինչ՝ է այս . ք̅զ ուրախ սրտիւ, անզբաղ ոգւով, խաղաղ կենօք, և հանգարտ մտօք ուտելն և ըմպելն ըզ բաւական բաժինն իւր յամենից ունե_ ցելոց :

Այս՛ իրաւի մեծ իմն է այս , և յատուկ պարգև ա̅յ , զի իցէ ոք մեծատուն , և հանգարտ մտօք ուտիցէ զհաց իւր , և ու_ րախ լիցի սիրտ ն̅ր հանապազ գոհանա_ լով զտուողէն ինքեան զնոյն հաց : Այս՛ նշան այսպիսւոյ մեծատանն է այս . զի եթէ յանկարծ լուիցէ , թէ մնաս ինչ հինգ_ հազար, կամ տասն հազար դահեկանաց եղև ինքեան, ոչ ամբոխիցի, և ո̅չ քաղց_ րահամ կերակրոցն զօրս ուտէ, զլեղին տրտմութե̅ և ցասման ոչ ընդխառնիցէ . և կամ ըստ յաւելմանն՝ և պակասմանն ըն_ չիցն՝ զուրախութի̅ սրտին ոչ յաւելցէ , կամ՝ պակասեցուսցէ : և մերձայես՝ ոչ արծաթն սրտին, այլ սիրտն արծաթոյն իշխիցէ . և իւրն ուրախութի̅ 'ի բազմու_ թե̅ց գոյիցն ոչ կախիցի . այլ միայն 'ի կարելոյն իշխել ընչիցն, և 'ի գործ ածե_ լոյ զայնս 'ի փառս ա̅յ , ուտելով հանգար_ տաբար զբաժինն իւր անտի . և առատա_ բար ըստ կարեացն հաղորդելով նաև աղքատաց . և այլն :

Այս՛ ասէ . Վասնզի այն է բաժին ն̅ր . ք̅զ 'ի թիւ աւուրց կենաց իւրոց 'ի փարթամութե̅ն

զոր

զոր ետ նմա ա̄ծ , զայս բաժին ունի՝ զի հանդարտութե̄ կերիցէ , եւ առանց կա_ պակցելոյ զսիրտն ընդ դրամոց ։ վ̄ն զի ա̄ծ զփարթամութի̄ն ոչ վասն այսորիկ տայ մարդոյ՝ զի ոմ̄ զփուշ հեղձուցիչ բուսոյ ա̄ծայնոց բանից լինիցի . եւ կամ զսիրտ մարդոյն յափշտակիցէ եւ գերիցէ , այլ առ այս տայ՝ զի մարդն զուարճական ապ_ րուստն ուրախութե̄ հանդարտութե̄ եւ գոհութե̄ առցէ անտի . վ̄ն զի այնէ բա_ ժինն . եւ ոչ թէ սիրել զինչս , եւ կամ ունիլ զբազմութի̄ս դրամոց , եւ արդեանց ցորենոյ , գինւոյ՝ եւ ձիթոյ . քանզի բազ մութի̄ն այն՝ որ ոչ կարէ ուտել 'ի յուտո_ ղէն՝ ոչ է բաժին նորա ։

18 ։ Քանզի ա̄մ մարդ՝ որոյ ետ Ա̄Ծ զմեծութի̄ւն եւ ինչս . եւ իշխան արար զնա ուտել 'ի նմանէ . եւ առնուլ զբաժին իւր , եւ ուրախ լինել 'ի վաստակս իւրում . այն պարգեւ ա̄յ է ։

Այս բան եւս վերաբերի առ վերոասա_ ցեալսն . եւ կամի ասել՝ ա̄մ մարդոյ՝ որում ետ ա̄ծ զմեծութի̄, այսու վախճանաւ եւ կերպիւ ետ՝ զի մարդն իշխան լիցի մե_ ծութե̄ եւ փարթամութե̄ . եւ ոչ ծառայ՝ կամ պաշտօղ ։ քանզի արծաթն մարդոյն ծառայ կարգեցաւ . եւ ոչ մարդն արծա_ թոյն ։ Նա՛ այս յայնժամ լինի՝ յորժամ մարդն զսիրտ իւր ոչ ցանկացուցանէ վասն կորստեան արծաթոյն , այլ ասէ . որ ինչ

իցէ 'ի գոյից իմոց, կորիցէ վ՟ն իմ. և ո՛չ
երբէք սիրտ և ուրախութի՟ն իմ կորիցէ
վասն գոյիցս ։ Արդ՝ Ա՟ծ իշխան արար
զմարդն ազատեալ կերպիւ, զի համբեր_
ութբ առնուցու զվարձն իւր 'ի վաս_
տակոցն. և ուտիցէ զայն ուրախութբ 'ի
փառս Տ՟ն. և իբրու ընկալեալ 'ի ձեռաց
նր. և ո՛չ երբէք դիցէ զյոյսն իւր 'ի բազ_
մութիս ընչից, զի մի՛ ընդ պակասելն նո_
ցին՝ տրտմիցի ։ Եւ տալն ա՟յ այսու կերպիւ
զինչս մարդոյ՝ մեծ պարգև է մարդոյն ։
Բայց մինչ մարդիք այսու կերպիւ ո՛չ 'ի
կեր առնուն, մեծագոյն պատիժ է նց. և
այս լինի 'ի կողմանէ չարութե մարդոյն՝
որ զպարգևն ա՟յ 'ի պատիժ անձին իւրոյ
փոխարկէ. որպէս ախտացեալ որովայնն
զառողջարար կերակուրն 'ի վատթարա_
գոյն և 'ի մահաբեր մաղձս յեղաշրջէ ։
Արդ՝ յորժամ մարդիք բարեպէս 'ի կեր
առնուն զփարթամութի՟ն, և 'ի պատիժ
անձանց իւրեանց ո՛չ փոխարկեն զայն,
յայնժամ պարգևն ա՟յ մնայ պարգև. և
որքան առայս՝ ասէ. այն պարգև ա՟յ է. ա՟յ,
մինչ բարեպէս վարին մարդիք փարթա_
մութբ, նոյնն պարգև ա՟յ է ։

19 ։ Զի ո՛չ յիշեաց զբազում աւուրս կենաց
իւրոց. զի Ա՟ծ զբաղեցուցանէ զնա յուրախու_
թե սրտի իւրոյ ։

Կամի ասել. բարեպաշտ մեծատունն՝ որ
ունե_

ունելով զինչս բազումս՝ ոչ սիրէ զայնս ,
այլ ուրախութե՟ և հանդարտութե՟ ուոց
զբաժինս իւր , Ա՟Ծ արդարութե՟ և մեծաւ
ողորմութե՟ տայ նմա զայն պարգև ։ և
աճեցուցանէ օրըստօրէ զուրախութի՟ ,
և զհանդարտութի՟ սրտի նր՟ ․ և այսու
այնպիսի բարեպաշտ մեծատունն ոչ յիշէ
զաղքատութի՟ թշուառութե՟ աւուրց կե_
նաց իւրոց ․ ք՟ մոռանայ զցաւս աքսորա_
նաց յայսմիկ վայրի աշխարհիս ։ Ով Ա՟Ծ
զնա ոչ՟ զսիրելի ծառայ իւր զբաղեցու_
ցանէ , ք՟ պարապեցուցանէ 'ի յուրախութի
և 'ի հանդարտութի՟ սրտի , և պարգևէ
նմա զայս շնորհ , զի մեծաւ գոհութե՟
իբրու 'ի ձեռանէ Տ՟ն ընկալեալ՝ ուտիցէ
և ըմպիցէ 'ի վաստակոց իւրոց ։ Նա՛ այսու
գրեթէ Ա՟Ծ ձեռամբ իւրով կարկառէ
այնպիսւոյն զպէտս՟ս բարեհամկերակուրս
և ըմպելիս , զի այնու սփոփիցի և մխի_
թարիցի ․ և 'ի նոսին մեծաւ ուրախութե՟
պարապեալ՝ և զբաղեալ՝ մոռանայցէ ըզ
վիշտ կենցաղոյս՝ որքան ապրի ։ Նա՛ զայս
փոքրիկ և զանցաւոր մխիթարութի՟ զոր
Ա՟Ծ տայ աստ՝ առ 'ի ոչ առաւել զգալ
զվիշտ կենցաղոյս , է առհաւատչեայ իմն
հանդերձելոց պարգևաց յաւիտենակա_
նաց՝ զորս տալոց է այնպիսեաց բարեպաշ
տից փարթամաց ։

Իսկ ագահ փարթամքն գոլով զրկեցեալք
'ի վերոյ ասացելոց պարգևաց, լինին կրկին

ցաւօք վարակեալք․ որոց մինն է հասա_
րակական վիշտ կենցաղոյս, զոր կրեն
ընդ ամենից․ իսկ միւսն է մասնաւոր ցաւ
և վիշտ, զորս կամաւ ձգեն յանձինս իւր_
եանց։ Վասնզի սիրելով զարծաթն ան_
կայուն և անհաստատ, որքանիցս դղրդի
արծաթն, և 'ի յորոգայթի պակասման,
կամ կորստեան տեսանի, այնքանիցս հո_
գիք և սիրտք նոցին դղրդին, և 'ի խորս
ցաւոյ տրտմութեն ընկղմեալ՝ 'ի դրունս
մահու հասանին։ Իսկ 'ի վերայ այսր ամի
զտիւ և զգիշեր զարծաթոյն մտածեալ՝
հրով սիրոյ նորին խորովեցեալ տապակին։

## ԳԼՈՒԽ. Ծ։

ՅԱյսմիկ գլխոյ հետևի ցուցանել զնենգութս և զպառաստացան՝ և զանհայնութիւնս ատահին․ որ մինչ Եարեօք առաքելոյ, այնու իսկ 'ի չեւոն ատահութէ զինչ զանձին իւր 'ի Բնաձորեցելոց Եար_եաց, և 'ի հարկաձոր պետոյեց։ Իսկ Եաղեցս զԵա_րեն այնժան ջրաման և աղխատութէ զծողովեցեալն՝ Թողու օտարաց․ Վասն որոյ և զվիճակն լաձաջոյն ջոր ջան զնա առէ․ և յաձելու զայլս յայտայանդէ_ճանաչացուցմանն Թշնամութէ և ոանայնութէ նորին։

ԲԱՆ



## ※ Ի Մ Ն : ※

Զարուէ, զոր տեսի 'ի ներքոյ արե_գական. և բազում է 'ի վերայ մարդ_կան: (այսինքն, յաճախակի՝ և բազմիցս հանդիպի մարդ_կանց :)

## ※ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ : ※

Բատէն ցուցանէ զչարութիւն ագահութեան, որ բազմիցս հանդիպի յաշխարհի՝ մարդ_կանց. և մանաւանդ մեծատանց ոմանց. որոց ա͞ծ տուեալէ զժամանակաւոր բա_րիս. յ͞ր, զատուածի ընչից. զորս 'ի փառս Տ͞ն կարեն վայելել ուրախութ͞ե. բայց պատճառաւ ագահութեան ոչ ունին զիշխա_նութիւն վայելելոյ, և կամ ուտելոյ զայնս:

Ուստի ասէ յայտնապէս :

2 : Այր մի, որում տայէ Ա͞Ծ մեծութիւն, և ինչս՝ և փառս. և ոչինչ պակաս իցէ անձին իւրում, յամէ որում ցանկանայցէ. և ո՛չ տայէ նմա Ա͞Ծ իշ_խանութիւն ուտել 'ի նմանէ. զանզի այր օտար կերիցէ զնա : և այն ընդունայնութիւն է. և ախտ չար :

Միտ բանին յայտ է 'ի նախասացելոցս. բայց առ այս՝ զի յիշէ նաև զփառս, ծա_նիր. զի որում 'ի ձեռն ընչից, և կամ 'ի ձեռն համբարեղութեան, և կամ 'ի ձեռն ա՛և իցէ կատարելութեան տայ ա͞ծ նաև

զայս՝ զի փառաւոր լիցի յաշխարհի, յորժամ ընդունօղն զայսպիսի փառաւորութե՛ մեծոց՝ եւս ագահ, ոչ կարէ վայելել նաեւ զփառս. այլ ոտնակոխ առնէ զնմ փառս՝ վն միոյ նամոյի: Այս մեծս նախատելի՝ անարգ, գռեհիկ, եւ ժանտ վարկանի յամենեցունց. եւ զոչ ինչ բարի կարէ վայելել յաշխարհի՝ թէեւ ամ բարիք համագումարիցին 'ի նմա:

Այս ասէ. Մի տացէ նմա Ած իշխանութիւն ուտել 'ի նմանէ. զի, ոչ տայցէ նմա զիշխանութի՛ն վայելել զայն: Այս որքան առ այս՝ ծանիր. զի որպ նաեւ 'ի վեր անդր ասացաւ, Ած թէպէտ յիւրն կողմանէ տայ, բայց ագահն խրով անզգամութբ յետս նահանջէ յինքենէ զիշխանութի՛ն զայն. եւ որքան առ այս՝ ասի. Ած ոչ տայ զիշխանութի ուտելոյ 'ի նմանէ. եւ կամ վայելելոյ զայն: Այս այսու մինչ ագահն զրկի, այլ օտար ուտէ զայն. եւ կամ եթէ ունիցի զորդիս, նոքա 'ի տակաւ միջոցի ժամանակի մսխեն զայն՝ տալով 'ի կեր օտարաց:

3: Եթէ ծնցի այր՝ հարիւր զաւակ, եւ ամս բազումս կեցցէ. եւ եւս բազումս եղիցին աւուրք կենաց նր. եւ անձն նր ոչ յագեսցի 'ի բարութէ. եւ գերեզման ոչ եւս գտցի նմա. ասացի թէ լաւ է քան զնա վիժածն:

Այսմ ասել. եթէ ագահն ունիցի նաեւ զհարիւր զաւակ. զի, զբազում զաւակս. նաեւ ապրի-

ապրեսցի զաւուրս բազում, ոչ մխիթա_
րի․ և ոչ ուրախանայ․ քանզի խնայէ զինչս
վայելել ՚ի պէտս իւր, և ՚ի պէտս զաւա_
կաց․ և որքանիցս հարկադրեցաւ՝ գնէ
զուտելիս և զզգենլիս բազում՝ վ՟ս բազ
մութե՟ն զաւակացն, այնքանիցս բազմա_
պատկին ցաւք սրտին․ զի միշտ ասէ․ ո՞չ
թէ զորքանս դրամս վատնեցի առ՚ի գնել
զայս ինչ իր, և զայն ինչ իր․ և այլն։ Իսկ
ես ագահն վարկանէ միշտ վնասակար և
անխոհեմ գոլ զաւակացն՝ նաև ինքեան
առնելն զսեղանս բարելիս, և կամ զգե_
նուլ զհանդերձս այնպիսիս՝ որք վայելեն
պատուոյ և անուան իւրոյ․ և կամ ունիլ
զբազում սպասաւորս․ և պահել զդրունս
տան իւրոյ միշտ բացեալս ամենից աղքա_
տաց ըստ որում վայելէ փարթամութենս
քանզի համարի՝ թէ ՚ի ձեռն այնց կորնչի
փարթամութիւն․ և ոչ զգայ բնաւ, թէ
բանաւորապէս տալովն այլոց, և առատա_
բար վայելելովն՝ ցուցանի գոլ փարթամ․
զի բարդէ և տայ․ իսկ պահելովն ագա_
հութբ՝ ոչ ասի փարթամ․ այլ մանաւանդ
աղքատ, վ՟ս հանապազորդ կարօտութե՟ն։
և կամ կարէ կոչիլ անբան և անզգայ
փակեցեալ արկղ գանձուց, որ ոչ երբէք
ասիլ կարէ փարթամ։

Իսկ յարէ․ աչքն ն̄ր ոչ յագենայ ՚ի բարութէ․ և գերեզման ոչ նա գոյ նմա։ Այսինքն, մինչ է ագահ, յաճախեան ոչ յագի․ ոչ արծա_
թով․

թով. և ոչ վայելելով զբարիսն, զորս ունի։ Այլ քաղցիցս նաև մինչ մեռանի, զգերեզմանս ոչ ունի՝ ուր թաղիցի։ Այլ այս հանդիպի, կամ այսու, զի 'ի վաճառականութեան շրջելով. կամ 'ի ծովու ընկղմեալ. կամ 'ի նաւէի մեռեալ, և կամ յաւազակաց սպաննեցեալ՝ մնայ անթաղ։ Կամ հանդիպի այսու, զի վասն ագահութեան մինչ է կենդանի, ոչ հոգայ զգերեզմանէ խորհէ, և զհոգւոյ. և ոչ զթաղմանէն. և յետոյ մինչ յանկարծ մեռանի՝ կամ ոչ ունի զգերեզման՝ և դնեն զնա ուր և հանդիպի. և կամ եթէ ունիցի զգերեզման, ոչէ հոգացեալ՝ և ոչ զկտակ արարեալ վասն հոգւոյն, զի զառատ ողորմութիւն աղքատաց և տնանկաց բաշխիցեն. կամ զքաղում պատարագս վասն հոգւոյն մատուցանել տայցեն։ Այլ մինչ ինքն ոչ կարգաւորեաց, և ոչ հոգաց զհոգւոյ խորհէ՝ ժառանգքն, և կամ որդիքն՝ ամենևին ոչ յիշեն զնա. և ոչ հոգան։ Այլ որքան առ այս՝ զի ինչք ագահին ոչ 'ի կենդանութեան օգտեն նմա, և ոչ յետ մահուան. վասն, ոչ ըստ մարմնոյ վայելեալ լինին 'ի նմանէ, և ոչ ըստ հոգւոյ, Սողոմոն այնքան վատթար համարեցաւ զայնպիսին, մինչ զի յաւելու և ասէ։

Ասացի՝ թէ լաւ է քան զնա վիժածն։ Այլ իրաւի վիժածն ասի լաւ քան զնա. քանզի վիժեցեալն թէպէտ 'ի լոյսն կենաց ոչ գալով մեռեալ՝

մնեալ՝ 'ի խաւարի ծածկի անուանն. բայց գոնէ զայս ունի՝ զի զչարիս կենցաղոյս ոչ ետես: Իսկ ագահն վատթարագոյն գտաւ քան զվիժածն. քանզի ինչքն իւր՝ ոչ հոգւոյն եղեն օգուտ, և ոչ մարմնոյն՝ և այսու 'ի խաւարի ծածկեցաւ անուն նր̅ ոպ̅ զվիժած: Այլ բաց յայսցանէ յաւելու նմա և այս մեծ չար, զի զչարիս կենցաղոյս ետես, և մեծագունեղ չար լինի նմա նաև այս, զի ա̅ծ 'ի դատապարտել զայնպիսին՝ ոչ զանց առնէ երբեք:

4: Զի ունայնութե̅բ եկն, և խաւարաւ գնայ: և 'ի խաւարի անուն նր̅ ծածկեսցի:

Այս բան վերաբերի առ վիժածն, որում բաղդատեաց զագահն. և վատթարագոյն քան զնա գոլ վճռեաց:

5: Քանզի զարեգակն ոչ ետես. և ոչ ծանեաւ՝ ոչինչ է հանգիստ սորա (ա̅յլ, լուսոյ արեգական) քան զնորայն: (ա̅յլ, քան զխաւարին:)

Այլ այս իրաւի է. զի վիժածն ունայնութե̅բ գայ. և խաւարաւ գնայ. զի զկեանս ոչ ստանայ. նաև ոչ ծնանի, զի 'ի լոյս գայցէ. ուստի 'ի խաւարի ծածկի անուն նր̅. քանզի ոչ ծնանի՝ ոպ̅ զի անուն ինչ դիցի նմա. և հետևաբար ոչ երբեք գիտէ զչարութի̅ կենաց և իմացականութե̅, և լուսոյ բանին. ոպ̅ զի ասիցէ՝ լաւագոյն է կեանն քան զանկենդանութի̅ն. և լաւ-

ագոյն

ագոյն է լոյս բանի քան զխաւարն անբանութեան :

Լա՛ւ այսպիսւոյ վիժածի հանգոյն՝ նաև առաւել վատթարագոյն քան զվիժածն են ագահքն : Պարզեալ · այնք քրիստոնեայք , որք են 'ի մեղս մահուչափս, զորս Ած 'ի ձեռն քարոզչաց , և 'ի ձեռն շնորհաց իւրոց կոչէ յապաշխարութի՛ւ, և այնու յղանան 'ի սիրտս իւրեանց զբարի խորհուրդ ապաշխարութեան , բայց ոչ ծնանին, քս , ոչ 'ի գործ ածեն զյղացեալ բարի խորհուրդն , այլ քաղցրութե՛ մեղացն քարշեցեալք , և պատրեցեալք՝ առնեն զվիժումն բարի խորհրդոյն՝ աւելի վատթարագոյնք քան զվիժեցեալն : Վասնզի 'ի խաւարէ մեղաց ոչ գան 'ի լոյս շնորհաց և առաքինութեան · և այնու ոչ գիտեն թէ որքան հանգիստ է , և որքան քաղցր , և բարի է կեանն առաքինական, քան զգոլն 'ի խաւարի մեղաց · և այսու նոյն բարի խորհուրդն ունայնութե՛ գայ 'ի սիրտս նց · և խաւարաւ գնայ · քս , առանց 'ի գործածեցման : Լա՛ւ ասացի, վատթարագոյնք են քան զվիժածն · զի վիժածն գոնէ ոչ ունի զդատապարտութի՛ւ · բայց այսպիսիք մեղաւորք յանզղջութե՛ նաև դատապարտին :

6 . ԵՒ ԵԹԷ ԵԿԵԱՑ ՆԱ ՀԱԶԱՐ ԱՄԱՑ ՇՐՋԱՆԱԿՍ . ԵՒ ԶԲԱՐՈՒԹԻՒՆ ԲՆԱՒ ՈՉ ԵՏԵՍ՝ ՄԻԹԷ ՈՉ ԵՐԹԻՑԷ ՍԱ 'Ի ՄԻ ՏԵՂԻ :

Այս-

Այսինքն , եթէ ագահն ապրիցի նաև զհազար ամս , մինչ 'ի յընչից իւրոց զբարութիւն ինչ ոչ տեսանէ , զի ոչ ժառանգէ , և ոչ վայելէ զբարի ինչ անցաւոր՝ ուտելովն անտի համբարտութիւն 'ի փառս իւր . և բաշխելով նաև աղքատաց 'ի վայելումն հոգւոյ իւրոյ , զինչ օգուտ է նմա այն ամ . ոչ ապաքէն ամ ինչ 'ի մի տեղի երթայ . զի 'ի մի կատարած մահու : քանզի մահն զամենեսեան , զի թէ զաղքատս , և թէ զհարուստս , թէ զհարիւր ամ ապրօղս , և թէ զտասն ամ ապրօղս 'ի մի խուրձ կապէ . և այսպէս ընաւքն մինչ մերջապէս 'ի նոյն տեղի գնան . և 'ի մի խուրձ մահու կապին , ըստ ամի ոչ ինչ է՝ թէ երկարութիւն կենաց , և թէ բազմութիւն ընչից , մինչ 'ի ձեռն նոյնն ոչ ջանամք շահիլ վն մեր զայնս գործս բարեաց , որք օգնեն մեզ 'ի հանդերձեալ կեանսն , ուր գնալոց եմք զկնի մահուան : Այս առ այս Տէրն մեր խրատէ , ասելով . Գանձեցէ՛ք ձեզ գանձս յերկինս . Մատթ . 6 . 20 : Այլ և , թէ արարէ՛ք ձեզ քսակս առանց հնանալոյ , գանձ անպակաս յերկինս . Ղուկ . 12 . 33 :

7 : **Ամենայն ջան մարդոյ 'ի բերան իւր . եւ սակայն անձն նր ոչ յագեսցի :**

Կամի ասել . ամ ջան և աշխատանք մարդոյ է 'ի բերան իւր . զի է առ 'ի ստանալ և շահիլ զինչ , զի դիցէ 'ի բերանն և ու_

տի_

տեսցէ ։ Ոչ՛ սակայն մինչև ագահ, ժողովէ և ժողովէ վ՟ գտանելոյ 'ի բերման իւր, բայց ոչ գնէ 'ի բերման իւր այնքան յօժարութ՟ և սիրով, որքան գնէ 'ի բերման ստանայի, վ՟ 'ի քսակի․ քանզի քսակ ագահին է բերան ստամանայի ։ Ոչ՛ սակայն անչափ ուտէ, վ՟ հոգւոյն՝ և կամ սիրոյն ոչ յագի․ քանզի որքան և ժողովէ, որքան և բազմացուցանէ զգոյս իւր, ոչ ասէ, բաւական է վ՟ իմ, և վ՟ որդւոց իմոց այսքան փարթամութիւն․ այլ առաւել կարօտի, և սոյն մանաւանդ ստացականայ 'ի սրտին ։ Ոչ՛ այս է մեծագունեղ թշուառութիւն մարդոյ․ զի ժամանակաւոր և անարգ իրօք, վ՟ փարթամութ՟, և կամ հեշտութեամբ մարմնոյ, և որկորոյն՝ կամի յագեցուցանել զագահական հոգին՝ որ միշտ բաղձայ մշտնջենաւոր, և կայուն բարեաց ։

Մ՟ որոյ թշուառականք են նոքա, և յօժմոլորեալք, որք ջանան և աշխատին միայն վ՟ գտանելոյ 'ի բերմանս իւրեանց, վ՟ վասն ստանալոյ զմ և իցէ բարի անցաւոր, առ 'ի հեշտանալ և զմայլիլ այնու՝ և յագեցուցանել զբաղձանս հոգւոյն․ որ սակայն ոչ երբէք յագի անձն․ վ՟ հոգին 'ի ձեռն այնց անցաւորաց․ այլ միայն տեսութ՟ փառացն այ․ ըստ այնմ, յագեցայց յերևել փառաց քոց․ Սաղմ․16․ 15 ։

8: Քանզի զի՞նչ առաւելութիւն է իմաստնոյն քան զանմիտն. քանզի աղքատն գիտէ երթալ առաջի կենաց իւրոց:

Աստէն հարցանէ. և յետոյ ինքն պատասխանէ, և լուծանէ. իբրու թէ ասիցէ. զի՞նչ աւելի է իմաստնոյն քան անմիտին՝ գիտէ՞ք արդեօք. ահա այսէ. զի իմաստունն գիտէ երթալ հանդէպ կենաց իւրոց. այ, միշտ դիմէ առ այնս՝ որք են կենաց՝ և առ կեանս վերաբերին: քանզի ըստ մարմնոյն ունի զխաղաղ և զհանդարտ կեան, ուրախութի ունելով ՚ի բարեաց իւրոց ՚ի փառս Այ. և ըստ հոգւոյն զպատուէրանս Այ պահելով՝ միշտ դիմէ առ կեանն երանական. և այսու իբրու թէ միշտ շրջի առաջի կենաց իւրոց: Վս զի որ զամ առնէ ՚ի փառս Այ, միշտ առաջի Այ շրջի. և այնու երթայ հանդէպ կենաց իւրոց: Արդ՝ ասելովն՝ թէ իմաստունն զայս ունի աւելի քան զյիմարն՝ զի գիտէ դիմել առ կեանս, տայ իմանալ՝ թէ ուրեմն յիմարն ոչ գիտելով դիմել առ կեանս, առաջի մահու երթայ. և միշտ առ այն դիմէ:

Բայց զի ՚ի բնաբանին ոչ ասէ՝ իմաստունն գիտէ երթալ. այլ ասէ. զի աղքատն գիտէ երթալ առաջի կենաց. որքան առ այս ծանի՛ր: զի յայնմիկ բանի, ուր ասէ՝ զինչ առաւելութի է իմաստնոյն, իմանալի է՝ աղքատ

իմաստ_

իմաստնոյն. և մինչ ասէ, քան անմտին, իմանալի է՝ քան անմիտ և աղքատ հարստին: Այլ յետոյ մինչ ասաց. զի աղքատն գիտէ, իմանալի է, զի իմաստուն աղքատն գիտէ: Մ՛ զի հարցաքննելով կամի ասել զայս: Ո՞ինչ առաւելութիւն է իմաստնոյ աղքատին՝ քան անմիտ աղքատ հարստին: Այլ պատասխանէ. այս է առաւելութիւն, զի աղքատ իմաստունն գիտէ երթալ առ կեանս. զի համբերութբ և խաղաղութբ և անզբաղ սրտիւ ունէ պհայ. և զկեանս մարմնոյն վարէ անդորրութեամբ: նաև ՚ի փառս այ բաժանականաց սակաւուք, և ջանայ պահել զպատուիրանս Տն. և այնու դիմէ առ կեանն երանական: Իսկ անմիտ աղքատ հարուստն՝ ոչ գիտէ երթալ առ կեանն. ոչ առ կեանն մարմնոյ. և ոչ առ կեանն հոգւոյ: Քանզի գոլով գերի սիրոյ արծաթոյն, և զսիրտն իւր կապեալ ընդ նմին, անդ միայն կարէ գնալ՝ ուր քարշէ սէր արծաթոյն: Այլ զի մամոնայն ոչ երբեք քարշէ զսիրտն իւր առ կեանս, այլ միշտ առ՚ի մահ. վս որոյ աղահն ամենևին անդէտ մնայ ճանապարհին կենաց:

9: Բարի է տեսիլ աչաց՝ քան զգնացեալն հոգւով. այլ և այն ունայն է և յօժարութիւն ոգւոյ:
(Եբր, տառապանք ոգւոյ:)

Բանէն ցուցանէ և զայլ անմտութիւն աղահին.

հին. որ ունեցելումն ոչ յաւելաւ՝ մինչ ըղձիւն և հոգւումն գնայ առ ոչ ունեցեալն։ Օրգան. ունելումն զհազար ոսկի, սրտիւ և հոգւով գիմէ և գնայ առ երկու հազարն, զոր ոչ ունի. և հառաչէ առ այն ասելով. ո՞չ եթէ երկու հազար լինիցիր։ Մի որոյ ամփոփմն գրեթէ ասէ զայս. ո՛վ ագահ, Բարդ է փոխել ագոյ. զի ներկայ եղեալ հազար ոսկիդ զոր տեսանես, քան զերկու հազարն, առ որ գնաս հոգւովդ և ըղձիւքդ, և հառաչես առ նա յանկալովդ այնմ։ Ո՛չ այս մաձիւ, եթէ Բարդ է փոխել ագոյ. զի այն՝ զոր Ա՟ծ տուեալ է մեզ, և ունիմք ներկայապէս՝ քան զայն, զորս ոչ ունիմք, և ըղձիւք, կամ հոգւով գնամք առ այնս, զառաջնոյն լաւոյ կարէ իմանել։ Օրգան. եթէ զաղքատ, կամ զմիջակին կացութիւն ունիցիմք, բարւոք մեզ այն սահման զոր ունիմք, քան զփարթամութիւն զորս ոչ ունիմք, և հոգւով գնամք առ այնս։ Ո՛չ ո՛ք եթէ ոմն կարծի հասանի ձկտիցի հասանել առ բարձրագոյն տեղի ինչ՝ Ը ոչ կարելն հասանել անդ՝ տառապի կրկին կերպիւ, զի յաւելուցանէ զմարմինն, նաև սրտիւն յաւէր զի ոչ կարաց հասանել անդ՝ ուր ձկտեցաւ, այսպէս հանդիպի և այնոց ամենից՝ որք առ այն՝ զոր ոչ կարեն, ձկտին ժամանել. և ոչ ժամանելումն՝ կրկին յաւէժ տառապին։ Նման զայս նաև զմտաց ըղձակերպութիւն

զգիտունն ։ որ եթէ ոչ բաւականանալով այնորիկ՝ և այնքանեօք գիտութեամբք, զորքանս և զորս կարէ ըմբռնել միտն, ձկտիցի առ յոլովն և առ բարձրագոյնս՝ է ոչ հասանիլն այնց, ոչ միայն զմիտն յաւեցուցեալ մնալ, այլ նաև բազմօք տառապանօք վշտանկի ։ և զտակաւն զոր ունէր, ոչ սիրելովն զայն՝ զրկի և յայնմանէ ։ Նմանի՝ որպէս առակ ինչ գոյ, թէ բարւոքէ մի աղաւնին ՚ի սեղանոջ եղեալ՝ քան զհազար սաղս ՚ի յերկինս թռուցեալ, այսպէս ևս միշտ և հանապազ բարի է այն՝ զոր տեսանեմք ։ այսինքն ունիմք ներկայ առաջի աչաց՝ որքան և տակաւ իցէ, կամ փոքրիկ՝ քան զայն որ ընդ օդս թռչի, և ընդ իշխանութեամբ մերով ոչ է, և միայն ըղձիւ և հոգւով գնացեալ լինի առ նա՝ և ոչ բուռ իւրն ունեցեալ ։

10 ։ Որ ինչ եղեն՝ (այսինքն, որ ինչ լինելոց է) նոյն անցեալն կոչեցաւ անուամբ նր ։ և յայտնի եղեն՝ որպէս ինչ է նորա ։ և ոչ ինչ կարէ դառնել ընդ այ հզօրի կամն ըմբռնելն ։

Յաւէտ ևս հետևեցուցանէ զբանն առագահս, և առնաւս, որք ջանան ագահութեամբ գանձել վասն որդւոց իւրեանց, և ասէ ։ որ ինչ եղեն ։ այսինքն, որ ինչ լինելոց է առ յապայն որդւոցդ, ոչ զի է կարծեաց քոց ՚ի ձեռն ժողովեցելոց գանձուցդ նր մնասցեն փարթամք, իցեն փառաւորք, և ապրի-

տալիցին մեծաւ հանգստութ՟բ և փառօք,
Ահա անդէն կոչեցաւ անուն նր, Յս, նոյն ա-
պագայ փառք և փարթամութ՟ն որդւոյդ
ահա այժմ իսկ զիւրն անուն առեալ է
գոլ ունայնութ, և գոլ տառապանք հոգ-
ւոյ. քանզի դու որ զբաղում ինչս գան-
ձելով որդւոյդ՝ կամիս տալ նոցա այնու
զհանգիստ, սուտ է. զի նոյն բազմութ՟ն
ընչիցն ահա արդէն կոչեցաւ տառապանք
ոգւոյ: Նաև փորձիւ յայտ եղև 'ի քեզ՝ և
'ի բազումս. զի ունելն զինչս բազումս՝
բազմիցս լինի առիթ սահեցման 'ի մո-
լութ՟ի ապահութ՟ե. և այնու բազմութ՟ք
ընչիցն լինելն տառապանք հոգւոյ. նաև
երբեմն որոգայթք սահեցման 'ի յաւի-
տենական կորուստ: Երբեմն զայն, զոր
վն որդւոյդ բարի և օգտակար համարիս,
նոյնն արդէն զիւրն անուն առեալ է, և
անուանեցեալ վնասակար:

Նա՜ յարէ. Նա՜ յայտնի եղև՝ որպիսի ինչ է մարդ.
Այսինքն, որդիքն քո են մարդիկ՝ և յայտ
իսկ է, թէ մարդն որքանեայ փորձուեց,
փոփոխութ՟եց՝ և այլայլութ՟եց ենթար-
կեցեալ է: Ուստի կարէ հանդիպիլ՝ թէ
որդիքդ քո 'ի ժառանգելն զինչս քոյս, զորս
այդքան ջանիւ գանձես վն նց, սկսանի-
ցին լինիլ արբշիռք, մոլիք, և անա-
ռակք. վարկելով թէ բազմութ՟ք այն-
քան գանձուց՝ զորս թողեր նց, ոչ սպա-
ռին. և այսու գանձեցեալդ 'ի յօգուտ նց


յեղա-

յեղաշրջելոյն 'ի մեծապատուեալ մասս հող-
ւոյ՝ և մարմնոյ նորին:

Դարձեալ. մեկնի և այսպէս. որ ինչ եւրս է մեր որդւոյդ, արդէն 'ի յամենայն նախախնամութեան կոչեցեալ է անուն նր՟. այ՟, բացորոշեալ է Տ՟Ծ՝ թէ զորքանս տալոց է որդւոց քոց, և որք պահելոց զնս՟. այ՟ կամ մեծամեծ փառօք և փարթամութբ՟, կամ 'ի նուաստ կացութեան և յաղքատութեան: Նա զի յայտնի է՝ թէ որպիսի ինչ է մարդ. այ՟, մարդն զայնս և զայնքանս կարէ ունել և ունել՝ զորս և զորքանս տայ նմա Տ՟Ծ. արդ՝ նաև որդիք քո են մարդիկ, և Տ՟Ծ ըստ իւրում բարեհաճութեան պահելոց է զնոսա. ուրեմն զայնքանս կարեն ունել, զորքանս տայ նոցա Տ՟Ծ: Աստի դու ով ադամ, մի՝ ջանար մեղօք և ագահութբ՟ գանձել զգանձս մեր որդւոցդ. այլ լեր երկիւղած. և զոր ինչ տայ քեզ Տ՟Ծ՝ և զոր արդարութբ՟ շահիս, 'ի գործ ած զայնս 'ի փառս Այ՟ համեստաբար ուտելով, նաև աղքատաց բաշխելով. և եթէ իր ինչ յաւելեալ լինիցի քեզ, թող զայն որդւոց քոց: Այլ ոչ այսու մտօք՝ թէ նոքա այնու ապրելոցք իցեն, կամ 'ի համեստութեան մնալոցք. զի այդպիսի կարգադրութիւն միայն Տ՟Յ է. որ պահելոց է զորդիս քոյ ըստ բարեհաճութեան իւրում որպէս և կամի: Տ՟ՄԼ այսու կերպիւ, իբրու թէ հասարակօրէն

րէն եղեալէ սովորութի հարց՝ զյաճեցեալ փարթամութեն թողուլ որդւոց ․ վ՟ն որոյ և դու թողուս ։ Այլ այսու զորդիս քո յանձնեա՛ տ՟յ ․ զի Ա՟ծ պահեսցէ զնոսա ․ և մի՛ յանձներ արծաթոյդ , որ ոչ ունի զկարողութի՛ նաև զինքն պահելոյ ։

Այնպիսի ամբարիշտ ագահն՝ որ 'ի կենսս իւր պաշտէ զարծաթն , ջանայ բազմա_ցուցանել զայն , և զօրացուցանել , զի զոր_դիս իւր նմա յանձնիցէ յետ մահուանն , իբրու չաստուածոյն իւրոյ թողուլ բազմա_ցելոյ ։ Ս՟ն որոյ ագահն գրեթէ մարտն_չի ընդդէմ տ՟յ ․ քանզի ո՛չ յուսալով՝ և ո՛չ հաւատալով՝ թէ Ա՟ծ տայ որդւոց իւրոյ զհաց՝ ջանայ ընդդէմ տ՟յ գանձել զապագումն վ՟ն որդւոց իւրոց , զի փառօք և հանգստութ՟ե ապրիցեն զօրութ՟ե և բազմութ՟ե արծաթոյն ։ Այնպիսին 'ի զուր աշխատի ․ քանզի ո՛չ կարէ 'ի դատ , կամ 'ի մարտ մտանել ընդ տ՟յ ։ Աստի յարէ ․ Այն ո՛չ կարէ դատել ընդ տ՟յ հզօրի քան զինքն ։ Զի , ոչ որ ընդդէմ կարգաւորութեանն տ՟յ բազ_մութ՟ե գանձուց կարէ հակառակիլ , և 'ի դատ , զի 'ի մարտ մտանել ընդդէմ տ՟յ , և յաղթել զնա ։ և նոյնէր թէ ասիցէր ․ ոչ որ կարէ բազմութ՟ե ընչից և գոյից իւրոյ տալ որդւոցն զփառաւոր և զհան_գիստ կեանս ընդդէմ կամաց և բարե_հաճութեան տ՟յ , որ է հզօր քան զնա ոք ։ Այլ առ այս մերահայի նաև քան Ք՟ն մե_

րոյ, զոր ասաց · Ո՛չ եթէ 'ի մթերից ընչից ու_րուք իցեն կեանք նր · Ղուկ. 12. 15:

11 : Սանդէ են հանք հաղուածք, որք յաճա_խեն ընդունայնութիւն:

Այս եւ վերաբերի առ ագահ փարթամս, որք ոչ յուսալով յա̃ծ · եւ ոչ յանձնելով միամտաբար զինքեանս՝ եւ զորդիս իւր_եանց նախախնամութեան ա̃յ՝ առնեն զբա_զում տրամաբանութիւն՝ եւ զհետաքրքրու_թիւն զապագայից · մերթ մտածելով · մերթ հնարելով եւ փորձելով · մերթ վի_ճակընկեցութեան հետեւելով՝ որքան առ այս, թէ յետ մահուան իմոյ՝ զի՞նչ ար_դեօք լինելոց են այսքան փարթամու_թիւնք իմ · եւ կամ պալատք իմ · այգիք, եւ անդաստանք իմ · որդիք եւ դստերք իմ · անուն իմ · եւ անուն տան իմոյ · եւ այլն : Այս զայսպիսեացս հետազօտելով՝ յաճա_խին ընդունայնութիւնք · մէ սուտ կարծիք · սուտ նախադուշակմունք : Մերթ եւ ընդ_ունայն կասկածք, եւ երկիւղք : Մերթ եւ սուտ յոյս, եւ մխիթարութիւնք :

Որոյ ասելով · Այն հաղուած հանք, որք յա_ճախեն զունայնութիւն · տալ իմանալ՝ թէ 'ի յագահաց՝ վա̃ սիրոյ արծաթոյն՝ լինին բազումք բանք հետաքրքրականք զապա_գայից · յորոց բանից յաճախին այնպիսի ունայնութիւնք · զորոց ասացաք : Այս վեր_ջապէս ծանիր · զի սէր արծաթոյն՝ որ է

'ի

'ի յադագն, տայ նմա մնաւանալ զերկիւղն իւր. և արգելու զնա 'ի Հաւատալոյ զնախախնամութիւն իւր. ոչ միայն զայն՝ որ 'ի վերայ իւր է, այլև զայն որ 'ի վր որդւոց իւրոց ելոց է ։ Նմանայ և գ կոյսն որ առ Նծ, գնելով զբոլոր յոյսն 'ի յարծաթն. և զԹոյնս իւր Հալորդէ և որդւոցն՝ յուսացուցանելով և զնոսա 'ի բազմութիւն ընչիցն, զորս Թողու նոցա. և այսպէս՝ մինչ զՀաւատոն, զյոյսն, և զսէրն յետս քարշեալ յիւր գնէ 'ի յարծաթն, կացուցանի յայտնի կռապաշտ. և որքան առ այս՝ սբն Պօղոս զարծաթսիրութիւն կոչեաց կռապաշտութի ։

Նստէն բանք ժողովողին եղեն Հասեալ 'ի կէսն. քանզի մինչև ցայս վայր ԾԵ Սեբ բայեցւոց են 112. տունք. և աստի մինչև 'ի վերջն ևս նոյնքան. և այսու իբրու 'ի Թիւ և 'ի չափ բովանդակեցեալք են բանք գրոյս 'ի ժողովողէն ։ և այս տուն և Հետևեալն՝ 'ի միջին տեղւոջ են կացուցեալք Նաև որպէս ըստ տանց, այսպէս և ըստ գլխոցն է կէս. զի վեց գլուխն աստէն եղերեցեալ՝ Հետևեին և այլք վեցը.

## ԳԼՈՒԽ Ը։

ՍԿՍԵԱԼ յանէ գիտող, 'ի կարծութե կենաց յետա_
նորհեալ՝ ցուցանէ պարապելի գոլ՝ ո՛չ 'ի յու_
նայնութե, այլ 'ի ճշմարտութե եւ յիմաստութե,
զորոց տայ մեզ զգանակաւն խորհուրդս եւ զգուշանս․ որ_
պէս զի ուսանիցեմք, թէ 'ի ճանապարհի աստի
կենաց զի՛նչ լինին այնք, որք մանաւանդապատեալք ընդ_
րելիք են։ Այս եւ թէ որքան բարիք են անտառն
ողջամիտ խորհրդոց եւ խորատոց․ զբարեխօսութեանն
զսպել․ բարեօք ունեցելովք զաջակողմապէս վարել․
ո՛չ ջանալ աճելի գիտել քան զոր պարտ է․ ար_
դարոյ 'ի թեթեւութեան հասանել․ ոտնայն եւ զարդարագոյն
բանից զուանդն ո՛չ մտածութեանել։ Մերձապէս 'ի 27․
դրան պատճառաւ 'ի վեր քան զամ զգուշանալ եւ
խորշել 'ի խանութ՝ ելեալ 'ի թշնամեաց մահաբերից։

※ ԲԱՆ։ ※



Ի՞նչ է առաւելութի մարդոյ․ քան
զի ո՞վ գիտէ՝ զի՛նչ բարի է մարդոյն
'ի կեանս իւրում․ 'ի թիւս աւուրց
կենաց ընդունայնութե նր․ զորս
արար 'ի ստուերի․ վասն զի ո՞վ պատ_
մեսցէ մարդոյ՝ եթէ զի՛նչ լինիցի նորա 'ի ներքոյ
արեգական։

## ※ ՍՆԱՊԱՐԾՈՒԹԻՒՆ ։ ※

Կամի ասել, զի՞նչ օգուտ է, և կամ զի՞նչ առաւելութիւն բարեաց մարդոյն՝ խնդրելն բաղձանօք և տառապանօք ոգւոյն յայսմիկ ստուերանման կենի զայս ինչ մարմնաւոր բարի, կամ զայն ինչ. որգոն, զհարստութիւն, զպատիւ, զիշխանութիւն, զհանգիստ մարմնոյ, զհամբաւ, և զայլս նմանս, զորս ներկայաբար ոչ ունի։ Քանզի ուսանի գիտել կարէ խնդրօղն զայսպիսիս, թէ այնոքիկ մարմնաւորք բարիք՝ զորս այնքան տառապանօք խնդրէ ունել՝ ՚ի յունելն զայնս ոչ վերադառնան նոքին ՚ի մեծագոյն վնաս՝ և ՚ի կործանումն անձին իւրոյ։

Վ՜ որոյ յարէ իմաստունն. Ժողովողի ԳԼ. Զ. ԺԲ, բայց յո՞յ ո՞վ գիտէ, թէ զի՞նչ է, և կամ ո՞րն է բարին և օգտակարն մարդոյ ՚ի կեանս իւր։ Սոզի բազմիցս լինին ոմանք ՚ի յերկար հիւանդութենէ, և անհամբեր լեալք՝ խնդրեն զառողջութիւն, իբրու բարի իմքեանց. բայց Աստուած գիտելով՝ թէ այն որ ՚ի յունելն զառողջութիւն, ՚ի չարիս հոգւոյ՝ և մարմնոյ իւրոյ սահելոց է, խնայելով ՚ի նա՝ ոչ տայ նմա զառողջութիւն. և նա ՚ի զուր տրտնջէ ՚ի հիւանդութենէ իւրում. և ոչ գիտէ թէ բարին իւր է հիւանդութիւն այն, և ոչ առողջութիւն։

Ըստ

Ըստ այսմ իմա և զայլոց բնաւից նմա_
նեաց, նաև զհոգևորականաց պաշտօնից.
որգոն, եթէ ոմն տենչայցէ, զի ուսու_
ցանելով կամ քարոզելով զբանն Ա.Յ,
այնու շահեսցի զարդիւնս հոգևորս, և լի_
նիցի դիպուած՝ զի արգելանիցի յայնմա_
նէ պատճառաւ հիւանդութեն, և կամ
այլով առթիւ. նաև այնպիսին՝ եթէ ան_
համբեր լեալ՝ ոչ վերաբերիցէ զայն առ
Ած, (ասելով, եթէ այն իցէր օգուտ ինձ,
և լսողացն, Ած ոչ թոյլ տայր արգելա_
նիլ) զյիմարութի գործէ. և ՚ի զուր տա_
ռապեցուցանէ զխորտն։ Արդ՝ եթէ նաև
՚ի հոգևորս և ՚ի յայնպիսի բարի նիւթս՝
տրտնջողն է յիմար, ապա որքան ևս ա_
ռաւել յիմարք են նոքա՝ որք վս ոչ ունե_
լոյն զմարմնաւոր բարիս՝ տառապին. և
ոչ մտածեն զայս, թէ Ած որպէս զհայր
գթած, տեսանելով՝ թէ այնք բարիքն ՚ի
վնաս և ՚ի կորուստ անձին մերոյ յեղաշր_
ջին՝ արգելու ՚ի մէնջ։

Արդ՝ բարւոք է մարդոյն և մեծագունեղ
երջանկութի, դնել միշտ զինքն և զիմ
կացութի իւր ՚ի ներքոյ կամաց և կար_
գաւորմանն Այ, (որ ոչ միայն գիտէ զբա_
րին և զօգուտն մեր, այլ նաև կամի,)
քան մտանել զինքն և զկացութի իւր ՚ի
ձեռն անբանաւոր ըղձից և տենչանաց
բնութեն՝ կամ սրտին իւրոյ. որ ոչ միայն
ոչ գիտէ, թէ որն է բարին անձին իւրոյ,

այլ

այլ բազմիցս նաև զչարն և զվնասակարն
ոչ̃ զբարի առաջադրէ ինքեան։

Սա՛ յարէ. 'Ի ԲՆԷ ՏՈՒՐՔ ԿԵՆԱՑ ԸՆԴՈՒՆԱՅ-
ՆՈՒԹԷ ՆԵ՝ ՉԱՐԻ ԱՐԱՐ 'ԻՏՈՊՐԷՐԷ, զի 'ի յըն-
թացս ստուերանմանն կենի, որ որպէս
զստուեր անցանէ։

Ո՛րք կենաց մարդոյն միշտ 'ի հոսման լինելով՝ են ունայնք և կեանք ընդունայնութեան. զի անկայուն գոլով ունայնք ասին. և ինքն մարդն զոր ինչ գործէ և առնէ՝ 'ի ստուերի և 'ի յընդունայնութեան գործէ։ Ո՛րպ՝ թէև ըստ թիւր բաղձանաց մարդոյն ունիցի մարդն զամ̃ մարմնաւոր բարիս, զի իցէ փարթամ, և փառաւոր իշխան, կամ թագաւոր. և այլն. և այնու զմեծամեծ իրս գործիցէ յայսմիկ ստուերանմանն կենի, որգոն, զմեծամեծ պալատս կերտիցէ, զյաղթութիւն բազում 'ի պատերազմի արասցէ, և կամ զայլս նմանս գործս երևելիս և հռչակաւորս գործեսցէ 'ի վ̃ երկրի, մինչ այնք ամենեքեան ոչ իցեն 'ի փառս ա̃յ, զի՞նչ օգուտ է նմա, և զի՞նչ բարի։ Վ̃ զի ինքն մեռանի. և մեծամեծ գործք, և արարք իւրք, կամ շինուածք, և համբաւ իւր՝ որք մնան յաշխարհի, ո՞չ կարէ յաշխարհէ աստի գնալ ընդ նմա՝ որ մեռեալ է, և պատմել նմա, թէ ահա դու գոլիս յաշխարհի. ահա պալատք քո 'ի նմին փառաւորութեան կան. ահա որդիք քո և տուն քո փառաւո-

րա-

բայց փայլին յաշխարհի. և այլն. ար_
դարև ոչ որ: ուրեմն մինչ յետ մահուանն
ոչ կարէ ուրախանալ 'ի մէջ այնց, ընդէր
'ի զուր բաղձայ ունիլ զայնս:

Եւ ահա առայս մին՝ յարէ. Քանզի ո՞չ
պատմեսցէ մարդոյ՝ եթէ զի՞նչ լինիցի նր 'ի ներքոյ
արեգական: այս, յետ մեռանելոյ մարդոյն
ո՞չ կարէ գնալ առնա և պատմել՝ թէ
զի՞նչ եղեն, և ո՞չ կեան յաշխարհի 'ի ներ_
քոյ արեգական ում բարիք իւր, կամ
ինչքն, և թագաւորութիւն, և համբաւն՝
զորս եթող և գնաց. ո՞չ զի այնու մխի_
թարիցի, կամ ուրախանայցէ. արդարև
ոչ ոք գնայ առ 'ի պատմել:

2: Բարի է անուն բարի՝ քան իւղ բարի. և
օր մահուան նորոյ՝ քան ծննդեան նորոյ:

Այսինքն, բարի է, զի մարդն արդարու
թբ և խրատամբ վարելով 'ի կեանս իւր՝
ունիցի զանուն բարի, թէ և իցէ աղքատ,
և 'ի նուաստ կացութե, քան թէ իցէ իւղ
բարի, այս, քան թէ իւղով օծեցեալ գո_
լով՝ իցէ բարի: Քանզի թագաւորք, և
քահանայապետք մինչ ըստ օրում օծե_
ցեալք՝ կոչին բարիք, հետևաբար նաև
ասին իւղ բարի: Բայց թէ գործով իցեն
չարք, բարի է գործոց բարեաց հետևող
ռամիկն՝ որ ունի զբարի անուն, քան զա_
նիրաւ թագաւոր, և քան զանօրէն քա_
հանայապետ՝ որ գոլով օծեցեալ, է իւղ
բա_

բարի. և կամ քան զաղքատ փարթամն, որում բազումք իւղք ձիթենեաց լինելով՝ կոչի իւղ բարի:

Իսկ թէ օր մահուն իցէ բարի քան զօր ծննդեան՝ իմացեալ լինի որքան առ բարեպաշտ անձինս, որք վ̃ն բարեաց գործոց իւրեանց ունին զանուն բարի: վ̃ն զի 'ի ծնանիլն՝ 'ի վիշտս և 'ի ցաւս ծնանին յ̃ի. և կրեն զբազումս. իսկ 'ի մեռանիլն՝ զերկուս բարիս ունին: Մինն, զի զերծին 'ի վշտաց աշխարհիս. և միւսն՝ զի մտանեն 'ի կեանս երանականս. վասն զի մահ սրբոց է փոխումն թշուառութեն նոցին, և սկիզբն երանութե̃ն:

Բայց որքան առ ամբարիշտսն իմացեալ՝ չարագոյն է օր մահուան նց̃, քան զօր ծննդեան. զի 'ի ծնանիլն՝ ծնանին 'ի չարիս և 'ի ցաւս ժամանակաւորս. բայց 'ի մեռանիլն՝ ծնանին 'ի ցաւս և 'ի տանջանս յաւիտենականս:

3: Լաւ է երթալ 'ի տուն սգոյ՝ քան 'ի տուն արբեցութեն. վասնզի այն է կատարած ամ̃ մարդոյ. և որ կենդանին է՝ տացէ բարիս 'ի սիրտ իւր:

Լաւն ասել, բարի է մարդոյն երթալ 'ի տուն սգոյ. զի անդէն տեսեալ զգլխն մեռելոյ՝ յիշէ և զինքն մեռանելոյ. և այնու ուղղէ զգնացս իւր առ պահումն պատուիրանացն ա̃յ, քան թէ երթայցէ 'ի տուն արբեցութե. ք̃ն 'ի խրախճանս, կամ 'ի հար-

հարսանիս . ուր ընկղմեալ 'ի յուրախութիս և 'ի հրճուանս, մոռանայ զինքն գոլ մեռանելոց : քանզի եթէ խորապէս և ոչ արժանւոյն սեւեռիցէր զմիտ իւր առ այս՝ թէ ինքն մեռանելոց է՝ ոչ երբէք կարէր խրախանալ :

Եւ յարէ . Այն է կատարած ամ մարդոյ . ի՟մ մեռանելն է կատարած մարդոյ, զոր տեսանէ և մտածէ մարդն 'ի տան սգոյ :

Եւ հետևաբար ասէ . Եւ որ կենդանին է, տացէ բարիս 'ի սիրտ իւր . ի՟մ, տեսանելով 'ի տան սգոյ զմեռեալ դին, բերէ զբարի խորհուրդ 'ի սիրտ իւր, ասելով՝ նաև ես յաւուր միում այսպէս լինելոց եմ . և այլն :

4 : Լաւ է սրտմտութիւն քան զծաղր . քանզի չարութեամբ երեսաց ուղղեսցի սիրտ :

Այսինքն , բարւոք սրտմտութի և զայրագին դիմաց ցուցումն ընդդէմ մեղանչողին , և զընկերէն զչարիս խօսողին . քան զծաղր . ի՟մ , քան զքաղցրագին դիմօք հայիլն 'ի չարն մեղանչողին . և կամ զուարթութիւն տալ զպատասխանի բամբասողին, և զընկերէն զչարիս խօսողին : վ՟ զի մինչ տեսանեմք զընկերն մեր մեղանչել, և կամ զայլմէ զչարիս խօսիլ, եթէ զմեզ քաղցրադէմս երևեցուցանիցեմք նմա , այնու իսկ անուցիչ չարեաց նորին լինիմք :

Որ օրինակ , որպ՟ ծնողքն զչարիս ման_

կան

կան իւրեանց տեսեալք, որդոն, անարգել_ զայս ոք · ծաղր առնել զայն ոք · եթէ ծիծաղելին՝ և խնդալեն , այնու իսկ զոր գին իւրեանց սնուցանեն 'ի չարիս · այսպ̄ ևս ամ̄ ոք որ տեսանէ զչարիս ընկերին, և կամ զչարաբանութիւնս նորին , եթէ զդէմն զուարթս ցուցանիցէ նմա, սնու_ ցիչ է չարեաց նորին : Բայց եթէ դառ_ նացուսցէ զդէմն իւր առ այնպիսի ըն_ կերն, և զտհաճութիւն ցուցցէ նմա, այնու իսկ ուղղէ զընկերն, և զարթուցանէ զնա :

Աստի յարէ :

Ուղղի չարութեն̄ երեսաց զուարճանայ սիրտ · որ̄ զի դառնութ̄ երեսաց ունկնդրողին , կամ տեսողին զընկերն 'ի մեղս՝ զգաստանայ սիրտ մեղանչողին : Այս ասէն զբանս , զուարճանալ՝ իմն զգաստանալ · զի որ զգաստ է, հեռաւաբար և զուարճ է · որ̄ , զուարթ և արթուն : Վասն որոյ այնք, որք սակս մարդահաճութե̄ , և կամ վն̄ այլոյ ախտի, զչարիս՝ և զչարաբանութիւնս ընկերին տե_ սեալք՝ քաղցր դիմօք յետս դառնան 'ի նմանէ , 'ի քուն մահու մուծանեն զըն_ կերն իւրեանց : Իսկ որք զդառնութիւն ե_ րեսաց ցուցանեն՝ զարթուցանեն զսիրտ մեղանչողին · և զգաստացուցեալ՝ զուար_ թացուցանեն զնա :

Այս զայս խրատ վն̄ այսորիկ ասաէն եդ_ իմաստունն , զի զխրախճանաց խօսէր · և բազմիցս հանդիպելին 'ի նմին զոյգս ան_

տե_

տեղիք. և լսօղքն և տեսօղքն փոխանակ սրտմտելոյ ընդդէմ այնպիսեաց բանից. ծիծաղին, և ուրախանան. որ է մեծ չար: Այո՛ այնպիսեաց խրախճանն է մանաւա՛նդ խրախճան դիւա՛ց, քան թէ մարդկանց. որովհետև դեռ առաւե՛լ ուրախանան՝ քան թէ մարդիկ՝ որք են 'ի յայնպիսի խրախճանի:

5: Սիրտ իմաստնոց 'ի տան սգոյ. և սիրտ անզգա_ մաց 'ի տան ուրախութեան:

Այսինքն, սիրտ առն իմաստնոյ՝ թէ և իցէ մարմնով 'ի խրախճանի, երբեմն գնայ միտքն, և դնէ զինքն 'ի տան սգոյ, մտա_ ծելով զդին մեռելոյ ուրուք. և կամ մտա_ ծելով զինքն զօղ մեռանելոց. և ըն̅ նմ̅ի ո՛չ ընկղմէ զինքն 'ի յունայն զուա՛րճութիւ խրախճանին, մոռանալով զերկիւղն ա̅յ, և անսալով խենեշ խօսակցութեց, և ցո_ փաբանութեց: Իսկ սիրտ անզգամին թէև մարմնովն իցէ 'ի տան սգոյ, կամ յեկե_ ղեցւոջ, միտք միշտ է 'ի տան խրախուն. զի խորհի՝ թէ ո՞ւր արդեօք իցեն խրախ_ ճանք, կամ հարսանիք. և կամ ե՞րբ լի_ նելոց է խրախճան ինչ ուրեք. ուր և զինքն կոչիցեն. և այլն:

Ա՜յ թէ որքան մեղադրութեց արժանիք են քրիստոնեայք ժամանակիս, որք 'ի խրախճանի ոչ մտածեն երբեմն զինքեանս մեռանելոց. այլ միշտ 'ի խրախութիւնս ընկղ

ընկղմեալք՝ նաև թոյլ տան լինիլ խենեշ զրուցատրութեանց և ցոփաբանութեանց՝ առ ՚ի զուարճանալ այնու:

Լո՛ւր զայս համառօտ պատմութիւն : ՚Ի հնումն մինչ հեթանոս եգիպտացիքն լինէին ՚ի խորախձանի , ունէին զսովորութիւն զայս. զի զգլուխ մի մեռելոյ եդեալ ՚ի վերայ սկուտղ միոյ՝ բերեալ շրջեցուցանէին ՚ի խորախձանի առաջի աչաց ամենից բազմականաց՝ մեծաւ լռութեամբ. զոր ամենեցուն տեսեալ՝ մտածէին զմահկանացու գոլն իւրեանց. և այնու բարեխառնէին զանձարձակութիւն ուրախութեան իւրեանց. և զգաստանային: Որդ՝ եթէ հեթանոսք զայս առնէին, ապա որքան ևս առաւել քրիստոնեայք պարտաւորին ՚ի խորախձանի գոնէ յիշել երբեմն զինքեանս մեռանելոց գոլ. և այնու բարեխառնել զանցաւոր ուրախութիւնս իւրեանց:

6 : Լա՛ւ է լսել զպարսաւանս իմաստնոց. քան լսել ձայնոյ զերգս անմտաց:

Այսինքն . մեծագոյն բարի է մարդոյ յանդիմանիլն յիմաստնոց , և նախատելն՝ քան զգովելն ՚ի բերանոյ անմտաց. և քանզի գովութիւն , և կամ շողոքորդութիւն ՚ի յականջս գովեցելոյն է որպէս զերգ ինչ , այնու զի ախորժելին մարդիկ գովիլ. և որքան առ այս՝ զգովելն և զշողոքորդութիւն կոչէ երգ: Ուստի միշտ լաւ է մեզ

զի յիմաստնոց յանդիմանիցիմք մի մերոյ սխալանաց, քան թէ ունիցիմք զյիմար ընկեր, և կամ զչարեկամ, որ 'ի սխալինն մեր ոչ յանդիմանիցէ զմեզ, այլ զքաղցր դէմս ցուցեալ՝ ծիծաղիցի. և կամ շողոքորթական բանիւք պատասխանիցէ մեզ: Եւ կամ՝ մինչ մեք առաջի նորա խօսիմք զչար ինչ զումեքէ, ուրախ դիմօք պատասխանի առնիցէ մեզ:

Արդ՝ մինչ 'ի վերն՝ 'ի չորրորդում տան խրատեաց՝ զի զդառն երեսս ցուցանիցեմք մեղանչողին, այժմ զմեղանչօղն խրատէ, և ասէ. լաւ է յիմաստնոյ յանդիմանիլդ, մինչ սահիս 'ի չարիս, քան զանմիտ ընկերիդ զշողոքորթութիւն, և զքաղցր բանն, որ 'ի յականջս քո է որպէս զքաղցրանուագ երգ:

7: Զի որպէս ձայն փշոյ 'ի ներքոյ կաթսայի՝ այնպէս է ծաղր անմտաց. սակայն և այն ունայն է:

Այսինքն, որպէս փուշն մինչ դնի 'ի վառարանի 'ի ներքոյ կաթսայի, հանդերձ ձայնիւ և աղաղակաւ առնէ զբոցսն, և 'ի մէջ թուչի բոցն, և զուարճալի իմն երևի, բայց խորոյն զինի սակաւ միջոցի շիջանի՝ և ունայնանայ բոցն այն, և լաւ չթչթոյն. այսպէս և անմտաց շողոքորթութիւն, կամ ծաղրն, զոր առնեն առ 'ի մխիթարել զմեզ և ուրախացուցանել՝ շուտով անցանէ, և 'ի չիք դառնայ:

Ա՛ռ այս բան եւ յարի նախասացելոց բա-
նիցն : քանզի յիմար ընկերն մեր՝ որ 'ի
սխալելն մեր զուարթ դիմօք հայի 'ի մեզ,
է ոմն զխուճ վառեալ առաջի մեր, որոյ
շողոքորդութե բացումն՝ եւ չթչթոցմն զու-
արճանամք. սակայն եւ այն մնոտի է. զի
իսկոյն անցանէ մերն զուարճութի, որ
զայնմանէ. եւ 'ի մեղս մեր մնուցեալք եւ
հաստատեցեալք լինիմք 'ի ձեռն այնպիսի-
ւոյ շողոքորդութե 'ի կորուստ անձանց
մերոց :

8 : Սանուչէ զրպարտութի սահեցուցանէ զի-
մաստունն. եւ կորուսանէ զսիրտ ազնուութե նր :

Զրկանքն, զրպարտութիւն, կամ այլք
նմանք չարիք, որք գործին 'ի մարդկանց
մինչ տեսանին յիմաստնոց, սահեցուցանեն
զիմաստունս. զի վրդովեն եւ ամբոխեն զի-
մաստունս. եւ իմաստունքն որք ունին զմեծ-
անդութի սրտի, եւ այնու ո՛չ եւ իցէ երբեք
ոչ վրդովին, կորուսանեն զայնպիսի ան-
դութի սրտի. եւ այսպէս զրպարտութին
լինի վրդովիչ իմաստնոյ. եւ կորուսանօղ
անդութե սրտի նր :

Բայց այս զրպարտութի, կամ չարութի
ոչ իմանի որքան առ այս՝ յորժամ վերա-
բերի առ իմաստունն. զի յորժամ իմաս-
տունն զրպարտի. քանզի այսպէս առեալ
իմաստունն ոչ վրդովի 'ի զրպարտելն,
կամ 'ի կրելն զչար ինչ : այլ որքան առ

այս խմանի, զի իմաստունն յորժամ տե_
սանէ զընկերն զոպարտեցեալ, կամ զմեծ_
այլն խրատուանն բռնաբարեցեալ, կամ
զբարին հասարակին վնասեցեալ, կամ
զհօտն Քրիստոսի 'ի գայլոց գիշատեցեալ,
յայնժամ վրդովի. և զխնդութիւն սրտին,
որով զամ̃ չարեաց տանէր, կորուսանէ:
Եւ այս յայտ է 'ի Տեառն մեր և 'ի սրբս. քան_
զի Տէրն մեր զամ̃ զոպարտութիւն, և զչա_
րաբանութիւն՝ որ էր ընդդէմ իւրեան,
տարաւ յօժարութբ. բայց մինչ ետես
զտունն հօր իւրոյ բռնաբարեցեալ, և տունն
վաճառի արարեցեալ, ոչ համբերեաց.
այլ խարազանաւ հարկանելով զվաճա_
ռօղսն՝ արտաքս եհան զնս: Եւ նոյն Պօ_
ղոս. Գաղա. 5. 12: ասէր մն սուտ առա_
քելոյն. Երանի թէ հատանեալք իսկ լինէին,
որք զձեզդ խռովեցուցանենն: և 2. Կորնթ. 11. 29:
ասէ. Ո՞ հիւանդանայ և ես ոչ հիւանդանամ.
ո՞ գայթակղի, և ես ոչ տապանամ. նա և ես ոչ
վրդովիմ:

Եւ այս բան ևս յարի բանից վերոյասա_
ցելոց. զի իմաստունն զչարիս, և կամ
զչարաբանութիւնս ընկերին մինչ տեսա_
նէ, իսկոյն շարժի 'ի յանդիմանել զնա.
և ոչ համբերէ. և ոչ բնաւ քաղցր դի_
մօք և շողոքորթութբ զպատասխանիս
առնէ նմա:

9 : Բարի է վախճան բանից՝ քան զսկիզբն նորեանց . բարի է երկայնամիտ՝ քան զհպարտացեալն ոգւով :

Այսինքն, մինչ 'ի վախճանի բանիցն եղերին բանք վարդապետութեց, կամ խրատուց, զի յայնժամ միայն հասկացեալք լինին բանքն, այսու՝ բարի է վախճան բանից քան զսկիզբն, յորում նորայէս սկսեցեալքեն բանքն, և ոչ կարեն հասկացեալք լինիլ . վասն զի բանքն ոչ օգտեն յայնժամ՝ յորժամ սկսանին, այլ յայնժամ, յորժամ հասկացեալք լինին:

Դարձեալ . մինչ զդատարկ բանից և զզրուցատրութեց առեալ լինի այս միտս, յայնժամ այլով կերպիւ մեկնի . Որ բարի է վախճան բանից քան զսկիզբն իւրեանց . զի 'ի վերջանալն բանից անօգտից՝ դադարին վնասակար զրոյցք, բամբասանք, և դատողութիւք զընկերէն . բայց մինչ սկսանին բանք դատարկք, 'ի հարկէ հետևին նմա վնասակար զրոյցք:

Ապա յարէ . երկայնամիտն . Որ բարի է երկայնամիտն քան զհպարտացեալն հոգւով : Այս առաւել երկայնամիտք առնին ամ համբերողք, որք կատարման և եղերման ևս իցէ բարեաց գործոց սպասեն և երկայնամիտ լինին : Բայց հպարտն 'ի սկսիլ բարւոյն՝ խնդոյն համարի զլինելն թէ կատարեալ իցէ զայն, և կամ ըմբռնեալ . և

ոչ սպասէ երկայնմտութեան կատարմանն. որդւոյն. 'ի յուսման գիտութեն, և այլոց նմանեաց՝ բարի է վախճանն քան զսկիզբն, որպէս և ասացաւ. զի 'ի վախճանին և 'ի կատարին հասկացեալք լինին, կամ կալեալ. արդ՝ որ խոնարհ է և երկայնամիտ, սպասէ մեծաւ յօժարութեամբ կատարմանն և վախճանին. իսկ որ է հպարտ, ոչ գոլով երկայնամիտ, ասէ հասկացայ. բաւականապէս ուսայ. և կամի զի նախ քան զկատարումն՝ վերջ լինիցի բանին։

Ըստ այսմ առնեն հպարտքն նաև առ խրատս հոգևորս. և ասեն, որ ինչ պիտոյ է գիտել առ 'ի լինել հոգևոր, գիտեմք զամ։ Նաև առ գործս առաքինութեն, մինչ նորապէս սկսեալ են, իսկոյն տան զվախճան. և ոչ ունին զերկայնմտութիւն զի 'ի կատար հասուցանիցեն զառաքինութիւն։

10։ Մի՛ փութար յոգի քո բարկանալ. զի բարկութիւն 'ի ծոց անզգամաց դադարէ։

Այսինքն, մինչ 'ի ձախորդութի ինչ անկանին, և կամ յումեքէ արհամարհին, մի՛ փութար, և մի՛ բրդիր 'ի բարկութի. զի այսպիսի բարկութիւնն 'ի ծոցս, այսինքն 'ի սիրտս յիմարաց և անզգամաց ունի զտեղի։ Այս ասելովն՝ մի՛ փութար, ցուցանէ նախ՝ զբարկութիւն զայն՝ որ 'ի յախտից՝ և 'ի կրից յառաջագայի փութով. և ամբոխէ

զբանն

զբանն և զխորհուրդն, որով և լինի չար. և սա միշտ ՚ի սիրտս յիմարաց ունի զտեղի: Երկրորդ՝ ասէ և զայն բարկութիւն, որ լինի ընդդէմ այնպիսւոյ ուրուք, ՚ի վերայ որոյ զոչ իմն իշխանութիւն ունի բարկացողն. զի նաև այսպիսի բարկութիւն՝ թէ և չիցէ ամենախող զբանն, ՚ի ծոցս անզգամաց դադարի:

Երրորդ՝ ցուցանէ և զայն, որ թէպէտ ՚ի վերնագունէ իշխողէ առ իշխեցեալսն լինի, ՚ի վերայ որոց ունի զիրաւունս բարկանալոյ. նաև թէպէտ առանց կորուսանելոյ զբանն լինիցի բարկութիւն, սակայն եթէ ոչ իրաւամբ և ըստ արժարութեան բարկանայ, ըստ չափու յանցանացն. այլ կամ վասն ախտին իւրոյ բարկանայ, որով զոչ յանցաւորն որպէս զյանցաւոր համարի. և կամ վասն փոքր ինչ յանցանաց մեծամեծ ցասմամբ բարկանայ ընդդէմ մեղուցելոյն՝ է անզգամական բարկութիւն: Քանզի այնպիսին է որպէս զյիմար ոք, որ ընդդէմ լուսոյ սուսերօք ՚ի մարտ ելանէ: Եւ այսպէս նաև վերնագունից բարկութիւն՝ եթէ իցէ անիրաւ, ՚ի ծոցս անզգամաց դադարի:

11: Մի՛ ասեր թէ զի՞նչ եղև. զի աւուրքն առաջինք բարիք էին քան զսոյնս. վասն զի ո՛չ իմաստութեամբ հարցեր վասն այդորիկ:

Կամի ասել, թէ մի՛ ասեր՝ զի՞նչ է պատ-

ձուն, զի անցեալ ժամանակն, իբր հարիւր ամ յառաջ · կամ երկու հարիւր ամ յառաջ բարեգոյն էր ժամանակն, կամ մարդիք ժամանակին · և կամ սովորութիւն , և այլք նմանք ։ Սոյն զի այսպիսեաց իրաց հարցումն՝ և պատճառաց որոնումն՝ ոչ են խոհեմ՝ հարցմունք ։ ուստի ասէ · զի ոչ իմաստութեամբ հարցեր վասն այդորիկ իրի · և այլն ։ Այս պատճառն՝ թէ վասն էր իմաստունն արգելու զայսպիսի խնդիրս , է այս · զի ոմանք յիմարք ազդեցութեան աստեղաց վերաբերելով՝ խնդրէին զժամանակաց , և ասէին , թէ անցեալ ժամանակն բարւոք եղև վասն ազդին մերոյ , և այժմ՝ չարւոք ընթանայ , և այս ուստի՝ լինի արդեօք ։ և յետոյ ասէին , 'ի յաստեղաց ։ Ըստ այսմ և զանցեալ ամն՝ ներկայի տարւոյն բաղդատեալ՝ ասէին , անցեալ ամն բարւոք ընթացաւ վասն մեր · և այս ամ չարւոք · և այլն ։ Այլ իմաստունն առ 'ի խրատել զայսպիսիս՝ ասէ · յիմարական է խնդիրն և հարցումն զբարութէ, և զչարութէ ժամանակին · վասն զի ամենայն ժամանակ է բարի · և յոյժ կարգաւորեցեալ վասն ամենեցուն 'ի սկզբանէ աշխարհի մինչև 'ի կատարած ։ և եթէ ոմանց մարմնաւոր վնաս ինչ դիպիցի յումեք ժամանակի , նոյնն ևս աստուծոյին նախախնամութեամբն գոլով կարգաւորեցեալ՝ է բարի ։

Այլ չարն , որ առոյգ չար է և վնասակար

հոգւոյ, որ մեղքն, նոյնն ոչ է 'ի ժամանակէն, և ոչ 'ի կարգաւորմանէն ուղ. այլ 'ի չարութենէ, և 'ի թիւրութենէ կամաց մարդոյն. քանզի զայն, որ զմեղսն յորում և իցէ ժամանակի կարայցին գործել մարդիք. որ թէ 'ի հնումն, և թէ 'ի նորումն։ Դարձեալ. մարդիք և մանաւանդ ծերք ունին զայս մոլեկան սովորութիւն, զի միշտ ասեն, թէ հին ժամանակն այլ առաւել բարի էր, և առաւել կատարելութիւնք, և գովելի իրք էին յաշխարհի քան այժմ։ և ըստ այսմ մոլութեան նաև յոմանց իէլացւոց, որք էին 'ի ժամանակս սաղօմնի՝ յիմարաբար ասացեալ լինիւր՝ թէ հին ժամանակն լաւագոյն էր քան զայս ժամանակ. և այս էր սուտ, և յիմարական։ քանզի 'ի ժամանակս սաղօմնի առաւել բարի էր ժամանակն իւրեանց քան զանցեալ ժամանակն. որ և նշանակէր զայս՝ թէ ժամանակն նորոյ օրինի Ք̃ի, որ է Ճմարիտ սաղօմօն, կարի բարեգոյն եղև քան զժամանակն հնոյ օրինին. և զկնի տարածման նորոյ օրինին Ք̃ի՝ որքան առ տարածումն. և որքան առ պայծառութիւն հաւատոյն Ք̃ի միշտ օր ըստ օրէ լաւագոյն եղև ժամանակն ներկայ քան զանցեալն. և այս մինչև 'ի կատարածի։ Քանզի միշտ հաւատն Ք̃ի, և քարոզութիւն աւետարանին. և ա̃ծաբանական գիտութիւն, և ծանօթութիւնք մեկնուէց

ա̃ծ

ա̃ծաշունչ գրոց, և անձուին թուոյ հաւա-
տացելոց, և փառաւորութիւն անուանն Ք̃ի, և պատիւն սրբոց նր̃․ և բազմու-
թ̃ի եկեղեցեաց, և մեծահանդիսութ̃իք կատարմանց խորհրդոց եկեղեցւոյ․ բազմութ̃իք դպրոցաց, և համալսարանաց ա̃ծաբանականաց ուսմանց, և այլք պէս-պէս կատարելութ̃իք որ ա̃օրէ պայծառա-ցան՝ և պայծառանան յոյժ առաւել քան զանցեալ ժամանակս։

Բայց թէ ասիցէ ոք․ ո՞չ է այս ուղիղ․ զի ահա 'ի հայկազան ազգի մերում,' ի հնումն էր առաւել պայծառութ̃ի, թէ 'ի կողմանէ գիտութ̃եց, և եկեղեցեաց․ և թէ 'ի կողմանէ ո և իցէ կատարելութ̃եց վերաբերեցելոյ առ հաւատն Ք̃ի՝ քան այժմ։

Պատասխանեմ, թէ ազգն մեր 'ի մէջ բազմութ̃ե քրիստոնէից փոքրագունեղ մասնիկ մի է, և սակս մեղաց վտարեալ յօտար աշխարհ, և անկեալ ընդ տ̃րութ̃ անհաւատից․ ուստի զարմանք ո՞չ է թէ իցէ այժմ խորդացեալ 'ի պայծառութ̃եց․ և առաջին ժամանակին իւր՝ յորում ունէր զթագաւորութ̃ի, իցէր պայծառագոյն քան այժմ։

Արդ՝ բան մեր ո՞չ է զմիոյ ազգէ, այլ զբոլորէ հօտէն Ք̃ի և զեկեղեցւոյ, և զհաւատոյ նորա 'ի հասարակի․ որ թէպէտ 'ի միում ազգի ոչ երևիցի այժմ այնքան

պայ-

պայծառացեալ, բայց 'ի յայլս բազում անգամ է առաւել պայծառացեալ այժմ, քան թէ լեալ էր հարիւր ամ, կամ հազար ամ յառաջ ։

Մանաւանդ յայտնապէս 'ի ներկայիս 'ի բոլոր Եւրոպիա՝ ուր են այնքան բազմութիւնք թագաւորութեանց քրիստոնէից, տեսանեմք, զի այնքան մեծ բազմութիւնք կրօնաւորաց գոն. նաև 'ի մէջ նոցա ոմանք կարգք կարի խստակրօնք. մինչ զի հարիւրապատիկ աւելի են այժմ թիւք կրօնաւորաց՝ քան զթիւս այնոց կրօնաւորաց որք էին հազար ամ յառաջ քան զայս ։ Այլ 'ի կողմանէ խստակրօնութեան և գոն այնքան խստակրօնք, որք ոչ են պակասք քան զհնոյ ժամանակի ճգնաւորսն. զորոց փարուցն, թէ ո՛րք և ո՛րքան ձաղեն զինքեանս. թէ ո՛րք կանխապէս յառնեն 'ի գիշերի յաղօթս. և թէ ո՛րպէս ոմանք հրաժարեալքեն 'ի մսեղինաց. և թէ ո՛րք ոմանք բոկ ոտամբ փարեն զկեանս նաև 'ի ծանրութեան ձմեռւան, ոչ կարեմ ճառել յայսմիկ փոքրիկ գրքկան ։ Այլ ես թէ ո՛րքան անձինք ազնիւք. զի իշխանք, և որդիք իշխանաց՝ և մեծամեծ փարթամաց թողեալք զամ ինչ՝ լինին կրօնաւորք, և բազմիցս նաև 'ի խստակրօն կարգս մտանեն ։ և 'ի յիւրաքանչիւր տարւոջ զհարիւրաւոր անձինս ազնիւս, և իշխանազունս տեսանեմք և լսեմք թողեալ զամ

զնմ՛ փառս և զմեծութիւն, և մնեալ 'ի յայնպիսի կրօնս, որոց ոչ գոն անկողինք բրդեայք, այլ յարդեայ միայն. և այնպիսիք ազնուազարմք անձինքն 'ի վ՛ր յարդեայ անկողնոյ ննջեն. չուանեայ գօտեաւ գօտեւորին, և զգեստուորին խոշոր ըզգեստուք բրդեղինօք, ոչ ունելով և զշապիկս. և ապրին հացիւ որ մուրացեալ լինի օր ըստ օրէ աստի և անտի. և են բոկոտք:

Արդ՝ մեք զոչէն Ալեքսիանոսէ մինչ ընթեռնումք, թէ եթող զնմ՛ փառս, և հեռացաւ աղքատութե, զարմանամք. բայց այժմ 'ի տարուոջն դհարիւրաւոր Ալեքսիանոսս տեսանեմք 'ի թագաւորութիւս քրիստոնէից, որք թողեալք զնմ՛ փարթամութիւն և զմեծութիւն, հետեւին աղքատութե, մտանելով 'ի յաղքատ կրօնս՝ ենթ հնազանդութե մեծաւորի: Ի յորս երբեմն այնպէս հանդիպի, զի մեծաւոր որ յաղքատ տանէ այնպիսւոյ ումեմն ազնուազարմի հրամայէ և իջնէ 'ի կրօնի, որում մինչ էր յաշխարհի՝ եթէ հանդիպիցիւր՝ մեծաւ խոնարհութբ զքղանցս հանդերձին համբուրէր:

Զնոյնն ասեմ և զդպրութէ, թէ որքան մեծ բազմութիւնք իմաստնոց փիլիսոփայից՝ և ճարտարանից գտանին այժմ, որք հազարապատիկ աւելի են թուով քան զայնս՝ որք էին 'ի հնում ժամանակի:

Այ-

Այսպէս և կարգաւորութիւնք եկեղեցեաց՝ և եկեղեցականաց. և ուսմունք քրիստոնէականի վարդապետութեան. և յաճախ քարոզութիւնք աստուածայնոց բանից 'ի լսելիս ժողովրդեան։

Նաև միահամուռ և համաձայն հնազանդութիւնք ստորնագունից առ վերնագոյնս. որպէս քահանայք առաջնորդաց. և ամենայն առաջնորդք, և եպիսկոպոսունք մեծամեծք՝ քահանայապետին հռովմայ, որ սրբազանի պապին 'ի համայնս զկատարեալ հնազանդութիւն մատուցանեն։ Ա՜յլ զի հազարաւոր մեծամեծ եպիսկոպոսունք 'ի զանազան ազգս և 'ի լեզուս՝ և 'ի թագաւորութիւնս սփռեցեալք 'ի հեռակայ տեղիս՝ 'ի ներքոյ միոյ հրամանի սրբազանի պապին ոգւով չափ եդեալ զինքեանս, զաշխարհս և զգաւառս իւրեանց հովուեն. և միշտ 'ի միութեան պահեն զհօտն Քրիստոսի ընդ իշխանութեամբ միոյ հովուի։

Նա՛ յարէ. Նա՛ ո՛չ գոյ պատգամաւորութիւն յաւուր պատերազմի: ա̃յ, Ա̃ծ զմահն այնպի-սի պատերազմօղ կացոյց ընդդէմ մեր, որ նախապէս ո՛չ առաքէ առ մեզ զպատ-գամաւոր՝ և զծանուցանօղ, թէ ահա յայս ինչ աւուր, և յայն ինչ ժամանակի 'ի պա-տերազմ ելանելոց եմ ընդդէմ ձեզ. այլ յանկարծակի յառնէ 'ի վ̃ր մեր: Որդ՝ ո̃պ եթէ թագաւոր ոք ունիցի զայնպիսի թշնամի, որ միշտ առանց ծանուցանելոյ զժամանակն՝ ելանէ ընդդէմ ինքեան 'ի պատերազմ, 'ի հարկէ մինչ ո՛չ կամի կո-րուսանել զթագաւորութիւն իւր, միշտ զզօրս իւր պարտի ունիլ վառեալս 'ի պա-տերազմ, այսպէս և մարդն՝ եթէ ո՛չ կա-մի

մի կորուսանել զանձն քո՝ միշտ պարտի լինել պատրաստ, և առնել զայն՝ զոր կամիցէր առնել յաւուր մահուան: Եւ՛ աւ այս նաև Տէրն ասաց. Արթուն կացէք, զի ոչ գիտէք, երբ տէր տանն գայցէ. Մարկ. 13. 35: Եւ՛ յարէ. Ոչ ապրեցուցանէ ամբարշտութիւն զներգործօղսն իւր: Այ, ամբարշտութիւն զամբարիշտն ոչ ապրեցուցանէ: Եւ՛ զի ամբարիշտն է ստորանկեալ և ենթակայ ամբարշտութեան. և առ այս սակս ամբարիշտն մերձաւոր և կամ ընկեր և բարեկամ ամբարշտութեան: Եւ նոյն էր եթէ ասիցուք. ամբարշտութիւն զամբարիշտն ոչ ապրեցուցանէ յաւուր մահուան: Վասն զի ոչ սրով. ոչ հրով. ոչ նենգութեամբ, և ոչ հայհոյութեամբ, և ոչ ո և իցէ այլով իւիք չարութեամբ կարէ ամբարշտութիւն ամբարշտին հակառակ լինել ընդդէմ մահու, և ապրեցուցանել զամբարիշտն:

9: Ասէ զայս ամ տեսի միանգամայն. Ի Ժողո- վողս էմ յամ արարածս, որք արարեալ են ’ի ներքոյ արեգական. որոյ իշխան եղև մարդն ’ի վր մարդոյ չարչարել զնա:

Այսինքն, տեսի և զայս. Ի Ժողո- վողս. այ, եստու զմիտ առ’ի հայիլ ’ի բնաւըս ստեղծուածս՝ որք են ’ի ներքոյ արեգական. որոց, այ ’ի մէջ որոց՝ մարդն եղև իշխան և տիրող ’ի վր մարդոյ, չարչարել զնա. այ, ’ի վն չարչարելոյ զևոր ինքն՝ չարչարել զնա:

Արդ՝

Բ. Արդ՝ յայսմիկ բանի զայս կամի ասել. 'ի մտածելն իմ զնմ արարածս ոյ, տեսի 'ի մէջ նոցին և զայս. զի մարդն եղեալ է իշխան, և տէրող, կամ՝ թագաւոր և հրամայող 'ի վ͞ր մարդոյ. և այս բղձակերպութեցեալ լինի 'ի մարդկանց, և կամ համարեցեալ լինի, թէ մարդն լինի իշխող աւ 'ի չարչարել զնա որում իշխէ. կամ աւ 'ի ընդ բռամբ ածել զնա, կամ աւ 'ի վերակայել նմա և զնա 'ի ներքոյ իւր ունել. սակայն մանաւանդ ներհակն սորին է. քանզի իշխօղն մանաւանդ չարչարի՝ քան իշխեցեալն. և այսպէս 'ի վնաս և 'ի չարիս իւր յօժարի նա, որ ձգտի լինել իշխող. և զի համարին մարդիք, թէ թագաւորն ընդ բռամբ ունի զստորադրեցեալս. սակայն մանաւանդ ինքն թագաւորն ընդ բռամբ ամենեցունէ. քանզի աւ 'ի հաճեցուցանել զմիտս այնքան բազմութեան, ստիպի չարչարիլ և աշխատիլ միօք 'ի համայնս գործս իւր. և այսպէս մինչ ինքն համարի վերակային՝ և զժողովուրդն 'ի ներքոյ իւր ունել, մանաւանդ ինքն լինի 'ի ներքոյ ամենեցուն:

Համառօտապէս ծանիր, զի անուանքս այսոքիկ՝ թագաւոր, իշխող, մեծաւոր, և այլն, ըստ այնմ որ հնչեն՝ և ասին, են անուանք իշխողաց և տէրողաց. բայց ըստ որում նշանակեն, մանաւանդ են հնազանդողաց՝ քան իշխողաց: Նոյնպէս և ան_

անուանքս այսոքիկ · ստորադրեցեալ, իշ_ խեցեալ, հնազանդ, և այլն, ըստ արտա_ քին նշանակութե ձայնին՝ առին զստորա_ դրեցելոյ · բայց ըստ ներքին նշանակու_ թեց են մանաւանդ նշանակօղք հրա_ մայողաց, և իշխողաց: Եւ ըստ այսմիկ միաբանի և այն բանն Քրի ՅՍ մերոյ · զոր ասաց · Որ կամիցի ՚ի ձէնջ առաջին լինել, եղիցի ամենեցուն ծառայ · Մարկ. 10. 44:

10: Ի՞նչ յայնժամ փեսէ ղամբարելովն ՚ի գեղեց_ կանս ածեալ · և ՚ի սրբոյն գնացին՝ և առաջ առին ՚ի ճանապարհէ · Հատանի ղէ այնպէս արարին · սակայն և այն ընդդանայնութի է:

Սոփեսքն, մինչ զեղելոց իւրոց յաշխարհի մտածէին, տեսին և զայս · զի ամենք գո_ լով քահանայ, կամ քահանայապետ, կամ վարդապետ, և կամ իմաստուն, որոց ըստ ամէնից կացութեան՝ և տեղւոյն՝ առ զետե_ ղին, և պաշտօնն զոր ունին, է բարի և որք · և հետևաբար նաև ինքեանք պատ_ ճառաւ պաշտօնին, և անուանն ունին զհամբաւ բարի · բայց յիւրեանս ինքեանս և ՚ի գործս իւրեանց են ամբարիշտք · և ՚ի մտանելն իւրեանց մեծաւ փառօք, և հանդիսութբ ածին ՚ի գերեզման առ ՚ի թաղել:

Եւ՞ յարէ · Ի՞նչ ՚ի սրբոյն գնացին: Այս, ոքին ՚ի սրբոյ կացութէ, և ՚ի սրբ տեղւոջէ գնա_ ցին · այսէ, ՚ի միջոյ սրբոց մտանելոյն եղին

յԾէ ·

յցէ . և վասն այսորիկ բոլոր քաղաքն գո_
վէ զնա . և առնու զսուգ , ասելով թէ մեր
առաջնորդն մեր , կամ հայրապետն մեր
մեռաւ : Սակայն ընդունայնութիւն է նաև
այս : Քանզի զի՞նչ օգուտ է 'ի յամբարշ_
տութեն մեռանողին հանդիսաւոր թա_
ղումն . կամ գովութիւն , և կամ սուգն
քաղաքին . և զօր բարի առբերէ նմա 'ի
ո՛չ կացութէն և 'ի պաշտօնէ գնալն 'ի մահ ,
և մեծահամբաւ , կամ՝ բարեհամբաւ գոլն
իւր 'ի կենդանութեն , նաև 'ի մահուան ,
որովհետև վն իւրոյ ամբարշտութեն դա_
տապարտի 'ի դժոխս :

Այլ երբեմն նաև սորին ներհակն լինի .
զի ոք որք մեռանին . և առանց հանդիսու_
թեն և թարց հռչակման համբաւոյ թա_
ղի՛ ոմն զանպիտան ոք . և ոչ ոք է որ առ_
նուցու զսուգ վն նր :

II : Քանզի ոչ գոյ ընդդէմ դառնալ յայն_
ցանէ՞ որք վաղվաղակի գործեն զչար : Վասն այնորիկ
համարձակեցան սիրտք որդւոց մարդկան յանձինս
իւրեանց առնել զչարիս :

Այսինքն , 'ի դատաւորաց ոչ գոն , որք
վաղվաղակի և իսկոյն ընդդէմ դառնայ_
ցեն գործողացն զչար , պատժելով զնո_
սին . վասն այնորիկ համարձակին սիրտք
մարդկանց . այս , մի այսորիկ սիրտք մարդ_
կանց առնուն զմիջոց առ 'ի գործել զչարն :
Արդ՝ այսու բանիւ զդատաւորս և զառաջ

նորդս

նորդս խրատէ՝ փաղփաղակի վրէժխնդիր լինիլ չարեացն, և ոչ թոյլ տալ՝ զի մի ստորադրեցեալքն զհամարձակութի՛ւն գը-տեալ՝ յաճախիցեն 'ի չարիս · մանաւանդ զի դա-տաւորք, և առաջնորդք յառաջ քան զամ՝ զպայմանն պարտին նախահոգալ · զի զչարն անվրէժ ոչ թողցեն · զի մի այնու բոլորի հասարակութեան չարանալոյն պատճառք լինիցին ։ Վասնզի ոչ պարտիզպանն՝ եթէ զմոլեխոտն ոչ քանցիցէ փաղփաղակի՝ 'ի պար-տիզէն, բոլոր պարտէզն 'ի սակաւ միջո-ցի մոլեխոտի, և անպիտան լինի, այսպէս և դատաւորն եթէ զչարսն ոչ պատժիցէ, բոլոր հասարակութի՛ւն ապականի ։

12 ։ Որ մեղանն՝ արար չէր, յայտնեալ է՝ և 'ի վաղուց ժամանակաց · թողուլ գիտեմ եւս՝ մինչև բարին երկնաւորացն տայ · զի երկնիցեն յերեսաց նր̅ ։

Կամի ասել · ամբարիշտքն, և մեղանչօղքն որք գործեն այժմ զչարիս, նաև 'ի վաղուց ժամանակաց զբազում չարիս գործեալք են · և տակաւին կան այժմ, և ոչ են պա-տուհասեցեալք · զի Ա՛ծ երկայնամիտ ե-ղեալ է առ նոսա ։ Նո՛ւ զօրութի մեկնուես իմանի 'ի բառէն զոր դնէ, 'ի վաղուց ժա-մանակաց · որով իմանի՝ թէ սոքա որք այժմ են ամբարիշտք, և կենդանիք են՝ նաև 'ի վաղնջուց գործեալքեն զչար ։ Նո՛ւ կամի ասել, թէ սոցա ոչ պատժելն խոկոյն՝ և տևելն յաջողութե՛ յայտնիկ կենի՝ ոչ է 'ի

յօ-

յօգուտ, և 'ի բարին իւրեանց. այլ 'ի յօ-
գուտ և 'ի բարին երկիւղածաց: վասն զի
երկիւղածաց՝ թէ վասն այսորիկ՝ զի երբեմն
ներելաբար տանին. և թէ վասն այսորիկ՝
զի 'ի յուսացեալ բարւոյ կայուն մնասցեն՝
պիտոյ են ոմանք նեղութիւնք՝ և վիշտք,
որովք 'ի փոքրիկ մեղացն սրբեսցին, և 'ի
բարւոյ հաստատուն մնասցեն: Ուստի ամ-
բարիշտք, որք զայնքան բազում չարիս
գործեալքն, պիտոյ է նոցա տեսել յաշ-
խարհի 'ի յօգուտ և 'ի բարին սրբոց: Այս
որոյ ասէ զկնի:

Քանզի գիտեմ ես՝ զինչ է բարին երկիւղածաց:
Իբրու թէ ասիցէ. դուք ասէք, ընդէ՞ր
ամբարիշտք տեսեն յաշխարհի յաջողութիւն,
և երկիւղածքն տանջին. և ոչ գիտէք ըզ
պատճառն. բայց ես գիտեմ՝ զի այն է
'ի բարին երկիւղածաց: Նաև տանջելն
և չարչարելն երկիւղածաց՝ է 'ի բարին
իւրեանց, և ոչ 'ի չարս: Քանզի որպէս
փայտն որ աթոռ թագաւորի լինելոց է,
մինչ հարթի և տաշի՝ է 'ի բարին իւր. և
երկաթն որ տաշէ զնա սրութեն, նաև նորին
սրութիւն է 'ի բարին և 'ի յօգուտ փայտին՝
որ լինելոց է աթոռ թագաւորի. այսպէս և
երկիւղածք որք չարչարին, և ամբարիշտքն
որք չարչարեն, է 'ի յօգուտ երկիւղածաց:
Վասն զի այնու եւս առաւել բարեգործանան՝
և երկնչին յերեսաց Տեառն: Իսկ առ այս յաւե-
լու և զայս. Որ երկիցեն յերեսաց Տեառն:

13։ Եւ ոչինչ գոյ բարի ամբարշտին, եւ ո՛չ յերկարեսցէ աւուրս իւրեւ ընդ հովանեաւ նը, որ ոչ է երկիւղած յերեսաց այ։

Այսինքն, ամբարշտաց ընդերկար ապրելն, և յաջողութիւն ոչինչ կերպիւ է 'ի յօգուտ, և կամ 'ի բարին նց․ զի երկայնութի աւուրց նց ոչ է ըն հովանեաւն այ․ քանզի աւուրք մեր, և երկայնութի նոցա յայնժամ են օգտակարք. և 'ի բարին մեր՝ յորժամ են ընդ հովանեաւ շնորհացն այ․ ուստի այնպիսի երկայնութի աւուրցն ոչ ամբարշտին է օգուտ․ և ոչ նմա, որ ոչ է երկիւղած յայ։

Սակայն գիտելի է․ զի այս տուն՝ ըս այլոց թարգմանութեանց ունի այլով շարադրութիւն, որ ունի զայս զօրութի․ թէ երկայնութի աւուրց ամբարշտին՝ նաև այնց՝ որք ոչ երկնչին յայ, են իբրև զհովանի․ որպ զստուեր։ Արդ՝ որպ ստուերն է ոչինչ և ունայն, այսպէս և երկայնութի աւուրց նց․ քանզի ունելով զաւուրս բազումս՝ ոչ ապաշխարեն, այլ մանաւանդ յաճախեն 'ի չարիս։ Եւ ևս որպ ստուերն ոչ է մարմին, այլ իբրև զպատկեր մարմնոյ․ այնպէս և երկայնութի աւուրց նց, ոչ է օգտակար և արդիւնաւոր երկայնութի աւուրց, այլ որպ զպատկեր և զստուեր երկայնութե աւուրց։ Արդ՝ թէ այս մեկնութի, և թէ առաջինն՝ զնոյն բան ունին։

զի աւուրքն, որք ոչ զատուցեալ են և առանց արդեանց, ընդ հոլովմանն իւր ոչ են. և աւուրքն' որք ընդ հոլովմանն իւր ոչ են, ոչ զատուցեալ ունայնք են. և ունայնութիւնք անցանեն:

14: Է ընդունայնութիւն, որ եղեւալ է ի վերայ երկրի. Վասնզի են արդարք, որոց ժամանեն նոցա իբրեւ զգործս ամբարշտաց. և են ամբարիշտք, որոց հասանեն այնոցիկ' իբրեւ զգործս արդարոց. ասացի թէ սակայն և այն ընդունայնութիւն է:

Կամի ասել, թէ նաեւ այս է ընդունայնութիւն. զի երբեմն արդարոց հանդիպին այնպիսի չարիք և վիշտք և պատիժք, որք երեւին այնպէս' ոչ թէ գործեալք իցեն զգործս ամբարշտաց: Եւ ներհակ այսմ հանդիպին երբեմն ամբարշտաց այնպիսի փառք, համբաւ բարի, և յաջողութիւն. որք երեւին այնպէս' ոչ թէ գործեալք իցեն զգործս արդարոց: Եւ զայս առ եզրափակումն վերասացելոյն դնէ. և որ ինչ ի վերոյնդր մեկնեցաւ, թէ յաջողութիւնք ամբարշտաց ոչ են ի յօգուտ նոցա, այլ արդարոց. և արդարոց նեղութիւն է ի յօգուտ իւրեանց, Նաեւ թէ' որպէս զատուցեալ ունայնք են յաջողութիւնք, և աւուրք ամբարշտաց, այնք բնաւք ենթիմանին նաեւ յայսմիկ բանի. ուստի և աստ ունայն գոլ ասէ զայնպիսիս յաջողութիւնս ամբարշտաց:

15: Եւ

15։ Եւ ես գովեցի համանգամայն զուրախութիւն․ վասնզի ոչինչ է բարի մարդոյ 'ի ներքոյ արեգա-կան․ բայց ուտելն և ըմպելն, և ուրախ լինելն։ և այն երթայ ընդ նմա 'ի վաստակոց իւրոց յաւուրս կենաց իւրոց․ զորս ետ նմա ա̅ծ 'ի ներքոյ արեգական։

Զայսմանէ բանէ լիապէս մեկնեցաւ 'ի վերանդր․ 3․ գլխոյ․ 12։ նաև 5․17։ և նոյն բանք են։ տես անդ։ Բայց զայսմանէ, որ ասի աստէն, թէ այն երթայ ընդ նմա 'ի վաստակոց իւրոց, ծանիր․ զի որք զընկալեալ բարիսն յա̅յ․ զ̅ր, զկեանս, զինչս, զանուն, զփառս, զառողջութի՛, և զայլ ոմն անցաւոր բարիս՝ միշտ 'ի գործ ածեն 'ի փառս ա̅յ, և համդարտութե̅ վայելեն զայնս առանց մոլութե̅ ագահութե̅, և կամ գոռոզութե̅, և այնու առնուն զբաժին իւրեանց՝ զոր պարգևեալ է նց Ա̅ծ, այնպիսիքն նաև արդիւնաւորին, և զվարձս արդեանց շահին․ և 'ի մեռանիլն՝ արդիւնն այն երթայ ընդ նոսա։

Ո̅ր զի ո̅ր նա որ է տնտես 'ի վե̅ր ընչից ա̅ն իւրոյ, եթէ բարեպէս և ըստ կամաց ա̅ն արասցէ զտնտեսութի̅ն, և 'ի ժամու տայցէ զկերակուր ծառայից ա̅ն իւրոյ, առնու զյատուկ վարձս տնտեսութեան իւրոյ, այսպէս և մեծատունն, որ զա̅մ զոր ունի՝ եթէ յա̅յ առեալ համարայցէ, և զինքն 'ի վե̅ր այնց ո̅ր զտնտես և զմա-տակարար ունիցի, և ըստ կամաց և պատ

ուիրանաց ոն տրամաբաշխեցէ զինչս իւր՝ և մատակարարեցէ ինքեան, ընտանեաց, և աղքատաց, և զինքն արձակապէս Տր ընչից ոչ համարեցի, և զկեանս իւր, կամ որդւոցն՝ յոյ միայն, և ոչ 'ի յընչից պահել համարեսցէ, զբաղումն փորձս և զարդիւնս մն իւրոյ բարւոք մատակարարութեան տանի ը ինքեան 'ի մեռանելն իւր:

16: Որ միանգամ եդու զսիրտ իմ ճանաչել իմաստութիւն. եւ տեսանել զզբաղումն որ եղեւ 'ի վր երկրի. զի 'ի տուէ եւ 'ի գիշերի զքուն յաչս նորա ոչէ տեսանել:

Կամի ասել զայս: Նաև եդու զսիրտ իմ, իբր զմիտս առ 'ի ճանաչել իմաստութիւն, և տեսանել զզբաղումն, և կամ զունայն անհանգստութիւն մարդկանց՝ որք լինին 'ի վր երկրի: Իբրու թէ ասիցէր. եդու զմիտս առ 'ի տեսանել՝ թէ մարդիկ որքան ունայն զբաղմունս և զանօգուտ, կամ նաև զվնասակար շփոթմունս և զանհանգստութիս ոգւոյ և սրտի առբերեն 'ի վր ինքեանց 'ի ձեռն յիմարութեան: և մինչ եւ զսիրտն դնել՝ եգիտ զոմանս, որք այնքան տռճեալքէին զսիրտս իւրեանց 'ի զբաղումն, մինչ զի աչք նոցին ոչ 'ի տուէ, և ոչ 'ի գիշերի կարէին ընդունիլ զքուն. և այսու ոչ տեսանիւր քուն 'ի յաչս նց: Նո՛ այսպիսի զբաղումն, որ նաև զքուն աչացն խափանէ, է բազմապատիկ:

Մերթ

Մերթ լինի պատճառաւ ագահութեան , կամ պատճառաւ սիրոյ ցանկութեան մարմ_նոյ . և կամ պատճառաւ նախանձու և վրէժխնդրութեան . և այսպիսի զբաղումն
բարձող զքուն աչաց՝ է չար:

Մերթ լինի և վ՟ն իրաց , որք թէպէտ իցեն ըստ ինքեանց բարիք , բայց մինչ ոչ լինին ՚ի փառս ա՟յ՝ են ունայնք, թէև ոչ իցեն չարք . որպիսի էր անքուն մնալն արիստոտելի առ՚ի շահել զգիտութիւն , և առ՚ի մտածել զիրաց բնականաց , և ըզ պատճառս նոցին : վ՟ն զի պատմի զնմա_նէ ,թէ ՚ի գիշերի յորում պարապէր ու_սման , ո՟պ զի մի յաղթիցի ՚ի քնոյ՝ և ընկղ_միցի ՚ի նմին , ունէր միշտ ՚ի ձեռին իւր_ում զգնդակիկ մի , ո՟պ զի եթէ ՚ի քնոյն յաղթիցի , զգնդակիկն այն ՚ի ձեռանէն անկանելով՝ վերստին զգաստասցի, և ուս_
ման պարապեսցի:

Մերթ և լինի ոչ տալն զքուն աչաց՝ և զնինջ արտևանաց ՚ի փառս ա՟ծ միայն, և վ՟ն աղօթելոյ , և օրհնելոյ զա՟ծ . կամ վ՟ն պարապելոյ ՚ի յուսումն և ՚ի շարադրութիւն բանից ա՟ծային վ՟ն փառաց ա՟ծ , և վ՟ն օգտի ժողովրդեան . և այսպիսի անքուն մնալս է բարի: Բայց գիտելի է, զի աս_տէն սաղմոն զանքուն մնալն ագահաց՝ ցուցանէ գոլ ունայնութիւն , և զարմաց_ման արժանի . զի ՚ի զուր և թարց պատ_ճառի զրկեն զինքեանս նաև ՚ի հանգս_

տութ՛ե քնոյ : Ընդ սոյն իմանին և նո_
քա , որք վ՟ն ո՛չ իցեն այլոց մոլեկանաց
իրաց անքուն մնան :

17 : Եւ տեսի զ՟ն արարածս ա՟յ . Զանազանէ ո՛չ
կարասցէ մարդ գտանել ինչ միանգամայն զարարածս
ն՟ր . որք արարեալք են 'ի ներքոյ արեգական : Որչափ
միանգամայն ջանասցէ մարդ խնդրել՝ և ո՛չ գտցէ .
ջանիցէ որչափ արասցէ իմաստունն ( ո՟ր ասացի
իմաստութեան ) գիտել , ո՛չ կարասցէ գտանել :

Ստոյն կամի ասել , թէ տեսի . ո՟ր գի_
տացի զի մարդն որքան առաւել 'ի գե_
րազանց աստիճանի գիտուն իցէ՝ ո՛չ կա_
րէ միանգամայն , ո՟ր ո՛չ կարէ զ՟ն արա_
րածս ա՟յ , կամ զիւրաքանչիւրոյն գիտել
և ճանաչել : ո՟ր ո՛չ կարէ զբանս և զպատ_
ճառս ամենից իրաց լիապէս և ո՟ր որում
են , ըմբռնել : վ՟ն զի զորքանս և գիտիցէ
որ , տակաւին մնասցեն անթիւք , որոց
զբանին և զպատճառսն անգիտէ : Այս զայս
ասելով՝ զերկուս համանշանէ :
Նախ՝ զտկարութիւն մարդկային մտաց ,
որ ո՛չ ունի զայնքան ուժ , որով գտանէ
զ՟ն բնական և զմարմնաւոր ստեղծու_
ածս , և զբանս նոցին ճանաչիցէ լիապէս ,
թէ վ՟ն է՞ր պատճառի այս ինչ իր է այս_
պէս , և այն ինչ իր այնպէս . և կամ թէ
ո՞պ՝ և որո՞վ կանխէ յարաբերիցն բնաւքն
առ իրեարս , և զանազանին : Այս զի թէ_
պէտ սոքա ամենեքեան են 'ի ներքոյ բա_
նի

նի մարդոյն՝ գոլով 'ի վայր քան զմարդն․ բայց մարդն ոչ կարաց և ոչ կարասցէ զընաւոն ձևնաչել : Իսկ զորքանս մինչև ցայս վայր ձևնաչեցին և ծանեան իմաստունք, զընաւոն 'ի մի վայր գումարեալ գոնէ ոչ են հազարերորդ մասն բնաւից գիտելեաց : այլ դրեթէ ամ գիտացեալք առ այնս՝ որք վերամնացեալքեն գիտելիք, այնպէս բաղդատին՝ որպէս մի սափոր ջուրն առ համատարած ջուրն ովկիանոսի : Վա̃ որոյ մարդն ձևնաչեալ այսու զտկարութի մտաց իւրոյ՝ հարկաւորապէս պարտաւորի ստորարկել զձևնաչումն իւր ա̃ծայնոյ նախախնամութեան, և ոչ յանդգնիլ առ 'ի զննել, թէ վասնէ՞ր Ա̃Ծ զայս ոք արար փարթամ, և զայն ոք աղքատ․ կամ սմա յաջողեաց, և նմա ոչ : Վա̃ զի զայսպիսեաց գիտելն՝ ոչ է 'ի վայր քան զմեզ․ այլ 'ի վեր : Արդ՝ եթէ զայնս որք ստորև մեր էին՝ ոչ կարացաք գիտել, զիարդ ուրեմն զայնս որք 'ի վեր քան զմեզ են՝ գիտել կարասցուք :

Երկրորդ՝ համմնչանէ զկատարելութի տիեզերի․ յորում Ա̃Ծ զայնքան զարմանասքանչ կարգս և զհամեմատութիս եդ, և զպէսպէս յարաբերութիւնս իրաց առ իրեարս, և զանթիւ վերահայեցմունս, և այնոքիկ ամենեքեան շարակարգեցեալք առ վախճան, մինչ զի մարդիք 'ի սկզբանէ աշխարհի մինչև 'ի կատարած՝ որքան

և աշխատիցին և արտահանիցեն յայնց զգիտութիւն, վերահայեցմամբ մնացելոյն՝ գիտացեալքն լիցին փոքրագունեղ մասնիկ մի անգիտացելոյն։

Նոյն սոյնս ցուցանի նաև այսու. զի մեք զանթիւ իրս տեսանեմք յաշխարհի, որոց զպիտոյութիւն, և կամ զվախճանն առ որ ստեղծեալէ զնոսա Ա՛ծ՝ անգիտանամք. և այսու երևին մեզ իբրու աւելորդք, և առանց վախճանի. սակայն եթէ այնք իրք ունիցէին զմիտ և զլեզու, այնպէս յանդիմանէին զմեզ, և յամօթ առնէին ցուցանելով զպիտոյութիւն իւրեանց՝ և զվախճանն, մինչ զի ափիբերան լինէաք։

Ո՞չ պատմի 'ի յառասպելս, թէ յաւուր միում շունն ասաց ցձետն իւր, թէ զի՞նչ ես դու որ կախեցեալ կաս զինէն, և 'ի զուր բեռնաւորեալ զիս՝ ծանրութիւն իմն եղեալես ինձ։ Քանզի դու ո՛չ աչք ես, ո՞չ զի տեսութեան իմոյ ծառայիցես. և ո՛չ ականջ՝ զի լսողութեան. ո՛չ ոտք ես՝ զի ընթացմանս օգնիցես. և ո՛չ բերան՝ զի առ հաչումն շարժիցիս. ո՛չ ըռունգն ես, զի հոտառութեան ծառայիցես. և ո՛չ ատամունք, զի առ կրծումն ոսկերաց օժանդակիցես։ Ուրեմն ըստ ամ̃ի անպէտ ես, և առանց իրիք օգտի զիս բեռնաւորես։ Պատասխանի ետ ձետն, և ասէ. ո՞վ դու անմիտ և անբան, որ ոչ գիտես զբարին քո, և այնու եղեալես զրպարտող. և

այդ_

այդքան զօրաբան ։ Ո՛չ ապաքէն ես եմ որ պահեմ զքեզ 'ի չար խայթոցաց ճանճից և պիծակաց, որք եթէ ինև ոչ լինիցէին հալածեցեալք 'ի քէն, վաղուրեմն 'ի ձեռն խոցոտածոց նոցին սատակեցեալ էիր ։ Ո՛չ ապաքէն ինև շողոքորդես զՏէր քո, և զըն_ տանիս նր, յորոց 'ի ձեռն շողոքորթութե ընդունիս զոսկր և զհաց ։ ո՛չ ապաքէն ես եմ որ ո՛չ միայն զարդարեմ զքեզ բոլոր, այլ նաև ծածկեմ զառականս քոյս. որք եթէ ինև ոչ լինիցէին ծածկեցեալք, խայտառակութի քո յայտնի եղեալ ամե_ նեցունց՝ յամենից հալածեցեալ լինէիր ։ Նա՛ զայս ամ մինչ լուաւ շունն՝ զամօթի հարաւ յոյժ ։ Արդ՝ ըստ այսմ օրինակի և նոքա՝ որոց թուէին ոմանք իբրք աշխար_ հիս աւելորդք, եթէ զպատճառն գիտի_ ցէին, զամօթի հարկանէին ։

Նա՛ յարէ · Զոր մանկամայն ճանաչէ մարդ խնդրել՝ և ո՛չ գտցէ · յանդի որչափ արասցէ խմա_ տունն գիտել (որ, որչափ ասասցէ, կամ ա_ ռաջադրեսցէ իմաստութն և գուն դոր_ ծեսցէ գիտել) ո՛չ կարասցէ գտանել։

Այսինքն, որքան առաւել ջանասցէ մարդն գիտել՝ և նկրտեսցի վերահասու լինիլ ամ իրաց, այնքան առաւել տեսանէ զինքն հեռացեալ 'ի գիտելոյ զընաւոն. և այսէ ասելն՝ ո՛չ գտցէ ։ Նա՛ առ այս վերածի և այն՝ զոր ասէ . ո՛չ կարասցէ գտանել։ Վասն զի որքան ոք առաւել զարգանայ 'ի գի_

տու_

տութին՝ և յառաջ ընթանայ , այնքան առաւել ճանաչէ զինքն հեռացեալ գոլ 'ի գիտելոյ զամ. և այսպէս ոչ կարասցէ գտանել զգիտութին ամենից իրաց . և մանաւանդ զայնս՝ որք են գաղտնիք այ , և կամ գաղտնիք բնութե։

## ԳԼՈՒԽ Թ.

Յաղթեն գլխոյ՝ յայնմանէ , ոչ եարբէ , և չարբէ. յաջողութէ , և անյաջողութէ համատարածէս հանդերձեն եարեգալորեն՝ և ամենայորեն մահաբերէ , թէ ողոք գէտէ , մերձեօք ոերոյ թէ արելութէ եղէ արժանէ. այլ համայնք պահէն 'ի յառաջագայն անպայտ։ Աւան այսորէն ընմաստնոյն է ջանալ յանցէն հաւնուլ զղայծառութէ , զմարբութեան , և զգործս եարեաց. մանաւանդ ոչ որպէս ցեաևք որսացեալք լինեն յանցեալ , այսպէս մարդիք 'ի չարութէ ժամանակին։ Մերձապէս 'ի 14. դան ցուցանէ , թէ ընմաստութէն գերաղանցէ զհրօրեղութե. և առաջայն մինչ է 'ի յաղթօղս , ոչ համարի եր ինչ 'ի մարդկանց։

## ※ ԲԱՆ ※

Զի զամ զայս եդու 'ի սիրտ իմ . և սիրտ իմ ետես զայս ամ . Վասն զի են արդարք և իմաստունք . և գործք իւրեանց 'ի ձեռին այ են . քանզի սէր եւս՝ և ատելութիւն ոչ գիտէ մարդ։

## ※ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ※

Այսինքն, զորս ասելոց եմ, զննածն ե_դու 'ի սիրտ իմ առ'ի քննել և որոնել տրամաբանելով . և այն իմ ետես, թէ և ճա_նաչեալ գիտացի զայսոսիկ . քանզի թէ_պէտ 'ի մէջ մարդկանց են բազումք ար_դարք և իմաստունք, որք նաև ունին լի գործս իմաստութե՛ և արդարութե՛ գոր_ծեցեալ . սակայն այնց ամենից գործոց դատաւորն գոլով Աձ, բնաւք գործք նո_ցին որքան և բարեպէս և իմաստնաբար լիցին գործեցեալք՝ են 'ի ձեռին Այ . և այսու յինքեանք արդարքն և իմաստունքն ոչ զսէրն գիտեն, և ոչ զատելութի . այսինքն, ոչ գիտեն զինքեանս՝ արդեօք սիրոյ լիցին արժանիք, թէ ատելութե։ Վասն զի թէ_պէտ գործեն բարեպէս, բայց մինչ դա_տաստանն 'ի ձեռին այ է, ոչէ կարելի նց գիտել զինքեանս արժանի սիրոյն Այ, որով Աձ սիրեսցէ զնոսա, և պսակեսցէ փա_ռօք . և կամ արժանի ատելութե, որով

դա_

դատապարտիցէ ։ Իսկ մինչ արդարք եւ իմաստունք վերահայեցմամբ առ Այծ՝ ոչ գիտեն զինքեանս՝ թէ արդեօք սիրոյն Այ եւ փառաց յաւիտենականաց իցեն արժանիք, թէ ատելութեան Այ, եւ դատապարտութեան, հարկաւոր է զի նաեւ ոչ յայսմանէ աշխարհէ խնդրիցեն զփառս, եւ զհանգիստ, կամ զպատիւ վն ինքեանց ։ Քանզի մեծագոյն յիմարութիւն է մարդոյ ոչ Ճանաչողի զինքն արժանի պատուոյ, խնդրել զպատիւ · ոչ գիտողի զինքն արժանի հանգստեան, որոնել զհանգիստ · անգիտողի զինքն արժանի փառաց, պահանջել զփառս · եւ ոչ երբեք Ճանաչողի զանձն իւր արժանի գովութեան, կամ սիրոյ, սպասել 'ի մարդկանէ ընդունել զգովութիւն, եւ ակն ունել սիրել յամենեցունց ։

2 ։ Ամենայն ինչ առաջի երեսաց նոցա է · եւ ընդունայնութիւն է յամենեսեան · դիպուած է արդարոյն՝ եւ ամբարշտին · բարւոյն՝ եւ չարին · սրբոյն՝ եւ պղծոյն · այնմ որ զոհիցէ, եւ որ ոչն զոհիցէ ։ Որպէս բարին, եւ որպէս յանցաւորն ( այս այնպէս եւ յանցաւորն · ) որպէս որք երդնուցուն, եւ որպէս որք երկնչին յերդմանէ ։ այս, որք երդնուցուն, նոյնպէս եւ որք երկնչին յերդմանէ ։

Մինչ 'ի վեր անդր ասաց, թէ նաեւ արդարն ոչ գիտէ՝ արդեօք սիրոյ իցէ արժանի, կամ ատելութեան, աստէն առ նոյնն յաւելեալ՝ ասէ · Ամենայն ինչ որ առաջի ե_

րե_

րեսացէ, ընդունայնութի է: Այսինքն, ամ ինչ որ ապագայ է, անստոյգ է: Արդ Ած այնպէս կամեցեալ է, զի ո՛ և իցէ մարդ ոչ գիտիցէ, թէ զի՛նչ հանդիպելոց է իւրեան ՚ի յապագայն: Եւ այսպէս ամենեցուն՝ յի թէ արդարոց, և թէ մեղաւորաց՝ հաւասարապէս անստոյգ են ապագայ դիպուածք, որք գալոցք են ըստ կարգաւորման այ: Արդ մինչ յաճելու, Բարւոյն՝ Նշարէն, և այլն, զնոյնն ցուցանէ. իբրու թէ ասէ, հաւասարապէս անգէտք են զապագայից՝ թէ բարի մարդն, և թէ չարն. թէ սբն, և թէ պիղծն, թէ բարեպէս զոհ մատուցանօղն այ, և աղօթասէրն. և թէ ոչ զոհօղն, և ծոյլն. թէ արդարն և առաքինին, և թէ յանցաւորն և անիրաւն. թէ նոքա՝ որք զուտ երդնուն, կամ ՚ի յանպէտ տեղիս երդնուն, և թէ նոքա՝ որք երկնչին ՚ի սուտ և ՚ի յունայն երդմանց: Արդ Ած վա այսորիկ արգել ամենից զգիտութի ապագայից, զի արդարքն յերկիւղի Այ մնացեալք, միշտ աշխատիցին առ ՚ի յառաջադիմել ՚ի բարին, և ոչ կասեսցին ՚ի բարւոյն. և ամբարիշտքն տախպեսցին ապաշխարել, և զերկիւղն այ յանձինս իւրեանց ձգել:

3: Այս է չար յամ՝ որ արարեալէ ՚ի ներքոյ արեգական. զի դիպուածք են յամենեսեան. քանզի սիրտք որդւոց մարդկան լցան ( յի ընտանին ) չա-

րու-

բութիւն · Նշանաւորութիւն` (որ եւ արհամարհումն) 'ի սիրտս նոցա 'ի կեանս իւրեանց · նշանէ նոցա առանձնութեան :

Կամի ասել · այսէ չար · որ թշուառութի՛ւն եւ ողորմելի գոլ մարդոյն 'ի մէջ այլոց ու_նայնուեց · զի դիպուած է յամենեսեան · որ զի ամենայնոց հանդիպի մահն, եւ զե_րաժամանէ · եւ զի՞ այսօրինակ սիրտք մարդ_կանց ընանին չարութ · որ ցածօք եւ չար_չարանօք · եւ արհամարհումն 'ի սիրտս, որ զզուումն եւ տառապանք են 'ի սիրտս նոցա 'ի կեանս իւրեանց · եւ այնու կեանքն նոցա լցեալ լինին արհամարհանօք :

Այս կենաց մարդոյն արհամարհանօք ընա_նիլն է այս, զի 'ի բնաւս գործս իւր` զորս ոչ առնէ 'ի փառս այ, այլ առնէ կամ` 'ի փառս մարդկան, եւ կամ` 'ի յախտից իւրոց շարժեալ, արհամարհէ զնա` եւ զպատ_ուիրան նորա · եւ այնու նաեւ ինքն արհա_մարհի յայ : Այս բաց յայսմանէ` մինչ ոչ գործէ 'ի փառս այ, բոլոր կեանքն լինի շտեմարան դատնութե եւ արհամարհա_նաց անձին իւրոյ · վասն զի այնու նաեւ զիւր ինքն արհամարհէ, եւ դատնութե ցուցանէ · ոչ զկատարելի ոք, որ ոչ միայն զայլս, այլ նաեւ զմարմին իւր խածանէ · վն զի ամ` մեղաւոր է դահիճ իւրոյ ինք_եան : Այս զինի այսպիսւոյ դատն կենաց իւրոյ երթայ 'ի ձեռն մահուան 'ի դե_

րեզ _

րեզմանս առ մեռեալս ։
Որդ՝ այսքան մեծագոյն թշուառութիւն
կենաց մարդոյն, զոր ստորագրէ իմաս_
տունն, միշտ իմացեալ լինի վ՟ն նց՟՝ որք
սիրեն զաշխարհ, և զփառս նր՟ ։ և յարեն
'ի ժամանակաւորս ։ և 'ի ձեռն մամոնայի
անիրաւութե՟, այ՟ն 'ի ձեռն անցաւոր և ան_
կայուն կենաց ոչ ստանան ինքեանց զբա_
րեկամս, որ՟ զի 'ի մեռանիլն իւրեանց ըն_
կալեալ լիցին 'ի կեանս յաւիտենականս ։
և ոչ իմացեալ լինի վ՟ն արդարոց և արանց
բարեաց ։ Քանզի թէպէտ նաև որքան
առ նս՟, թշուառութ՟ լցեալ է կեանս
այս ։ բայց նոքա զփոյթս թշուառութեց՟
կերակուր կենաց առնեն ինքեանց ։ և ոչ
խայթին յայնմանէ, ըստ օրինակի ըղտու ։
որ փշովք առաւել պարարի՝ քան այլովք
իրօք ։ և այսպէս կեանքն արդարոց նաև
յայսմիկ թէ լցեալէ փառօք և պատուով ։
զի միշտ պատուեն և սիրեն զնս՟ ։ և այ_
նու սիրեն 'ի նմանէ ։ Եւ զկնի մահուան՝
թէպէտ մարմնով գնան 'ի գերեզմանս ։
բայց հոգւով ոչ գնան առ մեռեալս հոգ_
ւով՝ որք են 'ի դժոխս, այլ առ կենդա_
նիս հոգւով՝ որք են 'ի յերկինս ։ Սակայն
մեղաւորք ոչ միայն մարմնով գնան 'ի գե_
րեզմանս, այլ նաև հոգւով գնան առ մեռ_
եալս ։ այ՟ն առ դատապարտեցեալս ։ և առ
այս ասէ իմաստունն ։ գնան առ մեռեալս ։

4. Սակս զի ո՞վ է՝ որք հաղորդք են ամ կենդանեաց. Գոյ յոյս, թէ շուն՝ որ կենդանի է՝ լաւ է քան զառիւծ մեռեալ։

Կամի ասել. ո՞ կարէ լինել ՚ի մէջ մարդկանց՝ որ հաւասար ընդ ամ կենդանեաց կալցէ զկեանս, և ապրեսցի ընդ ամենեցուն. ո՛չ, մինչ ինքն՝ այսօր յիսուն ամաց է, և յայնժամ ծնցի յաշխարհի երեխայ մի, ապրեսցի ընդ նմա՝ որքան ապրի երեխայն այն. նաև վաղիւն մինչ ծնցի այլ ոք, որքան և նա ապրի՝ ապրեսցի և ինքն. և այսպէս հետևաբար՝ որքան նոր անձինք ծնանիցին՝ ընդ ամենեցունց կալնուցու զկեանս. և մինչ յամ հարիւր ամի ձս ՚ի հին մարդկանց դատարկացեալ՝ նոր մարդովք լնանի, ինքն մնալով կենդանի՝ ը ամենից այնոցիկ կալնուցու զկեանս. արդարև ո՛չ ոք կարէ գոլ այսպիսի։ Նա՛ յարէ. Գոյ յոյս։

Կամի ասել, միթէ գո՞յ յոյս. արդարև ո՛չ գոյ նաև յոյս՝ զի ոմն մարդ ընդ ամենից կենդանեաց՝ որք գան յաշխարհ՝ կալնուցու զկեանս. նաև ոչ ոք՝ որքան և իցէ յիմար՝ յուսայ զայս։ Արդ՝ մինչ այսպէս է, դիցուք՝ թէ դու թագաւոր ոմն իցես, կամ իշխան ոք հզօր և փարթամ. արդեօք կարէ՞ս, կամ յուսա՞ս ընդ ամենից կենդանեաց կալնուլ զկեանս. այս ստոյգ է, զի ո՛չ յուսաս, և ո՛չ կարես։ ուրեմն զկնի

քոյ

քոյ մինչ ծնանի գռեհիկ ոք, և կամ աղ_
քատ և նուաստ ոմն, նա է կենդանի, և
դու մեռեալ. արդ՝ ասա ո՞ է լաւ. դո՞ւ,
թէ նա ։ այս յայտնի է, զի լաւ է գռեհիկ
աղքատ, և նուաստ մարդն՝ որ իցէ կեն_
դանի, քան զթագաւոր ոք հզօր և փառ_
թամ՝ որ իցէ մեռեալ ։ Նոյ՛ որքան առ
այս՝ դնէ իմաստունն զառակն զայն, թէ
շուն, ՚ի, քանզի շուն, որ կենդանի է, լաւ է
քան զառիւծ մեռեալ ։ Վասն որոյ՝ որքան և
հզօր իցէ ոք, կամ՝ ազնիւ, և կամ փառ_
թամ. և ՚ի յաչս ամենեցուն փառաւոր,
մահն առնելոց է զայս՝ զի ո՛ և իցէ մարդ
վայրագոյն կամ նուաստ և աղքատ՝ գո_
լովն կենդանի՝ իցէ լաւագոյն քան զնա ։
Նոյ՛ այս միտիւ վերաբերի նաև առ այս .
լաւագոյն է տկարն և յիմարն, որ ՚ի ձեռն
խոնարհութեան և շնորհաց Տ՟ն կենդանի է,
քան զփառաւորն, և զհզօրն, և զիմաս_
տունն, որ ունեցեալ կատարելութ՟ն
հպարտացեալ՝ է ոգ՟ւ զառիւծ մեռեալ ։
Ըստ այսմ՝ և դեւն՝ թէպէտ է հզօր, բայց
է ոգ՟ւ զառիւծ մեռեալ առաջի խոնար_
հին, որ է յոյժ նուաստ և տկար յինքեան,
բայց կենդանի. և այնու առաւել հզօ_
րագոյն քան զդեւս. զորս ՚ի փողոյն կալ_
եալ՝ պատառէ . ոգ՟ւ խոնարհն Պաւլթ-
զերևելի զարջս, և զառիւծս ։

5 ։ Բանզի կենդանիքն գիտեն՝ թէ մեռանելոց են. և մեռեալքն ոչ են գիտողք՝ և ոչ ինչ. և ոչ ևս գոն նոցա վարձք. զի մոռացաւ յիշատակ նոցա։

Այսինքն, կենդանիք գիտելով զայս՝ թէ մեռանելոց են՝ կարեն ուղղել զվարս իւրեանց, և յանձինս իւրեանց ձգել զերկիւղն այ̃. և այնու 'ի մեղաց զորս գործեալ են, ապաշխարել. և առ գործս բարեաց յառաջադիմել. և այսու ստանալ առաջի այ̃ զվարձս. և ած̃ այնու յիշէ զնոսա. և ոմ̃ զհաւատարիմ ծառայս իւր նախախնամէ, տալով նց̃ զշնորհս որքան են 'ի մարմնի. և զկնի մահուան մուծանէ զնս̃ 'ի կեանս յաւիտենականս։ Բայց մեղաւոր մեռեալքն ոչ են գիտակ՝ նաև ոչ ընդունակ այսպիսեաց իրաց. զի ոչ զղջալ կարեն, և ոչ զգործս բարեաց գործել. վն̃ որոյ և ոչ ինչ վարձք գոն նց̃ առաջի այ̃։ Աստի և յիշատակն նց̃ կորնչի՝ ոչ միայն առաջի մարդկանց, այլև առաջի այ̃. զի ոչ յիշէ Ած̃ զնոսա ոմ̃ զծառայ հաճատարիմ. և ոչ երբէք կոչէ զնոսա առ ինքն. այլ ասէ, 'ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ որք գործէք զանօրէնութիւն։

Արդ՝ կենդանի իմա ասէն զայնս՝ որք խոկան զինքեանս մեռանելոց. և ոչ զամբարիշտսն, որք ոչ մտածելով զինքեանս մեռանելոց՝ պարապին 'ի չարիս։ Իսկ մեռեալ իմա զայնս՝ որք 'ի յամբարշտութե̃ մե-

մեռան. և ոչ զայնս՝ որք ՚ի շնորհս Ա̃յ մեռեալ՝ ՚ի յԱ̃ծ կենդանացան: Ո̃զի բաղդատութիւն եթէ ՚ի ներհակն փոխիցի, միշտ լաւագոյն է մեռեալ արդարն քան զկենդանի մեղաւորն. ո̃պ և յայտ է: Նա՛ իմաստութիւնն զայս հետևեցոյց անցելոյ բանին՝ առ ՚ի հաստատել զազնուութիւն կենդանութեան և կենաց, ըստ որում ՚ի նմին կարեմք համարել զվարձս. և այնու հասանիլ առ երանական կեանս: Նա՛ ՚ի ձեռն հետևեցելոյ տան՝ ցուցանէ զվատթարութիւն մեռելոյ:

6: Սէր նոցա, և ատելութիւն նոցա, այլ և նախանձ նոցա յայնմհետէ կորեաւ. և բաժին ևս ոչ գոյ նոցա յաւիտեան, յամենայն որ արարեալ են ՚ի ներքոյ արեգական:

Ա̃յսինքն, այնոց որք մեռեալք են, ոչ գոյ սէր, ո̃պ զի այնու զԱ̃ծ և զյաւիտենական բարիսն սիրեալ՝ արդիւնաւորիցին. նաև ոչ մնացեալ է ՚ի նոսա ատելութիւն բարի, որով զմեղս՝ և զունայնութիւնս աշխարհի ատեալ՝ զվարձս բարեաց հաւաքիցեն: Նաև ոչ գոյ նախանձ բարեացն Ա̃յ՝ և օգտի հոգւոյն, որով վառեցեալ ընդդէմ մեղաց՝ ջատագովիցեն զա̃ծային բարիս՝ և զպատուիրանս Ն̃ր, և զբարին հոգւոց իւրեանց: Վասն զի ՚ի մեռեալսն կորնչին ամ̃ գործողութիւնք և նիւթք բարեաց:

Եւ յարէ . Եւ բաժին իւր ոչ գոյ նոցա . և այլն : Սա՛ ՚ի ցուցանել՝ թէ կենդանեաց գոյ բաժին ՚ի ներքոյ արեգական ՚ի բնաւս գործս և արարս նոյ . վզի կենդանին ՚ի փայելելն զլոյս արեգական՝ օրհնել կարէ զԱծ . ՚ի տեսանելն զաստեղս՝ փառաւո_րել զստեղծօղն . ՚ի յուտելն և ՚ի յըմպելն՝ ՚ի փառս Այ ուտելով և ըմպելով՝ շնորհա_կալ լինել զԱյ, որ ետ ինքեան զհացն հա_նապազօրեայ . և այսպէս ամ արարածք գործիք և նիւթք առաքինութեանց և բա_րեպաշտութեանց լինին կենդանւոյն : Բայց մեղաւոր մեռեալն ոչ ունի զժամն և զբա_ժին ՚ի յամ ստեղծուածս որք են ՚ի ներքոյ արեգական , գոլով դժոխքն միայն բա_ժին իւր : Աստի և ոչ կարէ ՚ի կեր ա_նուլ զարարածս , և այնու արդիւնաւորել զինքն : ըստ այնմ , ոչ թէ մեռեալք օրհնեսցեն զքեզ : Եսայ . 38 . 18 :

7 : Ե՛կ կե՛ր ուրախութեամբ զհաց քո . և արբ սրտիւ զուարճացելով զգինի քո . զի արդէն իսկ հաճեցաւ Ած ՚ի գործս քո :

Ստէպն եղերեալ զբանս առաջինս . իբ_րու թէ եզրակացուցանէ ասելով այսպէս . ով մարդ , մինչ ՚ի մահուանդ զօրինս կա_րես շահիլ , եկ և լեր բանից խրատու իմոյ . կեր և արբ զբաւականն մարմնոյ քոյ՝ միայն ՚ի փառս Այ . և իբրու ՚ի ձեռա_նէ նորա ընկալեալ . ասզի այսու կերպիւ ուտե_

ուտելով՝ ուրախութիւն և զուարճութիւն
ուտիցես և ըմպիցես . և իրաւի զուարճա-
նաս այսու ։ Քանզի մինչ տեսանես զքեզ՝
զի ունայնութեան և որկորոյ, և կամ փափ-
կութեան մարմնոյ ոչ ես գերի, և ոչ նոցա
ծառայես ՚ի յուտելն՝ և ՚ի յըմպելն, այլ
Աստուծոյ, ՚ի հարկէ ուրախանաս . վասն զի տեսա-
նես թէ Աստուած արդէն ՚ի յայսպիսի ուրա-
խութիւն քո հաճեալ է ։ Ըստ այսմ և յամենայն
գործս քո . այսինքն ՚ի գործելն զգործ արհես-
տից, ՚ի նստիլն ՚ի տան, և ՚ի գնալն ՚ի
ճանապարհ, և ՚ի յայլս ընտանի գործս քոյս,
և ՚ի դիպուածս տուր զփառս Աստուծոյ . գոր-
ծեա՛ վասն Աստուծոյ . համբե՛ր վասն Աստուծոյ . լա՛ց վասն Աստուծոյ .
և ուրախ լեր վասն Աստուծոյ . և այսու հաւաքեա՛
զարդիւնս յաւիտենական կենաց ։ Եւ՛ որ
ինչ համդիպիցի քեզ՝ թէ ձախորդութիւն,
և թէ յաջողութիւն, անզանազանաբար ըն-
կալեալ ՚ի ձեռանէ Տեառն գոհացի՛ր, և ու-
րախ լեր ։ և մինչ այսու կերպիւ միշտ ՚ի
զուարճութեան հոգւոյ սիրտ քո, նաև ինքն
Աստուած արդէն իսկ հաճեալ է ՚ի յամենայն այս-
պիսի գործս քոյս ։

8 ։ Յամենայն ժամանակի եղիցին հանդերձք քո սպի-
տակք . և իւղ ՚ի գլխոյ քումմէ մի՛ պակասեսցի ։

Այսինքն, նաև ՚ի զգեստս քոյս լեր զուար-
ճացեալ ՚ի փառս Աստուծոյ . և ոչ ՚ի փառս մարդ-
կան . այսինքն, եթէ միշտ ՚ի մաքրութեան և ՚ի
սպիտակութեան կամիցիս պահել զհանդերձս

քոյս՝ պահեա՛։ Նաև երբեմն ըստ կացութեն քում մինչ ես իշխան, կամ փարթամ, և զգենուլ պարտիս զմետաքսեայ հանդերձս՝ կամ զծիրանիս, զգեցիր. բայց այնպէս՝ զի իցէ այն ՚ի փառս Այ, և վն պահանջ-ման կացութեանդ, և ոչ առ ՚ի փառաւորիլ այնու՝ և կամ ամբարտաւանիլ։ Եւ որ-քան առ այս՝ գրեթէ ասէ, մինչ ՚ի փառս Այ իցէ ՚ի պատուականութեն պահելդ զհան-դերձս քո, միշտ լինի սպիտակ, զի և Քս միշտ փառաւորեսցի։

Եւ յարէ. Իւղ ՚ի գլխոյ քումմէ մի՛ պակասեսցէ։

Այսինքն. մինչ պայծառանայցիք ունէին զսրբութի վն տապոյ գաճառին մերթ-օծանել զգլուխս և զերեսս իւրեանց, զի մի կարի չորութեն պատառատեսցի մորթն երեսաց, որքան առ այս յիշէ. իբրու թէ ասէ. մինչ փարթամ ես, և ունիս զկա-րողութի յոմնում աւուր օծանել զգլուխդ, օծ. և մի պակասեցուցաներ. զի միշտ դէմք քո զուարթ և փափուկ երևեսցին. սակայն ՚ի փառս Այն. և ոչ սնափառութեն աղագաւ. և կամ սակս որսալոյ զոք ՚ի մեղս։

Եւ այս վճիռ կարէ և հոգևորապէս մեկ-նել. զի, յոմ ժամ խիղճ մտաց մերոյ պարտի լինել մաքուր. և զիւղ Ածայնոյ սիրոյն ոչ պարտիմք պակասեցուցանել ՚ի գլխոյ մերմէ։ Եւ կամ այսպէս. ՚ի ձեռն խոնարհութեն զիւղ շնորհացն Այ՝ միշտ

քա-

Ջանալ պարտիմք ոչ պակասեցուցանել 'ի գլխոյ մերմէ ։

9 ։ Տե՛ս զկեանս ընդ կնոջ քոյ՝ զոր սիրեցեր զամ աւուրս կենաց ընդունայնութե քոյ · որ տուաւ քեզ ընդ արեգակամբ , մինչև յաւուրս վախճանի քոյ · զի այն է բաժին քո 'ի կենաս քում · եւ 'ի վաստակոց քոց՝ զորս ջանաս 'ի ներքոյ արեգական ։

Սոյնինքն, մինչ համառօտաբար խօսելով՝ երեք իրք են զորս 'ի գործ ածէ մարդն եւ որոց ունի զպէտս · այս է կերակուր, հանդերձ , եւ կին · ոչ զկերակրոյ՝ եւ զհանդերձից խօսեցաւ՝ թէ 'ի փառս այ պարտիմք 'ի գործ ածել · զի ուրախութբ եւ առանց մեղաց՝ եւ թարց վնասու հոգւոյն մերոյ վայելեսցուք զայնս , այսպէս նաեւ զկնոջէ խօսի առ ամուսնացեալս · եւ այսու վճռով խրատէ՝ թէ ո՛չ պարտին վարել այնու՝ զի մի՛ կործանիցին ։ Քանզի 'ի մէջ այլոց ամենից՝ մանաւանդ կինն է որոգայթաւոր · եւ դժուարին իմն է վարելն նովաւ առանց տարփանաց վաւաշոտութեն ։ Վասն որոյ ասէ · տե՛ս զկեանս քո ընդ կնոջ քոյ · այս է հայեա՛ց 'ի քեզ · եւ մտածեա՛ զկեանս քո՝ որքան վարես ընդ կնոջ քում · ոչ զի մի՛ վաւաշոտութեն աղագաւ սիրեսցես զնա՝ եւ զկեանս քո վտանգեսցես · այլ միայն՝ 'ի փառս այ, եւ վն այ սիրեա՛ զնա՝ եւ ոչ զկէս մարմնոյ քոյ , եւ ոչ զընկեր քո՝ զոր Ա՛ծ տուեալ է քեզ իբրու օժանդակ եւ օգնական ։

Ո՛հ այս առերիս իրս. նախ՝ առ այս՝ զի
'ի տան քում ընկեր լինիցի քեզ. և հետևա-
բար օգնական գործոց քոց: Երկրորդ՝ զի
օգնական լիցի քեզ առ ծնունդ զաւակին.
քանզի այր մին առանց կնոջ ոչ է բաւա-
կան լինել հայր զաւակաց: Երրորդ՝ առ 'ի
օգնել քեզ 'ի սնուցման զաւակաց: Ըստ
այնմ, ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել. արա-
ցուք դմա օգնական ըստ դմա. Ծննդ. 2. 18:
Բայց՝ որք զկերակուր և զհանդերձ իւրեանց
'ի ձեռանէ Տն ընկալեալ, միայն 'ի փառս
այ պարտին վարել նոքօք, այսպ և այրն
զկին իւր իբրու 'ի ձեռանէ Տն օգնական
ինքեան առեալ՝ պարտի սիրել որպ զանձն
իւր վն այ. և ոչ պարկեշտ և սրբ սիրոյն
մոռացօղ լեալ՝ միայն վաւաշոտական սի-
րով սիրել զնա, որ է ունայն և չար. նաև
անկայուն. վն զի այնպիսի սէրն 'ի դա-
դարել բոցոյ վաւաշոտութեան, ոչ միայն
լռէ, այլև վերադառնայ 'ի յատելութի:
Որպ և յայտ իսկ է այս 'ի յարս ամբարիշտս.
որք զկանայս իւրեանց սիրեն միայն 'ի
յանկողնի. և արտաքոյ նր ատեն, ձաղեն,
և անարգեն. և որպէս զգերի և զաղախին
համարին զնոսա:

Դարձեալ. Տես զկեանս ընդ կնոջ քոյ. Ժղ,
զկեանս քո զուարճութեամբ անցո ընդ կնոջ
քում. որ լինել կարէ 'ի փառս այ սիրե-
լովդ. և ոչ վաւաշոտութեամբ հեշտալեալ 'ի
ցաւս ցանկութեն մաշեցեալ լինելովդ:

Ո՛հ

Ա՜յարհէ . Որ սիրեցեր զմեզ առաւել կենաց ընդունայնութեան ծոյ : Տր, մինչ 'ի յայսմ աւուրս ունայնութե̄ քոյ մինչև 'ի վախճան զնա ունիս քեզ սիրելի՝ և սիրես, այնպէս պար_ կեշտ և սրբ̄ սիրով պարտիս վարել նովաւ, որպէս զի սէրն քո 'ի փառս այ մշտ լինելով հանապազ ճշմարիտ զուարճութիւ̄ զու_ արճասցիս, և զարդիւնս բարեաց հաւա_ քիցես . զի այս միայն է բաժին քո 'ի յայսմ վաստակս և յաշխատանս քոյս՝ զորս առնես վն կնօջդ , և զաւակացդ : ապա թէ ոչ 'ի զուր և ունայն է աշխատանքդ . քանզի թէ կինդ , և թէ որդիքդ , և թէ դու՝ մեռանելոց էք : Արդ՝ եթէ զկին քո՝ և զորդիսդ՝ գործիք և նիւթ գործոց բա_ րեաց ոչ առնիցես քեզ՝ սիրելովդ զնոսա միայն 'ի փառս այ , ուստի՞ ուրեմն կարես հանել զբաժին, կամ զվարձ այդքանեաց աշխատանաց և վաստակոց քոց :

Ա՜ մեծագոյն չարն է այս, զի եթէ զբա_ րի վարձ և զբաժին աշխատանաց քոց ո՛չ հանցես 'ի յուտելեաց՝ և յըմպելեաց , 'ի հանդերձիցդ, և 'ի կնօջէդ , 'ի զաւակացդ, և յայլոց ունեցելոցդ՝ բարեպէս՝ և 'ի փառս Տն վարելովդ 'ի նոսին, 'ի հարկէ հեռանի՝ զի զչար և զվնասակար բաժինս հանցես 'ի նոցունց վասն քոյ . Տր զմեղս . որով և յաւիտենականապէս դատապարտիցիս :

Արդ՝ մտածեա միանգամ , և տես՝ թէ որքան չար է , և մեծագունեղ խելագա_ րու_

րութ̀ի այնքան աշխատելով մ̄ կերլեաց՝ և մ̄ համդերձից, մ̄ կնոջ՝ և մ̄ զաւա_կաց, և փոխանակ արտասահանելոյ յայնց զբաժին բարի առ կեանս՝ արտահանել զմեղս. և այնու զմահն յաւիտենական առնուլ 'ի վարձ այնքանեաց աշխատութեց քոց. համդոյն մշակի խելագարեցելոյ, որ զբոլոր օրն աշխատեալ յայգւոջ՝ յերեկոյին փոխանակ վարձուց վերընկալնու զմահ:

10: Ամ̄ որ ինչ գտանիցէ 'ի ձեռին քո առ_նել, որչափ է զօրութ̄ի քո՝ արա. Վասն զի ո՛չ գործ՝ և խորհուրդ՝ և գիտութ̄ի՝ և իմաստութ̄ի եղիցին 'ի դժոխս. յոր դու երթալոց ես:

Կամի ասել, թէ զո̄մ զորինչ առնես 'ի կեանս քո, թէ ուտել, թէ ըմպել, թէ ամուսնանալ, և թէ 'ի մ̄ի պաշտօնի իրիք լինիլ, 'ի համայնս յայսոսիկ կարես դու 'ի փառս ա̄յ վարելով, և ըստ օրինաց, և պատուիրանաց Տ̄ն զնոսին 'ի գործ ածե_լով արդիւնաւորիլ. և զվարձս բարեաց հաւաքել: Քանզի թէ աղքատ իցես, և թէ հարուստ. թէ առողջ իցես, և թէ հիւանդ. թէ տ̄ր իցես, և թէ ծառայ. թէ հրամայօղ իցես, և թէ հնազանդեալ, 'ի բնաւս յայսոսիկ բարեպէս՝ և իմաստ_նաբար վարելով՝ կարես հաւաքել զգործս բարեաց որքան կենդանի ես. ո̄ւ զի 'ի մեռանելդ կարիցես երջանիկ և երանա_կան կենաց ժառանգորդ լինիլ: Ս̄ որոյ

մինչ

մինչ կենդանի ես, արա՛ զբարին յանձ զօրութէ քումմէ աշխատելով՝ որքան կարես։ ըստ այսմիկ միաբանի և բան առաքելոյն, որ ասէ. Մինչ դեռ ժամանակս 'ի ձեռս է, գործեսցուք զբարիս։ Գաղատ. Զ. 10։ Նա՛ աստ գիտելի է. զի առ առաքինութի, և առ գործս բարեաց որպէս զի լինիցին, երեք իրք խնդրին։ Նախ՝ նիւթն առաքինութեանց։ Երկրորդ՝ խորհուրդ և կամ խրատ, զի յորդորիցէ զմարդն առ առաքինութի, և առաջնորդեսցէ նմա, թէ ո՞րպ, և կամ որո՛վ եղանակաւ պարտ է գործել։ Երրորդ՝ պիտոյ է գիտութի 'ի լսողն զխրատսն, ո՞րպ զի ըմբռնիցէ զայսն՝ որք պատուէրին նմա։ Դ.րդ՝ սոքին միայն յայսմիկ կենի տանին. քանզի աստ ուտելն՝ ըմպելն, գոլն հարուստ, կամ աղքատ. առողջ, կամ հիւանդ. ծեր, կամ ծառայ. և այլք նմանք սոցին՝ են նիւթք առաքինութեանց. քանզի մինչ բարեպէս վարիմք 'ի սոսին, արդիւնաւորիմք։ Իսկ ածային օրէնն և պատուիրանն՝ որ տայ մեզ զխորհուրդ և զխրատ՝ յայսմիկ կենի միայն է. հետևաբար նաև զգիտութիւն և զիմաստութի, յորս կարեմք զարգանալ և աճիլ օր ըստ օրէ առ 'ի բարեպէս հասկանալ զպատուիրանն այ, միայն յայսմիկ կենի ստանալ կարեմք. քանզի յետ մահուան 'ի ձեռն բնականաց մերոց ոչ կարեմք զարգանալ 'ի գիտութիս և յիմաստու-

տու-

տութիս ․ այլ զոր ինչ շահեցաք աստէն՝ զայնս միայն ունիմք ։ Ասցի՝ 'ի ձեռն բնակչմնաց ․ քանզի 'ի ձեռն լուսոյն փառաց և երանութեան մեքն լցեալք լինիմք ամ գիտութբ և իմաստութբ համեմատեցելովք առ երանութին իւրեանց ։ Արդ՝ մինչ ասացեալ երեքս՝ յայսմիկ կենի միայն են, և 'ի հանդերձեալն ոչ գտանին ․ յարէ ։

Սանուցէ ոչ գործ՝ և խորհուրդ ․ և գիտութիւն, և իմաստութիւն եղիցին 'ի դժոխս, յոր դու երթալոց ես ։

Նարուք ասէ, 'ի դժոխս ․ զի այնոքիկ որք աստէն ոչ գործեն զբարիս՝ մինչ ունին զնիւթ, զիրատ, և զգիտութին, 'ի հանդերձեալն երթան 'ի դժոխս ․ և անդէն ոչ են գործք ․ զի ոչ գոյ ուտել՝ ըմպել, և այլն, զի լինիցին նիւթք առաքինութ ․ ոչ գոն խրատք և խորհրդատուք ․ նաև ոչ զարգացումն 'ի գիտութիս, զի հասկանայցեն զիրաւունս՝ և զօրէնս ․ այլ միայն պատիժ և տանջանք առ այս՝ զի 'ի կեանս յայս մինչ ունէին զմիջոցս գործելոյ զբարին, ոչ գործեցին ։

Ա՛յ զանգիտութիւն մեռելոց, թէ որոց իրաց վերաբերեան գիտողք, և զորոց անգիտանան, ծանիր ։ Ո՛ի հոգին բաժանեցեալ՝ զմեր բնականս՝ որոց զտեսական աստէն շահեցաւ, գիտէ ։ Ա՛յ հոգին այն եթէ լիցէ երանեցեալ, ոչ միայն գիտէ զայնս՝ որոց զտեսակս աստէն շահեցաւ, այլ նաև զայլս բնաւս բնականս, և զբա_

զումն

զուժս գերբնականս՝ զորոց զտեսակս ոչ ունէր՝ գիտէ ՚ի ձեռն ներհեղեալ տեսակաց, զորս ընդունի յոյ ՚ի գոլն երանեցեալ: Իսկ քաւարանացիք գիտեն՝ և ունին զայն ամ գիտուն զոր աստէն շահեցան, բայց սակս դժնդակութե տանջանացն ոչ կարեն միշտ զայնս մտածել: Բայց հոգիքն այնոքիկ, որք են ՚ի դժոխս, զայնսիկ՝ որոց զտեսակս շահեցան աստէն ըստ միոյ մասին գիտեն, և ըստ միւսոյն ոչ գիտեն. այ, զայնսիկ զամենեսեան որք վերաբերին առ՚ի չարչարել զնոսին՝ գիտեն. որգոն, զգործս չարութե իւրեանց. զպէսպիսութի անկարգութեց՝ զոր արարին, և զայլս նմանս: Բայց եթէ ՚ի կեանս յայս շահեալքն զմանս գիտութիւնս զմանց Ճշմարտութեց, որոց մտածմամբն կարելի էր ինքեանց իւիք կերպիւ մխիթարիլ, այնպիսիք գիտութիք բարձեալք լինին ՚ի նոցանէ. վն զի քանքարն ոչ շահեցուցեալ՝ բարձաւ ՚ի ծառայէն. որպ յայտ է յաւետարանի: Եւ այսպէս անմխիթար սգով պատժին ամ դատապարտեցեալք ՚ի դժոխս: Եւ որքան առ այս եւս իմանի ասելն, ՚ի դժոխս ոչ է փրկութի. այ, ոչէ գիտութի ինչ օգտակար, և կամ մխիթարական:

11 : Դարձայ՝ և տեսի 'ի ներքոյ արեգական, զի ոչ թեթևոց էն ընթացք . և ոչ զօրաւորաց պատերազմ . և ոչ իմաստնոց հաց . և ոչ հանճարեղաց մեծութիւն . և ոչ գիտնոց շնորհք : Վասնզի ժամանակք , և դիպուածք պատահին ամենեցուն նոցա :

Աստէն զերկուս համանշանէ . նախ՝ զա̃ծային նախախնամութիւն . զի Ա̃ծ երբեմն գիտնոց զաղքատութի տայ , և յիմարաց զհարստութի . ամբարշտաց թոյլ տայ փառաւորիլ , և արդարոց անարգիլ . և որքան առ այս՝ պարտիմք խոնարհութբ և միամտութբ ստորադրել զճանաչումն մեր ա̃ծայնոյ նախախնամութեն . և ոչ բնաւ երկբայիլ :

Երկրորդ՝ համանշանէ զայս . թէ այնքան արդարք , որքան և մեծաւորք՝ են 'ի ներքոյ դիպուածոյ . և ոչ՛ք պարտի յուսալ 'ի զօրութի իւր : Քանզի եթէ ոք թեթև է ոտիւք , և կարէ արագապէս արշաւելով հասանիլ յամրընթացի ումեք , որ առաջի իւր փախչի , մի՛ պարծեսցի . քանզի կարէ դիպուած ինչ հանդիպիլ . որգոն . ոտն զքարի հարկանիլ , և այնու գլոր վիրաւորեցեալ՝ ոչ կարէ հասանիլ : Այնպէս և որ զբազում զօրս ունի , մի՛ պարծեսցի 'ի պատերազմի յաղթող գտանիլ ընդդէմ թշնամւոյն . քանզի կարէ դիպուած ինչ լինիլ , և այնու հազարաւոյն 'ի հարիւրաւորէն յաղթիլ :

Ա̃ծ

Առ յարէ · Մ՛ն իմաստնոց հաց · զի բազմիցս համդիպի իմաստնոց լինել աղքատ · և կարօտիլ հացի։ Մ՛ն հանճարեղաց մեծութիւն · զի բազմիցս համդիպի հնարագիտաց, և հանճարեղաց մնալ աղքատ · իսկ անմտաց և անխմարաց ոմանց լինել հարուստ։

Առ ոչ գիտնոց շնորհք · այս, բազմիցս համդիպի և այս · զի գիտուն արհեստաւորք որք զգործս արհեստին յոյժ գերազանց աշխատանի գիտեն, ոչ ունիցին զշնորհս առաջի մարդկանց · այս, ոչ համարիցին 'ի մարդկանէ ոմն զբարուոք հմուտ արհեստի · և ոչ ունիցին զհամբաւս ։ և այլ ոմն որ սակաւ ինչ գիտէ զարհեստն, զնուտ համբաւ տարցեալ համարիցի հմտագունեղ 'ի յարհեստի իւրում։ Առ այս ամ լինի, վասն զի ժամանակ և դիպուածք հանդիպին · այս ըստ ամ այնոց նախախնամու 'ի ձեռն ժամանակին դիպուած ինչ 'ի մէջ անկանի · և այնու նա որ պարտ էր համարիլ գիտուն, վարկանի անգէտ · և միւսն որ վարկանիլ պարտիւր անգէտ, համարի գիտուն։

12 ։ Քանզի ոչ եւս գիտաց մարդն զժամանակն իւր · որպէս ձկունք որսացեալք ցանցիւք չարեաց · և որպէս թռչունք ըմբռնեալք 'ի ծուղակս · նոյնպէս անկանին յորոգայթ որդիք մարդկան 'ի չար ժամանակի, յորժամ յանկարծակի հասանէ 'ի վերայ նոցա ։

Աստէն զվերոասացեալսն հաստատէ · և

կամի

կամի ասել զայս, թէ մարդիկ երկիւղիւն այ գոլով զինուորեալք, պարտին դնել զինքեանս 'ի ներքոյ նախախնամութեան այ. և ոչ ապաստանիլ 'ի զօրութիւս իւրեանց. և ոչ 'ի հանճարս, կամ 'ի փարթամութիւս. քանզի ոչ գիտեն զժամանակն յորում հասանելոց է ինքեանց ձախորդական դիպուածն, կամ փորձութիւն: Քանզի ոպ ձկունք, և թռչունք ոչ կարեն գիտել, թէ երբ՝ կամ ուր ձգին ցանցքն. և լարին ծուղակքն. և այնու անգիտութե ըմբռնեցեալք լինին. ըստ այսմ՝ և մարդիք անգէտք են զաղագայից դիպուածոց. և ոչ գիտեն, թէ երբ, կամ ուր, կամ յորմէ հանդիպելին ինքեանց փորձութիւք. և այսու ոպ զձկունս յանկարծակի ըմբռնելին յորոգայթս. և հասանէ 'ի վերայ նց փորձութի: Այս զի ասէ, 'ի չար ժամանակէ, ոչ առ 'ի ցուցանել զինքն ժամանակն գոլ չար, այլ տալ իմանալ զչարն հանդիպիլ 'ի ժամանակի:

Այս որքան առ փորձութիւն՝ և առ որոգայթս՝ յորս մարդիկ անկանին, ծանիր. զի կրկին է փորձութին՝ որ հանդիպի մարդոյն. մինն մեղաց՝ որ վերաբերի առ հոգին. և միւսն պատժական, որ վերաբերի առ մարմինն: Որքան առ փորձութին մեղաց՝ պարտիմք միշտ աղօթել, զի Ած փրկեսցէ զմեզ, ոպ զի ոչ սահիցիմք. վն զի թէպէտ փորձութի մեղաց արտաքոյ կամաց

մայ մերոյ ո՛չ երբէք հանդիպի մեզ ; բայց առիթքն կարեն հանդիպիլ . ո՞րգոն . եթէ ոմն լկտի կին յանկարծ հանդիպիցի 'ի յառանձին տեղւոջ՝ ումեմն երիտասարդի . և կամ ոմն քաջասիրտ և զօրացօղ երիտասարդ յանկարծակի յումեքէ անզգամէ հարկանիցի և հայհոյիցի , այսոքիկ դիպուածք՝ են մերձաւոր առիթք մեղաց պոռնկութ՟ե , և սպանութ՟ե , որոց եթէ մարդն զօրեղապէս և շնորհիւն ա՟յ ոչ ընդդիմանայցէ , սահի 'ի մեղս ։ Եւ որքան առ այսպիսի փորձութ՟ի , մինչ ո՛չ գիտեմք թէ երբ , և ո՛ւր , և յորժամ՝ հանդիպիլ կարէ , պարտիմք միշտ երկիւղիւն ա՟յ կեալ . և աղօթել առ Ա՟ծ , զի փրկեսցէ զմեզ 'ի փորձութ՟է . ըստ որում ուսոյց մեզ Տ՟րն մեր 'ի հայրմերին՝ ասել . Եւ մ՛ տանիր զմեզ 'ի փորձութ՟է ։ Իսկ միւս փորձութ՟ին , որ վերահասի առ մարմինն . որգոն . յանկարծ աղքատանալ . կամ վտանգաւբաւիլ . կամ ցաւագար լինիլ , և կամ 'ի բանտ արկանիլ , և սպանանիլ , և այլն , հանդիպիլ կարէ մեզ արտաքոյ կամաց մերոց ։ Այլ մեք նաև որքան առ այսպիսիս փորձութ՟իս միշտ յանձնել պարտիմք զմեզ ա՟ծայնոյ նախախնամութ՟ե . և աղօթել՝ զի մի՛ հասցեն մեզ այնք 'ի վնաս հոգւոց մերոց ։ Վ՟անզի մարդիկ այնքան տկարք են , մինչ զի երբեմն 'ի ձեռն մարմնականաց վնասուց իւրեանց գայթակղեցեալք,

և կամ 'ի տրտմութիւնս ընդդէմ որոյ սահեցեալք՝ մեղանչեն, և անօրէնեն:

13: Սակայն և զայս իմաստութիւն տեսի 'ի ներքոյ արեգական. և է մեծ:

14: Քաղաք փոքր. և արք 'ի նմա սակաւք. և գայցէ 'ի վերայ նորա թագաւոր մեծ, և պաշարեսցէ զնա. և կանգնեսցէ շուրջ պատնէշս մեծամեծս:

15: Եւ գտանիցէ 'ի նմա այր աղքատ և իմաստուն. և ապրեցուսցանիցէ նա զքաղաքն իմաստութեամբ իւրով. և մարդ ոչ յիշեաց զայրն զայն զտնանկ:

Յորժամ յայսմիկ տեղւոջ սաղոմոն վերադարձուցանէ զբան իւր առ ազնուութիւն իմաստութեան. և կամի 'ի մէջ այնքանեաց թշուառութեանց աշխարհիս ցուցանել զնա որպէս զարեգակն լուսաւորող զամենեսեան. և պատուականագոյն քան զզօրութիւն, և քան զփարթամութիւն: Եւ վասն այսորիկ ասէ. Սակայն և զայս իմաստութիւն տեսի. և է մեծ: որ, թէպէտ զամենայն թշուառութիւնս տեսի յաշխարհի. սակայն և զայս մեծ իմաստութիւն տեսի: Զի քաղաք մի փոքր. և ոչ միայն փոքր, այլ և նուազ զօրութեամբ և ուժով. զի 'ի նմին գտանէին սակաւ անձինք. նաև ոչ ունէր քաղաքն զհաստատուն պարիսպ և զպատուար. և 'ի վերայ այսպիսւոյ անզօր քաղաքի գայցէ հզօր թագաւոր մի առ 'ի առնուլ զայն, ունելով ընդ իւրեան և զզօրս բազումս, և կանգնեսցէ շուրջ զքաղաքաւն զմեծամեծ պատնէշս:

նէշս ։ Սակայն ՚ի նմին քաղաքի գտաւ ոմն աղքատ՝ բայց իմաստուն, և ՚ի ձեռն իմաստութեն իւրոյ ապրեցոյց զքաղաքն զայն ․ և զարմանք մեծագոյն է այս ․ զի մարդիք գոլով յիմարք՝ ոչ յիշեն, և ոչ ՚ի ծայրագոյնեղի աստիճանի յարգեն զայնպիսի իմաստունն վն իւրոյ իմաստութեն ․ այլ վն գոլոյն տնանկ, և վն ոչ ունելոյն զերևելի հանդերձս՝ և զփառս՝ ՚ի մոռացումն արկանեն զնա ։

Արդ՝ սաղօմօն զերկուս համանշանէ աստէն ․ նախ՝ զգերազանցութի իմաստութեն, թէ որքան առաւել է քան զռազմուն զօրաց, և քան զնմ՝ փարթամութի, և քան զոր և իցէ փառաւորութի աշխարհի ։ Երկրորդ՝ համանշանէ զայս, թէ որպիսի ունայնութիւն է, և յիմարութի մարդկանց, զի զազնուութի իմաստութեն ոչ ճանաչեալ՝ միայն ՚ի յարտաքին փառաւորութս ընձանց՝ և ՚ի սուտ համբաւս հայեցեալ՝ տան զպատիւ ․ և այնու մինչ ՚ի յաղքատս և յանփառաւորս գտանի իմաստութիւն, ոչ յիշեն զնա, և ոչ համարին զնա արժանի պատուոյ վն աղքատ գոլոյն՝ և կամ վասն ոչ գոլոյն յազնիւ տոհմէ, և որդի ազնուի ։

Արդ՝ թէպէտ եղև երբեմն յաշխարհի, զի ոմանք աղքատ իմաստունք ապրեցուցին իմաստութբ իւրեանց զքաղաքս ․ և կամ արարին հասարակութեց մարդկանց

զայլս նմանս բարերարութիս ։ ըստ որում
և յուդիթ՝ իմաստութբ իւրով ապրեցոյց
զբոլոր ազգն իւր 'ի ձեռաց Հողեփեռ_
նեայ․ ոպ դրի յուդիթայ․ 13։

Բայց մեծագունեղն ամենեցունց եղև
Քն Տրն մեր․ 'ի վերայ որոյ է և բանն
սաղոմոնի մարգարէաբար՝ և այլաբանօ_
րէն ։ Ազի քաղաք փոքրիկ և անզօր էր
մարդկային բնութիս․ 'ի վերայ որոյ եւ
'ի պատերազմ սադայէլն հանդերձ ամ
բազմութբ դիւաց․ և կացոյց շուրջ զբնու_
թբ մարդկայնով զմեծամեծ պատնէշս
բազմատեսակ մեղաց․ 'ի ձեռն որոց կա_
րէր առնուլ զքաղաք բնութե մարդկայ_
նոյ, և զբոլոր ծնունդն ադամայ վարել
գերութբ 'ի դժոխս ։ Արդ՝ քաղաքս այս
պաշարեցաւ յայնժամ, յորժամ մեղաւ
ադամ․ և յայնմհետէ պատնէշք մեղաց
չինեցան զնովաւ․ որով կարէր առնուլ
դևն զնա ։ Բայց Քն Տրն մեր յաղքատ
մօրէ, և 'ի յաղքատ մսրոջ ծնեալ, գտա_
նեցաւ ոպ աղքատ իմաստուն 'ի քաղաքի
բնութե մերոյ․ և իմաստութբ իւրով
որ էր այս, զի աղքատութի, զխաչն՝ և
զչարչարանս ընտրելով, և զայնս սիրե_
լեաց իւրոց առաջադրելով՝ փրկեաց զքա_
ղաք բնութե մարդկայնոյ 'ի ձեռաց թշ_
նամւոյն, և կապեաց զիշխանն խաւարին,
և զբոլոր թագաւորութի նր՝ կործանէ՝
յոչինչ վերադարձոյց։

Արդ՝

Արդ՝ թէպէտ Ք՟ս իւր ամենահզօր կա_
րողութե՟ն միշտ կարէր յաղթել զսատա_
նայ , բայց գիտել արժան է , զի 'ի պա_
տերազմին ընդ նմա՝ ոչ 'ի ձեռն ամենա_
հզօրութե՟ իւրոյ մարտեաւ , այլ 'ի ձեռն
իմաստութե՟ ․ որով զայս կարգ և զճա_
նապարհ եգիտ , զի զաղքատութի՟ , և
զչարչարանս արարեալ զէն ինքեան 'ի
ձեռն այնց յաղթիցէ թշնամւոյն ․ և որ_
քան առ այս՝ ասի , թէ աղքատ իմաս_
տունն Ք՟ս , իմաստութե՟ , և կամ որ նոյն
է , խաչիւ և չարչարանօք իւրովք փրկեաց
զքաղաք բնութե՟ն մարդկայնոյ ։

Բայց որքան առ միւս մասն բանին՝ զոր
ասէ ․ Եւ մարդ ոչ յիշեաց զայրն զայն զաղքատն ,
մինչ վերաբերի առ Ք՟ս , նախ՝ հրէայքն
ոչ յիշեցին զնա , և ոչ հաւատացին 'ի նա ․
և ոչ ծանեան զփրկիչն իւրեանց և բոլո_
րի աշխարհի ։ Երկրորդ՝ ա՟մ մեղաւոր
քրիստոնեայք ոչ յիշեն զնա , և զամենա_
մեծ իմաստութի՟ ն՟ր ։ Քանզի անպատիւ
առնեն զՔ՟ս մեղանչելով ․ և անպատիւ
առնեն զիմաստութի՟ ն՟ր , 'ի խաչէ և 'ի
չարչարանաց փախչելով ․ և զունայն փառս
աշխարհի , և զարծաթ , և զհեշտութիւն
մարմնոյ որք են մնուցիչք ախտից , նա_
խադասելով խոնարհութե՟ , աղքատութե՟ ,
և խաչի ․ որք են ախտից մարմնոյ սանձա_
հարիչք և մահացուցիչք ։

Այ՜ աստէն սաղօմոն մանաւանդ զարմա_

նայ ընդ այս. զի իմաստութիւն աղքատին, որով փրկեաց զքաղաքն, ոչ յիշի ՚ի մարդկանց, և ոչ հռչակի. այլ ՚ի մոռացումն անկանի. և այնպիսի զարմացումն մնաաճանգ ՚ի մէջ աշխարհասէր քրիստոնէից անկանի. վասն զի աշխարհասէրքն զայս իմաստութիւն Քրիստոսի, որ զաղքատութիւն հարստութեանց, զխոնարհութիւն փառաց, և զչարչարանս հեշտութեանց նախադասեաց, և այնու փրկեաց զմեզ, ՚ի մոռացումն արկեալ՝ ոչ երբեք յիշեն. այլ որոնեն զհարստութիւն, զփառաւորութիւն, և զհեշտութիւն։ Եւ՞ որքանիցս ընթեռնուն, կամ լսեն զչարչարանացն Քրիստոսի, որում փառքն մինչ առաջի կայր, յանձն էառ զխաչն, միայն ՚ի յարտաքին ականջս նոցա հնչեն. և ՚ի սիրտս ոչ երբեք թափանցեն, որպէս զի միշտ յիշել առնիցեն։

16։ Եւ ասացի՝ բարի է իմաստութիւն քան զզօրութիւն. և իմաստութիւն աղքատին արհամարհեալ է. և բանք նորա ոչ լինին լսելիք։

Կամի ասել, թէ մինչ տեսի զի իմաստունն առաւել գերազանց կերպիւ յաղթեաց ՚ի ձեռն իմաստութեան, քան թէ իցէր հզօր ոք, և ՚ի ձեռն ուժոյ յաղթիցէր, ասացի. իմ վճռեցի՝ թէ բարեգոյն է իմաստութիւն քան զզօրութիւն և զհզօրեղութիւն։

Որդ՝ ՚ի մէջ մարդկանց իրաւի միշտ իմաստութիւն առաւել գերազանց է քան զկա-

րո-

րողութի և զուժ․ քանզի որք հզօրեալք են, 'ի պակասիլն իմաստութե զոչինչ կարեն առնել․ սակայն իմաստունք, թէ և պակասիցեն 'ի հզօրեղութ͡է, կարեն 'ի ձեռն իմաստութե առնել զոր կամին։ Բայց որ քան առ Տ՛րն, իմաստութի և կարողութի են հաւասարք․ և ոչ կարէ ասել մինն գերազանց քան զմիւսն․ սակայն մինչ Տ՛րն միայն զիմաստութիւն 'ի գործ ածելով, և զայնպիսի կարգ գտանելով, զի խաչիւ փրկեսցէ զմեզ, զառաւել վճարումն և զբաւականարարութի արար արդարութե, քան թէ 'ի ձեռն կարողութե և ուժոյն՝ բռնութե փրկիցէր զմեզ 'ի ձեռաց թշնամւոյն, որքան առ այս՝ յարմարաբար ասել կարէ նաև զՏ՛րնէ, թէ բարի եղև՝ որքան առ մեզ, իմաստութի նր քան զզօրութի։ Զի առաւել վճարողական արդարութե, և ճանապարհ և առաջնորդ հետևողաց իւրոց եղև իմաստութիւն, որով զխաչն ընտրեաց, քան թէ կարողութիւն։

Ի՞նչ յարէ․ ԵՐԱՆԵԼՈՅՆ ԱՂՔԱՏԻՆ ԱՐՀԱՄԱՐՀԵԱԼ Է․ և այլն։ Իմա այնպէս՝ ոմն 'ի յանցեալ տանն մեկնեցաւ․ զի մդ ոք որ փախչի 'ի խաչէն և 'ի կցորդութ͡է չարչարանաց Տ՛րն, արհամարհէ զիմաստութիւն Տ՛րն․ որով ընտրեաց զխաչն, և զնախատինս, և ոչ զհանգիստ, և կամ զփառս աշխարհի։ Ի՞նչ յայլս թարգմանութիւս գնի այսպէս․ Ի՞նչ պիտոյ ԵՐԱՆԵԼՈՅՆ ԱՂՔԱՏԻ ԱՐՀԱՄԱՐՀԵԱԼ Է։ Այսինքն,

զհարդ քրիստոնեայն զիմաստութիւն Տ՟ն արհամարհէ փախչելով ՚ի խաչէն ։

17 ։ Բանք իմաստնոյն մեղմով լսելի՝ քան զաղաղակ իշխանաց անզգամութ՟ ։

Այսինքն , մեղմով և քաղցրութ՟ խօսեցեալ բանք իմաստնոյն առաւել լսին . զի ՚ի միտս լսողաց թափանցեն , և զպտուղ բարի առնեն , քան զբանս իշխանաց , որք բարձր ձայնիւ և աղաղակաւ արտաբերին՝ բայց հանդերձ անզգամութ՟ , և հպարտութ՟ ։ Եւ այս որքան առ նկարագիրն ։ Բայց վերաբերեալ առ Տ՟ն , յոյժ բարեպէս բացայայտի . քանզի վարդապետութիւնն Տ՟ն և ամ՟ բանք նորին , և գործք թէպէտ էին մեղմ և քաղցր . և ոչ գոյր աղաղակ , կամ արտաքին վիճումն և գլորումն ինչ . ըստ այնմ . Ոչ աղաղակեսցէ , և ոչ վիճեսցէ . և ոչ ոք լուիցէ արտաքոյ զձայն նորա . Եսայ. 42 . 2 ։ Բայց յոյժ գործունեայք եղեն , և թափանցեցին ՚ի սիրտս լսողաց . և այսու տարածեցաւ աւետարանն Տ՟ն ընդ ամ՟ աշխարհ . և բազմութիւնք թագաւորաց՝ և իշխանաց , և փիլիսոփայից եդին զգլուխս իւրեանց ՚ի ներքոյ ոտից Տ՟ն ։ Եւ այսու զաղքատութի , և զարհամարհանս ընտրող իմաստութիւնն , զի Տէրն մեր՝ առաւել լսելի և գործունեայ արար զբանս իւր մեղմաձայն՝ քան զաղաղակ և զբարձրագոչ ձայնս իշխանաց, թագաւորաց, և իմաստնոց աշխարհիս

Ա՟

Ո՜չ զի որքան կայսերք ջանացին 'ի ձեռն բազմութե̃ զօրաց, և փարթամութեանց ընդ իշխանութ̃, և ընդ կրօնիւք իւրեանց ածել զայլս թագաւորութիւն, բայց ո՛չ կարացին. զի աղաղակ ն̃ց անզգամութ̃ էր: Նա՛ որքան իմաստասէրք ջանս եդին 'ի ձեռն բազմազանից ձեռնարկութե̃ց և վիճաբանութե̃ց 'ի ներքոյ կարծեաց և վճռոց իւրեանց դնել զկարծիս և զվճիռս այլոց փիլիսոփայից, բայց ո՛չ կարացին. զի հպարտութ̃ էր աղաղակ նոցին: սակայն աղքատ իմաստունն ն̃ն խոնարհութ̃ և 'ի ձեռն մեղմագոյն բանից իւրոց՝ զսիրտս ամենից լսողաց բանից իւրոց
'ի յինքն գրաւեաց:

18: Բարի է իմաստութիւն քան զանօթս պատերազմի. և յանցաւոր մի, (ն̃ն 'ի միում,) կորուսանէ զբարութիւնս բազումս:

Այսինքն, միշտ օգտակար և բարեգոյն է իմաստութիւնն քան զո՛ և իցէ զանօթս, զզէնս և զգործիս պատերազմի: վասն զի զէնքն առանց իմաստութե̃ զոչինչ ապրեցուցանեն: Բայց իմաստութիւն առանց զինուց ապրեցուցանէ զինքն իմաստունն,
նաև զայլս:

Նա՛ որ յանցանէ 'ի միում կանոնի իմաստութե̃, և կամ զանց առնէ զմիով կարգաւ և օրինադրութ̃ նորին՝ կորուսանէ զբազումս. ն̃ն զբազում բարիս: և այս

յայտ

յայտ եղև 'ի Ռօբովամ, որ զմիով կանոնաւ իմաստութեան զանց առնելով, այլ ըստ խորհրդոյ մանկանց, և ոչ ըստ խորհրդոյ ծերոց գործելով՝ կորոյս զմեծագունեղ մասն թագաւորութեան իւրոյ։

Իսկ որքան առ իմաստութիւն Ս՟ոի, որ ընտրեաց զաղքատութիւն առաւել քան զհարստութի՟ · և զխոնարհութի՟ քան ըզփառս, հետևօղքն Ս՟ի եթէ զմիով կանոնաւ իմաստութեան Ս՟ի զանց առնիցեն, և 'ի միում բանի հրամանաց և պատուիրանաց նորին յանցանիցեն, կորուսանեն զբազում բարիս յաւիտենականս · և այս վճիռ իմաստնոյն միաբանի ընդ վճռոյ առաքելոյն Յակոբայ · 2. 10. որ ասէ · որ ով զա̄մ օրէնսն պահիցէ, և միով իւիք ինչ գթիցէ, (այլ 'ի մահուչափ մեղս անկանելով) եղև ա̄մ օրինացն պարտական։

# ԳԼՈՒԽ Ժ.

ՅԱՂթէ գեղոյն բաղդատէ՝ ընդ նախատանս զի_
մաստութեան յիմարութեան: Եւ ասէ 'ի 8. պա_
նէն մինչև 'ի վերջն զգեստս առաջնորդս իմա_
ստութեան առնչանէ, առաջնորդելով նմա զայս, զի
մ՛ լսիցէ ոչ այլում զհանճարն. և կամ բամբասիցէ.
մանաւանդ զթագաւորս, կամ զհզօրս:



## ※ ԲԱՆ: ※

Ճանճք մեռեալք զազրացուցանեն
զիւղս անուշունս. պատուական
է սակաւ ինչ իմաստութիւն, քան
զմեծ փառս անմտութեան:

## ※ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ: ※

Եւ զի նախ քան զայս ասացեալ էր, թէ
որ 'ի միում կանոնի իմաստութեան յանցա_
նէ, կորուսանէ զբազում բարիս, աստէն
առ 'ի հաստատել զայն, զՃիւս զայս որ
զօրինակ ածերէ նմա: Իբրու թէ ա_
սիցէ. որ մեռեալ ճանճքն մինչ անկա_
նին 'ի մէջ անոյշ իւղոյ՝ ապականեն զիւղս
անուշունս՝ զազրալի առնեն. այսպէս և՝
մինչ զմի մանհուչափ մեղս գործելով՝ յան_
ցա_

ցանեմք 'ի միում կանոնի իմաստութեան,
զայլս բազումս բարեգործութիւնս մեր՝
զորս իմաստութբ գործեալեմք, որք են
ոչ զխղս անուշունս, ապականեմք այնու
մեղօք. եւ զազրալի առնեմք:

Ա՛յս յայտ է. Պատուական է սակաւ ինչ իմաստու-
թեանն, քան շքեղ փառս անմտութեան: Այսինքն,
լաւագոյն է մարդոյ՝ յաշխարհի յայսմիկ
զսակաւս ունիլ, թէ հանգստութի իցէ,
թէ դրամ, թէ ուտելի, եւ թէ ո՛ եւ իցէ
այլ իր՝ հանդերձ իմաստութբ. քան պա-
հեցմամբ ամենից կանոնաց իմաստութեն,
քան զմեծամեծ փառս եւ զհարստութիս,
եւ կամ զո՛ եւ իցէ զայլս բարիս հանդերձ
անմտութբ ունիլ. քան հանդերձ զանցա-
ռութբ կանոնաց իմաստութեն: եւ զայս
վ՟այնորիկ ասէ. քանզի մինչ 'ի վեր անդր.
9. 18: զիմաստութին նախադասեաց ա-
մենից այլոց բարեաց, աստէն առ 'ի հաս-
տատել զնոյնն՝ ասէ, ընտրեա՛ զսակաւն
որ է հանդերձ իմաստութբ, քան զբա-
զումն որ լինելոց է հանդերձ զանցառու-
թբ կանոնաց իմաստութեն: Ա՛յս այս բան
միաբանի ընդ այնմիկ, զոր ասէ սաղմո-
սերգուն. Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ՝ քան զբա-
զում մեծութիւնս մեղաւորաց. Սաղմ. 36. 16:

2: Սիրտ իմաստնոյ յաջակողմն իւր. եւ սիրտ
անմտին 'ի ձախակողմն իւր:

Այսինքն, միտք, եւ բաղձանք, եւ դիտաւո-
րու-

րութիւնք իմաստնոյն են միշտ 'ի յաջակողմն իւր · ք̃ 'ի կողմն խոհեմութեան , և բարւոյ ընտրութեան , որով միշտ ընտրէ զկայուն և զմնացական բարին · ք̃ զայն որ է համեստ նաև օգտակար առ երանական կեանն , որ է վախճան իւր · և ունի միշտ զաչս իւր բացեալ՝ զի մի՛ զճշմարիտ և զստոյգ բա_ րին փոխիցէ ընդ սուտ բարեաց · զկայուն հանգիստն , և զմնայական փառս ը̃ ան_ կայուն և անցաւոր հանգստեան , կամ̃ փառաց ։ Նոյն իրաւի միտն և սիրտն այս_ պիսւոյն է յաջակողմն իւր · զի աջակող_ մեան Ք̃ի գոլ կամի ։

Իսկ սիրտ անմտին է 'ի ձախակողմն իւր · զի միտք , և բաղձանք , և դիտաւորութիւնք անմտին միշտ է առ այսոսիկ , զի յաշխար_ հի յայսմիկ ունիցի զայն մ̃դ , զորս ան_ մտութիւն իւր առաջադրէ ինքեան , և ա_ պականեալ բնութիւնն տենչայ ունել ։ Քանզի անմիտն ցանկայ նախադասել այլոց · գոլիլ յամենեցունց · հարստահա_ րել զայլս · ուտել և ըմպել առատապէս համդերձ փափկութե̃ · ստանալ զհարըս_ տութ̃ի , որով կարիցէ հեշտանալ՝ և զմայ_ լիլ որքան և կամիցի · և ցուցանել զինքն ամենեցունց , թէ իցէ մեծ ոմն ։ և մինչ այսոքիւք ցանկացեալք ոչ յաջողին ինքեան , և կամ արգելանին 'ի ձեռն ոմանց , յայն_ ժամ դիմէ առ նենգութ̃ի · առ խաբէ_ բայութ̃ի · առ կռիւ̂ , և առ ատելութ̃ի ·

առ

առ բամբասանս, և առ հայհոյութիւնս : Որք ամենեքեանք են չարիք մեծամեծք . և ոչ յայլուստեքէ բղխին սոքին, եթէ ոչ 'ի յանկարգ սիրոյ ժամանակաւորաց բարեաց՝ 'ի ձեռն որոյ սիրտ մարդոյն լինի 'ի ձախակողմն իւր . և այնու չարակարգի առ'ի լինիլ ձախակողմեան Ք՜ի . և լսել զսոսկալի բարբառն զայն . Երթայք յինէն անիծեալք :

3 : Բռա՛նկլէ և 'ի ճանապարհէ յորժամ գնայցէ անձին, ուրեմն ոչ պատշաճեսցի . Աղօթ ինչ խորհէ, զի անմտութիւն է :

Այսինքն, անմիտն և աշխարհասէր մեղաւորն՝ նաև 'ի ճանապարհին՝ յորում ընթանայ, միտն 'ի յուռնայն և 'ի փնասակար մտածմունս լինելով՝ պակասի սիրտն . զի պակասի 'ի բարի խոկմանց՝ և 'ի յուղիղ դիտաւորութենէ : Այլ հոգևորապէս անմիտն՝ նաև 'ի գնալն 'ի ճանապարհս բարեգործութեան, և 'ի առնելն զբարի ինչ՝ 'ի ձեռն թիւր դիտաւորութեան, և կամ 'ի փառս մարդկանց առնելով զբարին՝ պակասի և ունայնանայ 'ի վարձուց բարեաց, զորս ընդունելոց էր յԱյ :

Այլ յարէ . Ա՜յս աղօթ ինչ խորհէ, զի անմտութիւն է :

Այսինքն, զնաւք խորհուրդք և դիտմունք նր մոլեկանք են : սակայն զի այլոց թարգմանութենց ընթերցեալ լինի այսպէս . զամենեսեան յիմար համարի : զի, անմիտն որ քայլէ

քայլէ և շրջի, և կամ գնայ 'ի ճանապարհ, զա̃մ ոք զոր տեսանէ՝ յիմար գոլ համարի, յորժամ ոչ են համաձայն ինքեան : Նաև այս իրաւի է. վ̃ զի ա̃մ՝ անմիտ և ամբարտաւան՝ միշտ զա̃մ ոք որ ոչ համաձայնի ինքեան, վարկանէ և վճռէ գոլ յիմար: վ̃ զի անմիտն և ամբարտաւանն ո՛չ ճանաչէ զիմաստութի՛ն, և ո՛չ զկանոնս նորին, ո՛րպ զի զհամաձայնօղս կանոնաց իմաստութե իմաստուն գոլ ասիցէ. և զոչ համաձայնօղսն յիմար գոլ վճռիցէ. այլ միայն զիւր ինքն ճանաչէ. և զիւրն յիմարութի համարի իմաստութի : վասն որոյ զամենեսեան որք ոչ համաձայնին ինքեան, համարի և վճռէ գոլ յիմար:

4 : Եթէ հոգի իշխանին ելցէ 'ի վերայ քոյ, մ՛ թողուր զտեղի քո. զի ողոքումն դարձուցանէ զմեղս մեծամեծս :

Այսինքն, եթէ բարկութի, կամ ցասումն իշխանին յառնիցէ 'ի վ̃ քոյ, մի՛ յուսահատիր, և մի՛ թողուր զտեղի քո. ծ̃ զբարուք կացութիդ, և զհաճատարմութիդ, և զայլ ա̃մ զոր ունելոց էիր՝ եթէ իցէիր 'ի շնորհս նր, մի՛ թողուր: Այլ կա՛ց հաստատուն 'ի բարւոջ. և վ̃ յանցանացդ աղաչեա՛ զերեսս նր, զի թողցէ քեզ զայն. և յօժարութե յանձին կալ զպատիժն զոր տայ քեզ. և ընդգրկեա՛ սիրով. զի այնու բարկութի իշխանին շիջանիցի. և յան_

ցա_

ցանայ քոյ լինիցի քաւութիւն. և վն ապա-
գային զգուշութին: Քանզի պատիժքն
թէպէտ են կսկծեցուցիչք, բայց վերաց
քոյ կարի գործունեայ դեղք և բժիշկք:
Ած ողորմուն է հանդերձ ապաշխարութե՝
և յանձնառութե պատժոյն՝ աղաչելն զե-
րեսս Տն իւրոյ բարկացելոյ: Ած մն այսո-
րիկ յարէ, ողորմումն դարձողացն զմեղս մեծա-
մեծս. զի, աղօթքն և աղաչանքն դադա-
րեցուցանէ, և կամ նուազեցուցանէ և
ոչնչացուցանէ զմեղս, թէ և իցեն մեծա-
մեծք: Քանզի ամբաստանութե անձին
իւրոյ ճշմարիտ զղջումն և ապաշխարումն
յանցաւոր ծառային, հանդերձ յանձնա-
ռութե պատժոյն՝ որ առակցեցեալցէ ը
աղաչանաց՝ շիջուցանէ զբարկութի տն
բարկացելոյ. և խսպառ ջնջէ զյանցանս:
Ած ներհակաբար՝ ջատագովելն զխա-
լանս՝ և փախչելն 'ի պատժոյ՝ բորբոքէ
զբարկութի տն իւրոյ. և աճեցուցանէ
զյանցանս:
Որդ՝ բարկութեն իշխանին, զոր ասէն
դնէ իմաստունն, իմանի նախ՝ բարկութին
այ, որ է ծայրագոյն իշխան ամենեցուն.
ուստի մարդիք ընդ տեսանելն զած բար-
կացեալ 'ի վն ինքեանց, տալովն զսով,
զմահ, զսուր, զգերութի, և զայլս նմանս,
ոչ պարտին տրտնջել, և կամ յուսաբեկ
լինիլ, այլ կալ և մնալ հանդարտ 'ի տեղ-
ւոջ. զի 'ի կացութե իւրեանց. որդոն.
եթէ

եթէ նախ գոհանային զՔյ՝ և շնորհակալք էին զնմանէ, և սիրէին զնա մինչ էին 'ի խաղաղութե,'ի նոյն կացութե մանաւ յայնժամ՝, մինչ էին ստորանկեալք սովու, սրածութե, մահու, և գերութե, լինե_լով նաև մն այսոցիկ ամենեցունց շնոր_հակալք և գոհացողք զՔյ, յօժարութբ յանձն առնլով զայնպիսի պատիժս, զորս Ն.Ծ տայ առ'ի քաւել զմեղս նց. և հա_նապազ համբերձ գոհութբ աղաչել զե_րեսս Քյ ողորմանօք, զի անցուսցէ զցա_սումն իւր. և միշտ աւել զայս. Աւրհնու_թիւ և յիրաւի ածեր զայս ած 'ի վր մեր վասն մե_ղաց մերոց : Այս բան է և մն խրատքանց իւրոց անձանց՝ մինչ զմամնաւոր պատիժ իմն ընդունին յԱյ 'ի ձեռն հիւանդութե, կամ աղքատութե, և կամ այլոց նմանեաց: Նոյն կարէ մտածիլ և այս. եթէ ոք յանկարծ բարկուք, և նախանձու գիճին անկցի 'ի մեղս ինչ, յորմէ և հետևի բար_կութի Քյ 'ի վր իւր, այսու՝ զի կորուսա_նէ զներքին մխիթարութի բարւոյ խղճի մտաց իւրոց, ոչ պարտի յուսաբեկիլ, և թողուլ զուեղի իւր. այլ զբարւոք կացուին զոր ունէր նախ. այլ զաղօթելն, զհսկելն, զհնազանդութին, զխոնարհութին, և զայլս բարեգործութիս, առնլով, թէ ես մինչ սահեցայ 'ի ծանր մեղս, զինչ օգուտ էն ինձ այնպիսիք բարիքն. քանզի այս է յուսահատութի, և մեծ չար. այլ պար_

տի մնալ 'ի բարւոք կացութեան իւրում. և յանձն առնլով զնմ պատիժս՝ զղջալ, և ապաշաւել՝ և խոստովանիլ. և աղաչել մեծաւ յուսով՝ և ողոքանօք զերեսս ո̄յ. և այսու որքան և ծանր իցէ մեղքն և մեծ,

թողանի յո̄յ:

Երկրորդաբար խնդրի նաև բարկութ̄ն ա̄մ իշխանաց՝ և ա̄մ մեծաւորաց, թէ հոգևորաց, և թէ մարմնաւորաց. որոց բարկութ̄ին վ̄ն երբեք յանցանաց ստորագրեցելոց մինչ յառնիցէ, ստորադրեալքն և հնազանդեալքն ոչ պարտին յուսաբեկ լինիլ. այլ հաւատարմաբար կալ 'ի վերայ պաշտօնի իւրեանց, և գործոյն. և հանդերձ ապաշաւութ̄ե, և յանձնառութ̄ե

պատժոյն հայցել զներումն:

5: Գոյ չարութիւն, զոր տեսի 'ի ներքոյ արեգական. իբրև ակամայ ինչ ել յերեսաց իշխանին:

Կամի ասել. յաշխարհի յայսմիկ տեսի և զայս չարութի. և կամ զանկարգութի. զի յերեսաց իշխանի ելանէ վճիռ ինչ, որ ոչ գոլով քննեցեալ 'ի ձեռն լուսոյ բանին՝ է ոչ զինչ որ իցէ լեալ ակամայ: Եւ այսպիսի անբանաւոր վճռով բազմիցս անարժանք և անբարիշտք անձինք ելանեն 'ի փառս և 'ի պատիւս, և կացուցանին 'ի վերայ մեծամեծ գործոց՝ և պաշտօնից. և արժանաւոր անձինքն մնան յանկեան ուրուք՝ լինելով ստնակոխ յամենեցունց:

Եւ

Նաւ զայս ասելովն՝ ըստ անցելոյ խրատուն՝ ասել կամի, թէ դու նաև տեսանելովդ զայսպիսիս՝ մի՛ փոխեր զբարւոք կացութի քո․ այլ կա՛ց 'ի տեղւոջ քում, որ 'ի պարկեշտութե՛ , 'ի բարեպաշտութե՛ և յերկիւղին այ․ և մի՛ ածեր զմտաւ՛, թէ ահա փառամոլք, ամբարհաւա՛նք, արծաթասէրք, և կեղծաւորեալքն յառաջանան՝ և ելանեն 'ի բարձրագոյն աստիճանս, իսկ բարիքն և իմաստունքն ոտնակոխ եղեալք են, որպէս զի մի՛ գուցէ այնու թուլանայցես 'ի բարւոք կացութենէդ․ քանզի այսպիսիքս մինչ լինին, արտաքոյ կարգի բանի են․ և իբրու յակամայ․ ուստի և համբերել պարտիս ։ Քանզի և Ա՟ծ որ զամ՟ գիտէ՝ մինչ թոյլ տայ լինել այնց, ո՛չ թէ կամի զի ամբարիշտք թագաւորեսցեն, կամ իշխեսցեն՝ և 'ի մեծ փառս վերանայցեն, այլ 'ի պատիժ իւրեանց ամբարշտաց․ և կամ 'ի պատիժ ժողովրդեան թոյլ տայ նոցա բարձրանալ․ և այսպէս մինչ առ 'ի պատիժ թոյլ տայ, նաև Ա՟ծ իբրու ակամայ առնէ ։ Վասնզի Ա՟ծ զամ՟ բարի, և զամ՟ պարգև, և զշնորհ, նաև զթողութիւն մեղաց տայ իւրոց ստեղծուածոց մեծաւ յօժարութբ և կամաւ․ բայց զպատիժսն՝ թէ հոգւոց՝ և թէ մարմնոյ, տայ իբրու բռնադատեցեալ 'ի մեղաց նց, և ակամայ։

6. Տուեալ անմիտն ՚ի բարձրութիւնս մեծամեծս. և մեծատունք ՚ի խոնարհութեան նստցին :

Այսինքն, ՚ի յանբանաւոր վճռոյ իշխանին, կամ Թագաւորին՝ տուեալ. զի եդեալ եղև անմիտն և անզգամն ՚ի բարձրութիւնս մեծամեծ իշխանութեան, կամ պատուոյ. և մեծատունքն. զի և մեծութեան արժանաւորքն ՚ի խոնարհութեան նստցին. զի մնան ՚ի խոնարհ կացութեան, և իբրու ծառայք և ստորադրեցեալք անմտաց բարձրացելոց ՚ի յաստիճան պատուոյ : Այլ կամի ասել (որպէս ՚ի անցեալ տանն ասացաւ) թէ զայսպիսիս տեսանելով մի՛ դրդուեսցիր ՚ի բարւոք կացութենէ քումմէ. այլ կա՛ց անշարժ ՚ի բարեպաշտութեան քում:

7. Տեսի ծառայս հեծեալս ՚ի ձիս. և իշխանս որ գնային իբրև ծառայս յերկրի :

Այսինքն, տեսի և զայս, զի նոքա որք մտօք անմիտ գոլոյն իւրեանց էին ըստ ինքեանց ծառայք, և կամ ստրուկք, զի ծառայէին և հնազանդէին մոլութեանց մարմնոյ իւրեանց, լինելով իշխանք, և կամ առաջնորդք և մեծաւորք, այնու նստեալ էին ՚ի վերայ ձիոյ, որպէս զազատ ոք և զիշխան : Այլ ներհակ այսմ՝ տեսի և զիշխանս, զի զարս իմաստունս և զբարեպաշտս, որք իշխելով ախտից մարմնոյ իւրեանց, ըստ ինքեանց՝ և ստուգապէս էին իշխանք, բայց երթան հե_

հետևաս ո՞չ զծառայս առաջի ձևաւո-
րեցելոյն ։ Արդ կամ որ նոյն է, եթէ ասի-
ցէր, տեսի զայնս՝ որք են ըստ ինքեանց
ծառայք՝ գոլով ծառայ ախտից, եղեալ
իշխանս, և բարձրացեալ 'ի վեր. իսկ զայնս՝
որք ըստ ինքեանց են իշխանք, իշխելով
ախտից մարմնոյ, մնացեալ 'ի խոնարհ կա-
ցութեան ո՞չ զծառայս ։

Արդ ո՞չ Տէրն մեր ասելովն . որ առնէ զմեղս,
ծառայ է մեղաց . Յօհ. 8. 34 ։ այնու եղծեալ
զազնուութիւն հրէից, որք զինքեանս ա-
զատս և իշխանս գոլ համարէին . իսկ զա-
ռաքեալսն որք իշխեցին ախտից իւրեանց,
իշխանս արար 'ի վեր ամենից մարդկանց,
այսպէս և աստէն սողոմոն իշխան ասէ
զնոսա՝ որք իշխեն 'ի վերայ ախտից մարմ-
նոյն . և ծառայս կոչէ զնոսա, որք ծա-
ռայեն և հետևէին ախտից մարմնոյ իւր-
եանց ։ Արդ այս յիրաւի է, զի ծառայքն
ախտից՝ են ըստ իրին ծառայք, և միայն
ըստ անուանն իշխանք . իսկ իշխօղքն ախ-
տից՝ ըստ իրին են իշխանք, և ըստ ան-
ուան միայն ծառայք ։

8 ։ Որ փորէ զխորխորատ, 'ի նոյն անկցի . և
որ քակէ զցանգ, հարցէ զնա օձ ։

9 ։ Արդ որ բառնայ զքարինս, վտանգեսցի նո-
վիմբք . և որ հերձանէ զփայտս, վտանգեսցի 'ի նոսին ։

Այսպիսիկ բանս գոն չորք նմանութիւնք
և օրինակք, որք վերաբերին առ նոյն միտ

բանի․ ցն̃ առ այս, թէ ամ̃ ոք՝ որ մնասել ջանայ ումեք ի և իցէ կերպիւ, նախ քան թէ մնասիցէ նմա, ինքն մնասի։

Առաջին օրինակն որէ փորելն զխորխորատ ընկերին, վերաբերի առ նոյնն այսպէս։ որ առնէ զդաւաճանութիւն, զի այն ոք ոչ ելանիցէ ՚ի յաստիճան պատուոյ, որպէս զի ինքն ելցէ․ այն ոք մի՛ շահեսցի յայն ինչ վաճառ՝ որպէս զի ինքն շահեսցի, նախ՝ ինքն անկանի ՚ի նոյն գուբ, և խորագոյն քան զայն․ Վասնզի նա որում արար զնենգութիւն, միայն յիշխանութենէ իմեքէ, և կամ ՚ի սակաւուց շահէ արծաթոյ զրկի․ բայց ինքն այնու նենգութ̃ն ՚ի բնականէ լուսոյ բանին զրկի․ և այսու ՚ի խորագոյն գուբս անկանի։ Վն̃ զի լոյս բանին միշտ ցուցանէ մեզ ոչ առնել զայն այլում, զոր մեզ լինել ոչ կամիմք․ արդ՝ ոչ՛ոք կամի զի ինքն յայլոց նենգիցի․ ուրեմն և ինքն զոչ՛ոք պարտի նենգել։ Երկրորդաբար՝ անկանի ՚ի նոյն խորխորատ նաև այսու․ զի ինքն որ այսօր նենգէ զայս ոք, և վաղիւն խաբէ զայն ոք, հանդիպելոց է և ինքեան, զի յաճախ միում այլ ոմն ամբարիշտ նենգիցէ և խաբիցէ զինքն։ Վն̃ զի ամ̃ նենգաւորաց և խաբեբայից հանդիպի նենգիլ և խաբիլ յայլոց նենգաւորաց և խաբեբայից։ Եւ այսպէս ամ̃ նենգօղ կախի որպէս զհաման՝ զփայտէն, զոր պատրաստէ կախել զայնմանէ զընկերն։

Երկ-

Երկրորդ օրինակն է քակումն ցանգոյ այգւոյ։ Արդ աստ դիտելի է, զի ցանգք այգեաց միշտ լինին փշօք, և կամ խոժոռաւոր քարամբք, 'ի յորս բազմիցս օձք, և Թիւնաւոր սողունք բնակին։ Արդ՝ նա, որ զձեռն արկանէ քակել զայն, միշտ յորոգայթի է, թէ հարցէ զնա օձն։ Արդ զայս օրինակ դնելով՝ կամի ասել, թէ որ զբարի անուն ուրուք ջանայ եղծել. կամ զփառս այլոց յափշտակել, և կամ զբարի օրէնս՝ և զօրինադրութիւնս այլոց փոփոխել, ո՛չ զի ինքն հեղինակ և օրէնսդիր երևեսցի, միշտ դնէ զինքն յորոգայթի՝ զի հարեալ լիցի յօձէն. և այսու ընդ քակելն զցանգն այլոց, ինքն քակտի՝ խայթեցեալ լինելովն յօձէն։ Արդ օձս այս է հպարտութիւն և ամբարտաւանութիւն իւր, և նախանձն. յորոց նախ ինքն խայթի, քան թէ նոքօք վնասիցէ այլոց։

Երրորդ օրինակն է, բարձումն քարանց։ Քանզի նոքին՝ որք զքարինս մեծամեծս բառնան, և տանին 'ի միոյ տեղւոջէ առ այլ տեղիս, միշտ են յորոգայթի, թէ յաւուր միում՝ կամ քարն 'ի վ՛ր ոտից նոցին անկեալ, և կամ ձեռքն նց՛ 'ի ներքոյ քարին մնացեալ վնասեսցին։ Եւ այս օրինակ վերաբերի առ ագահս, և կամ առ մեծատունս և վաճառականս՝ որք զարծաթն 'ի միոյ վաճառէ 'ի միւսն մուծանելով՝ ոչ զբեռնակիր քարանց եղեալք են.

և փոխեն զքարն 'ի տեղւոջէ առ տեղիս ։ նաև ըստ իրին բեռնակիրք արծաթոյ և ոսկւոյ են . մանաւանդ յայնժամ , մինչ վ̃ առաւել սիրոյ ոսկւոյն զբազմութիւս ոսկեաց յանձինս իւրեանց կրելով 'ի ճա_նապարհին՝ 'ի սաստիկ ծանրութեցն փա_սեցեալ հիւանդանան . և մերթ նաև մե_ռանին . և այսու քարն ոսկւոյ 'ի վերայ բոլոր մարմնոյ իւրեանց անկեալ՝ զոհք և ողջակէզք մամոնային լինին ։ Իսկ թէպէտ այս ո՛չ հանդիպի միշտ , սակայն որո_գայթքն են միշտ , և ո՛չ երբէք պակասին ։ քանզի մերթ առաւել սիրելով զարծաթն՝ վտանգին 'ի հոգին . և մերթ վ̃ արծա_թոյն զանց առնելով զճանապարհաւ ար_դարութե̃ , անիրաւութե̃ , և ստով՝ և խաբեբայութե̃ հաւաքեն զհարստութիւս . և այսու քարն անկանի 'ի վ̃ր ոտից նոցա ։ Մերթ ևս վ̃ սիրոյ արծաթոյն լռեն 'ի գործոց բարեաց , և 'ի տալոյ զողորմութի աղքատաց . և այսու ձեռքն նց̃ մնան 'ի ներ_քոյ քարին , և վտանգին ։ Իսկ այս միաբա_նի ընդ այնմ բանի Տ̃ն՝ զոր վճռեաց ա_սելով . Դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել ։ Մատթ . 19 . 24 ։ Որով իմանի թէ մեծա_գոյն որոգայթ է լինիլն բեռնակիր քա_րանց . զ̃ի արծաթոյ՝ և ոսկւոյ ։

Իսկ չորրորդ օրինակն էր զհերձանողաց զփայտն ։ վ̃ զի և նոքա՝ որք են հերձօղք փայ_

փայտից՝ մինչ են յորդայթի մխեցման մացառաց փայտիցն 'ի ձեռս իւրեանց. ո՟չ եւ բազմիցս համդիպի ձեղդողաց զփայտս: Նո՟ այս վերաբերի առ քսուսն, եւ առ այնս որք սերմանեն զտարաձայնութի 'ի մէջ եղբարց. եւ այսպիսիքն՝ որք զայլս փեռեկտել կամին, նախ ինքեանք փեռեկտին եւ հերձին. վ՟զի յո՟յ՝ նաեւ 'ի մարդկանէ ատեցեալք եւ հերքեցեալք լինին: Նման ո՟չ հերձօղն զփայտս՝ հերձէ մացառաւ փայտին զմարմին իւր. այսպէս եւ սերմանօղն տարաձայնութե՟ հերքի յԱ՟Յ՟՝ եւ 'ի շնորհաց նո՟: Նոյնն իմա եւ զհերձուածօղաց, որք 'ի կամին հերձել զմի եկեղեցին Ք՟ի 'ի բազումս, կացուցանելով զբազում գլուխս, եւ կամ զտարբեր հաւատս 'ի հաստատոյ կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցւոյն հռոմայ, ինքեանք հերձեալք եւ հերքեցեալք լինին 'ի միութենէ, եւ 'ի հաղորդակցութենէ եկեղեցւոյն Ք՟ի:

10: Զ/ընէ անէջի եւ երկան, եւ նա փրփրեցոյց զերեսս նոր. եւ զօրութե՟ զօրացուցանէն. եւ է տառաճելութե՟ ջաղ խմտութե՟:

Յայսմիկ տամն՝ բառս անէջի, էգեալ է փոխանակ բառին՝ որէջի. եւ այս բառ այսու կերպիւ նաեւ յայլս ոմանս տեղիս գտանի յա՟ծաշնչի մերում. զոր հմուտ ընթերցօղն պարտի ճանաչել, եւ ըստ այնմ առնուլ

նուլ զբանն ։ Որպէս՝ արկանելն զերկաթ, է սրելն զդանակ, կամ զսուր 'ի մէջ յեսանի ․ զի երկաթն որ է նիւթ սրոյ՝ եւ դանակի, աստէն փոխանակ սրոյն առեալ լինի ։ որպէս եւ զսամփսոնէ ասացաւ ․ Դատ․ 13․5 ․ Եւ երկաթ մի' ելցէ 'ի գլուխ նր ․ այսինքն ածելի ։ Սման որոյ իմաստութեանն՝ աստէն կամի ասել զայս ․ եթէ բութ եւ գուլ դանակն, եւ կամ ժանկոտ սուսերն սրիցի 'ի վերայ յեսանի, նա տրտմեցուցանէ զերեսս իւր ․ այսինքն դիւրաբար ոչ շարժի ժանկոտ դանակն 'ի մէջ յեսանին ․ եւ այսպիսի ոչ շարժիլս կոչի տրտմութիւն երեսաց երկաթոյն ․ բայց մինչ սրօղն առաւել ուժ տայ, եւ բազմիցս ուժով շարժէ զդանակն 'ի մէջ յեսանին, ժանկն սկսանի նուազիլ ․ եւ զօրանայ դանակն առ 'ի շարժիլ 'ի մէջ յեսանին ․ եւ այսու բթութիւն բերանոյ դանակին սրի ․ եւ ժանկն բառնի ։

Այս՛ որքան առ այս՝ ասէ ․ Նա զօրութեամբ զօրացուցանէ ․ այսինքն աշխատանօք, եւ ուժ տալն սրօղին՝ սրէն զդանակն ։ Այս՛ զօրութիւն առակինն է որքան առ այս ․ թէ միտ մարդոյն մինչ է գուլ եւ բթացեալ՝ նաեւ ժանկոտեցեալ, եւ այնու ոչ իմանայ զբանս իմաստութեան, եւ յորժամ հարկ ինչ լինի ունկն դնել բանից իմաստութեան, սկսանի նեղիլ, եւ ոչ բնաւ շարժի սիրտն եւ հոգին, պարտի այնպիսին զմիտն իւր գուլ եւ ժանկոտ, միշտ ուժ տալով եւ մեծաւ ջանիւ շարժել

'ի մէ_

'ի վերայ յեսանին. քան 'ի վերայ բանից ի-
մաստութեան, և բանականութեան. և այսպէս
թէպէտ 'ի սկզբան տրտմեցուցանէ զե-
րեսն՝ և կրէ զդժուարութիւն, բայց սակաւ
առ սակաւ յառաջընթանալով՝ աշխատա-
նաց ուժն զտկար միտն զօրացուցանէ. և
այսպէս սրեցեալ լինի միտն. և սկսանի
հասկանալ զբանս այնց ամենից իմաս-
տութեանց, որք վերաբերին առ դոյն բա-
րեպաշտ և երկիւղած յոյժ: Ո՛րքան առ-
այսպիսի իմաստութիւն, ո՛չ որքան և իցէ
բթամիտ ( միայն թէ չիցէ խելագար )
կարէ առբասրել զինքն, և կամ՝ անմե-
ղադիր առնել. իբրու թէ ոչ կարէր ու-
սանիլ. զի ամենեքեան կարեն, բայց
միայն թէ կամիցին: Ո՛ւ նոքա՝ որք ընդ
երկար ժամանակս միշտ 'ի մոլութիւս, 'ի
խաղս, 'ի դատարկաբանութիւս՝ և 'ի յու-
նայն գործս՝ և յիրակունս պարապեալք
են, առաւել ժանկոտեալ՝ և բթացեալ
ունին զմիտս իւրեանց. և այնպիսեացն
առաւել աշխատութիւն պիտոյ է: Ո՛չ առ-
այս վերահայի հետևեալ բանն. Նա է ա-
ռաւելութիւն քաջ իմաստութեան:

Այսինքն, եթէ առաւել ժանկահարե-
ցեալէ միտդ 'ի ձեռն մեղաց՝ և ունայնա-
սիրութեան, և մանաւանդ 'ի ձեռն իմաստ-
ատեցութեան, մի երկնչիր. զի զքաջագոյն
և զգործունեայ ուժս ունի իմաստութիւն.
ուստի հպեցո նմա զմիտդ, և սուէպ շար-
ժեա

ժեամ 'ի վե՛րն նր · և մի երկմտիր · քանզի դա_
նակդ որքան և իցէ առաւել ժանգոտ,
այսու ամի՛ յոյժ առաւելութ՟ի քաջութ՟,
և ամրութ՟ն գոյ 'ի յեսանն իմաստութ՟ն ·
որով կարող է զո՛ և իցէ կերպիւ զժանգո_
տեցեալ միտ մարդոյն սրել · վ՟ զի լուսաւոր
և անթառամ է իմաստութիւն · և դիւրաւ երևի սի_
րողաց իւրոց · Իմաստ. Զ. 13 : Ա՛ն սկիզբն նր
է երկիւղն ա՛յ · զոր ա՛մ՝ ոք կարէ ստանալ ·
և այնու կատարելապէս իմաստնանալ:

11 : ԹԷ ՀԱՐՑԷ ՕՁ 'Ի ԹՈՎԵԼԷՆ, ՈՉԻՆՉ ԱՌԱՒԵ_
ԼՈՒԹԻՒՆ Է ԹՈՎՉԻՆ:

Այսինքն · յորժամ թովիչն սկսանի թո_
վել զօձն իւրով բանիւ առ 'ի թմբեցուցա_
նել զնա և կալնուլ, իւրոյ արհեստի և
գիտութ՟ն առաւելութ՟ի և գործունէ_
ութ՟ն է այս, զի յայնս ժամանակս մինչ
թովէ զօձն, 'ի յօձէն ոչ խայթեցի · և ե_
թէ խայթեցի, ոչինչ է գիտութ՟ի և ար_
հեստն, և գիտութ՟ի նր · և այսու ոչինչ
առաւելութ՟ի, և կամ քաջութ՟ի է թով_
չին : Ա՛ն զայս առակ յարէ նախասացե_
լոյն՝ յորում զիմաստութ՟է խօսէր՝ առ 'ի
ցուցանել զպտուղն իմաստութ՟ն:

Ա՛ն կամի ասել զայս : ո՛րպ թովիչն է թմ_
բեցուցիչ օձի իւրովք հնարիւք, և յաղթէ
թիւնից նր : և 'ի թովելն զօձն՝ ոչ պար_
տի խայթել յօձէն և յաղթիլ, այլ թմբե_
ցուցանել զօձն և յաղթել · այսպէս և ի_
մաս_

մաստունն է թողլոյ գինայ, և ամ մոլութեանց և ախտից մարմնոյ ։ վ՟ որոյ իմաստունն 'ի թողլոյն զմոլութիս, ը՟ 'ի ցուցանելն իմաստութե՟ իւրով զգարշութի մոլութեց, զունայնութի փառաց՝ և հեշտութե աշխարհի, եթէ ինքն յաղթիցի 'ի մոլութեց, և խայթիցի 'ի յախտից և յունայնութեց աշխարհի, ոչ ինչ գովութի, ոչ ինչ առաքելութի, և ոչ ինչ քաջութի է այնպիսւոյ իմաստնոյն ․ այլ 'ի յամօթ և 'ի խայտառակութի անձին իւրոյ է այնպիսի անունն իմաստնոյ ․ ոմ՟ անունն թողլութե 'ի յամօթ և 'ի նախատինս նր՟ է, որ 'ի թողլոյն զօձն՝ խայթի 'ի յօձից ։ Ե՟ այս է գործունեայ և մեծագունեղ յանգիմանութի ամենից նոյին՝ որք են սպասաւորք բանին այ և քարոզիչք, և յաղթին 'ի մոլութեցն՝ զորս թողեն 'ի քարոզելն ։ Դարձեալ՝ մեկնի այսպէս ․ ոչ ինչ առաքելութի է թողլչին՝ եթէ նախ քան զթողելն խայթիցի յօձէն ․ ը՟ ոմ՟ ոչ արժէ և ոչ զօրէ թողլեն՝ յետ որոյ խայթեցաւ թողլիչն ․ այսպէս և 'ի գինեմոլութե, և 'ի սիրոյ կանանց, և կամ յա և իցէ մոլութե նախ քան թէ իցէ ոք խայթեցեալ, արժէ պղուշութիւնն, և փախչիլն, և թողլին զայնս մոլութիս իմաստութե և խոհեմութե ․ զի մի գրաւեսցի սիրտ իւր 'ի սէր և 'ի սովորութի այնց մոլութեց ․ Բայց յետ որոյ խայթի և խոցի ոք սիրով վա-

վա-

վաշխատականաւ, և կամ գինեմոլութք, կամ ագահութք, և նմանեօք սոյին, դժուարին է զգուշանալն. և սակաւ օգնէ իմաստութին և թովչութին իւր առ՚ի թովել և յաղթել զայնս օձս, յորոց ինքն նախ քան զթովելն խայթեցաւ:

12: Բանք բերանոյ իմաստնոյ շնորհք. և շրթունք անզգամի ընկղմեն զնա:

Բանքն, իմաստունն և երկիւղածն միշտ զայնպիսի բանս խօսի, որք են ՚ի շնորհս՝ և ՚ի բարին իւր, և ընկերին, և հասարակութե. և այսու բանք բերանոյ նր բերեն զշնորհ, զբարի, և զօգուտ՝ ինքեան և այլոց. և մինչ են բերօղք շնորհաց, կոչին շնորհք: Իսկ շրթունք անզգամին և անմտին՝ միշտ բարբառին զչարիս. մերթ բամբասելով զայլս. մերթ խօսելով ըզ սուտս. մերթ տրտնջելով զայլոց. և մերթ զչարիս մաղթելով մն այլոց. և վերջապէս զայնպիսիս խօսին, որք ոչ են ՚ի շնորհս և ՚ի բարին այլոց. և այսու մինչ ինքեանք այլոց ո՛չ օգտեն բանիւք շրթանց իւրեանց, այլ վնասեն, այնու իսկ վասն ինքեանց զհեղեղ ջուրց պատրաստեն առ՚ի ընկղմել ՚ի նմին: Ի՞նչ առ այս ասէ. Շրթունք անզգամին ընկղմեն զնա:

Դարձեալ. անզգամն զանօգտակար բանս խօսելով՝ ընկղմի յայսմիկ՝ զի խօսիցի և զվնասակարս ինքեան, և այլոց. և զվնասակարսն

կարման խօսելով՝ ընկղմի 'ի գուբն չար։ Որ որպ խօսօղն զբարիս՝ օրըստօրէ և ինքն բարեգործանայ․ այսպէս և խօսօղն զչարիս զպիղծս, օրըստօրէ և ինքն չարանայ․ և ընկղմի 'ի գուբն չար․ և անկանի 'ի դժոխս։

13։ Սկիզբն բանից բերանոյ նորա անզգամութիւն է․ և վերջինն բերանոյ նր յածումն չար։

Այսինքն, անզգամաց սիրտն գոլով դատանացեալ 'ի ժամանութենց իւրեանց, և այնու չարացեալ, կոչի անզգամութիւն․ և այսպիսի չարութիւն սրտի նշ է սկիզբն բանից։ մինչ 'ի յաւելուածոյ սրտին խօսի բերանն։ Արդ որպ սկիզբն բանից նշ է անզգամութիւն սրտի․ այսպէս և վերջինք, այսինքն կատարածն բանից նշ է ընդեածօղ 'ի չարն․ և հաստացանօղ 'ի չարն։ ուստի անըզգամաց բանն՝ զկատարածն, այսինքն զվերջին բանն մինչ վերընդունին՝ որով կատարի բանն, խելոյն տեսանի՝ զի չար է բանն այն․ և 'ի վնաս այլոց։ Արդ եթէ երբեմն անզգամքն զբարիս խօսեցին ընդ ումեք և զբանս սիրալիրականս, զայն առնեն վս պատրելոյ և նենգելոյ․ և այսու նաև այնպիսի բարի բանքն ունելով զչար վախճան, կատարածն ընդեածի և գնայ 'ի չարն։

14։ Անմիտն բազմացուցանէ զբանս․ ո՛չ գիտէ մարդ զի՛նչ եղեալն է․ և զի՛նչ լինելոց է (զի) զկնի նր, ո՞վ պատմեսցէ նմա։

Այս-

Այսինքն, վերոասացեալ անմիտն և անըզգամն բազմացուցեալ միշտ զբանսն՝ շատախօսէ զանցելոցն. և հետաքրքիր լինի զապառնեաց. և զայնց որք լինելոց են. և շուրջ զայսպիսեօք բազմիցս բարբանջէ. և յիմարաբար խօսի: Վ՟ն որոյ իմաստունն զայնպիսի անմիտն յանդիմանեալ՝ ասէ զայս: Մարդն նաև զեղեալսն որք անցեալքեն, լիապէս ոչ կարէ գտանել. զի բազմիցս 'ի նոյնում քաղաքի որ ինչ գործեցեալ եւև յանցելում տարւոջ, 'ի ներկայի տարւոջ զնոյն գտանելի ոչ ունին մարդիք. մինչ ոմն այսպէս եղեալ գոլ պատմէ, և ոմն այլապէս. ապա որքան ևս առաւել զապագայից իրաց անստոյգ եմք: Ո՞վ է այն, որ իցէ կարող գտանել զայնս՝ որք լինելոց են յապագայն, ոչ զի զայն պատմեսցէ մեզ. արդարև ոչ՛ք: Որդ՝ յայսմիկ տան՝ շաղկապս այս, զի, աւելորդաբար 'ի խասլմանց դրչաց մտեալ է: Վասն զի բանն, ոչ և մեկնեցաւ, է այս:

Ոչ գիտէ մարդ զինչ եղեալն է. և զինչ լինելոց է զկնի նր, ով պատմեսցէ նմա:

15. Ջանն անմտին չարչարէ զնա. որ ո՛չ գիտաց երթալ 'ի քաղաք.

Այսինքն, անմիտն և անզգամն միշտ տաժանի և չարչարի 'ի ձեռն բանից իւրոց: քանզի բանք նր են զայնպիսեաց իրաց, որք կամ 'ի ճշմարտութեց պակասին՝ մինչ

են հետաքրքրականք, և խուզողք զապա_ գայից, և զկրաց ներընդունականաց. և կամ պակասին 'ի բարութենէ, մինչ խօսի 'ի միսս ինքեան և այլոց. և այսու միշտ չարչարի 'ի ձեռն բանից իւրոց. որոյ ոչ կամքն 'ի բարութենէ, և ոչ իմացականն 'ի ճշմարտութենէ լնանի. որով կարիցէ հանդ_ չիլ և զմայլիլ։

Նշ՛ յարէւոր ոչ գիտաց երբեւ 'ի քաղաքն։ Մ․յաբան տուակ ինչ էր 'ի հնումն որքան առ այս, զի շինականք և գաւեհիկք 'ի ձեռն գոր_ ծոց, և աշխատանաց միշտ չարչարին. և զվաստակս նց ուտեն քաղաքացիք. նաև 'ի ձեռն վաստակոց նոցին շինին պալատք և պարիսպք քաղաքին, բայց շինականքն՝ ոչ միայն ոչ վայելեն զայնս, այլ զպալատս քաղաքին, և զքաղաքն, այլ նաև զճանա_ պարհ քաղաքին ոչ գիտեն. վասն որոյ որքան առ այս՝ աւելին 'ի հնումն. թէ գործ շի_ նականին չարչարէ զնա, որ ոչ գիտայ երթալ 'ի քաղաք. այլ շինականք աշխատե_ լով 'ի վարս և 'ի հունձս՝ շինին այնու քա_ ղաքք, և 'ի շինութեն պահին. բայց ինք_ եանք նաև զճանապարհ քաղաքին ոչ գի_ տեն, զի երբեմն զայն վայելիցեն ։ Նշ՛ զայս առակ սաղոմոն հպեցուցեալ ան_ միտին, ասէ. թէ միշտ չարչարի 'ի ձեռն բա_ նից. բայց ոչ երթայ 'ի քաղաք. այլ ոչ գնայ անդ՝ ուր իմացականութիւն զճշմարտութի վայելիցէ, և կամքն զբարութի ։ վասն զի

ոչ խօսի զայնց գիտութեց. որգոն, զա̃ծայ
նոց օրինաց, որք լի են ճշմարտութիք, և
բարութիք. որով և իմաստականութիւն, և
կամքն զմայլին, և այնու լինի մտանել
'ի քաղաքն. այլ միշտ խօսի զունայնութեց
և զանօգտից իրաց, որով մնայ միշտ 'ի
դաշտի, և չարչարի. և ատացելոյ քաղաքի՝
որ է խոկումն ա̃ծային օրինաց, և երանա_
կան կենաց՝ նաև զճանապարհն ոչ գիտէ:
Պարձեալ. անմիտն չարչարի նաև 'ի ձեռն
գործոց իւրոց. բայց գործն իւր ոչ գո_
լով շարակարգեցեալ առ բարի վախճան
և 'ի փառս ա̃յ, չարչարի 'ի զուր՝ 'ի հա_
մայնս գործս իւր. ի̃ 'ի յուտելն, 'ի յըմ_
պելն, 'ի գնելն, և 'ի վաճառելն, և 'ի յայլ
բնաւս: և այսու՝ զի գործք իւր ոչ ունին
զբարի վախճան, ոչ գնայ 'ի քաղաք. քան_
զի բարի վախճանն է ճշմարիտ քաղաք
հանգստեան, 'ի յոր գնան նոքա միայն,
որք զա̃մ գործս իւրեանց շարակարգեն
առ բարի վախճան՝ և 'ի փառս ա̃յ:

Նա՛ աստ գիտելի է. զի ա̃մ քարոզիչ և
ուսուցիչ ա̃ծային բանից՝ թէ բերանով,
և թէ գրով, է ո̃պ զշինական, որ աշխա_
տի առ 'ի հերկել զսիրտս մարդկան, և
սերմանել 'ի նոսա զբանն կենաց. որ եթէ
ունիցի զվախճան բարի, և զոր բանիւ և
գրով ուսուցանէ, զնոյնն և 'ի յանձն իւր
առնէրէ, նա գիտէ զճանապարհ քաղա_
քին: և ո̃պ քաղաքացիքն, ի̃ լաւօքն վայե_
լեն

լեն զաշխատանս նոցա , նոյնպէս և ինքն
վայելէ ։ Իսկ որք վն ունայն փառաց , և
կամ վն մարմնաւոր օգտի մշակեն 'ի հո֊
գիս հաճառացելոց, 'ի զուր չարչարին ինք֊
եանք ․ և 'ի լողայն բազումք վայելեն
զայնս բարիս ոմն զքաղաքացիս ․ բայց ինք֊
եանք նաև զճանապարհ քաղաքին ոչ գի֊
տեն ․ և 'ի վատթարագունի թեւուն գտա֊
նին ․ զի 'ի լուսոյ գիտութե խորեանց զոր
ունին յոյժ և 'ի սբ գրոց ; ոչ կամին լու֊
սաւորիլ ։ Ասէ տր բանի Շնորհալւոյն Ներ
սէսի նմանին ճրագի ․ որ տեսողաց զլոյսն
տայ , և ինքն մրով տգեղանայ ․ և յիւր
լուսոյն չպայծառանայ ։

Գործեալ ․ նաև նոքին , որք զգործ ինչ
առնեն առ իմն վախճան ․ և զմիջոյն որ
ծառայէ այնմիկ վախճանի 'ի բաց ձգեալ
զներհական միջոցս առնուն , 'ի զուր աշ֊
խատին ․ և ոչ գիտեն գնալ 'ի քաղաքն ,
որոյ վն աշխատին ․ այս է՝ առ այն վախ֊
ճան՝ որոյ վն աշխատին ։ Ասէ այսպիսի է
ագահն ․ որ ասէ ․ ժողովեմ զարծաթ , զի
բարեպէս ուտիցեմ և ըմպիցեմ , և 'ի
հանգստութե ապրիցիմ ․ և մինչ այսու
վախճանաւ աշխատի միշտ , սիրելով զար
ծաթ , և լինելով ագահ , նաև զճանա֊
պարհ հանգստեան մոռանայ ․ և ոչ երբէք
հասանի 'ի քաղաքն հանգստեան ․ և այսպ
նաև սա ոչ գիտէ երթալ 'ի քաղաք ։

16: Վայ քեզ քաղաք. որոյ թագաւոր քո մանուկ է. Եւ իշխանք քո ընդ առաւօտս ուտեն:

Այսինքն, վայ քաղաքին, որոյ թագաւորն, կամ իշխանն, և կամ կառավարն՝ թէ հոգևոր, և թէ մարմնաւոր, է մանուկ. ըստ տհաս մտօք, և բանականութ̃, և հանճարով. որ թէև տիօք ծեր իցէ, սակայն մինչ մտօք է անհանճար, տակաւին մանուկ ասի. քանզի ամէն բառս մանուկ, մանաւանդ զանհանճարն, և զպակասաւորն մտօք նշանակէ:

Եւ յարէ. Եւ իշխանք քո ընդ առաւօտս ուտեն:

Այսինքն, մինչ թագաւորն է յիմար, նաև իշխանքն լինին յիմարք: և ընդ առաւօտն ուտելն է ցուցակ և բացայայտիչ յիմարութեն:

Քանզի հետևողքն իմաստութեն և հանճարոյ՝ և աշխատութեն մտաց, ոչ ունին զայնպիսի ստամոքս, զի զերեկոյի կերեալն այնպէս բացակիզեալ մարսիցեն, մինչ զի ընդ զարթնուլն սովիցին. և այնու խնդրիցեն ուտել: Սակայն յիմարքն որոց միտն ոչ աշխատի առ բանս իմաստից՝ և հանճարոյ, իւիք կերպիւ մարսեցեալ անսանական բարուց, ունին զբնական ջերմութի իւրեանց համահաւաքեալ 'ի ստամոքսն. որովհետև նոյն ջերմութի առ խոկումն իմաստից և հանճարոյ ոչ երբեք ծառայելով, ոչ ծախի 'ի նոսին. և այսու

զնմ

զամենայն զոր ուտեն յերեկոյի, իսկոյն ծախեն և հալեն 'ի գիշերի. և 'ի զարթնուլն ընդ առաւօտս՝ զգալով զինքեանս սովեալս՝ խնդրեն զկերակուր։

Եւ բաց յայսմանէ՛ է և այլ պատճառ. զի մինչ այսպիսիք իշխանք ոչ ունին զաշխատանս մտաց, նաև ոչ զգործս արտաքին աշխատութե, 'ի հարկէ ձանձրացեալք 'ի դատարկակեցութե պարապին 'ի յուտել և 'ի յըմպել յորում և իցէ ժամու, թէ առաւօտ իցէ, թէ երեկոյ. և այլն։

Եւ այս ամենայն վերաբերի նաև 'ի մարմին իւրաքանչիւրոյ մարդոյ։ Այսինքն մարդոյն, որոյ քաղաքի, քանզի հոգւոյ՝ թագաւորն՝ որ է միտն՝ է յիմար, և տգէտ աստուածայնոց օրինաց և իրաւանց. և իշխանք նորա, քանզի զգայութիւքն ընդ առաւօտն ուտեն. քանզի զամենայն զոր գործեն, իսկոյն ըստ յօժարութեան անասնականի բնաւորման ուտեն՝ առանց հրամանի և խորհրդոյ բանականութե։ …զի աչքն ընդ առաւօտն ուտէ, մինչ որ ինչ հանդիպի ինքեան՝ տեսանել յօժարի առանց սպասելոյ հրամանի բանին. այսպէս և բերանն, յորժամ որինչ հանդիպի, զայն խօսի առանց հայելոյ 'ի բանն։ Ըստ այսմ և այլք զգայութիւնք ըստ յիմարութե թագաւորին իւրեանց, քանզի մտաց, զդրօշակ և զնշանակ յիմարութե իւրեանց կացուցանեն 'ի յանբանաւոր և յանխորհուրդ գործս՝ և 'ի բանս իւրեանց։

17: Երանի է քեզ երկիր, որոյ թագաւոր քո որդի ազատի իցէ. և իշխանք քո 'ի ժամու ուտեն զօրութեամբ, և ոչ ամաչեսցեն:

Այսինքն, երանելի երկրին, որոյ թագաւորն որդի ազատի է՝ գոլով ազատ 'ի մոլութեանց, և 'ի յիմարութենէ. վասն զի մեղքն և յիմարութիւն ոպ̅ զբռնաւոր և զանգութ գերեվար, զորս կալնուն, ընդ ծառայութեամբ իւրեանց գրաւեն: ըստ այնմ, որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց. Յոհան. 8. 34: Բայց իմաստութիւն, և առաքինութիւն՝ զունողն իւրեանց ոչ գրաւեն 'ի ծառայս՝ այլ թողուն յազատութե, և ազատագոյնս առնեն. և այսու առաքինի իմաստունքն որդիք ազատի են, և ազատք: Եւ մինչ թագաւորն է իմաստուն, 'ի հարկէ նաև իշխանքն. քանզի իմաստուն թագաւորն ոչ զյիմարս, այլ զիմաստունս կացուցանէ իշխանս առաջի իւր. և աստուստ հետևի՝ զի և իշխանքն գոլով իմաստունք, ոչ ուտեն ընդ առաւօտն. այլ ընդ յառնելն 'ի քնոյ, պարապին խորհրդոց, և քննութեանց իրաւանց. և 'ի ժամու ճաշոյն՝ մերձ կէսաւուրն՝ յորում ստամոքսն նոցա մարսեալ է զկերակուրն, նստին 'ի սեղան:

Եւ ասէ. Ուտեն զօրութեամբ:

Այսինքն, ուտեն առ 'ի զօրացուցանել կերակրով զբնութիւն նուաղեցեալ 'ի սովու. և առ 'ի տալ զնորոգումն պակասե_

ցե_

ցելոց հիւթոց մարմնոյն, որք ծառայեն
կենաց խորեանց:

Ինչ յարէ. Ինքն ոչ ամաչեցեն. զի ոչ առ՚ի ամաչել ունեն. այսէ, ոչ ունեն առ՚ի որկրամոլել և արբենալ՝ և շռայտիլ. և կամ առ՚ի գերիլ ՚ի համեղութեց և ՚ի փափկութեց կերակրոց և ըմպելեաց, ՚ի ձեռն որոց ամաչեցեն և յամօթ լիցին առաջի այ, և առաջի մարդկանց ոմ զորկրամոլ
և զորովայնապաշտ:

Նոյնպէս խմա և զքաղաքէ հոգւոյ՝ որ է երանելի. որոյ թագաւորն, զի միան է իմաստուն. զի հետևող իմաստութեն և խրատուց ածայնոց օրինաց. որոյ և իշխանքն, զի զգայութիքն են գործօղք ՚ի ժամու. որոյ աչքն ոչ հայի՝ եթէ ոչ իցէ ժամանակ հայելոյ. բերանն ոչ բարբառի, եթէ ոչ՝ երբ ժամ է խօսելոյ, և օրինաւոր հարկն ուղղանջէ. ըստ այսմ՝ և
այլք զգայութիքն:

Պարզեալ. եկեղեցին Քի է քաղաք երանեցեալ. որոյ թագաւորն Քս է իմաստուն և իմաստութի. և որոյ իշխանքն, զի առաքեալքն, և հետևողք նց ունեն՚ի ժամու նաև զմարմնաւոր կերակուրն. ըստ Գործոց. 2. 15. ասաց նքն Պետրոս. դե- երէք ժամք են աւուր. և զիարդ ասէք թէ արբեալք իցեն: Որով խմանի՝ թէ մերձ կէսաւուրն ապա ուտէին զհաց: Նաև հոգևորապէս գործէին՚ի ժամու. զի զամ

գործս իւրեանց ունելով կարգաւորեցել 'ի փառս իմ, և 'ի յօգուտ հաւատացելոյ՝ միշտ 'ի ժամու գործելոյն. այսինքն ըստ օրինաց Քրիստոսի:

18: 'Ի վատութիւն խոնարհեսցին հեծանաշինութիւնք. և 'ի դատարկութիւն ձեռաց կաթեսցէ տունն:

Այսինքն, 'ի ծուլութենէ տանուտեառն հեծանք և գերանք տանն, կամ բեկմամբ, կամ փտեցմամբ, որք լինին 'ի ձեռն վերաբերելոյ ջուրց անձրևայ՝ սկսանին խոնարհիլ. այսինքն թեքիլ և ծռիլ մերձ առ'ի անկանիլ 'ի վերայ գլխոյ տանուտեառն: և այս պատճառի 'ի ծուլութենէ տանուտեառն որ հեղգանայ պահել զնոսա 'ի վնասուց ջուրց: Այս յայտ. 'Ի դատարկութիւն ձեռաց կաթեսցէ տունն: քանզի տունք 'ի բազում գաւառս մինչ ծածկին գերանօք, 'ի վերայ գերանացն՝ յետ դնելոյ զչերտս փայտից՝ արկանի հող, և կարծրացուցանի լողլով 'ի ձեռն սիւնաձև լող քարի. որով ամրանայ հողն. և այն կոչի տանիք. և տանուտէրն երբեմն պարտի լողել զտանիս. զի առաւել կարծրանալով հողն, 'ի գալն անձրևաց ոչ կաթեսցէ տունն. սակայն մինչ ծոյլ իցէ և դատարկաձեռն, այսինքն զձեռն դատարկ պահօղ 'ի յաշխատանաց, ոչ լողէ զտանիսն. և այնու կաթէ տունն: Արդ՝ իմաստունն զայս առակ և օրինակ կալեալ՝ կամի ասել, թէ բարւոք կար-

գաւ-

գաւորութիւնք օրինաց են հեծանաձգութիւնք տան թագաւորութեան, և տան հոգւոյ մերոյ ։ Նաև ըստ բնական իրաւանց ոչ առնելն զայն այլոց՝ զոր մեզ լինել ոչ կամիմք. և միշտ առնելն այլոց զայն, զոր մեզ լինել բաղձամք՝, են հեծանաձգութիւնք տան ։ Աստի եթէ ծուլանայցեն մարդիկ ՚ի բաց վանելոյ ՚ի թագաւորութենէ, կամ յինքեանց զախտս՝ և զանկարգ ցանկութիւնս մարմնոյ, և զորկրամոլութիւնս, յայնժամ նոյնք մոլութիւնքն որպէս զջուրս վնասակարս փտեցուցանեն զբարի կարգաւորութիւնս օրինաց, և բնականի լուսոյ մերոյ և բանի. և այնու սկսանին բեկիլ և թեքիլ, նաև անկանիլ բարի կարգաւորութիւնք թագաւորութեան, և կամ հոգւոյ մերոյ։

Նա՛ բաց յայսցանէ, եթէ յորժամ ոչ աշխատիցին առ ՚ի ամրացուցանել զտանիս տանն թագաւորութեան ուսմամբ օրինաց, և զարգացմամբ ՚ի վարս բարիս. այլ յիւրեան ինքեան թողցեն, յայնժամ սակաւ առ սակաւ վատթար սովորութիւնք որպէս զկաթիլս անկանին ՚ի մէջ տան թագաւորութեան, և ՚ի մէջ տան հոգւոյ. և այնու փտին և գերանքն. որ բարի կարգաւորութիւնքն օրինաց, և լուսոյ բանին. և իսկոյն խոնարհեցեալք և բեկեցեալք՝ կործանի տունն. որ թագաւորութիւն, և կամ բարեկարգութիւնք հոգւոյն։

Արդ՝

Որդ՝ մինչ 'ի յորկրամոլութենէ պատճառի միշտ ծուլութիւն, և թմրութիւն, իմաստունն յետ որոյ զորկրամոլութենէ իշխանաց յիմար թագաւորին խօսեցաւ, հեռանեցոյց և զայսմանէ խօսիլ. իբրու թէ ասիցէր, 'ի յորկրամոլութենէ ծուլութիւն ծնանի. և 'ի ծուլութենէ պատճառի կործանումն թագաւորութեան։ Սա զի յորժամ թագաւորն, և իշխանքն 'ի խրախճանս՝ և 'ի հեշտութիւնս մարմնոյ պարապեալք՝ անփոյթ լինին ըզ փտեցմանէ օրինաց և իրաւանց, և զթեքեցմանէ նոցին, այնու իսկ սակաւ առ սակաւ մտեալ 'ի ներքս անկարգութեանցն՝ կործանի թագաւորութիւն. և այս իմացեալ լինի թէ զմարմնաւորէ թագաւորութենէ, և թէ զթագաւորութենէ հոգւոյն, զոր ունի 'ի վերայ մարմնոյն։

19։ Ի ծաղր առնեն զհաց և զգինի և իւղ ուրախ առնէ զկենդանիս. և արծաթոյ լուիցէ ամենայն ինչ։

Յետ որոյ ասաց, թէ յորկրամոլութենէ հետևի ծուլութիւն, և անտի խոնարհումն հեծամանձգութեան. այսինքն բեկումն և կործանումն թագաւորութեան, վերստին յաւելու զբան առ 'ի յանդիմանել զխրախճանասիրութիւնս իշխանաց, և ամենայն որկրամոլից և որովայնապաշտից. որք ոչ ունեն՝ զի զմաշեցեալսն 'ի ձեռն բնական ջերմութեան, և զպակասեցեալսն 'ի բնութենէ մարմնոյն վերանորոգիցեն առ 'ի պահել զկեանս, այլ ունեն

ուտեն զի համեղանան այնք ինքեանց, և
հեշտանան 'ի յայնս․ և կամ՝ որ չարագոյն
է, ուտեն առաւել՝ և որոնեն զուժեղ կեր_
լիս՝ զի զօրասցին առ վավաշոտութի․ և
առաւել հեշտանայցեն 'ինմին։ Արդ՝ այս_
պիսիքս զհաց՝ և զգինի, և զիւղ ծաղր
առնեն։ Քանզի մինչ կերակուրքն շարա_
կարգեցեալքեն յոյ առ'ինորոգել զպա_
կասեցեալն 'ի բնութէ մարմնոյ, և սոքա
ոչ վն այսորիկ, այլ վասն հեշտանալոյ 'ի
գործ ածեն, այնու իսկ ծաղր առնեն
զհաց՝ և զգինի, և զիւղ։ Քանզի ոք որ 'ի
թագաւորէն ընկալեալ իցէ իբրու պար_
գև ինքեան զպատմուճան իմն մեծագին
առ'ի զգենուլ, եթէ այնու պատմուճա_
նաւ ոչ զինքն զարդարիցէ, այլ զէշն իւր,
այնու իսկ ծաղր առնէ զնոյն պատմու_
ճանն․ և զպարգևողն զթագաւորն․
այսպէս և զկերակուրն զոր պարգևեալէ
մեզ ած և շարակարգեալ առ պահպա_
նումն կենաց մարմնոյ մերոյ, եթէ միայն
հեշտանալոյ և զմայլելոյ աղագաւ ուտի_
ցեմք, և ոչ վն յագելոյ՝ գործիք հեշտախ_
տութե և անառակական որկրամոլութե
լինին։ Եւ այնու իսկ ասեն հաց և գինի
և իւղ ծաղր լինել 'ի յորկրամոլաց։ Արդ՝
որք այսու կերպիւ ծաղր առնեն զկերա_
կուրն, ոչ կամին ուտել զի կեայցեն․ այլ
կամին կեալ զի ուտիցեն։ Ոչ կամին զհա_
մեղանալն բերանոյ վն կարելոյ ուտել․ և

զու_

զուտէն վասն կարելոյ յագիլ․ այլ յետ
բաւականանամ յագելոյն կամին տակաւին
ուտել վասն համեղմանալոյ բերանոյն ։

Եւ յարէ․ Մորոխ առնէ․ ոչնդանես ։ Նմա_
ինքն, նոքա որք ծաղր առնեն զկերակուրն՝
ասեն , թէ ուրախ առնէ հաց և գինի
զկենդանիսն՝ մինչ մի՛ հեշտութեն ուտի և
ըմպի ։ Եւ մերթ նաև զյոլով գինին՝ որ
առ պահպանութեն կենաց՝ ոչ միայն ոչ է
օգտակար , այլ նաև յոյժ վնասակար ,
ըմպեն․ և այնու ծաղր առնեն զյոլովու_
թի գինւոյն , ասելով , յոլով գինին ուրախ
առնէ զկենդանին , և առաւել զուարճա_
ցուցանէ ։ Եւ ոչ մտածեն՝ թէ Նա զգի_
նին ոչ արար առ արբեցութի մարդկանց․
այլ առ՚ի օգնել մարսողութե ստամոքսին ․
և մերթ նաև ուրախացուցանել զտրտ_
մեալն՝ և զսգաւորն ։

Եւ աստ գիտելի է ․ զի զբանս զայս՝ Յոբ,
'ի սմին տան՝ կամ կանխաւ պարտ է ընդ
գինւոյն 'ի հայցական հոլովոյ , որպէս և մեք
կալաք ․ և կամ եթէ ընդ կենդանւոյն
դնիցի 'ի յուղղականոջ , իմանալի է բառս՝
իւր , անդրադարձաբար ․ իբրու թէ ասի_
ցէ , հեշտութիւն , կամ ծաղրաբանութիւն
ուրախ առնէ զկենդանին ։

Դարձեալ ․ որկրամոլքն ծաղր առնեն
զհաց և զգինի նաև այսու ․ զի մինչ նստին
'ի խորախճանի , ըղձակերութեն զծաղրաբա_
նութի ․ և իբրու անբաւական համարեն_

զայս

զայս չար՝ զի մի՛ հեշտանալոյ ուտեն, և մի՛ արբենալոյ ըմպեն, նաև ծաղրաբանութե՛ և կատակախօսութե՛ ապականեն զսեղան խրախճանին: Աւտի ոմանք ունայնասէրք նաև զկատակախօս և զցոփաբան անձինս յատկապէս տանին 'ի խրախճանս և առեն յիմարաբար՝ զայս. Այս է եղ. ուրախ առնէ կենդանեաց. ըստ ծաղրաբանութի ուրախ առնէ զմարդն, ուստի ընդ մեզ տարցուք զայն որ կատակախօս 'ի խրախճան, զի զմեզ ուրախացուսցէ:

Բայց թէ այնպիսեայ յիմարաց ուստի՞ պատահին այսքան խեղադարութիք, ծանիր. զի այնպիսիքն զառաքինութիս, և զհետևումն բանի՝ որք են ճշմարիտ ըսկզբունք և արմատք ուրախութեց, արմատաքի 'ի բաց խլեալքեն 'ի սրտից իւրեանց: մի՛ որոյ 'ի ներքս սրտից իւրեանց ոչ ունելով զսկզբունս ուրախութե, արտաքուստ 'ի ծաղրաբանութեց՝ 'ի հեշտութեց և 'ի յարբեցութեց մուրանան զայնս: Բայց ոչ երբէք վերընկալնուն ըստ որում յուսան: և մի՛ այսօրինակ յիմնում անուր խնդրեն զայնս՝ և ո՛չ երբէք առընդունելով սիրովնոցին տառապեալ միտսին յամ ժամ Ասացի՝ ոչ առընդունին երբէք. քանզի նա որ 'ի ներքս սրտին ոչ ունի զուրախութի 'ի ձեռն առաքինութեց, է ո՛չ զանկենդան մարմին, զոր որքան այլ ոք շարժելով առնիցէ զնա քայլել, ո՛չ ընդունի

եր.

երբեք զկենդանական քայլումն ։ Արդարև մոլեալքն ՚ի յայսոսիկ սուտ ուրախութիւնս՝ ՚ի սրտի ոչ ունին զուրախութիւն ճշմարիտ · այլ են ՚ի սուգ մոլութեց իւրեանց · և վ͞ս այնորիկ մինչ ՚ի յուրախութեց սրտի ոչ երբեք կարեն ուրախանալ, հարկաւորին կոչել զծաղրաբանութիւն՝ և զունայն հեշտութիւն, զի արտաքուստ շարժելով զինքեանս՝ առնիցէ քայլել, ի͞ւ առնիցէ ուրախանալ ։ Աստի յայտնապէս ցուցանեն զինքեանս այնպէս զրկեցեալ գոլ ՚ի ճշմարիտ ուրախութէ, որք անկենդան մարմինն ՚ի ճշմարիտ կենդանական քայլմանէ ։

Ա՜յ յարէ · Ա՜յ արծաթոյ լուծիցէ ռմ ոփ ։ ի͞ւ, ո͞ր որկրամոլութիւն գերէ զմարդիկ, նոյնպէս և արծաթն գերէ ։ Ա՜յ այս այնքան, մինչ զի դրեթէ ա͞մ մարդիկ, ի͞ւ բազումք լսեն արծաթոյ · ի͞ւ հնազանդին արծաթոյ · անսան արծաթոյ · խոնարհին արծաթոյ · և իբր մամոնայի չաստուծոյ ծունր կրկնեն նմա · նաև զինքեանս զոհեն չաստուածոյս այսմիկ, վասն զի մինչև ցհեղումն արեան, և կամ մերձաւոր վտանգօք կենաց իւրեանց ծառայեն նմա ։

Դարձեալ · թէպէտ մարդն ծաղր և կատակ լինիլ ոչ կամի · և տեղի ծաղերց և ծիծաղմանց գոլ ոչ յօժարի, բայց մինչ տան նմա զարծաթ, և տանին ՚ի խրախճանս՝ վ͞ս արծաթոյն յանձն առնու ծաղր

և

և այսոն կատականաց լինիլ 'ի խորախձանի ,
զի բաղձեալքն ամէնքեն ուրախանայցեն ,
և ձեռանայ լինքն վն արծաթոյն՝ ոմն զխեղ-
ճագար և զկիմար ոք , ոմն զի զտեսօղս
ուրախացուսցէ ։ Ըստ այսմ իմս և զայլոց
նմանեաց յիմարաց՝ որք վասն արծաթոյ՝
զայն զոր ոչ երբէք կամին առնել , առ-
նեն ․ և որպիսի ինչ լինիլ ոչ հաճին , այն-
պիսի գոլ յանձն առնուն ․ և այս յայտ է
'ի յուդա , որ ոչ կամէր մատնել զՏէրն ,
նաև ոչ հաճէր լինիլ մատնիչ տն իւրոյ ,
մինչ ոչ ինչ կերպիւ միտացուցեալ էր 'ի
նմանէ ․ բայց յօժարեցաւ մատնել՝ և հա-
ճեցաւ լինիլ մատնիչ՝ միայն վն սիրոյ ար-
ծաթոյն ։ և բազումք , ոմն յիշէ սբն Պօ-
ղոս , վն արծաթոյ ուրացան զճշմարիտ
հաւատն իւրեանց՝ զոր գիտէին գոլ ճշմա-
րիտ ։ Ուրեմն զինչ այլ աւելի չար կարէ
առնել սէր արծաթոյն քան զատացեալսն ։
Նաև այս վճիռ իմաստնոյն մինչ նեղապէս
առեալ լինի բանիւ՝ տն , մեկնի այսպէս ․
և արծաթոյ լուիցէ մդ՝ որ իցէ սիրօղ
նորա ․ և այս իրաւի է ․ զի մդ որ միան-
գամ սիրէ զարծաթն , միշտ լսէ և հնա-
զանդի նման 'ի համայնս , որքան տևէ 'ի սէր
նր ։ Նաև որքան առ այս՝ մդ գիրք ածայինք
զգուշացուցանեն զմեզ 'ի սիրոյ արծաթոյ ․
ոմն զի մի գումարիցին 'ի մեզ մդ տեսակք
չարեաց ․ ըստ այնմ , արմատ ամենեցուն չա-
րեաց՝ արծաթասիրութիւն է ․ 1. Տիմ. 6. 10 ։

20. Սակայն 'ի մտի քում մի՛ անիծաներ թագաւո-րի. և յշտեմարանս սենեկաց քոց մի՛ նզովեսցես զմեծն. վասնզի թռչունք երկնից հասուցանեն զբարբառ քո. և որ ունի զթեւս, պատմէ զբան քո։

Այսինքն, 'ի մտի քում մի՛ դատեր, և մի՛ անիծաներ 'ի ներքս սրտի քոյ զթագաւո-րն, և կամ զո՛ և իցէ մարդ։ Վասնզի եթէ 'ի մտի քում եղծանելով զընկերն քո, և կամ զթագաւոր, և զիշխան՝ ոչ ինչ հա-մարիցիս, և այնու իբրու թէ անիծանի-ցես, և 'ի մտի քում իբրև զչար և զնզո-վելի ունիցիս, աստուստ հետևի՝ զի յաւ-ուր միում նաև 'ի սենեկի քում խօսիցիս զայնս՝ զորս ունիս 'ի սրտի. և նզովիցես զմեծն, և կամ զիշխանս, և զզօրաւորս քան զքեզ, համարելով թէ լսօղքն 'ի սե-նեկի քում են ընտանիք, և կամ բարե-կամք, և ոչ հասուցանեն առ նա զգրոյցն. սակայն 'ի զուր է այս. վասն զի թռչունք երկնից, և հաւք՝ որք ունին զթեւս, հա-սուցանեն զբան քո առ նա. և այսու ան-կանիս 'ի ներքոյ պատժոց։

Արդ՝ ծանի՛ր, զի այս բան, թէ թռչունք երկնից հասուցանեն զբարբառ բամբա-սանաց, և կամ անիծից քոյ յականջս նորա, զոր անիծանես և բամբասես, է առակ ինչ հնագոյն. և իմաստունն զայս կամի ցու-ցանել՝ թէ բազմիցս բամբասանքն 'ի յա-կանջս բամբասեցելոյ հասանին։ Վասնզի

լսօղն

լսօղն և ունկնդիրն՝ որքան և հաւատարիմ լիցի քեզ, և կամ մերձաւոր ընտանի, միշտ մարդ է, և փոփոխականութեան ստորան-կեալ։ Աստի լինիլ կարէ օր, զի կամ զքեզ ատիցէ, և կամ 'ի սէր նորին փոխ-ցի զոր բամբասեցեր առաջի նր, և յայն-ժամ կամ վն վնասելոյ քեզ. և կամ վն առաւել հաճոյանալոյ նմա, պատմեսցէ զբամբասանս քո, և կամ՝ զանէծս յա-կանջս նր։ Ա՛ որոյ բարին և ապահովն է այս, զի նաև 'ի սրտի քում, և 'ի միտս քո ոչ եղծիցես զայլս, և ոչ անիծանայ՝ կամ վատաբանութեց արժանաւոր գոլ զա-տիցես զոք. ոչ զի մի գուցէ այսպիսի չար յղացումն մտացդ՝ յաւուր միում ծնցի 'ի բերանոյ քումմէ բարբառելովդ զայն 'ի սենեկի քում. և անտի հասանիցի յա-կանջս թագաւորին, և կամ իշխանին. և

լինիցիս պատժապարտ։

Նաւ այս խրատ և բան վերաբերի նաև առ-այս։ որպէս, եթէ ոք միայն 'ի մտի վա-վաշտական սիրով փոխիցի 'ի սէր մեղաց ցանկութեան, կամ գողութեան, այնու իսկ խոյտառակի. քանզի մինչ 'ի սրտի յղա-ցեալէ զչար ցանկութի, ընդ հանդիպիլ առթին և դիպուկութեան գործէ զչարն. և յիմարացեալ միոք համարի թէ յայն-միկ ժամու ոչոք տեսանելով զայն՝ ոչոք գիտակ լինելոց է խայտառակութեանն։ Այնպէս խաբի. քանզի յաւուր միում 'ի

յայտ գայ այն. և առաջի ամենեցունց խայտառակի: Արդ՝ որ ոչ կամի խայտառակիլ, նաև 'ի մտի իւրում ոչ պարտի թողուլ զհաւանութիւն առ գործն վաւաշոտութեն. որ զի այնու ապահով լիցի: Որպէս զի որ յղացեալն յարգանդի յաւուր միում ծնանի, այսպէս և որ յղանայ զցանս երկք մոլութեան, յաւուր միում ծնանի զանկրաւութիւն այնորիկ մոլութեն: Նման առակն այն՝ թէ թռչունք հասուցանեն զբարբառ քո, նաև ըստ իրին բազմիցս հանդիպեալ է: Որպէս մի անգամ ընտանիք տան ուրուք զտանուտէրն անիծեալքէին վասն իրաց ինչ. և թութակ հաւն որ էր 'ի տան՝ ուսաւ զայն անէծ. և մինչ տանուտէրն եկն 'ի տուն, թութակ հաւն զնոյն բան բարբառեցաւ ըստ բարուց իւրոց. և տանուտէրն ծանեաւ այնու զի զինքն անիծեալքէին 'ի տան: ըստ այսմ նաև այլք նմանք՝ բազմիցս հանդիպեալքեն, զորոց գրեն պատմիչք:

## ԳԼՈՒԽ ԺԱ.

ՅԱՂ[illegible] գլխոյ 'ի [illegible] բանից նախ՝ յորդորէ [illegible] [illegible]ութեան ողորմութե: Ըստ այս 'ի 8. [illegible] [illegible], զի մարդն [illegible] [illegible]. և այնու [illegible] մա-հացուցեալ, [illegible] 'ի [illegible], և 'ի գործս բարիս [illegible]:

### ※ ԲԱՆ: ※



Արձակեա՛ զհաց քո 'ի վերայ երեսաց ջրոյ. զի ընդ բազմութե աւուրց քոց գտցես զնա:

### ※ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ: ※

Ա՛յսինքն, տո՛ւր առատապէս զողորմութիւն. և թէ թուեսցի քեզ, թէ այնու զհաց քո՝ և զողորմութի՛ն 'ի ջուրն ընկես, և կորուսանես. կամ՝ 'ի վի՛ժ երեսաց ջուրց գետոց ձգես, զորս ջուրն առնու և տանի, մի՛ համարիր թէ այնու կորուսանես: վա՛սն զի թէպէտ 'ի տալն քո զողորմութի՛ն դրամն ելանէ 'ի քսակէդ, և հացն 'ի տանէդ,

նեղ, եւ այնու մինչ աղքատն առնու եւ տանի, այնպէս է, որպէս թէ հացն քո իցէր ՚ի գետն ձգեցեալ, բայց մի՛ երկնչիր. քանզի զկնի բազմաց աւուրց գտցես ըզ հացն զայն բազմապատկաբար յոյժ: Ըստ որում՝ եւ վաճառողք ցորենոյ՝ մինչ նաւաւ յղեն զցորեան յօտար աշխարհ առ ՚ի վաճառել մեծաւ գնով՝ առաքեն զհաց իւրեանց ՚ի վերայ երեսաց ջրոյ. սակայն զկնի բազմաց աւուրց գտնեն նոր բազմապատկաբար վերընդունին: Նաեւ սերմանողքն զցորեան ՚ի ջրարբի տեղւոջ՝ առաքեն զհացն ՚ի վերայ երեսաց ջրոյ. որ սերմանեն ՚ի ջրոտ եւ ՚ի խոնաւ տեղւոջ, բայց յայնպիսւոյ տեղւոջէ յոյժ բազմապատկաբար հնձեն: Ըստ այսմ եւ աղքատքն են որ զջրարբի եւ զջրալիր անդաստան. ՚ի յորս եթէ սերմանիցես զողորմութիւն, բազմապատկաբար հնձեսցես:

2 : Տո՛ւր զբաժին եօթանց, այլ՝ ութից. Վասն զի ո՛չ գիտես զինչ լինիցի չար ՚ի վերայ երկրի:

Այսինքն, տուր առատապէս զողորմութի իւրու բաժին աղքատաց. եւ մինչ տաս զբաժին աղքատաց, եթէ եօթն իցեն, տուր եւ եօթանց, այլեւ ութից. որ թէեւ իցեն ութն՝ տուր եւ ութիցն: Կամի ասել՝ տուր բազմաց. եւ եթէ իցեն առաւել բազումք, տուր եւ առաւել բազմաց. եւ մի՛ խնայեր:

Եւ զպատճառն այսպիսւոյ վճռոյ՝ յառաջ մատուցանէ՝ ասելով · Զանինչ ո՛չ գիտես զի՛նչ լինիցի չար ՚ի վերայ երկրի : Այսինքն , տո՛ւր իւրաքանչիւրոցն , թէ և լիցին բազումք · քանզի ՚ի վերայ երկրի են բազում չարիք փորձութեանց , որք կարեն համդիպիլ քեզ · և տալովդ զողորմութիւն , փրկիս ՚ի չարէ այսպիսի փորձութեանց · որպէս ասաց Հրեշտակն Ռափայէլ Տոբիթայ 12 · 9 · Ողորմութիւն փրկէ ՚ի մահուանէ : Կամ՝ եթէ ՚ի վերայ երկրի մի միայն փորձութիւն լինէր , դու միոյ աղքատի տալով շնորհէիր , այսինքն զողորմութիւն , փրկեալ լինէիր յայնմանէ միոյ փորձութենէ , որ համդիպելոց էր քեզ : Բայց մինչ բազմադիմիք են փորձութիւնք , և չարիք · այսինքն գետնաշարժութիւն , յորմէ տուն քո կործանիլ կարէ · երաշտութիւն , որով անդաստան քո չորանալ կարէ · Ջորեակ , թրթուր , և այլք նմանք , յորոց ամենայն բոյս քո կորնչիլ կարէ · մահտարաժամ , սով , սուր , գերութիւն , և այլք նմանք , յորոց որդիք քո , և կին քո , և կամ դու ինքն՝ կորնչիլ կարէք · և այլք անթիւք · որք ոչ միայն են եօթն , այլ և ութն · և այլ առաւել բազմաթիւք : Արդ որպէս զի յիւրաքանչիւրոց ՚ի սոցանէ , որք են բազումք , փրկիցիս , տուր և դու զողորմութիւն բազմաց աղքատաց · որովհետև ողորմութիւն փրկէ զմարդն ՚ի բազմաց համդերձելոց փորձութեանց և չարեաց , որք գալոց են

նմա, եթէ ոչ առնիցեր զողորմութի՟ն:

3: Եթէ լցցին ամպք անձրեւօք, ՚ի վ՟ր երկրի հեղուն. եւ եթէ անկցի փայտն ՚ի հարաւ. եւ կամ ՚ի կողմն հիւսիսոյ. ուր անկցի փայտն՝ անդ կացցէ:

Ի ձեռն նմանութե՟ ամպոյն՝ զայս կամի բացատրել. ք՟ս, կամի յառաջացուցանել զնախասացեալ բանն: Վ՟ զի որ՟ ամպք մինչ լցեալք լինին ջրով անձրեւոյ՝ հեղուն զայն ՚ի վերայ երկրի, եւ ոչ պահեն յինքեանս. ապա թէ ոչ՝ զինքեանս խակ եւ զերեսս երկնից միշտ ՚ի խաւարի պահէին. եւ զշառաւիղս արեգական արգելուին ճառագայթել ՚ի վ՟ր երկրի: Նոյնպէս եւ մեծատունք՝ որք լցեալք լինին ընչիւք եւ հարստութե՟ք, պարտին ՚ի ձեռն ողորմութե՟ ցօղել զինչս իւրեանց ՚ի յաղքատս. ապա թէ ոչ՝ զինքեանս խակ, եւ զերեսս երկնից ՚ի խաւարի պահեն. ք՟ս զհոգի եւ զմարմին իւրեանց. նաեւ զճառագայթս ա՟ծային շնորհաց արգելուն յինքեանց: Եւ զի որ՟ ամպքն որք առաւել ցօղով լցեալք են՝ առաւել յորդահոս անձրեւեն. եւ որք սակաւ ցօղով, մեղմաբար՝ եւ սակաւ, այսպէս եւ այնք որք առաւել հարուստք են, զառաւելագոյն ողորմութիւս պարտին ցօղել ՚ի յաղքատս: Եւ որպէս ամպքն միայն առ այս լցեալ լինին ցօղով՝ զի անձրեւիցեն. վ՟ զի Ա՟ծ առ այս վախճան կացոյց զամպս. այսպէս եւ մեծա-

տանց

տանց վս̃ այսորիկ տուեալ է Ա̃Ծ զինչս բազումս, զի առատապէս ցօղիցեն յաղքատս, և ոչ թէ յինքեանս պահիցեն: Եւ զկնի այսորիկ նմանութեն յարէ և զմիւս այլ. Ասէ Եթէ անկցի ծառն 'ի հարաւ՝ և եթէ 'ի կողմն հիւսիսոյ, ուր անկցի ծառն՝ անդ կացցէ : Որով առակաւ կամի ասել զայս. եթէ իցէ մարդն յինքեան ջերմացեալ Ա̃Ծային սիրով, և այնու եղեալ իցէ ողորմած, քաղցրասիրտ, գթած և բարի, և այնպէս մեռանիցի, մնայ միշտ այնպէս. զի մնայ Ա̃Ծասէր և բարի. և գտանէ յն̃յ զբարիս, զի զերանական կեանս. մնայ քաղցրասիրտ և քաղցրաբարոյ. և գտանէ զԱ̃Ծ առ ինքն քաղցրասիրտ և քաղցրաբարոյ. և այսու, որ̃պ փայտն 'ի հարաւային կողմն անկեալ՝ միշտ անշարժ մնայ անդէն, այսպէս Ա̃Ծասէրն և բարին, 'ի նմին բարութեն մինչ մեռանի, մնայ միշտ այնպէս բարի. և ողորմածն մնայ միշտ լցեալ ողորմութեն Ա̃Ծոյ: վ̃զի որ 'ի կեանս յայսէ լցեալ ողորմածութե, տալովն այլոց, 'ի հանդերձեալն լցեալ լինի ողորմութեամբ՝ ընդունելովն զայն յԱ̃Ծոյ: ըստ. Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն : Մատ. 5. 7: Իսկ եթէ 'ի կողմն հիւսիսոյ անկցի փայտն, անդ մնայ. զի մարդն եթէ 'ի ցրտութե Ա̃Ծային սիրոյն իցէ, և այնու անգութ և ցուրտ սիրտ առ աղքատս, դառն և դաժան յինքեան, ոխակալ և չարաբարոյ

առ ընկերն, և այլն, և՛ ի նմին մեռանիցի, անդէն մնասցէ․ զի՛ ի չարութեան իւրում և յանդգնութեան, և՛ ի դաժանութեան․ և հետևաբար գոյէ և զմ̃ծ անգութ և անողորմ, և բարկացեալ՛ ի վ̃ր իւր․ որով և դատապարտի՛ ի դժոխս․ ըստ այնմ Յակոբայ․ 2․13․ Անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ առնիցէ ողորմութիւն։

4 ։ Որ խորշէ զհողմն՝ ոչ սերմանէ․ և որ հայի յամպս, ոչ հնձեսցէ։

Այսինքն, որ երկրագործն եթէ միշտ խորհիցէ զհողմն՝ ասելով, այսօր ոչ սերմանեմ, զի հողմն հիւսիսոյ շնչէ․ և վաղիւն ասէ, այսօր ևս ոչ սերմանեմ, զի այն ինչ հողմն շնչէ, այնպիսին յաւիտեան ոչ սերմանէ․ նմանապէս և հնձօղն՝ եթէ՛ ի յամպն հայիցի, և ասիցէ, կարելի է այսօր անձրևել, ուստի ոչ գնամ՛ ի հնձել․ նոյնպէս և՛ ի վաղիւն ասիցէ, այնպիսին ոչ երբէք հնձէ․ ըստ այսմ օրինակի և մարդիք, որք առ գործս բարեաց, և առ գործս ողորմածութեան խորեն զժամանակն, և ասեն․ այսօր, կամ յայսմիկ ամսոջ ոչ ունիմ զդիւրութիւն գործել զայս ինչ բարի, և կամ տալ ողորմութիւն աղքատաց․ այլ գործեցից զնոյն բարին, և տաց ողորմութիւն յայլում ժամանակի մինչ ունիցիմ զդիւրութիւն և զդիւրութիւն, այնպիսիքն ոչ երբէք գործեն զբարիս․

րիս. և ոչ տանեն երբեք զողորմութիւն։
Աստի ո՞վ եղբայր, զբարեաց գործոց մի՛
առներ՝ զվաղարկութի՛ն. մի՞ զի մինչ այս_
օր ունիս զպատճառ ինչ, և կամ զառիթ_
այնպիսի, որով զերդ յետս քարշես 'ի
գործոց բարեաց, զայդ զոր ասես, թէ
յայլում ժամանակի գործեցից զայն բա_
րի, մինչ սոյն առիթս և պատճառս բարձ_
ցի, 'ի նոյնում այլում ժամանակի կարեն
ընդ առաջ ելանել քեզ՝ եթէ ոչ այդոքիկ
և այդպիսիք առիթք, սակայն այլք հզօ_
րագոյնք քան զդոսա. 'ի ձեռն որոյ նաև
յայնժամ՝ արգելանիս 'ի գործոց բարեաց.
և նոյնն միշտ լինի հետևաբար. և այսպէս
ոչ երբեք սերմանես զգործս բարեաց,
և ոչ հնձես։ Այո՛ զի եթէ այսօր ոչ առ_
նես զողորմութի՛ն, և կամ զգործս բա_
րեաց՝ զի ունիս զսուգ. և սպասես՝ զի ե՛
անցանել սուգդ արտասուս, ընդ անցա_
նելն սգոյդ՝ թերևս հետևեսցին հարսա_
նիք, և կամ՝ այլ ինչ գործ ծանր. և յայն_
ժամ՝ ասես՝ թէ անցցեն և սոքին՝ և արա_
րից. և մինչ նաև նոքա անցանեն, հետևի
և այլ ինչ առիթ, զորմէ ևս է նոյն բան.
և թերևս ասիցես՝ անցցէ և այս. և այս_
պէս զրկիցիս 'ի առնելոյ զբարին, և կամ
'ի գոլոյդ ողորմած։ Այո՛ որոյ առաքեալն
խրատէ, Գաղատ. 6. 10. Մինչ դեռ ժամա_
նակս 'ի ձեռին է, գործեսցուք զբարիս։ Իմա՛ ծա_
նիր, զի որ կամի գործել զբարին, և լի_
նել

նիւ բարի, նմա ա̃մ ժամանակէ յարմար և դիպուկ առնելոյ զբարի. իսկ որ անփոյթ է 'ի գոլոյն բարի՝ և ոչ 'ի սրտէ կամի առնել զբարին, 'ի ձեռն վաղարկութե̃ հեռացուցմանէ յինքենէ զգործս բարեաց. և վաղի՞ն կամիմ առնել ասելով՝ յիմարաբար մխիթարէ զանձն, և հանդարտեցուցանէ զխիղճ մտացն:

5: Որպէս ո՛չ գոյ գիտութի̃, եթէ զի՛նչ է ճանապարհ հողմոյ. եթէ որպէս ոսկերք յորովայնի յղւոյ, նոյնպէս ո՛չ գիտասցես զարարածս ա̃յ. զորինչ առնիցէ զա̃մ:

Աստէն ես զանցեալ բանն հաստատէ. և կամի ասել զայս, մի՛ յապաղեր առնել զբարին՝ խորհելով զժամանակն, և ձգելով 'ի յապագայն. քանզի զապագայիցն ո՛չ ունիս զգիտութի̃: Եւ՛ ասելն՝ Որպէս ոչ է գիտութի̃, այս իմանալ՝ թէ 'ի խորօղն զժամանակն՝ որք ասեն. թէ այսօր ոչ է դիպուկ՝ վաղի՞ն գործեցից զբարին, ո՛չ է գիտութի̃ զապառնեաց: Եւ՛ թէ ըստ որո՛յ կերպի ոչ է 'ի նոսա գիտութի̃ զապառնւոյ ժամանակէ, դնէ օրինակ զայս: Զ̃ի որ̃պ ոչ է գիտութի̃ 'ի մարդն զայսմանէ՝ թէ ընդ ո՛ր ճանապարհ, և որո՛վ կերպի՞ գայ հողմ̃, զ̃ի շունչն և հոգին 'ի սաղմ̃ն, որ յորովայնի յղւոյն է՝ որ̃պ զլոկ միս ինչ և ոսկր, և կենդանացուցանէ զնա, այսպէս և ո՛չ է 'ի մարդն գիտութի̃ զապառնեաց,

որք

որք հանդիպելոցք են մարդոյն ։
Նա՛ յարէ . Նոյնպէս ո՛չ գիտասցես զարարածս
ոյ . զօրէնս առնեցէ զմդ ։ Այսինքն , որ ոչ
կարես գիտել՝ թէ որպիսեաւ եղանակաւ,
և որով ճանապարհաւ կենդանանայ , և
հոգևորի սաղմն յարգանդի յղւոյն , այսպ
և անգէտ ես զապառնեայ իրաց զորս
առնելոց է Ած . և ասէ , զմդ , թ զընթացիցն
ոչ ունիս զգիտութիւն ։ Նա՛ այսու բանիւ
տխրէ զունկնդիրսն՝ զգործս բարեաց ոչ
ձգել՛ ի յապագայն , այլ իսկոյն գործել ։
Դարձեալ . վերաբերի և առ այս , թէ
նաև զգործոյն այ՝ զոր այժմ գործէ յաշ-
խարհի , թ մինչ տայ զամլ , զմահ , և կամ
թոյլ տայ լինել մեծամեծ պատերազ-
մունք , գերութիւնք , և աւերմունք գաւա-
ռաց . և կամ ոմանց զփորձութիւն , և զաղ-
քատութի , ոմանց զյաջողութիւն , և զհարս-
տութիւն տայ , մեք ոչ գիտեմք՝ թէ առինչ
վախճան գործէ Ած . և վասնէր այնպէս
առնէ . որպ և ոչ գիտեմք զայս՝ թէ որպէս
հոգևորի սաղմն յարգանդի յղւոյն , և
կերպաւորի ։ Սո որոյ ոչ պարտիմք ամ-
բոխել , այլ միշտ փառս տալ այ . և հաւ-
տալ՝ թէ զամ վասն բարւոյ վախճանի
առնէ . բայց մեք գոլով անտեղեակք՝ ոչ
ճանաչեմք ։ Արդ՝ որպ զճանապարհն հոգ-
ևորման սաղմին թէպէտ ոչ գիտեմք ,
բայց տեսանեմք զի այս որ ծնեցեալ է
կենդանի . նոյնպէս և՝ թէպէտ զճանա-
պարհ

պարհ գործոցն ա՛յ ոչ գիտեմք, և ոչ պարտիմք հետազօտել , սակայն հաւատալ պարտիմք տեսանել՝ թէ զա՛մ՚ մի բարւոյ վախճանի առնէ :

Նաև այս տուն՝ 'ի լաւին թարգմանութե՛ն զնի այսպէս . Որպէս ոչ գիտես՝ որն է ճանապարհ հողմոյ , և որպէս բանին շարաջեցին ոսկերքն յորովայնի յղւոյ . այսպէս և ոչ գիտես զգործս ա՛յ : Այսինքն , ո՞րք ոչ գիտես , թէ ուստի գայ հողմն , կամ ու՞ր երթայ . և ո՞րք ոչ գիտես թէ որպիսեաւ կերպիւ ոսկերք կենդանւոյն այնպիսի հիանալի բարեկարգութե՟ շարակցին յարգանդի մօրն , և որով բանիւ կամ պատճառաւ նոյն յեղեղուկ սաղմն 'ի միս և 'ի յօդս փոխարկի . այսպէս և զկերպն բարեգունեղի շարակարգութե՛ն ա՛ծային գործոյ՝ ոչ կարես գիտել . բայց հաւատալ պարտիս , և հաւատով տեսանել զայնս յոյժ բարեգունեղ կարգաւ լինել միշտ և հանապազ :

6 : Ընդ առաւօտս սերմանեա՛ զսերմն քո . և ընդ երեկոյս մի՛ լքցին ձեռք քո . զի ոչ գիտես՝ եթէ որ պատշաճեսցի . այս՝ թէ այն . եթէ երկոքեանն 'ի միասին՝ բարիք են :

'Ի վեր անդր 'ի 4. տանն ասաց . որ խորէ զհողմ՝ ոչ սերմանէ . առ 'ի ցուցանել՝ թէ ըզ գործն բարի ոչ պարտիմք ձգել 'ի վաղիւն . աստէն ևս առնոյն բան վերահայի . և կամի ասել . ընդ առաւօտն գործեա՛ զբա-

զբարին առաջադրելովդ զբոլոր օրն ան-
ցուցանել 'ի փառս այ · և այս է սերմա-
նելն · և յերեկոյին մի՛ լուծցին ձեռք քո · այսինքն
և մինչև ցերեկոյ մի՛ թուլացուցաներ ըզ-
կամս քո 'ի գործելոյ զբարիս:

Ա՛ թէ ասիցես · եթէ մինչև ցերեկոյ
պարտիմ աղօթել, և զայլս նմանս գործս
բարիս առնել, ապա ո՞ր ժամանակ մե-
րայինայ լինի՛ զի զգործ արհեստիս առնի-
ցեմ, որով ապրիցիմ · և կամ զընտանեաց
իմոց հոգայցեմ · և կամ զսակաւ ինչ կե-
րակուր' խղճաս կարեաց իմոց առնուցում:
Պատասխանեմ · զայդ ամ զորոց ասացեր՝
թէ ոչ մնայ քեզ ժամանակ զի առնիցես,
բոլոր օրն է քեզ ժամանակ · մն զի ու-
տել, ըմպել, աշխատիլ, գնել, վաճառել,
զգործ արհեստիդ առնել, նաև ննջել, և
այլ ամ այսպիսիք, որք ոչ են գործք մե-
ղաց, են քեզ նիւթք բարեգործութեց:
Սաստի կեր, որք զորքանս տուեալէ քեզ
Ա՛ծ · բայց առանց որկրամոլութե, և ար-
բեցութե · և միայն 'ի փառս Տն · և խորու
'ի ձեռանէ նր ընկալեալ · և այն ամ լինի
քեզ բարեգործութի : այսպէս և ս գործեա
զգործ արհեստիդ · արա զգործ վաճառա-
կանութեդ · և աշխատեա 'ինոսա · բայց
առանց նենգելոյ զոք · և առանց ագա-
հութե · և թարց ստախօսութե, և միայն
'ի փառս Տն · և ո՛չ վասն գերազանցելոյ
զայլս, կամ ունայնասիրութե աղագաւ ·

և

և այսու նաև այնոքիկ ամենեքեանք լինին քեզ բարեգործութիւք։ Օգնեսցե՛ս զհանդերձս ըստ կարեաց քոց, և ըստ պահանջման պատճառոյդ որքան կարես. բայց ո՛չ վասն փառասիրութեան, և կամ սակս հաճոյանալոյ աչաց բղջախոհից և փառաշոտաց. այլ միայն վասն ծածկելոյ զմերկութիւն քո. և վասն պահելոյ զքեզ 'ի տօթոյ, և 'ի ցրտոյ 'ի փառս Տն։ Ըստ այսմ իմա՛ բայց 'ի մեղաց և զայլոց ամենից. յորս յառաջօսէ մինչև ցերեկոյ կարես բարեգործել։

Սերմն ո՛չ ասէ քեզ սբ. գիրն՝ ոչ ուտել և ոչ ըմպել, և այլն. այլ ասէ, ըստ պատուիրանացն այ, և ըստ կարգի օրինացն 'ի կիր առնուլ։ Ապա եթէ մանուկ մի 'ի սեղանոջ անկարգաբար ուտիցէ, և հայր նր սաստեալ նմա՝ ասիցէ, մարդկօրէն առ զկերակուրդ, և ո՛չ անասնաբար, այնու ո՛չ արգելու զուտելն. այլ զանկարգութիւն. ըստ այսմ են և բանք ածային գրոց։

Արդ՝ այսու մեկնութեամբ՝ իմանի նշանակել զայս՝ թէ յամ ժամ պարտիմք գործել զգործս բարեաց. թէ յառաւօտու, և թէ յերեկոյի. և 'ի ձեռն առաւօտուն և երեկոյին՝ իմացեալ լինի նաև միջոյն. այ, բոլոր օրն որ անկանի 'ի մէջ երկուց ծայրիցն։

Պարզեալ. իմացեալ լինի 'ի ձեռն առաւօտուն մանկութիւն. յորում ուսանելով զօրէնս և զպատուիրանս այ՝ սերմանեմք.

և

և մինչև ցերեկոյ ծերութեան մերում ոչ պարտիմք լքանել 'ի գործոց բարեաց, ասելով՝ թէ 'ի մանկութեան և յերիտասարդութեան զբաղում գործս բարեաց արարի. և այն բաւ է ինձ:

Դարձեալ. 'ի ձեռն առաւօտուն իմացեալ լինի յաջողութիւն և առողջութիւն, և կամ փարթամութիւն, և այլք նմանք, յորս պարտիմք գործել զբարիս և սերմանել. նախ՝ այսու, զի 'ի ձեռանէ Տն առեալ համարիցիմք զայն ամ: Երկրորդ՝ զի 'ի փառս նորին 'ի գործ ածիցեմք: Երրորդ՝ զի իբրու 'ի ձեռս մեր 'ի պահեստ եդեալ, և կամ 'ի փոխ տուեալ մեզ համարիցիմք զայն ամ՝ յաջողութիւն և զբարիս մարմնաւորս, զորս տուեալէ մեզ Ած: Եւ մինչ 'ի ձեռն ասացելոցս ընդ առաւօտուն յաջողութեան սերմանեմք, ընդ երեկոյն, որով իմանի ձախորդութիւն, աղքատութիւն, և հիւանդութիւն, և այլք նմանք, ոչ լքանիցին կամք մեր 'ի բարեգործելոյ: Վասնզի ոչ նա, որ իբրև զպահեստ ինչ, և կամ իբրև զփոխ առեալ ունի զիմն 'ի ձեռս իւր, և ոչ համարի ոչ զսեփական ինչ իւրեան, յորժամ տուօղն առնու 'ի ձեռացն, ոչ երբէք տրտմիցէ, այլ շնորհակալ լինի. զի յայնքան ժամանակ զիւրն զայն եթող 'ի ձեռս իւր. այսպէս և նա՝ որ զամ յաջողութիւս իւր՝ իբրև զփոխ առեալ համարի յԱյ, ընդ բառնալն Այ զայնս 'ի նմանէ,

նէ, ոչ երբէք տրտմիջէ: Այլ որ զյաջողութին, կամ զփարթամութին ըստ որում 'ի ձեռանէ այ եկեալ ընդունի՝ (և այս այնպէս, զի եթէ 'ի ձեռանէ այ եկեալ ոչ էցէր՝ մերժէր,) այնպիսին նաև յերեկոյին բարեգործէ. ըստ, նաև 'ի ձախորդութեն, յորում ամ փարթամութիւք կորնչին, շնորհակալ լինի զայ: Քանզի նաև զաղքատութիւն տեսանէ 'ի ձեռանէ Տն գալ ինքեան. և այնու անզանազանապէս ընդունի և զայն. զի ոչ ըստ որում իր հայի, այլ ըստ որում 'ի ձեռանէ այ եկեալ՝ որով նոյն լինի բանն 'ի միւն և 'ի միւսն: Աստի 'ի կորնչել փարթամութեն՝ ոչ ինչ կորնչի այնպիսւոյն. և այսու նաև ինքն մնայ 'ի նոյնում բարեգործութեն. և յերեկոյի անյաջողութեն ոչ լքանի ձեռքն. քանզի ոչ նուազ պարգև Այ համարի զաղքատութիւն քան զփարթամութին:

Բայց այս՝ է միայն վն արանց ածապաշտից, և ոչ վն ագահաց, որք զփարթամութիւն պարգև համարին միայն յիւրեան յինքեան, և յիւրում, և ոչ ըստ որում 'ի ձեռանէն այ. վասն որոյ պատրաստք են ընդունիլ զայն նաև 'ի ձեռանէ դիւին եթէ տայցէր նս:

Այլ եթէ այս բան ոչ թուեսցի ստուգապէս ասացեալ, ստուգացուցանի այսու: Զի բազմիցս ագահքն ստութբ, նենգութբ, և զրկանօք հաւաքեն զինչս. և ո

կարէ

կարէ ասել՝ թէ ստութիւք, և նենգութիւքն
ոչ են ձեռք սատանայի. որովք կալնու
զբաղումն, և ածէ 'ի դժոխս:
Ասէ յարէ. Օ՛չ գիտես երբէք որ պարտական-
ցէ. այս, թէ այն. Եւ այլն: Այսինքն, դու ոչ
գիտես՝ թէ առ 'ի հաճոյանալ որոյ որն իցէ
քեզ պատկան, յորում կարիցես բարե-
գործել. այս, թէ այն. որ արդեօք յա-
ջողութե առաւօտն, թէ ձախորդութե
երեկոյն. և կամ թէ երկոքեանն ես. որ
ունելով նախ՝ զյաջողութի, և յետոյ զձա-
խորդութի, որով լինիցին միացեալ 'ի քեզ
երկոքեանն ես, որպ եղեն 'ի յօբ:
Ասէ զի ոմանց, որպ աբրահամու՝ պատկան
եղև միշտ առաւօտն փարթամութե. զի
'ի նմին առաւել բարեգործէր. և Յ՛ոբ զայն
ետ նմա. իսկ ղազարու, որ էր առ դրան
մեծատանն, պատկան եղև միշտ երեկոյն
աղքատութե. զի նա 'ի նմին առաւել
բարեգործէր: Ասէ մինչ ած միայն գիտէ՝
թէ յորում արդեօք կայութե առաւել
դիւրաբար կարեմք բարեգործել, և զնոյն
տայ մեզ, և մերթ նաև զերկոսեանն, հե-
տևի թէ մեծագունեղ մոլորութի, և ա-
պերախտութի է և նշան թերահաւատու-
թե նոցին՝ որք ասեն. եթէ 'ի յաջողու-
թե իցէի, դիւրաբար գործէի զբարին.
բայց զի եմ 'ի ձախորդութե, այսինքն,
յաղքատութե, 'ի հիւանդութե, կամ
'ի ծառայութե, և վասն այսորիկ ոչ յա-

ռաջանամ 'ի բարիս, և մեղանչեմ:

Պատասխանի. Եթէ ասեն (ոչ գիտես եթէ որն պտղաբերեսցի, այս, թէ այն) վերաբերցի առ մանկութիւն, և առ ծերութիւն, մեկնի այսպէս: Մինչ ոչ գիտես՝ թէ 'ի մանկութեան բարեգործելովդ կարես հաճոյանալ ա͞յ, թէ 'ի ծերութեանդ, և կամ թէ յերկոսեանն 'ի միասին, հարկաւոր է զի միշտ 'ի բոլոր կեանս քո բարեգործիցես: Օրինակ, եթէ թագաւոր ոմն ունիցի 'ի մտի իւրում 'ի միում ժամու աւուրս այսօրիկ 'ի գնալն քո առ նա տալ քեզ զմեծագունեղ պարգև ինչ, զոր դու մեծաւ տենչմամբ ըղձակերտես, և ոչ ծանուցէ քեզ զժամն զայն՝ յորում տալոց է, և քեզ անկարելի իցէ գիտել զժամն, զի՞նչ այլ ինչ կարես առնել՝ եթէ կամիցիս ընդունիլ զպարգևն, եթէ ոչ զայս, զի յառաւօտէ մինչև ցերեկոյ առ դուռն արքային պատրաստ գտանիցիս: Ըստ այսմ է և առաջեդեալ բանն. վասն զի և մեք մինչ ոչ գիտեմք թէ երբ ընդունելոց իցեմք զա͞ծային ողորմութիւն, հանապազ կանխել պարտիմք 'ի բոլոր ընթացս կենաց մերոց 'ի ձեռն աղօթից՝ և գործոց բարեաց՝ առ դուռն ողորմութեան ա͞յ, որպէս զի ընդունիցիմք զշնորհս և զկեանս:

7. Քաղցր է լոյս. և բարի աչաց՝ տեսանել զարեգակն:

Իմաս_

Իմաստութեանն 'ի սկզբանէ գրոյս մինչև ցայս վայր զունայնութեանց իրաց անցաւորաց խօսեցաւ և խրատեաց՝ թէ որպէս վարիլ պարտին մարդիկ նոքօք, իսկ յայսմիկ տան առնէ զնոր սկիզբն ինչ ։ և աստի մինչև ցվախճան գրոցս զմահուանէ մարդոյն , և զդատաստանէն Այ , 'ի յոր գնալոց եմք , ընձեռէ ։ Արդ՝ աստէն՝ ասելովն , Քաղցր է լոյսն , զի ազնիւ և սիրելի է լոյսն , որով իմանի խաւարն գոլ ատելի ։ Նաև ասելովն , Բարի է աչաց ։ զի տեսութիւն աչաց բարի է տեսանել զարեգակն ։ (քանզի տեսութիւն արեգական զուարճացուցանէ զաչս և զբոլոր կենդանիսն ) տայ իմանալ ենթառակին՝ զայս , թէ բարի է կեանքն՝ և ազնիւ ։ և կամ, բարի և ըղձալի է կամաց մերոց կենդանի գոլն ։ զի որպէս աչացն ըղձալի է արեգակն ։ այսպէս և մեզ կենդանի գոլն մեր ։ Սակայն մինչ ( որպէս 'ի հետևեալ տանն բացայայտէ ) այսպիսւոյ ըղձալի լուսոյ կենաց՝ յաջորդէ խաւարն մահու , զի՞նչ օգուտ է այն ։ և կամ մինչ այսպիսի ըղձալի արեգակն , որ է կենդանի գոլն մեր , 'ի մայրն մտանէ , և այլ ոչ երևի ։ զի մեռանի մարդն՝ և ոչ է կենդանի , զի՞նչ օգուտ է մարդոյն կենդանութիւն այն , եթէ ոչ իցէ գործեալ զգործս բարիս 'ի յընթացս կենաց իւրոց մինչ էր կենդանի ։

8: Զի եթէ ամս բազումս կեցցէ մարդն, և յամ՟ 'ի նոսա ուրախ լինիցի, և յիշեսցէ զաւուրս խաւարի. զի բազումք եղեն. ամ՟ ինչ որ գալոցն է, ունայն է:

Կամի ասել, եթէ հանդիպեսցի մարդոյ 'ի յայսպիսի ըղձալի կեանս իւր, զոր լուսոյ նմանեցուցաք, զամս բազումս ապրել. և 'ի նոսին գոլով ինքն փարթամ, և ամ՟ իրք իւրք յաջողեալք՝ ուրախ լինիցի, պարտ է նմա յիշել զաւուրս խաւարին. այսինքն զաւուրս ծախորդութեան, և զաւուրս հիւանդութեան, և մահուան: և զայսոսիկ զամենեսեան որք գալոցք են՝ եթէ յիշեսցէ մարդն, ցուցանեն իսկոյն մարդոյն, թէ ամ՟ բազմութիւնք աւուրց, յորս ուրախ լինի մարդն, ունայն է: Նա և յայտ յանդիման կացուցանէ յիշումն աւուրց խաւարին զայս, թէ լուսանման ըղձալի կեանս այս է ունայն: Վ՟զի կեանն այն՝ զոր գիշեր մահուն փոխանակէ, է ունայն. և ոչ կարէ ոք զայս ըղձակերտել, և սիրել: Արդ՝ զաւուրս մարմնաւոր բարութեանց մարդոյն փոխանակեն աւուրք չարութեանց և փորձութեանց. քանզի զաւուրս առողջութեան փոխանակեն աւուրք հիւանդութեան. զաւուրս ուրախութեան աւուրք տրտմութեան. և զաւուրս լուսոյ. այսինքն կենաց՝ աւուրք խաւարին, այսինքն մահու: Իսկ մինչ այսպէս է, բարի է մարդոյն 'ի յաւուրս լուսոյ յիշել

զաւ-

զաւուրս խաւարին , որով յայտ յանդի-
ման կացուցանիցի ունայնութիւն և սնոտի
գոլն աւուրց լուսոյն · զի աւուրց յաջո-
ղութեան և ուրախութեան ։

Նա՛ յարէ · Զի բազումք եղիցին · զի որք բա-
զումք եղիցին · մ̄ զի աւուրք խաւարին
որք գալոցք են՝ ոչ են սակաւք · այլ բա-
զումք , զի մարդն զաւուրս բազումս նն-
ջելոց է ՚ի գերեզմանի , և գուցէ նաև ՚ի
դժոխս , եթէ անապաշխար մեռեալ իցէ ։
Նա՛ եթէ ասիցես · ընդէ՞ր կամի սբ գիրն՝
զի յաւուրս լուսոյ , զի կենաց և ուրախու-
թեան և կամ յաջողութեան մերոյ յիշիցեմք
զաւուրս համբերելոյ խաւարին՝ և այնու
զգաստութիւն լինելոյ խառնիցեմք ը̄ մե-
ղեր ուրախութեան մերոյ ։

Պատասխանեմ · զայս առաջադրէ մեզ սբ
գիրն վս բարւոյ մերոյ · քանզի եթէ ընդ
քաղցրութեան կենաց մերոց զլեղի դառ-
նութեան յիշատակաւ մահու ոչ խառնի-
ցեմք , և ընդ ուրախութեան մերոյ զգաս-
տութիւն համբերելոյ տրտմութեան ոչ կա-
րեմք լաւապէս ճանաչել զունայնութիւն
կենաց՝ և ուրախութեան · և ընդ ոչ ճանա-
չելն յենումք ՚ի նոսա · սիրեմք զնոսա · և
մոռանամք զա̄ծ , և զպատուիրանս նորա ։
Նա՛ ոչ հաւաքեմք ՚ի ձեռն կենաց և յա-
ջողութեան , և առողջութեան մերոյ զարդիւնս
բարեաց ։ և յետոյ յորժամ անցանէ այն
ժմ , և հասանին աւուրք խաւարին , ՚ի

նմին թէպէտ ձանձրանամք զունայնութիւն անցելոյ կենաց՝ և յաջողութեց մերոց , սակայն ոչինչ օգտէ ձանձրանալն այն որ լինի յայնմիկ ժամանակի՝ մինչ մեռեալք լիցեմք ։ Ա՛չ բաց 'ի յոչ օգտելոյն՝ մշտնջենաւոր խաւարն և դառնութիւն վերաժամանէ մեզ ․ Տ՟ր պատիժն յաւիտենական տանջանաց դժոխոց ։

Ո՞րդ՝ ո՞րն է քեզ բարի , ո՜վ մարդ , սակաւ առ սակաւ զդառնութի հանդերձելոյ չարին ընդ քաղցրութե կենացդ և ուրախութեդ խառնելով յերկիւղն Մ՝ մահուդ , և այնու 'ի յաւիտենականէ դառնութե դժոխոց ազատի՞լդ , թէ զանցաւոր ուրախութիդ և զկեանդ անխառն 'ի դառնութեանց պահելով՝ զմշտնջենաւոր դառնութիւն անխառն 'ի քաղցրութեանց սեփականեսցես անձին քում ։ դատեա՛ զայսմանէ միտքդ ․ և ըստ այնմ , ընտրեա՛ զբարին և զօգուտն քո ։

Ա՛յլ յետին մասն բնաբանիս ունի զփոքր ինչ խրթնութի 'ի մեզ ։ զի դնի ․ ա՟մ ինչ որ գալոցն է , անցեալ է ։ Ո՛չ որ պարտ է կալնուլ այսպէս ․ այնք որք գալոցք են , ցուցանեն զսնոտի գոլն անցելոց ․ որպ և մեկնեցաւ ․ զի գալոց խաւարն մահու , և այլոց նեղութեց ցուցանեն մեզ զսնոտի գոլն անցելոց կենաց մերոց , և ուրախութեանց ։ Ուստի մեք ցորքան եմք 'ի կեանս յայս՝ որ է լոյս , եթէ յիշիցեմք զաւուրս խաւարին ,

որպ

ո՜վ զի մինչև են եկեալք՝ ցուցանիցեն մեզ զունայնութիւն կենաց մերոց , այնու ՚ի գործոց մերոց խորշիմք , և ՚ի մշտնջենաւոր խաւարէն զերծանիմք ։ Վասն զի յոյժ բարւոք է մեզ այժմ առ գալո՛յ խաւարն մտածութեամբ դիմել , և այնու զունայնութիւն լուսոյ մարմնաւոր կենաց և յաջողութեան մերոյ ճանաչել , ո՜վ զի այսու անցաւոր լուսով կենաց և յաջողութեան բարեպէս վարիցիմք , քան թէ այժմ ադիտայեալ զայսմանէ , ո՜ զունայնութեան կենաց և յաջողութեան՝ խաւարին մեզ հասցէ . և յայնժամ տայցէ մեզ գիտել՝ յորում կեանն մարմնաւոր գոլով անցեալ , ոչինչ կերպիւ բարեպէս վարել նովաւ մերամնայ մեզ ։

9 ։ Ուրախ լեր երիտասարդ , ՚ի մանկութեան քում . և զուարճացուսցէ զքեզ սիրտ քո յաւուրս մանկութեան քոյ . և գնա՛ դու ՚ի ճանապարհս սրտի քոյ անարատ . և ՚ի տեսիլ աչաց քոց . և ծանի՛ր եթէ վասն այսր ամ ածցէ զքեզ ած ՚ի դատաստան ։

Այսինքն , ո՛վ դու մարդ , ՚ի պատանեկութեան քում ընտրելով վն քոյ զբարի կացութիւն ինչ՝ և զուսումն ածային օրինաց , ՚ի բարւոք հաստատեա՛ զսիրտ քո . և զբարին արա՛ առարկեցեալ և ենթակայ ըղձականութեան սրտի քոյ . ո՜վ զի այնու մինչ ես ՚ի պատանեկութեան , զուարճացուսցէ և ուրախացուսցէ զքեզ սիրտ քո ։ և որքան

առ այս է ասելն, որպէս չէր երբեմնարդ: Եւ այս խրատն է. զի մինչ պատանի որ՝ի բարւոջ հաստատեալէ զսիրտ իւր, ոչ ձաղի և հարկանի ՝ի ծնողաց, կամ ՝ի յուսուցչէ զի այնու արտաքսցի: Ոչ յանկայ զժուարին իւրայ և անկարգելեաց, զի ընդ ոչ ընդունելն վշտանայցէ. ոչ հետևի անհամեստ և անառակ գործոց, զի ՝ի յայտ գալն և ՝ի խայտառակելն՝ ՝ի ձեռն ամօթոյն տանջեսցի և զտուգ առցէ: ուրեմն միշտ մնայ ՝ի յուրախութեն. և ուրախութիւն այս ոչ միայն է մարմնաւոր, այլ մարմնաւոր և հոգևոր: Եւ ասացեալ ուրախութիւն կայանայ միայն ՝ի յընտրութեն բարւոյ կայութեն, և ՝ի դիմելն սրտի պատանեկին առ բարին. որպէս և ցուցանէ հետևեալ բանն՝ զոր ասէ. Գնա՛ ՝ի ճանապարհս սրտի

քոյ անարատ:

Այսինքն, մինչ պատանեաց յատուկ է երթալ զհետ յօժարութեց սրտին, եթէ զսիրտ իւր հաստատեսցէ ՝ի բարին, և ըղձալի սրտին իւրոյ եղեալ իցէ միայն պատուէրանն այ, և Ա՟Ծ, միշտ ը՟ գնալն ՝ի ճանապարհս սրտին, յ՟ ՝ի գործելն ը՟ ըղձին, անարատ գնայ. և սրբաբար գործէ: Եւ կամ այսպէս. որ նոյն է. մինչ պատանի որ հաստատեալ է ՝ի բարւոջ զսիրտ իւր, միշտ ՝ի ճանապարհս սրտի իւրոյ. յ՟ ՝ի համայնս ըղձականութիւն իւր գնայ անարատ: քանզի զայն ա՟մ զոր ոչ ըղձա-

ըղձակերտէ՝ ո՛չ է ընդդէմ օրինաց. և զայն ա՛մ զոր ըղձակերտէ՝ է ըստ ա՛ծային օրինաց ։ Նոյնն իմանի և զտեսութենէ աչացն, ՚ի յոր գնայ անարատ. զի ո՛չ հայի՝ եթէ ոչ ՚ի յայնս՝ ՚ի յորս հայելն՝ յօրինաց ո՛չ արգելանի. և խոտորեցուցանէ զաչս իւր յայնց՝ որոց ցանկալն յօրինաց արգելանի ։ Այս՛ այսէ գնալ անարատ ՚ի տեսիլս աչաց ։

Այս՛ մինչ այսպէս խրատեաց զպատանիս, յարէ և զայս. Ծանի՛ր, եթէ վասն այսր ա՛մ ածցէ զքեզ Ա՛ծ ՚ի դատաստան. ա՛պ դատելոց է Ա՛ծ զկիրսն քո, արդեօք ՚ի պատանեկութեան քում հաստատեցե՞ր զկիրս քո ՚ի բարւոք. և ՚ի յուսումն պատուիրանացն ա՛յ, թէ ոչ. Նաև արդեօք ՚ի ճանապարհս սրտի քոյ գնացե՞ր անարատ՝ թէ ոչ. ա՛պ զոր ինչ և ըղձակերտեցեր, և սիրեցեր՝ էի՞ն արդեօք ըստ պատուիրանացն ա՛յ, թէ ոչ ։ Նաև ՚ի տեսիլ աչաց քոց ըստ որում գնացեր, դատէ այսու կերպիւ. Արդեօք հայեցա՞ր ՚ի նոսա որոց ցանկալն ոչ էր արժան. և կամ խոտորեցուցե՞ր արդեօք զաչս քո յայնց՝ որոց հետևիլն էր արժան, թէ ոչ ։ Այս՛ մինչ ՚ի յանցեալ տան ուսոյց յիշել զմիտսն առ ՚ի զգաստանալ, յայսմիկ տան առաջադրեաց յիշել զդատաստանն ա՛յ. և այնու զգուշանալ ։

10: 'Ի բա՛ց արա զտրտմութիւն 'ի սրտէ քումմէ. և հեռացո՛ զչարութիւն 'ի մարմնոյ քումմէ. վասն զի մանկութիւն և անմտութիւն՝ ընդունայնութիւն է:

Աստէն խրատէ զերիտասարդն հեռացուցանել 'ի սրտէ զտրտմութի. որով խմացեալ լինի դառնութիւն. յորմէ ժանգահարի միտն և իմացականութիւն. քանզի 'ի ձեռն հեռացման այնպիսեաց դառնութեց 'ի սրտէն՝ բացեալ լինի միտն, և յարմարեցուցանի առ ուսումն օրինաց և իմաստութե և երկիւղին այ. և այսու դիւրինայ հեռացուցանել և զչարն 'ի մարմնոյ: Զի զչար ցանկութիւն փափաշոտական հեռացուցանել 'ի մարմնոյն: Քանզի 'ի պատանին՝ մինչ արիւնն նորապէս զարթնու, և գրգռումն ցանկութե առաւել զօրանայ, հարկաւոր է նմա՝ զի նախապէս ուսեալք իցեն զօրէնս և զերկիւղն այ. և այնու լուսաւորեցեալք ուսմամբ ածային պատուիրանացն. ապա թէ ոչ՝ իսկոյն դահավիժին յա՛ և իցէ ախտս մոլութեց. և մանաւանդ 'ի վիհն փափաշոտութե, որ է չար՝ ո՛չ միայն հոգւոյ, այլև մարմնոյ: Քանզի բազումք անհրահանգք և անուսումք պատանիք, հեշտեալ ցանկութեց մարմնոյ, զդալար տին մանկական՝ բոցակիզեալ հրով ցանկութե՝ 'ի մահաբեր հիւանդութիւն անկեալ մեռանին:

Եւ յարէ. Վասն զի մանկութիւն և անմտութիւն՝ ընդ-

ընդունայնութիւն է ։ Այսինքն , որպէս մանկութիւնն գոլով նման ծաղկան՝ թէպէտ 'ի սկզբան երեւի գալար եւ պայծառ , բայց յետոյ թառամեալ թարշամի 'ի ձեռն ծերութեան . եւ այսու ընդունայնութիւն է . այսպէս եւ անմտութիւն , որպէս փափկանալն եւ հեշտութիւն՝ վասն անցականութեան իւրոյ ընդունայնութիւն է ։ Այս աստէն բառս՝ անմտութիւն , դնի փոխանակ հեշտութեան եւ փափկութեան . որք 'ի գործ ածին 'ի պատանեկաց 'ի ձեռն անմտութեան ։ վասն որոյ խրատէ ասելով . մանկութիւն եւ հեշտութիւն մինչ վասն անցաւորութեան իւրեանց են ընդունայնութիւնք , պարտին մանկունքն զգուշանալ յանմտութենէ . եւ գիրկս արկանել ուսման աստուածային օրինաց . որպէս զի 'ի մանկութեան իւրեանց լինիցին յիշօղք զԱստուծոյ , եւ զաստուածային պատուիրանաց , որով 'ի մանկութեան , որ է առաւօտ՝ սերմանելով 'ի սիրտս իւրեանց զբարիս , յերեկոյին՝ որ է հասակն ծերութեան , ոչ լքանիցին 'ի գործելոյ զբարիս . որպէս ասացաւ 'ի վեր 'ի 6. տանն ։

# ԳԼՈՒԽ Ժ.Բ.

Յայսմիկ գլխոյ որ 'ի յորդորել պատուիրանէս՝ և պերճախօսութեամբ, զի 'ի մանկութէ սկսանիցին ծառայել այ, և 'ի բաց կայցեն 'ի ցանկութէ, և 'ի հեշտութէ մարմնոյ, բազմազան և այլոց տակօք և խորհրդաբանութէ բազմաբէ պատուապատնս և չեփչոս ծերութէ և մահու : Այս 'ի վախճանի 'ի 13. տան եզրակացէ՝ ասելով . *Վախճան բանիցս՝ զամ լինի լուր : Զայ երկիր, և զպատուիրանս նր պահեա . զի այս է ամ մարդ :* Իսկ այլոց և գեղեցիկ առակքն և նմանաբանութիւնքն զպատուապատանաց ծերութէ և հօ_ գեվարութէ և մահուանն՝ են քսան և մի . որք կար_ գաւ շարադրածին յայսմիկ գլխոյ որ 'ի ցուցանել զքսան և մի ցեղ տառապանս ծերութէ :

Առաջինն է 'ի 1. տան . որով ցուցանին ներքոյ թէք պետպես հիմանդութեց : Երկրորդն 'ի նմին տան ցուցանի, որ է զզուանօք և պակասութեան յամենայն իրաց՝ որք հանդերձեալ ծերոց : Երրորդն 'ի 2. տանն ցուցանի՝ որ է այս . զի երկնային մարմինք 'ի բա_ րեաց խաւարեսցին չերեն չծերս՝ ոչ լուսաւորելով զնոսա, և ոչ օգնելով 'ի յետոյ շարժմանց : Չոր_ րորդն է 'ի նմին տան՝ որ է այս, զի 'ի յետոյ շարժ_ մանց նոցին պատճառաւ 'ի ծերս խզնածք բազմա_ պեսակք և վշտացուցիչք : Հինգերորդն է 'ի 3. տանն .

տանն․ և է այս, զի պահապանքն նը․ այսինքն, չքաւորութեանն ախտանեն պակասել․ և ո՛չ օգնեն նմա, և ո՛չ յիմեքէ պատահարէ պահեն։ Վեցերորդն է 'ի նմին տան, որ է դողդոջմանն արանց չորեքոտանեաց, այսինքն ուղտաց և ջորեաց։ Եօթներորդն ևս է 'ի նմին տան․ և է այս․ զի նուաղեն և պակասեն 'ի նմա աղաղօղքն, այսինքն ապամոտանքն։ Ութերորդն ևս է 'ի նմին տան․ որ է վէգ և մասամասումն տեսանողաց ընդ ծակս․ այսինքն աչաց։ Իններորդն է 'ի 4․ տանն․ որ է սղութի և նուաղութի յայնի 'ի սեղմեցմանէ և 'ի ջախջախմանէ դրանց ընչերանաց՝ որք են 'ի լանջն, կամ 'ի սիրտն, որ է հրապարակ բաղաքի մարմնոյն։ Տասներորդն է 'ի նոյնում տան․ որ է կարճութի և սակաւութի քնոյն․ որոյ վասն նաև 'ի յայնէ թուլնոյ մտոյ զարթնումն։ Մետասաներորդն ևս է 'ի նմին տան․ որ է պակասութեան և ծանրութի լսողութե ականջաց։ Երկոտասաներորդն է 'ի 5․ տան․ որ է երկչոտութի, և երկիւղ և ամչումն։ Երեքտասաներորդն է 'ի նմին տան, որ է ծաղկումն ալեաց 'ի յետոյ ապերախտութեան՝ նման նշենւոյ։ Չորեքտասաներորդն ևս է 'ի նմին տան, որ է այտուցումն որովայնի՝ և ոտից և սրնգաց համագոյն մարմնոյ։ Հնգետասաներորդն ևս է 'ի նմին տան․ որ է պակասելն բաղձանաց կերակրոյ, զոր բաղձան կապպարն բանալով, ասէ․ ցրուեսցի կապպարն՝ որով տայ իմանալ զկորուստ բաղձանին առ 'ի ուտել։ Վեշտասաներորդն ևս է 'ի նմին տան, որ է բայահեռանալն 'ի կենաց։ Եօթնևտասաներորդն ևս է 'ի նմին տան, որ է թաղումն, որ կոծմամբ բարեկամացն հոգւոյն։ Ութևտասաներորդն է 'ի 6․ տանն,

որ է

որ է խզումն լարի արծաթեղէնի · որ է ուղն երկայնացեալ 'ի յոսկերս ողնաշարէն · որ [illegible] ասէ ուղղոյ ծուծ · կամ [illegible] ոսկերաց ծուծ · որ 'ի գլխոյն մինչև 'ի ստորինն մասն ուղղոյ հասանի որպէս շարժերակ լար : [illegible] և է 'ի նմին տան , որ է խորտակումն ոսկեայ մանեկին · այսինքն մաշկին , որ պատէ զուղեղն գլխոյն · և գոյն այսորիկ մաշկի է նման ոսկւոյ [illegible] : [illegible] և է 'ի նմին տան , որ է խորտակումն սափորոյ 'ի վերայ աղբեր · այսինքն խորտակումն երակաց , որք են ընդունարանք արեան 'ի լերդէ և 'ի սրտէ [illegible] : [illegible] և է 'ի նմին տան · որ է ընկրկումն և թեկումն անուոյ 'ի վ̅ր գբոյ · այսինքն թեկումն գլխոյ , որ որպէս ջրհան անիւ յօդէ և հանէ զոգիս 'ի սրտէ , որ է որպէս ջրհոր : [illegible] գլուխն որպէս զանիւ 'ի վ̅ր ջրհորոյ , [illegible] զոգի կենդանի 'ի սրտէ , և տարածանէ զերակս մարմնին : Որոց դ առաջ կարգաւ գրեսցուք :

## ※ ԳԼ. ԺԲ : ※



Ու յիշեա՛ զարարիչն քո յաւուր մանկութ̅ե քոյ · մինչչև հասեալ իցեն աւուրք չարութ̅ե · և ժամանեսցեն ամք , յորս ասասցես , թէ ո՛չ են կամք իմ 'ի դոսա :

## ※ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ : ※

Այսինքն , յիշեա՛ զարարիչն քո՝ նախ այսու , զի առեալ զքեզ յոչնչէ : Երկրորդ

րորդ՝ զի արար զքեզ մարդ , և ոչ գա֊
զան ։ Երրորդ՝ զի վ՟ն երանացուցանելոյ
զքեզ ստեղծ զքեզ ։ Չորրորդ՝ զի 'ի ս՟բ
հաւատն իւր կոչեաց զքեզ . և ետ քեզ
զօրէնս և զպատուիրանս , զի պահելով
զայնս ժառանգիցես զկեանս երանականս ։
Հինգերորդ՝ զի միշտ 'ի գոլն քո պահէ
զքեզ . և 'ի ձեռն նախախնամութեան իւրոյ
'ի բազմադիմի փորձութեանց և 'ի վտանգաց
փրկէ զքեզ ։

Ա՜հ մինչ զայսոսիկ՝ և զայլ ա՟մ բարերա֊
րութիւնս ն՟ր զորս արար քեզ՝ յիշեսցես ,
յիշեա՛ և զանհուն մեծութիւն ն՟յ , զբա֊
րութիւն , զամենակարողութիւն , զքաղցրու֊
թիւն , զիմաստութիւն , զարդարութիւն , զո֊
ղորմութիւն , զգթութիւն , զսէրն , և զայլ
ա՟մ կատարելութիւնս , զորս յիշելով՝ և 'ի
միտ առնլով՝ շարժեսցի սիրտ քո և կամք
քո 'ի սիրել զնա յա՟մ սրտէ . և յորժամ
այս ա՟մ լինիցի , հետևի՝ զի զա՟մ օրէնս
ն՟ր պահիցես ։ վ՟զի ըստ Տ՟ն բանի ( որ
ասէ , որ սիրէ զիս , զբանն իմ պահէ , ) ոչ կա֊
րեմք ասել՝ և կամ գոլ սիրող ն՟յ , եթէ
ոչ պահելով զպատուիրանս նորա ։

Արդ՝ զայս ա՟մ յիշեա՛ 'ի մանկութենէ քում
մինչ չև ես ծերացեալ . զի ճշմարտապէս
սիրող Տ՟ն կոչիցիս . և զկեան 'ի յանցաւո֊
րաց իրաց վ՟ն սիրոյ ն՟ր 'ի բաց ձգօղ լինի֊
ցիս ։ Քանզի 'ի ծերութենէ յակամայ թող֊
լոց ես զա՟մ հեշտալիս և զըղձալիս մարմ֊
նոյդ ։

նոյն : Նա՛ մինչ 'ի ձեռն ասացելոցս յիշելով զարարիչն քո՝ ոչ կարիցես զսպել զքեզ 'ի մանկական ցանկութեանց, յիշեա՛ զարարիչն քո նաև այսու ճանապարհաւ . թէ նա է Տէր բացարձակ . զի է Տէր մահու և կենաց . և զիմ զոր կամի կարող է առնել . և հետևաբար է դատաւոր արդար . որ զիմ ապերախտս բարեաց՝ և զհակառակօղս պատուիրանաց իւրոց, արդարութբ 'ի ձեռն մշտնջենաւոր տանջանաց գեհենին հրոյն պատժէ : Նա՛ այսպէս՝ դու եթէ զքեզ այժմ 'ի ձեռն բարեաց գործոյ՝ կամաւ քով ոչ ենթարկիցես նմա, որպէս զի զերկնային և զյաւիտենական փառս արքայութե վայելելով՝ լինիցիս ոպ զորդի հնազանդ 'ի տանն Տր, յետոյ ընդդէմ կամաց քոց արկեալ լինիս 'ի դժոխս, և այնու յակամայ և բռնութբ ստորարկիս յաւիտենականապէս 'ի ներքոյ արդար պատժոյ դատաստանի Տր : Որդ՝ եթէ ոչ առաջնով կերպիւն, գոնէ այսու երկրորդիւ կերպիւս յիշելով զարարիչն քո, զարթիր 'ի քնոյ մեղաց :

Նա յարէ . մինչ չեւ հասեալ իցեն աւուրք չարութե :

Մկն: Այս է առաջին տառապանքն ծերութեան . զի հասանին ծերոց բազմադիմի հիւանդութիւնք : Մերթ ցաւ ատամանց . մերթ ցաւ աչաց . մերթ ցաւ թոքից . մերթ սրտի, և մերթ փորոյ . և այլք բազումք . զորոց ընաւից փոխանակ

սաե_

ասելոյ աւուրք ցաւոց և հիւանդութեանց , ասէ , աւուրք չարութեան , պատճառաւ ա_ռակաբանութեան ։ Այլ գտնելով զայս , կամի ասել , գործեա զբարիս 'ի մանկութեան քում , մինչ ոչ են հասեալք քեզ աւուրք ցաւոց պատճառաւ ծերութեանդ ։ Այլ այս մեկնու_

թիւն է ըստ նկարագրին ։

Իսկ ըս հոգևորին՝ իմացեալ լինի և այս . մինչ ես 'ի շնորհս այ , և ազատ 'ի մեղաց մահուչափից , ջանա գործել զբարիս . և մի՛ հեղգանար . զի մի՛ հեղգանալովդ՝ օր ըստ օրէ թուլանայցես 'ի բարեաց յօժա_րութեանց , որպէս ծերքն 'ի յուժոյ . և հասանի_ցեն քեզ աւուրք չարութեան . որ 'ի ձեռն թուլանալոյդ 'ի բարեաց՝ սահիցիս 'ի պէս_պէս մեղս . որք են փտասաբեր հիւան_

դութիւնք հոգւոյ ։

Այլ յարէ . Մինչ ժամանեսցեն ամք . յորս ասա_

ցես , թէ ո՛չ են կամք իմ 'ի դոսա ։

ըս ։ Մատէն յառաջ ասէ զերկրորդ տառա_պանքն ծերութեան , որ է այս . զի այնք կե_րակուրք , և կամ զբօսանք , և փափկութիւնք զորս 'ի մանկութեան ախորժէր և որմնէր որք , 'ի ծերութեան մինչ առաջադրի նմա , ասէ , ո՛չ կամիմ զդոսա . և ո՛չ հաճիմ 'ի դոսա . 'ի բա՛ց հանէք յինէն ։ Այլ այս վն այնորիկ հանդիպի ծերոց , զի գոլով 'ի մէջ բազմազան ցաւոց , և կենդանական ուժգնութիւնքն տկարացեալ 'ի նոսա , ո՛չ ունին զփոյթ զայնպիսեաց . ըս ո՛չ ունին

զկիղձ ընդ երկար նստելոյ 'ի խրախճանս․ ոչ զտենչ լսելոյ զձայն երգոց․ և ոչ զփափաք կաքաւելոյ․ և ոչ զյօժարութիւ ո՛ և իցէ այսպիսեաց։

Որդ՝ կամի ասել՝ թէ մինչ 'ի մանկութե̃ քում ունիս զկիղձ և զտենչ առ այսպիսիս, և կարող ես այսպիսեօք ունայնութե̃ք սփոփիլ, կարգաւորեա՛, և կանոնաւորեա՛ զկիղձս քոյս՝ զի առ'ի մեղս ոչ վարիցիս նոքօք․ և զաւելորդ փափկութիս մարմնոյ կամա՛ քով 'ի բաց ձգեա վ̃ն ա̃յ․ և մինչ հեշտութի̃ ինչ, և կամ փափկութի̃ իցէ մեղք, և կամ առակցեալ մեղաց, և կամ առիթ և պատճառ մեղաց, զ̃ ա̃մ 'ի բաց հերքեա 'ի քէն վասն ա̃յ․ զի արդիւնաւորիցիս․ և մի՛ սպասեր ծերանալոյ զի յայնժամ 'ի բաց թողցես։ Վասնզի 'ի ծերութե̃ ոչ թէ դու 'ի բաց հերքես զմեղսն, կամ զփափկութիւն, և թողուս զնոսա, այլ նոքա զքեզ 'ի բաց հերքեն՝ և թողուն․ և այսու ոչ ունիս զարդիւն, այլ զմեղադրութի̃ և զպատիժ․ որ̃պ և յայտ է։

Իսկ ըստ հոգևորին՝ իմացեալ լինի և այս․ մինչ ոքէ 'ի շնորհս՝ ունի զտենչ առ բարին, և առ պէսպէս առաքինական գործս․ բայց եթէ 'ի ձեռն հեղգութե̃ ոչ գործիցէ ըստ բարի տենչմանցն, այնու իսկ ծերանայ և հնանայ 'ի շնորհաց․ և հետևին նմա բազմադիմի հիւանդութիւք մեղաց․ և յայնմիկ ժամանակի մինչ է 'ի մեղս,

յոր_

յորժամ առաջադրի նմա գործ ինչ առաքինական, իբր գործ խոնարհութեան, գործ հնազանդութե՛, գործ աղօթից, և ջերմեռանդականաց իրողութե՛ց, ասէ․ ոչ են կամք իմ՝ ի դմա, թէպէտ ոչ այսու բառիւ, բայց այլով, որ զնոյն նշանակէ․ որգոն, ասէ․ ոչ են ժամանակք այդպիսեաց գործոց․ իբր ոչ է ժամանակ խոնարհութե․ և այլն ։ Նա որոյ կարի հարկաւոր է մարդոյն որ կամի զփրկութի իւր, զի մինչ ոչ է ժամանցեալ մեղօք, և դերբնական բարեաց բաղձանն մինչ ոչ է խանգարեցեալ ՚ի հոգւոջ, գործիցէ զբարին, և ունակացուցանիցէ զգործն առաքինութե՛ ՚ի հոգւին․ ապա թէ ոչ՝ յետ որոյ խամրացոյց զայն, միշտ ասելոց է առ գործս բարեաց՝ թէ ոչ են կամք իմ ՚ի դմա ։

2 ։ Մինչ չէ խաւարեալ էջէ արեգակն, և լոյս, և լուսին, և աստեղք ։ և դարձցին ամպք զկնի անձրևաց ։

Գ ։ Այսու առակաբանութեամբ ցուցանէ զերրորդ տառապանս ծերոց ։ քանզի թէպէտ արեգակն, և լոյս նր, և լուսին՝ յինքեանս ոչ են խաւարեցեալք, բայց ՚ի կողմանէ ծերոց իբրու խաւարեցեալք են, մինչ ոչ վայելեն զնոսա ծերք ։ Նա՛ բաց յայսցանէ, ծերքն գոլով արգելեցեալք ՚ի տան, և ոչ կարելով շրջիլ ՚ի դաշտս, և տեսանել զպայծառութիւս վայրից, և զգունագոյն ծաղկունս դաշտաց, և բուրաստա-

 նաց,

նայ, և զայլս նմանս՝ որք են գործք արեգական՝ և լուսնոյ, նաև որքան առ այս վ̃ն ն̃ց խաւարեցեալ է արեգակն՝ և լուսին: Դարձեալ. 'ի մարդն նման է հասարակ զգայութիւն արեգական. և յիշողութիւն՝ լուսնոյ. իսկ աչքն՝ աստեղաց. և այսպէս 'ի ծերս խաւարին. զի ծերոց հասարակ զգայութիւն ոչ կարէ լուսափայլութ̃բ ըմբռնել զիրսն, և այսու խաւարեցեալ է. նմանապէս և յիշողութիւն գոլով տկարացեալ, է ո̃պ զլուսին պակասեցեալ 'ի լուսոյ. նոյնպէս և տեսութիւն աչաց նուազեալ: Գ.րդ՝ կամի ասել, թէ 'ի մանկութեան քում մինչ լուսաւորք են ներքին զգայութիք քո, և արտաքին զգայարանքդ, գործեա զբարին. և զայնս 'ի գործ ածել ջանա 'ի փառս ա̃յ, և առ հաճաքումն գործոց բարեաց, ըմբռնելով զայնս որք մերաբերին առ փրկութի հոգւոյ քոյ: Ո̃ զի 'ի ծերանալն քո ոչ ծառայեն նոքին առ բարին հոգւոյդ: Վասնզի զօրէնս ա̃յ՝ և զպատուիրանս ն̃ր եթէ 'ի մանկութեան քում մինչ հզօր էր յիշողութիւնդ, ոչ իցես եդեալ 'ի յիշողութե քում, 'ի ծերութեանդ մինչ ըստ մտի տկարացեալ է, ոչ երբէք կարասցես գտնել. ըստ այսմ իմա և զայլոց զգայութեանց:

Իսկ հոգևորապէս իմացեալ լինի և այս, մինչ արեգակն ճանաչմանդ, որով ճանաչես թէ զինչ են կամքն ա̃յ, և լուսինն բարի

բարի բաղձմանց քոյ՝ որով ըղձակերտես լինիլ բարի · և աստեղք բարեաց խրատուց՝ զորս լսես՝ ոչ են խաւարեցեալք 'ի ձեռն մեղաց , այլ ո՞չ զլոյս ճառագայթեալ լուսաւորեն զքեզ , մի՛ հեղգար 'ի գործելոյ զբարին · և մի՛ դաղջանալով ծերանար · ապա թէ ոչ՝ ընդ հասանիլ կացուէդ գոլոյ մեղաւոր , այլ ընդ լինելդ ծերացեալ և հնացեալ մեղօք , ճանաչուին քո՝ որով ճանաչէիր զկամս այ , և բաղձանդ՝ զոր ունէիր առ բարին , խաւարին · և հետևաբար նաև խրատք 'ի լսելեաց քոց պակասին ։ Ո՞չ զի ոչ ոք բարի խրատատու յօժարի զանուղղայս , որք զանէնչ բարեաց ոչ ունին և զջան յառաջանալոյ, խրատել ։ Եւ 'ի քեզ խաւարի յօժարութիւն լսելոյ զբանս ածայինս , և զխրատս

հարց հոգևորաց ·

Եւ յարէ · Եւ դարձցին ամպք զհետ անձրևաց ։

Դ. Այս է չորրորդ տառապանքն ծերոց · և այսու առակաբանութբ բացատրէ իմաստունն զայս ։ Ով ոք երբեմն ուրեք անձրևեալ , զկնի անձրևաց սկսանի վերստին երկինն ամպանալ , այսպէս և 'ի ծերսն՝ մինչ 'ի ձեռն իջուածոց հոսին յըռնգայն ջուրք , և յաչացն արտասուք , 'ի յուղեղն նոյին վերամնացեալ հիւթն լինի մառախլապատ ամպ ։ և ասացեալ իջուածքն պատճառին 'ի յանզօրութենէ գլխոյն , որ ոչ կարէ կալնուլ զայնս խո-

նաւութիւն․ նաեւ 'ի նուաղութենէ ջերմութեան, որ ոչ կարէ զայնս եփելով 'ի յօգտակար հիւթս փոխարկել 'ի պիտոյս գլխոյն․ և մինչ այսպիսի խոնաւութիւնք ընդ ծակս ռնգաց, և աչաց ծերոց 'ի վայր հոսին, ուղեղն պակասելով 'ի պիտանաւոր հիւթոց՝ սկսանի շրջապատիլ 'ի խաւարամած ամպոց և լինիլ որպէս զմիգախառն օդ․ և որքան առ այս՝ ասէ, գարեջին ամօղ չինի անհրեաց․ զի լինի այնպիսեաց հոսմանց խոնաւութեանց, մառախլապատ լինի ուղեղն ծերոց։ Նաեւ եւս առ վերոասացեալս հայի բանն, թէ 'ի մանկութենէ գործեալ զբարիս․ և այլն, որպէս 'ի վեր անդր ասացաւ յառաջնում տան։

Իսկ ըստ հոգևորին կարէ իմացեալ լինիլ և այս․ մինչ սէրն ածայինն որ է գլուխ պատուիրանաց, տկարանայ 'ի մեզ, և ջերմեռանդութիւնն առ իրս ածայինս և հոգևորս՝ պակասի, յայնժամ արտաքին գործք մեր․ որգոն, ուտել, ըմպել, գնել, վաճառել, խօսիլ, լսել, և այլ սոյնք ոչ լինելով 'ի փառս այ, և ըստ օրինաց Նորին, որովք օգտիցեն գլխոյն, զի սիրոյն որ առ Քս, անօգտաբար 'ի վայր հոսին որպէս զիջուածս՝ ընդ բանս բերանոյ մերոյ, և այլ այլս գործս զգայարանաց մերոց։ Քանզի զամ զոր առնեմք, և կրեմք, զամ զոր խօսիմք, և լսեմք, մինչ 'ի փառս այ ոչ են, այլ կամ վն հեշտութեան, և կամ վն

դա-

դատարկաբանութե, նորին ընաւքն կա_ րելին 'ի յօգտակար հիւթ փոխարկիլ առ 'ի պահելոյ զմեզ 'ի սէրն այ, եթէ միայն 'ի փառս Տն, և զի նո լիցին գործեցեալք. և մինչ այնպէս ոչ գործեսցուք, 'ի զուր գործեսցուք, և լիբրու հատուսցուք 'ի մէնջ ամ զչար խջուծանս. և ոչ միայն 'ի զուր, այլ նաև 'ի վնաս գլխոյն մերոյ, որ էր սէրն այ։ Վասնզի որոյ գործողութիւն առ այ ոչ վերաբերի, սէրն նորին որ առ այ՝ միշտ մնասխալապատի։ Արդ՝ ըստ որում և 'ի վեր անդր ասացաւ, մինչ եմք 'ի մանկութե, յի 'ի կայութե շնորհի և սիրոյն որ առ այ, ոչ պարտիմք 'ի ձեռն թուլութե և հեղգութե ծերանալ, և 'ի մեղս սահել. զի մի հասանիցեն մեզ ասացեալ չարիքն, յորմէ դժուարին է խորշիլն։

3։ Յաղագս յորոց շարժեսցին պահապանք սանն։ Ներքերեւեսցին որք զգուշութեան. և արտաքնեայն աչօքիք, ըստ հնազանդեցան. և խանդարեսցին որք թեստանեն ընդ ծախս։

Ն։ Այս է հինգերորդ տառապանք ծե_ րոյ. և սյսու օրինակաւ և առակաւ ծա_ նուցանէ զդրդուծումն և զբացաշարժումն մերոյ պահապանաց, որք են զգուշութի, և նախատեսութի. զի սոքա են պահա_ պանք մարմնոյ 'ի ձեռն արտաքին զգայա_ րանաց. և մինչ զգայարանքն ոչ ծառայեն՝ զգուշութի և նախատեսութիւնն բայս_

շարժին , իբ՟ հեռանան , և կամ լուծն 'ի գոլոյ պահապանք . և այսու մարմին ծերոյ մերձենայ ոչ՟ զքաղաք տուանց պահապանի, որ 'ի Թշնամեաց դիւրաւ չխոսի : Քանզի նախատեսութիւն , և կամ զգուշութիւն որք են 'ի ծերս՝ եթէ հրամայիցեն աչաց . բարեպէս տես զնետն , կամ զքարն 'ի հեռաստանէ եկեալ , զի ըստ այնմ՝ խոտորեսցի մարմինն իմ, և ոչ վնասեսցի , աչքն գոլով պակասեալ 'ի լուսոյ՝ ոչ տեսանէ . և այնու պահապանն ոչ կարէ խոտորեցուցանել զմարմինն . և այսպէս վնասի ծերն : Մերթ և զգուշն ոչ տեսանելով՝ 'ի նա անկանի . և զորմն ոչ տեսանելով՝ զարկուցանէ զգլուխն : Նոյնպէս և մինչ նախատեսութիւն և ըզգուշութիւն կամի շարժել, և փախուցանել զծերն 'ի տեղւոջէ իմեքէ , զի մի՛ գուցէ ջուր, կամ հուր, և կամ ո՛ և իցէ թշնամի հասցէ նմա . և հրամայէ զօրութե՟ և ուժեղութե՟ մարմնոյն ուժեղաբար՝ և արագապէս շարժիլ, նք՟ գոլով տկարացեալք՝ ոչ ծառայեն՝ և ոչ հնազանդին . և այսու հուրն , ջուրն , և թշնամին հասանեն ծերոյն և վնասեն նմա : Ըստ այսմ՝ իմա և զայլոց բազմաց նմանեաց . որովք նախատեսութիւն և զգուշութիւն որք են պահապանք մարմնոյ, 'ի ծերս բացաշարժեցեալք լինին և իբրու 'ի վայր եդեալք . և լռեցուցեալք 'ի պաշտօնից իւրեանց . զի

գոր_

գործիք , և ծառայք նոցին , որ զգայա_
րանքն, և անդամքն տկարացեալքն , և
անհնազանդք եղեալ:

Իսկ ըստ հոգևորի իմացուածոյ՝ ճանա_
չութիւն և խոկումն ամենայն պատուիրանաց՝
են պահապանք հոգւոյ մերոյ . և միշտ
առնեն զմեզ խուսափել 'ի մեղաց՝ և 'ի
վնասուց հոգևորաց: Սակայն որքան եմք
'ի շնորհս ՏՆ , և այնու իբրու 'ի մանկա_
կան կացութեան՝ եթէ ոչ գործիցեմք զբա_
րին, և օր ըստ օրէ զարգանայցեմք 'ի նոյնն,
այլ ծուլացեալ գաղջանայցեմք, և 'ի մեղս
սահեալ՝ այնու ծերանայցեմք հնանալով
'ի չարիս , ամենայն առաքինութեանց ունակու_
թիւքն՝ և ուժգնութիւք տկարանան 'ի մեզ,
և անզօր լինիմք առ բարին : Վասն որոյ թէ
և խոկումն պատուիրանացն Աստուծոյ ասասցէ
հնացելոցն 'ի մեղս փափկութեան , կամ
արբեցութեան , կամ ագահութեան , և այլոց
նմանեաց՝ չար է զոր առնես, 'ի բաց կաց
'ի չարեաց՝ զի մի վնասիցես, դժուարաւ լի_
նի հնազանդիլ . քանզի ուժեղութիւք ա_
ռաքինութեանց պակասեցեալքն 'ի յայնս՝
որք հնացեալքն 'ի չարութիւս և 'ի մեղս :
Վասն զի դժուարաւ գործեն զբարիս ու_
սեալքն 'ի չարիս . ըստ այնմ Երեմիայ .
13.23. Եթէ փոխիցէ ինձ զխայտարդ իւր . և դուք
լինիցիք կարող գործել զբարիս՝ ուսեալքդ զչարիս :
Նա՛ յարէ . Նա՛ Բնաբանեցին որք զօրաւորեանց :
Գ: Նոյնպէս վեցերորդ տառապանքն ծերոյ.

որով

որով իմանի ուժեղութիւն ջլաց՝ և սրունից,
և բազկաց . վ՟ զի ոմ՟ք քաջ անձինքն կոչին
արք զօրութ՟եց, այսպէս և քաջութիւն և
ուժեղութիւն ջլաց և սրունից՝ ասին արք
զօրութ՟եց ։ Ա՛յլ թիւրիլ ասէ . քանզի ՚ի
ծերսն ջիլք բոլորի մարմնոյն և սրունքն
սկսանին թիւրիլ և թեքիլ . և այնու նաև
ուժեղութիւնքն որք են ՚ի նոսին, թիւրիլ
ասին ։ Ա՛յլ աստուստ լինի թիւրիլ և մար֊
մնոյն . քանզի սկսանի գլուխն հանդերձ
լանջօքն թեքիլ ՚ի վայր՝ և թիկն ՚ի դուրս
անկանիլ . և այս ա՟մ լինի ՚ի թիւրեցմա֊
նէ ջլաց, և ջլամնոյ, որք պակասելով ՚ի
յուժոյ սկսանին թեքիլ և թիւրիլ հան֊
գոյն ծաղկան, և խոտոյ . որք ընդ թա֊
ռամիլն սկսանին և թեքիլ ։

Իսկ ըստ հոգևորի իմացուածոյ . յորժամ
բարի խորհուրդն՝ և բարի դիտաւորու֊
թիւք, որք են արք զօրութ՟եց՝ պակասին
և տկարանան ՚ի մարդն, թիւրին և ա՟մ
գործք նո՟ր արտաքինք ։ Ուստի միշտ մնալ
պարտ է ՚ի մանկականի կայութե . զի ՚ի
դալարուն բարեաց գործոց, զի մի՛ տկա֊
րասցին խորհուրդքն բարեաց, և բարի
դիտաւորութիւքն, և այլն ։

Ա՛յլ յարէ . Եւ դատարկասցին աղօրեքն . զի
նուազեցան ։

Է ։ Ս՟յս է եօթներորդ վիշտն ծերոց . զի
դատարկանան ատամունքն ՚ի յաղալոյ ըզ
կերակուր . վ՟ զի կամ փտեցեալքն . և
կամ

կամ Թափեցեալք․ և կամ Թիւ՛ն նոյին այնքան նուաղեցեալ, զի ՚ի ձեռն վերամնացելոյ ո՛չ կարէ ճաշկել և ծամել զկերակուրն․ և մինչ առանց բարեպէս մանրելոյ և ճաշկելոյ կլանէ, կամ՝ ընդ ծակն փողին դժուարաւ անցանէ․ և կամ եթէ անցանիցէ, ՚ի ստամոքսին դժուարաւ մարսի․ և ընդ ոչ մարսիլն բարեպէս՝ զպէսպէս ցաւս, և զհիւանդութիւս անձին նր̃ առբերէ ։

Իսկ ըստ Հոգևորին՝ ատամունքն են բարի խոկմունքն՝ և վերամտածմունքն ա̃ծայնոց բանից՝ զորս լսեմք ։ Քանզի որ լսէ զա̃ծային բանս, և կամ ընթեռնու, եթէ բարեպէս խոկալով, և վերամտածելով զայնս՝ միշտ որոճայ, այնպիսին քաղցրութի̃ւ կլանէ զայնս, և հասուցանէ ՚ի յախորժակս հոգւոյն՝ ուր բարեպէս մարսեցեալ տարածին ուժեղութիւք և զօրծք առաքինութեց ՚ի բնաւս մասունս հոգւոյ իւրոյ ։ Նոյնպէս ՚ի նոսին որք հնացեալքեն ՚ի մեղս, փտեցեալք և Թափեցեալքեն ատամունք խոկմանց և վերամտածմանց ա̃ծայնոց բանից՝ զորս լսեն, և կամ ընթեռնուն ։ Վասն որոյ ո՛չ խոկալով զոր լսեն, Թարց մանրելոյ կլանեն․ և այնու մերթ է̃ ծակս փողոյն ոչ անցանեն․ ի̃ հասկացեալք ոչ լինին․ և եթէ նաև հասկացեալք լինիցին՝ ՚ի յախորժակս հոգւոյն հասեալք ո՛չ քաղցրացուցանեն ։ Վ̃ն զի որոց ախորժակն

՚ի մեղս

'ի մեղս համեղանայ, քանզի ա̃ծային 'ի յախորժակս այնպիսեաց ոչ երբէք քաղցրանայ ։ և այնու զի ոչ քաղցրանայ՝ հետևի զի նաև ոչ մարսիցի, և զոչինչ օգուտ նո̃ց առաբերցէ. այլ զակնապէս ցաւս պատժոց՝ և խայթմանց խղճի մնաց յաճելուցու 'ի նոսա ։ Յիշեա՛ ուրեմն զբանն մարգարէին, զոր ասէ. Որքա՜ն քաղցր են 'ի քիմս իմ բանք քո՝ քան զմեղր բերանոյ իմոյ. զի ըստ այնմ՝ քաղցրասցին 'ի հոգւոջ քում՝ բանք ա̃ծայինք ։

Նաւ յարէ. Նա խածարեսցին որք փնտանեն ընդ ծախս ։

Ը։ Այս է ութերորդ տառապանքն ծերոց. զի նուաղին աչք նո̃ց 'ի տեսանելոյ, որք Ը̃ ծակս հային. ա̃յ տեսողական ուժն որով ընդ ծակս աչացն հայի, պակասի. և այս է խաւարիլն։ Նա՛ աստուստ հետևի ծերոց խարխափելով քայլել. նաև մերթ խարխափելով ջանալ ճանաչել զիրս. ո̃պ իսահակ շօշափելովն կամէր իմանալ, թէ արդեօք յակո՛բ իցէ նա որ զխորտիկն եբեր, թէ եսաւ.

Նա՛ հոգևորապէս՝ իմացեալ լինի բթութի̃ իմացականի զօրութե̃ 'ի յայնս՝ որք հնացեալքեն 'ի մեղս. վ̃ զի որ մինչ ցև է անկեալ 'ի մեղս՝ եթէ ոչ հանապազորդիցէ 'ի գործս բարեաց, այլ սկսանիցի հեղգանալով սահիլ 'ի մեղս, և հնանալ 'ի նմա, ո̃պ նախապէս իմացական ուժն տեսանել՝

և

և իմանայր զիրս ա՟ծայինս, զկնի մեղացն որքան է 'ի մեղս՝ այնպէս ոչ կարէ տեսանել և ոչ իմանալ. այլ ո՟պ զկոյր շրջի. զի մեղքն կուրացուցանէ զիմացականն։ Եւ այս յայտ եղև 'ի դաւիթ. որ յետ որոյ մեղաւ ընդ բերսաբէի, մինչև ցօրն ապաշխարութ՟ե էր ո՟պ զկոյր. և այնքան բթացեալ էր իմացական ուժն առ ա՟ծայինս, մինչ զի գոնէ միանգամ ոչ մտածեաց, թէ ես որ ընդ բերսաբէի մեղայ, և զուրիա սպանի, զի՛նչ արդեօք պարտ իցէ ինձ առնել. ապաշխարե՞լ, թէ 'ի յայնս մեղս և 'ի չարիս յարատևել։

4. Եւ փակեսցեն դրունս 'ի հրապարակս 'ի տկարութ՟ե ձայնի աղօրւոյն ։ և յարիցեն 'ի ձայն հաւուն. և նկուն եղիցին դստերք երգոյ։

Թ. Այս է իններորդ տառապանք ծերոյ. քանզի չնչերակքն ընդ որս ելանեն ձայնք, են ո՟պ զներքին դրունս 'ի մարդն. ընդ որս անցանեն ձայնքն. և դան 'ի ներքին հրապարակս սրտին, և փողին. և անտի 'ի յարտաքին հրապարակն, որ է բերանն. և անտի ընդ արտաքին դրունս անցեալ՝ որք են շրթունքն, գան արտաքս։ Արդ 'ի ծերան 'ի տկարութ՟ե ձայնի աղօրւոյն փակին ասացեալ դրունքն ներքին, և արտաքին։ Եւ աղօրին է կրկին. մի ներքին, որ է թոքն, որ ո՟պ զաղօրի միշտ շարժի և հովահար լինի սրտին։ իսկ արտաքինն է ծնօտն,

ծնօտն, որ ո՛չ զաղօրի շարժեցեալ տայ զօգնութիւն զի ձայնքն արտաքս ելցեն ՚ի հրապարակէ բերանոյն։ Նա՛ և զի թէ թոքն, և թէ ծնօտքն ՚ի ծերս տկարացեալք են, և ո՛չ ունին զուժեղութիւն, զի ուժեղ շարժմամբ հզօրեղաբար օգնիցեն ձայնիցն, որք ելանեն ընդ դրունս շնչերակայ՝ և շրթանց. և այսու դրունքն, որ շնչերակքն և շրթունքն փակեցեալք լինին՝ մինչ ընդ այնս անցանօղ ձայնքն տկարք են, կամ ոչ գոն. քանզի պատճառն տկարութեան ձայնից ծերոց՝ է տկարութիւն աղօրէից. վասն զի ՚ի ծերս թէպէտ շնչերակքն կարեն հանել զձայն, բայց մինչ թոքն տկար է, և ոչ ուժեղաբար հովահարէ զսիրտն, ձայնք ո՛չ կարեն բարեպէս յարձակիլ և արտաքս ելանել ՚ի շնչերակացն ՚ի հրապարակս սրտին՝ և փողին. և եթէ սակա՛ւ ինչ ելանիցեն՝ և մինչև ՚ի փողն գայցեն, ծնօտքն որք են արտաքին աղօրիք՝ ոչ կարելով շարժիլ ուժեղաբար, ո՛չ կարեն տալ զօգնութիւն ձայնին առ ՚ի հնչիլ բարեպէս ՚ի յարտաքին հրապարակի բերանոյն. և այսու հազի՛ւ լուեալ լինին ձայնք և բարբառք ծերոց։ Արդ՝ որպէս բազմիցս ՚ի վեր անդր կրկնեցաք, զայս ամենայն դնելով իմաստութիւն, կամի ասել, թէ յիշեա՛ զարարիչն քո. և միշտ օրհնեա՛ և բարեբանեա՛ զնա ՚ի մանկութեան քում, մինչ չև են հասեալ քեզ աւուրքն տառապանք, ՚ի

յորս

յորս ոչ կարես ծառայեցուցանել զձայնդ և զբարբառդ առ՚ի ջերմեռանդական բարբառել զբանս որք են առ գովութին այ : Իսկ ըստ հոգևորին իմացեալ լինի խանդարումն աղօթական բանից , և ջերմեռանդական խնդրուածոց 'ի յայնս որք հնացեալ քեն 'ի մեղս : Այլ 'ի ծերացելն մեղօք ո՛չ մտաւորական աղօթքն 'ի հրապարակս սրտին , և ո՛չ ձայնաւորական աղօթքն 'ի հրապարակս բերանոյն հնչել կարեն : Այլ դրունք նոցին ներքին , որ չնչերակք ջերմեռանդականի սրտոյն որ առ այծ փակեցեալք են . նաև շրթունքն 'ի խօսելոյ զկրաց այծայնոց արգելեալք . և այս այմ պատճառեցեալէ 'ի նմա 'ի տկարութէ ձայնի ներքին աղօրւոյն . քանզի 'ի ձեռն մեղաց տկարացեալ և պակասեալէ 'ի նոսա թոքն , որ շնորհ հոգւոյն սէր որ շարժէ զմարդն 'ի յաղօթս . ըստ առաքելոյն որ ասէ . Հռոմ. 8. 26 : Զի զոր կամքն յաղօթս , որպէս արժանն իցէ ո՛չ գիտեմք . այլ ինքն հոգին բարեխօս լինի . որ շարժօղ և նպաստ 'ի հեծութիւնս անմռունչս :

Նաև 'ի տկարութէ արտաքին աղօրւոյն , որք են կենդանի հաւատն , և յոյսն . զի սոքա են որ զերկուս ծնօտս հոգւոյ մերոյ 'ի յաղօթելն , որք շարժմամբ իւրեանց զջերմեռանդական աղօթից զբարբառն այնքան զօրեղաբար հնչեցուցանեն, մինչ զի 'ի յերկինս առ այծ հասուցանեն և լսե_

լի

լի առնեն. ըստ այնմ, Մատ. 21. 22: Ամ̅ զոր ինչ խնդրիցէք յաղօթս հաւատով՝ առնուցուք: Նա՛ զի 'ի հնացեալսն մեղօք՝ հաւատն մեռեալ է, և յոյսն նուաղեալ, և այնու նաև ձայնք աղօթիցն լռեալ:

Նա՛ յարէ. Նա՛ յարիցեն 'ի յայն հաւատոյն:

Ժ. Սոյն է տասներորդ տառապանքն ծերոյ. զի քունն այնքան նուաղի 'ի նոսա, և 'ի խոր քուն մտանելոյ լռեն, մինչ զի 'ի նինջելն՝ եթէ և թուչնիկ մի զձայն հանցէ, իսկոյն 'ի ձայնէ նորին զարթնուն: և այս պատճառի 'ի ծերս 'ի նուաղութենէ հիւթոց, և յոչ կարելոյն բարեպէս մարսել զկերեալն. 'ի գոլորշեաց որոց պատճառի քունն:

Իսկ հոգևորապէս՝ իմացեալ լինի դիւրասահութիւնն որ գտանի 'ի յայնս որք հնացեալքեն 'ի մեղս: վ͞ն զի որք յամեն 'ի մեղս ինչ ընդ երկար ժամանակ, եթէ երբեմն զհանգիստ և զդադար առնուցուն 'ի մեղաց, նաև փոքրիկ առիթն մեղաց զարթուցանէ զնոսա 'ի հանգստենէ: որգոն. կռուասէրն, և հպարտն, թէև սակաւ ինչ զհանգիստ առնուցու 'ի յամբարտաւանութենէ և 'ի կռուոյ և 'ի խռովութենէ, 'ի ձայնէ թուչնոյ միոյ. այս 'ի միոջէ փոքրկէ բանէ նախատականէ, կամ ընդդէմ ինքեան եղելոյ՝ զարթնու առ 'ի կռուել, և ամբարտաւանել: Սոյնպէս և ագահքն, 'ի ձայնէ միոյ փոքրիկ թուչնկան.

կան ․ զի 'ի ձայնէ միոյ փողի զարթնուն ։
մ՟ զի եթէ իցեն փողք ինչ զհանգիստ
առեալ 'ի խօսելոյ զսուտ, է՟ լսելն զձայն
միոյ փողի, զարթնուն 'ի քնոյ, և խօսին
զսուտն առ 'ի շահիլ զայն ։ Ի՞նչ այսպիսի
դիւրասահութիւն պատճառի 'ի մեղաւորս՝
'ի պակասութէ շնորհաց և զօրութեց ա-
ռաքինականաց ։

Ի՞նչ յարէ․ Եւ նկուն լինիցին դստերք երգոց ։
Ժա․ Այս է մետասաներորդ տառապանքն
ծերոց․ զի խլանան և ծանրանան ականջք
նց ։ Ի՞նչ զականջսն կոչէ դստերք երգոց ․
մ՟ զի ականջքն գոլով ընդունակք լսելոյ
զձայն երգոց, և գոլով ըղձակերտօղք
զերգս, 'ի խօսիլն առակաբանութե՟ ասին
դստերք երգոց ։ Ի՞նչ նկուն լինիլն է տկա-
րանալն, խոնարհիլն, և թարշամիլն ա-
կանջաց․ և ծանրանալն առ 'ի լսել․ և
կամ՝ խլանալն, որ նոյն է ։

Իսկ հոգևորապէս՝ 'ի նոսին որք հնա-
ցեալքեն 'ի մեղս, խլացեալքեն ականջքն
ներքինք․ ուստի թէ և արտաքին ական-
ջօք լուիցեն զբանս ա՟ծայինս, 'ի ներքս
սրտից նոցին ոչ թափանցեն ։ Վասն որոյ
մինչ չև իցեմք անկեալ 'ի ծերութիւն մե-
ղաց, ստէպ ստէպ, և յօժարութե՟ պար-
տիմք լսել զբանս ա՟ծայինս, զի 'ի հոգիս
մեր թափանցելով բանքն ա՟ծայինք՝ միշտ
'ի մանկութեն շնորհաց պահիցեն զմեզ ։

5 ։ Եւ ՚ի բարձանց տեսցեն . եւ պղշութիւն ՚ի ճանապարհին . եւ ծաղկեսցի նշենին . եւ թանձրասցի մարախն . եւ տարածեսցի կապարն . զի գնաց մարդ ՚ի տուն իւր յաւիտենից . եւ շուրջ եկին ՚ի հրապարակս կոծողք ։

Մեկ . Այս է երկոտասաներորդ տառապանքն ծերոց . զի զնմ լինի ՚ի բարձանց , որ ՚ի հեռուստ տեսանեն՝ զաճերորդական վերահայեցողութիւն առնելով . եւ այսու պղշութիւն , որ երկչոտութի եւ երկիւղ է ՚ի ճանապարհի նոց . որ ՚ի գործս՝ եւ յիրակութիւս նոցա ։ Եւ համառօտապէս կալեալ . սոյն է կարի կասկածոտ լինիլն ծերոց ։ Եւ այս պատճառի ՚ի նոսա՝ ըստ մասին ՚ի պակասութէ ջերմութե սրտին . եւ ՚ի յանբարեխառնութեանց հիւթոցն . եւ ըստ մասին յայնմանէ , զի զբաղում իրս տեսեալք եւ փորձեալքեն , յորոց եւ զպէսպէս վնաս կրեալք , եւ այսու զի եւ իսկ զնմանս այնց իրակութեանց մինչ զգան , կասկածին ՚ի վնասուց . որոյ զներհակն տեսանեմք ՚ի մանկունս , որք ոչ երբեք փորձեալ՝ կամ կրեալ գոլով զիրս վնասաբերս , ընդ նմ որոգայթաւորս մուծանեն զինքեանս առանց կասկածելոյ ։ Եւ այս տառապանք ծերոց ո՛չ է փոքր քան զառաջինսն . քանզի զբաղում նեղութիւս եւ զվիշտս կրեն ՚ի ձեռն կասկածոտութե իւրեանց , թէ սակս անձանց իւրեանց ,

եւ

և թէ սակս ընտանեաց, կամ վասն որդ-
ւոց, և թոռանց ։

Դարձեալ․ կարէ վերաբերիլ և առ այս, թէ ծերքն զլերինս՝ և զբլուրս, և կամ զի և իցէ բարձր տեղի ’ի հեռուստ և ’ի բարձանց ( կամ ըստ որում բարձր ) տեսանեն՝ բայց ’ի նոսա ոչ երբեք ելանել կարեն․ զի ճանապարհն որ զառ ’ի վեր է, աշխեցուցանէ զծերս, և պատճառէ զպտոյտն գլխոյ․ և ուշաթափ արարեալ կործանէ, և ’ի վայր գլորէ զնոսա ։

Իսկ ըստ հոգևորի իմացուածոյ, զբարձրաբերձ ճանապարհն առաքինութեան՝ այնք որք հնացեալքն ’ի մեղս, մինչ որպէս զբարձունս, և ոչ զդժուարինս տեսանեն, և ոչ երբեք ելանեն ’ի նոյնս․ և ճանապարհն առաքինութեանց աշխեցուցանէ զմիտս նոցա, երևելով նոցա ոչ զդժուարաղունեղ իմն․ և այնու ընդ մտածելն զդժուարութիւն, ’ի վայր գլորին յառաքինութենէ․ կամ ’ի բաց հեռանան ։ Ուստի բղջախոհաց և մոլեգնեալ անձանց ’ի գործս չար ցանկութեան՝ անկարելի երևի պահուստն ողջախոհութեան․ և ամբարտաւանից անհնարին թուի ’ի ձեռն խոնարհութեան հարկանողին զմի ծնօտն՝ դարձուցանել զմիւսն ։ Ըստ այսմ իմա և զայլոց․ և ըստ այնմ զգոյշ լեր, զի մի ծերանայցես ’ի մեղս, և այնու անկարելիք թուեսցին քեզ ամ գործք առաքինականք ։

Եւ՛ յարէ · Եւ՛ ծաղկեսցի նշենին :

Ծգ: Այս է երեքտասաներորդ տառապանքն ծերոյ · քանզի զգլըխոշակ և զնշան մահուն, որ է սպիտականալն հերաց՝ տեսանեն կացուցեալ և կանգնեցուցեալ 'ի վր հերաց մօրուաց՝ և գլխոց իւրեանց : Եւ մի՛շտ տեսանելով զկարապեան մահու և զյառաջընթացն գալստեան նր, հառաչեն : Եւ զի մինչ ծաղկի նշենին , սպիտականայ ծառն · վն որոյ զսպիտակութն հերաց ծաղկեցմամբ նշենւոյն առակաբանէ : Եւ աստէն՝ ոպ և 'ի յայլս ընաւն՝ կամի ասել, յիշեա՛ զարարիչն քո յաւուր մանկութե, մինչ չև է ծաղկեալ նշենին ·

և այլն :

Իսկ ըստ հոգևորի իմացուածոյն , սպիտակութբ հերացն ըստ որում է նշան և նախընթաց մահու , իմանի նուաղումն խայթեցման խղճի մտաց 'ի յայնս՝ որք հնացեալքեն 'ի մեղս : Քանզի մեղաւորն որքանիցս ունի զսուգ վասն մեղաց , և զխայթ խղճի մտաց 'ի հոգի իւր , տակաւին 'ի ձեռն սգոյ հերքն հոգևորք են սևա՛ք : Այլ մինչ 'ի խորս չարեաց հասեալ՝ մերժէ զսուգն, և զսևութին ( ոպ զտրտմութին որ է վն մեղացն ) հանէ 'ի սրտէ , և ուրախութբ կեայ 'ի կայութե մեղանչականութե իւրոյ , և խայթն խղճի մտաց ոչ զօրէ զուրախութի նր 'ի սուգ փոխարկել , յայնժամ ժամանակի սպիտա-

կա-

կացեալքեն հերքն, ծր, դրօշակն, և նշանն
դատապարտուն, և յաւիտենականի մահ-
ուան կացուցեալէ 'ի վճռ հոգւոյ նր։

Ա՛ռ յարէ. Ա.ռ Խանջրացի մարախն։

Ժդ. Ա.յս է չորեքտասաներորդ տառա-
պանքն ծերոց. և ընդ անուան մարա-
խոյ առակաբանէ զորովայնէ մարդոյ, որ
նման մարախոյ միշտ և համապազ ուտէ
և ուտէ, և կրէ յինքն զամ զոր գտանէ.
և հալեալ զայն թորէ արտաքս. և վերս-
տին ուտէ ։ և ոչ մարախն զարտորայս
չորայուցանէ ուտելով, այսպէս և որովայն
մարդոյ՝ ոչ միայն զբոյսս արտորէից, այլ
նաև զբոյսս ծառոց ուտելով սպառէ. և
այնու ոչ բաւականացեալ, նաև զկենդա-
նիս որք են յերկրի, և զթռչունս որք 'ի
յօդս՝ և զձկունս որք են 'ի ծովս՝ որսալով
յափշտակէ առ 'ի բաւարարել անյագ-
բաղձանաց իւրոց։

Ա՛յ այս այնքան՝ մինչ զի եթէ իցէր կա-
րելի՝ զթռչունս 'ի յօդոյ, զկենդանիս 'ի
յերկրէ, և զձկունս 'ի ծովու պակասեցու-
ցեալ կլանէր զամ, և կրէր յինքեան. վն
որոյ եթէ Ա.ծ զձկունս 'ի խորս ծովու,
զթռչունս 'ի բարձունս օդոյ, և զվայրի է-
րէս՝ և զայլս կենդանիս 'ի բարձրաբերձ
լերինս ոչ իցէր ամրացուցեալ, և դիւրին
իցէր մարդկանց կալնուլ զնոսա, վաղ ու-
րեմն սպառեալքէին մարդիք զնն. և ան-
զարդ թողեալ զօդն, զծով, և զցամաք։

Արդ՝ համաքստակ մարախոյ որովայնն 'ի մանկունս՝ և յերիտասարդս է նուրբ և թեթև. և կարէ կրել միշտ յինքեան ըղ բաղումն, մինչ նրբութ՟ե և ուժեղութ՟ե հալէ խոկոյն զոր ուտէ, և արտաքորեալ զայն՝ պահանջէ և զայլ՝ որ զմարախ ստա_ ստելով : քանզի մարախքն որքան թե_ թևք են և նուրբք՝ միշտ զոր ուտեն՝ խո_ կոյն հալեալ զայն արտաքորեն, որ զի թուլացեալ 'ի լի՟ այլոց մասանց արտա_ րեից՝ նաև զայնս չորացուցանիցեն ուտե_ լով : Սակայն մինչ ծանրանան մարմինք նց, և ոչ կարեն այնուհետև ստաստել և թռչել այլուր՝ առ՚ի ուտել և զայլս բոյս՝ յայնժամ զայն զոր կերեալքեն, ոչ խոկոյն հալեն և մարսեն : Վ՟ զի մինչ ոչ կարեն թռչել և ուտել զայլս, հեղգա_ նայ բնութ՟ի նց 'ի մարսելոյ զկերեալն : Ըստ այսմ օրինակի լինի և 'ի ձերում. քան_ զի բաղձանն ուտելոյ՝ որով ստաստէր և թռչէր որովայնն՝ լռէ 'ի ձերս. և այսու մարախն, այ՟ որովայն ձերոց թանձրա_ նայ. այ՟ ծանրանայ. և զնրբութ՟ին կո_ րուսանէ : Նա՛ աստուստ հետևի՝ զի զոր կերեալէ, ոչ մարսիցէ, և ոչ շուտով հա_ լիցէ : Որոյ եթէ բաղձանն ոչ իցէր պա_ կասեալ, յուսով թռչման բաղձանայն առ այլս կերլիս՝ շուտով մարսէր զառա_ ջին կերեալն, զի և զայլսն ուտիցէ : Իսկ ըստ հոգևորի իմացուածոյն՝ 'ի հնա_ ցեալն

ցեալսն մեղօք ոչ լինին մաքրեցեալք ամե_
նայնին բանքն և խրատքն․ քանզի բաղձանն
առ գործս բարեաց մինչ պակասեալէ 'ի
մեղաւորացն, զայնս խրատս և զբանս ամե_
նայնիս (զոր օրինակ՝ զպատկանեալսն առ
խոնարհութիւն) ախորժմամբ հոգւոյն և
բարի խոկմամբ, և կամ մտաւութե ոչ
մարսեն․ քանզի ոչ ունին զբաղձանս թո_
ղելոյ նաև առ այլս առաքինութիւնս․ որ
առ հնազանդութի, կամ առ սէր բարեաց
ընկերին․ և այլն ։ Բայց արք բարիք մինչ
լսեն զբանս ինչ զմիոյ առաքինութե, մե_
ծաւ ախորժմամբ ընդունին յինքեանս,
և ջանան կատարել զգործ նորին առա_
քինութե․ որգոն, ողջախոհութե․ զի կա_
րիցեն հեռևաբար ունել և զայլս․ որ կա_
տարել նաև զգործս այլոց առաքինութեց․
և այսպէս ոմ զթեթև մարախս՝ զոր կեր_
եալեն՝ զայն ոչ յիշեն․ այլ միշտ առ ոչ
կերեալս թռչտին ։ և այս իրաւի է, զի
առաքինիքն՝ զանցեալ գործս բարեաց
զորս գործեցին՝ ոչ յիշեն․ այլ միշտ առ
յառաջադէմսն նկրտին ։ ըստ առաքելոյն․
Փիլիպ․ 3․ 13 ։ Զառ 'ի յետոյսն մոռացեալ եմ,
և 'ի յառաջադէմսն նկրտեմ ։

Ա՛ յարէ․ Ա՛ տարածեալ կապպարն ։ որ և
ցրուեսցի կապպարն ։

ԺԵ․ Այս է հնգետասաներորդ տառա_
պանքն ծերոց․ զի կապպարն, որ բաղ_
ձանն ունելոյ ցրուի և պակասի 'ինոյա_

նէ: Իսկ թէ վո՞ր էր կապպարացն ցուցա-
նէ իմաստունն զբաղձանն ուտելոյ, այս է
պատասխան. զի կապպարն է պտուղ փոք-
րիկ ծառոյ երէք. որ բուսանի 'ի յան-
ջրդին և յանապատ տեղւոջ. և մարդիք
ժողովեալ զայն՝ որ է նման փոքրիկ ձի-
թապտղոյ, դնեն 'ի յաղն և 'ի քացախն,
և ուտեն առ 'ի շարժել զբաղձան ուտելոյ:
Այս առատաբար բուսանի յեգիպտոս. և
անտի բերեն 'ի կոստանդնուպօլիս՝ և վա-
ճառեն. զոր և 'ի կիր առնուն մարդիք
վասն բերելոյ յինքեանս զբաղձան ուտե-
լոյ: Իսկ ռամկօրէն քապար կոչի. և տաճ-
կերէն քէպէրէ. և յունարէն՝ և լատինէ-
րէն գաբբարիս. և 'ի մէջ 'ի սխալմանց գր-
չաց գրեցեալէ կապար, որ նշանակէ զար-
ճիճն. և յայսմիկ տեղւոջ ոչ է բան ինչ
զարճճոյ: Արդ՝ ասելովն՝ ցրուեսցի կապպարն,
առակէ զայս, թէ բաղձանն ուտելոյ ցր-
ուեսցի 'ի ծերս: Վասն զի կապպարն, որ
պատճառէ զբաղձան ուտելոյ, ասէ ըզ
պատճառն փոխանակ գործոյն առեալ,
ասէ. ցրուեսցի կապպարն. այսինքն բաղձանն
ուտելոյ: Իսկ այսպէս ցրուի 'ի ծերսն, զի
նաև կապպարն ոչ օգնէ նոցա. ուստի թէ և
մատուսցի ծերոց զի ուտիցեն առ 'ի շա-
րժել զբաղձանս ուտելոյ, 'ի բաց մերժեն
զայն և ցրուեն. վասն զի նաև առ այն ոչ
ունին զբաղձանս:

Իսկ առաւել լաւագոյն, կարէ մեկնել
նաև

նաեւ այսպէս ։ Որպէս կապարն մինչ բա_
ցեալ եւ տարածեալ լինի, զզօրութիւն իւր
կորուսանէ. եւ այնուհետեւ ոչ օգտէ առ՚ի
պատճառել զբաղձանս ուտելոյ, այսպէս
եւ բնական ուժն եւ ջերմութիւն ստա_
մոքսին, որ է պատճառօղ զբաղձան ու_
տելոյ, մինչ ցրուեալ եւ տարածեալ լինի
՚ի ծերս, ոչ պատճառէ զբաղձան ուտե_
լոյ ։ եւ սատէն իմաստունն զնոյն ուժն եւ
զբնական ջերմութիւն ստամոքսին նմա_
նեցուցանելով կապարի, ասէ. ցրուեա_
ցի եւ տարածեցի կապարն. այսինքն բնական
ուժն եւ ջերմութիւն ստամոքսին ցրուեա_
ցի. եւ ոչ կարասցէ այնուհետեւ պատճա_
ռել զբաղձան ուտելոյ ։

Իսկ առ հոգեւոր իմացումն յայտէ, զի ՚ի
հնացեալսն մեղօք ցրուեալքն սկզբունք
բաղձանաց առ Այ՛ գործս բարեաց. եւ
եթէ առաջադրիցի նոցա լսել, կամ ըն_
թեռնուլ զբանս Ածայինս, եւ կամ այլ
ինչ գործ բարի, ոչ յօժարին առ այնս.
եւ ոչ կամին կերակրիլ նոքօք. այլ մերժեն
զայնս, որպէս եւ ծերքն զկերակուրս ։ Այլ
սկզբունք հոգեւոր բաղձանացն են երկիւղն
Այ՛, եւ սէրն լսելոյ զբանս Ածայինս. որք
ցրուեցեալքն ՚ի հնացեալս մեղօք. վասն
որոյ եւ ոչ ունին զբաղձանս առ կեանս
բարիս, եւ առ գործս առաքինութեց, եւ
առ վարդապետութիւնս եւ բանս Ածայինս.
եւ այս է մեծագունեղ եւ վերջին թշուա_

ռու_

ռութին մշտահորայ 'ի կեանս յայս. զի զսէր լսելոյ զբանս Ա՟ծայինս՝ մերժեն յին_քեանց. և այսպէս զգեւլն բաղձանաց առ_կերակուրս հոգւոյ մերժելով, սովամահ կորնչին: Նա՛ այս է վերջին պատուհասն, որ հասանի 'ի կեանս յայս նմ՝ որք հնա_ցեալք են 'ի մեղս. ըստ որում և սպառ_նայր Տ՟Ծ 'ի ձեռն մարգարէին Ամովսայ (8. 11.) ասելով տանն իսրայելի. տաց յեղ՝ ոչ սով հացի, և ոչ ծարաւ ջրոյ. այլ սով լսելոյ զբանն տ՟ն: Աստ որոյ մինչ ոչ եմք հնա_ցեալք 'ի մեղս, պարտիմք յա՟մ սրտէ սի_րել զլուր բանիցն Ա՟Յ, լսելով զաւրի խրատս, և ընթեռնլով զհոգևոր գրեանս. զի 'ի ձեռն հոգևոր կապպարաց շահիցիմք զբաղձանս բարեաց գործոց:

Նու յարէ. Աստ ուր գնայ մարդն 'ի տուն իւր յաւիտենից:

Ժ՟Ը. Ա՟ստէն ցուցանէ զվերջատասաներորդ և զվերջին տառապանս ծերոց, որ է մահն զոր 'ի ձեռն վեցից առակաբանութեց ծա_նուցանէ: որոց առաջինն է այս, զոր ասէ. գնայ 'ի տուն իւր յաւիտենից. եւ մեռաւ: Նա՛ մահն ասի տուն յաւիտենից, զի յետ մահուան այլ ևս ոչ դառնայ 'ի յայս կեան ժամանակաւոր. այլ մնայ 'ի հանդերձեալ կեանսն. որ է կամ կեանք յաւիտենական հանդերձ երանութ֊. և կամ կեանք յաւի_տենական լի դառնութ֊, և չարչարանօք, որ մանաւանդ ասի մահ յաւիտենական,

քան

քան թէ կեանք ։ զի կեանն որոյ տեւումն տանջէ զկեցօղն՝ ոչ ասի յատկապէս կեան, այլ մահ ։ Սա զի այն է ճշմարիտ և գովելի կեան, 'ի յոր կեցօղն մի ունեցելոց բարեացն յօժարի միշտ կեալ ։

Իսկ հոգեւորապէս առեալ՝ իմանի յուսահատութիւն ․ վասն զի նոքին որք կորուսանեն զբաղձանս իւրեանց առ գործս բարեաց, և առ'ի լսել և կամ ընթեռնուլ զնծայլին բանս՝ հետեւաբար գնան 'ի տունն յաւիտենից, որ 'ի մեղս յուսահատութե, 'ի յոր անկեալն ոչ կարէ ելանել ։ և կամ որ նոյն է, իջանեն 'ի տունն յաւիտենից 'ի դժոխս ․ յորմէ ոչ ումեք է հնար ելանել ։

Այս յարէ ․ և շուրջ եղեն 'ի հրապարակս կոծօղք ։

Ժէ ։ Այս է եօթնևտասներորդ առակն ․ և է երկրորդ նմանաբանութեան զմահուանէ, որ հետեւի ծերութեան ․ զի մինչ մեռանի և տանին թաղել զնա՝ անցուցանելով ընդ հրապարակս, բարեկամք նորա, և ծանօթք ողբան և զկոծ առնուն 'ի վերայ նորա ։

Այս հոգեւորապէս նշանակէ զվախճանական անզղջութիւն հնացելոցն 'ի մեղս ․ 'ի վերայ որոյ սուգ առնուն բարեկամքն, և հոգաբարձու քահանայն ։ Նաեւ կարէ իմանիլ թաղելն 'ի դժոխս ․ զի որպէս որք մեռանին ըստ մարմնոյ, 'ի գերեզմանս թաղին ․ այսպէս և որք ըստ հոգւոյ մեռանին, 'ի դժոխս թաղին ։

6 ։ Մինչ

6 ։ Մինչ չեւ կործանեալ իցէ լար արծաթոյն · եւ
խորտակեալ ծաղկեալ ոսկւոյն · եւ մանրեալ սափորն
յաղբերն · եւ ընկրկեալ անիւն 'ի գուբն ։

Ժը ։ Առաջին մասն բնաբանիս՝ որ է զլա-
րին արծաթոյ՝ է ութեւտասներորդ առա-
կաբանութի՟ · եւ է երրորդ նմանաբանութի՟
զմահուան ծերոց, այլով կերպաբանու-
թբ՟ ։ Աստէն եւս իմանի զօրութբ՟ բան
առաջնոյ տանն, իբրու թէ ասէ · Յիշեա
զարարիչն քո յաւուր մանկութեան քոյ,
մինչ չեւ կործանեալ իցէ լար արծաթոյ ։
Արդ այսու լարիւ իմանի ուղն · ծր՟ ծուծն
ողնաշարին, որ սկսեալ 'ի յուղեղէ գլխոյն
իջանէ ընդ երկայնութիւն թիկնամիջին
մինչեւ ցստորին մասն միջացն ։ Քանզի
ծուծն այն 'ի ծակս շարեցելոց ոսկերաց ը՟
երկայնութիւն թիկնամիջին շարունակա-
բար լցեալ գոլով՝ է նման արծաթեայ
լարի, կամ պարանի · եւ մարդն յորժամ
մերձ է 'ի մեռանիլ, նոյն լարն արծա-
թեայ կտրի եւ կործանի ։

Արդ գիտելի է · զի այս լար արծաթեայ
յորժամ տկար է եւ թուլացեալ, մարդն
սկսանի թեքիլ եւ թիւրիլ յառաջ կոյս ·
ող՟ երեւի 'ի ծերսն, որք ոչ կարեն ուղիղ
կալ եւ կանգնիլ · այլ են թեքեցեալք ·
եւ այն է 'ի թուլութ՟է արծաթեայ լարին ·
սակայն մինչ խզի եւ կտրի, յայնժամ մե-
ռանի կենդանին ։

Իսկ

Իսկ ըստ հոգեւորի իմացուածոյ, արծաթեայ լարին իմանի յոյսն մարդոյ որ առ Ա՟ծ ։ արդ՝ յոյսն ՚ի հնացեալս մեղօք կարի թուլացեալ եւ տկարացեալ է ։ վ՟ն որոյ եւ միշտ թեքեալք լինին առ երկրաւորս · եւ ոչ կարեն կալ եւ կանգնիլ ուղիղ, եւ հայիլ յերկինս · այսինքն խոկալ զերկնայինսն ։ Եւ այսպիսիքս մինչ յարատեւեն ՚ի մեղս, եւ առանց ապաշխարութեան մեռանին, ընդմերձենալն մահու, ըստ նմին բեկի լարն յուսոյ նոցին որ առ Ա՟ծ · եւ այնու որպէս արծաթեայ լարն մարմնոյ մինչ խզեցեալ լինի՝ մեռանի մարդն ըստ մարմնոյ, նոյնպէս եւ արծաթեայ լարն հոգւոյ, այսինքն յոյսն որ առ Ա՟ծ՝ մինչ խզեցեալ լինի, մեռանի մարդն ըստ հոգւոյ ։

Եւ յարէ · Խորտակեալ մանեակ ոսկւոյն · այսինքն ոսկեղէն ։

Ծթ ։ Այս է իննեւտասներորդ առակաբանութեան, որ է չորրորդ նմանաբանութեան զմահուանէ ծերոց ։ Եւ ՚ի ձեռն ոսկեղէն մանեկին, կամ գնտակին՝ իմանի գունտն ուղեղի գլխոյն ։ եւ մաշկն որ շրջապատէ զուղեղն՝ գոլով ոսկեգոյն, ուղեղն ասի ոսկեայ գնտակ՝ կամ մանեակ ։ Եւ որպէս արծաթեայ գունտն ոսկւով պատի ՚ի յարուեստաւորաց՝ եւ ոսկեայ գնտակ ասի, այսպէս եւ բնութեան զգնտակն ուղեղի գլխոյն՝ զոր նման սպիտակ արծաթոյ կազմեաց, ոսկեգոյն մաշկով շրջապա-

պա-

պատեաց: Այս գնտակ՝ կամ մանեակ մինչ տկարացեալք 'ի ծերոյն, դողդոջէ գլուխ նը, և 'ի վայր հակի. իսկ յորժամ խորտակի, իսկոյն մեռանին:

Այս հոգևորապէս նշանակէ զարծաթեայ գունտն հաւատոյ, որ շրջապատեցեալ լինի ոսկեաւ սիրոյն Ածայնոյ: Որդ՝ 'ի յայնս որք հնացեալքեն 'ի մեղս, տկարացեալք և հաւատն համդերձ սիրովն իւյ. վն որոյ և միշտ գլուխն հոգւոյ նոցին, որ կամքն, և միտն հակեցեալքեն առ երկրաւորս. և համապազ դողդոջեն. մերթ կամելով զայս, և մերթ զայն. մերթ ջանալով գիտել զայս ինչ իր, և մերթ ըզ ներհակն. վն զի որ 'ի ձեռն մեղաց զառեցեալք յոյ, և զնմ զոր կամի և գործէ, առ Ած ոչ վերաբերէ՝ այնպիսին ոչ վնաս ուանց զեկի՝ տատանեալ շրջի 'ի վր ծովու աշխարհի: Աստ ոլոռ՝ և կայեն՝ յետ որոյ բաժանեցաւ յոյ, տատանեալ շրջէր աստ և անդ:

Այս յարէ. Այս ճանրեալ սափորն յաղբիւրն:

Ի: Այս է քսաներորդ առակաբանութի, որ է հինգերորդ նմանաբանութի զմահուանն ծերոց: Այս սափորովն տայ իմանալ զերակունս, որք են ընդունարանք և քարշօղք արեան. և ոչ 'ի սափորն լցեալ լինի ջուրն յաղբերէ, այսպէս և 'ի սափորս երակաց լցեալ լինի արիւն յաղբերէ լերդին՝ և սրտին: վն զի երակքն քար_

շօղք

շողք յինքեանս զարիւն, 'ի սրտէ և 'ի լեր-
դէ քարշեն ․ և յետոյ այնք արիւնք ան-
ցեալք յայլս երակունս՝ միջնորդութեանց
դառնան 'ի սիրտն, և 'ի լեարդն ․ և որպէս
ջուրք ելեալք 'ի ծովէ՝ վերադառնան 'ի նա․
այսպէս և արիւնն ելեալ 'ի լերդէ և 'ի սրտէ՝
վերադառնայ 'ի սիրտն՝ և 'ի լեարդն ։
Եւ որպէս ջուրք որքանիցս անցանեն
ընդ երակունս հողոյ՝ զտին և քաղցրա-
նան, այսպէս և արիւնն՝ շրջելով և ան-
ցանելով ընդ լեարդն կենդանւոյն՝ մաք-
րի և զտի ․ և վերստին ներհեղեալ լինի
'ի սափորս երակաց ։ Արդ՝ 'ի ծերս սա-
փորս այս, այսինքն երակունքն գոլով տկարա-
ցեալք, ոչ կարեն բարեպէս հանել զջուր․
այսինքն զարիւն ․ և այսու 'ի նուազուէ շարժ-
ման արեանն վատթարանայ արիւնն և
պղտորի ․ և սկսանին ծնանիլ անտի պէս-
պէս տկարութիւնք 'ի ծերս ։ Եւ յորժամ
մերձ 'ի մահ լինի մարդն, խորտակին սա-
փորքն այնուքիկ 'ի յաղբիւրսն ․ այսինքն ընդ ջա-
նալն հանել զարիւն՝ և ընդունիլ յինք-
եանս, խորտակին 'ի յաղբերս սրտին, և
լերդին, յորոց կամէին հանել զարիւն ․ ըստ
օրինակի սափորոյ, որ 'ի յաղբերն խոր-
տակի ։

Եւ մինչ ասացեալ սափորն խորտակի 'ի
մարդն, ցամաքի և աղբիւրն ․ քանզի
զայնպիսի ուժս ունի աղբիւրն մեր, այսինքն
սիրտն՝ և լեարդն, զի բղխեսցէ զջուր՝
որ-

որքան ամբողջ է սափորն, և քարշէ: Մն որոյ ընդ բեկանելն երակաց՝ ցամաքի և սիրտն՝ և լեարդն. քանզի հակադարձաբար կախեցեալք են յիրերաց:

Իսկ ըստ հոգևորին, սափորովն իմանի ընդունակութիւն մարդոյն ողորմութեան ա̃յ. և աղբերաւն՝ ողորմութիւն ա̃յ: Արդ՝ 'ի նոսա՝ որք հնացեալք են 'ի մեղս, նուազեալ է ընդունակութիւն ողորմութեան ա̃յ. ուստի թէև աղօթիւք խնդրիցեն՝ որքան են 'ի մեղս՝ և ոչ կամին յետս դառնալ 'ի մեղաց, ո՛չ կարեն բարեպէս և ըստ ա̃մի ընդունիլ զողորմութիւն յաղբերէ ողորմութեան ա̃յ. և անտուստ հեռանին նց̃ և այլք պէսպէս ցաւք և հիւանդութիւնք մեղաց: Իսկ եթէ մինչև իսպառ տեւիցեն 'ի մեղս, 'ի կետի մահուան բեկեալ խորտակի սափորն. ա̃յ ընդունակութիւն նց̃. զի անընդունակ լինին յայնմհետէ ողորմութեան ա̃յ. և հեռաբար աղբիւրն ողորմութեան ա̃յ՝ որքան առ նոսա ցամաքի. և այսու միացեալ յինքեանս առանց ողորմութեան ա̃յ, դահավիժին 'ի մահն յաւիտենական:

Իւ յարէ. Իա ընկրկեալ անիւն 'ի գուբն:

իա Այս է քսան և միերորդ և վերջին առակաբանութիւն որ է վեցերորդ նմանաբանութիւն իմաստնոյն զմահուանէ ծերոյ: և 'ի ձեռն անուին տայ իմանալ զգլուխն. և 'ի ձեռն գբոյն, ա̃յ ջրհորոյն՝ տայ իմանալ

նալ զսիրտն։ Այս ծանիր, զի բառս՝ գունդ, փոխանակ ջրհորոյ դնի 'ի մեզ ։ Այս թէ ո՞չ յարմարի այս, դիտելի է. զի 'ի հնումն, նաև այժմ՝ 'ի բազում տեղիս պարտիզպանք, որք ունին զջրհոր մ՚ ոռոգելոյ զպարտէզն, 'ի վ՚ր բերանոյ ջրհորոյն փոքր ինչ 'ի վեր՝ կազմեն զանիւ մի փայտեայ. և ամրացուցանեն 'ի վ՚ր նը զպարան մի. և կապեալ 'ի ծայր պարանին զջրհանն՝ կախեն 'ի ջրհորն. և յորժամ ջրհանն հասեն 'ի ջուրն՝ լցեալ լինի, պտտեն զանիւն, և պատի պարանն 'ի յանիւն. և ջուրն ելանէ 'ի վեր. և թափեալ զայն յաւազանն՝ ոռոգեն զպարտէզն ։ Ըստ այսմ օրինակի և գլուխ մարդոյն է ո՞չ զանիւ 'ի վ՚ր ջրհորոյ սրտին. և պարանօք երակաց՝ և ջլաց, յորս են և ջրհանք՝ (զի են նաև ընդունարանք ոգեաց կենսականաց) քարշէ միշտ գլուխն 'ի ջրհորոյ սրտին զոգի կենսական, և զարիւն՝ և զուժ՝ 'ի վեր առ ինքն. և այնու ոռոգեալ արբուցանէ զպարտէզ մարմնոյն՝ պահելով զնաւս անդամս 'ի դալարութեան իւրեանց, ո՞չ զի տայցեն ըզ պտուղ բարեաց գործոց առ ապրուստ համդերձեալ կենացն՝ որ գալոց է։ Արդ՝ ո՞չ անիւն փայտեայ քարշելով և քարշելով զջուր՝ մաշի, և յաւուր միում՝ բեկեցեալ ընկրկի և անկանի 'ի ջրհորն. այսպ և գլուխն մեր որ է որպէս զանիւ, յաւուր միում՝ 'ի քարշելն զջուր կենսական ոգեաց

ին Bb 'ի

՚ի սրտէ, խորտակի և անկանի :

Այլ աստ գիտելի է · զի որպէս անիւն մինչ հնացեալ է՝ նաև սարանն մաշեցեալ, և ջրհանք ծակոտեցեալք, ոչ կարէ ստոր-տիզգյանն զբաւական ջուրս հանել ՚ի ջր-հորոյն առ ՚ի ոռոգել զպարտէզն · և բոյսք պարտիզին թարշամին՝ և անզօրանան, և ոչ բերեն զպտուղ և զաւաւս տասւղս, այս-պէս և ՚ի ծերան մինչ գլուխն հնանայ, և երակք, և ջիլք նուաղին, ոչ կարէ ար-տահանել զջուր կենսական ոգեաց առատ և բաւական ՚ի սրտէն առ ՚ի ոռոգել զբոլոր մարմինն · և այնու երեսք, և այլք ան-դամք ծերոյ սկսանին խորշոմիլ, և մորթք նոյն կնճռիլ : Արդ որոյ իմաստութեանն յորդորէ զքեզ, և ասէ · ՚ի մանկութեան քում յիշեա զարարիչն քո · և այնու շարժեա զքեզ ՚ի գործս բարեաց · որպէս զի մինչ չեն թար-շամեցեալ՝ և տկարացեալ անդամք մար-մնոյդ, կարիցես ուժեղաբար գործել զբարիս · մանաւանդ մինչ այժմ կարես վայելել զունայն բարիս Ֆի, և զփափկու-թիւն նր, վս սիրոյն այ կամաւ քով հրա-ժարեսցես զքեզ յայնց, որպէս զի արդիւն-աւորեսցիս :

Քանզի որպէս Դաւիթ ՚ի ծարաւութեան իւր-ում նուիրելով զջուրն այ, արդիւնաւո-րեցաւ, որ ոչ կարէր արդիւնաւորիլ եթէ ոչ ունիցէր զծարաւ, այսպէս և դու՝ մինչ ՚ի մանկութեան քում ունիս զծարաւ ան-

ցաւ-

ցանորաց փափկութեց և հեշտութեանց ,
նուիրեալ զայնս ո՛չ՝ հրաժարելովդ 'ի նո_
ցանէ, զի արդիւնաւորիցիս : Մ̃զի 'ի ծե_
րութեան՝ մինչ անցանէ ծարանդ՝ ոչինչ
արժէ նուիրելդ :

Արդ՝ գլուխն որ 'ի ծերութեն տկարաբար
քարշէ զկենսական ոգիս 'ի սրտէ , մինչ
մերձենայ նման կէտ մահուան , իսկոյն
քարշողական ուժն ն̃ր բեկի ո̃չ զանխէ
ջրհորոյ , ընդ նմին խզեցեալ խորտակին
և ջրհանք , և պարանն . և հետևաբար ցա_
մաքի և ջրհորն . զի նաև սոքա հակադար_
ձաբար 'ի դոյն իւրեանց կախին յիրերաց՝
դոլով յարարչէն իւրեանց այնպէս կար_
գաւորեցեալք :

Իսկ ըստ հոգևորի իմացուածոյ , անխէն
է կեանքն և կացութի հոգւոյն 'ի գործս
և 'ի տենչս առաքինութեց , և պարանն է
խոնարհութի , և հնազանդութի . և ջր_
հանքն են ջերմեռանդական աղօթքն և
խնդրուածքն . իսկ ջրհորն է շնորհն Ա̃ծ_
ային . յորմէ հոգին որ կեայ 'ի գործս ա_
ռաքինականս՝ միշտ 'ի ձեռն խոնարհութե
և աղօթից հանէ զոգի կենսական և կեն_
դանարար . և դալար պահէ զի̃մ բոյս
առաքինական գործոց իւրոյ : Արդ՝ ո̃չ
'ի խզիլ պարանին , կամ 'ի բեկանելն ջր_
հանաց ոչ հանի ջուր . այսպէս և որոյ խո_
նարհութին , կամ աղօթքն բեկեցեալ է ,
ոչ կարէ ընդունել զոգի կենսական 'ի

շնորհացն Այ ։ Վասն զի միայն աղօթք խոնարհաց են արտահանօղք կենսականի ջրոյն ։ Ըստ այնմ, Սիրաքայ . 35 . 21 ։ Աղօթք խոնարհեցուցանողին զինքն՝ զամպս խոռոչէ . Յի ընդ ամպս թափանցէ և հասանի առ Ած . և իջուցանէ զանձրեւն ողորմութե ։ Արդ՝ որպէս 'ի ծերս տկարանայ գլուխն, այսպէս և 'ի հնացեալսն մեղօք տկարանայ բարի և առաքինական կացութիւն հոգւոյ, նաև խոնարհութի և աղօթք . և այսու ոչ կարէ արտահանել զջուր կենդանի 'ի ջրհորոյ շնորհացն Այ ։ և մինչ անզեղջ մնայ 'ի մեղս , անկէն բարւոյ կացութե բեկի 'ի վն ջրհորոյ շնորհացն Այ . և հետևաբար ցամաքի վն նորա ջրհորն շնորհացն Այ ։

Մ՜ որոյ հարկաւոր է , զի որքան եմք 'ի բարւուք կացութե, միշտ հաստատուն պահելով 'ի մեզ զխոնարհութի , զհնազանդութի , և զաղօթս ջերմեռանդականս՝ հանել զջուր կենսական 'ի ջրհորոյ շնորհացն Այ . ոմ զի զպարտեզ հոգւոյ մերոյ միշտ ոռոգանելով և արբուցանելով՝ 'ի դալարութե, 'ի զուարճութե, և 'ի պտղաբերութե պահիցեմք ։

7 . Եւ դարձցի հողն յերկիր՝ որպէս և էրն . և հոգին դարձցի առ Ած, որ ետ զնա ։

Յատէն գոլով եզերեալ զքսան և մի առակսն , որոց հնդետասանքն էին զտառա-

ռապանաց ծերոց , և վեցքն զմահուճանէ
նր , յուցանէ զմարմին մարդոյ՝ որ եղեալ է
'ի հողոյ՝ դառնալ 'ի հող : քանզի յետ որոյ
դնի 'ի գերեզմանի , 'ի ձեռն փտեցման
վերլուծանի 'ի հող . և աստէն բառն՝ երկիր,
փոխանակ հողոյ դնի : Իսկ հոգին մար-
դոյ՝ որ ոչ է եղեալ 'ի հողոյ , այլ Այ
ստեղծեցեալ է առանց նիւթոյ 'ի յոչնչէ ,
ոչ զի զանմահութին սեփականիցէ , գո-
լովն անմահ՝ վերադառնայ առ Այ . և
ներկայանայ առաջի ատենի նր , զի զհա-
մարս տայցէ ամենից գործոց իւրոց՝ զորս
արար որքան էր 'ի մարմնի : Որ եթէ ըզ-
քանքար կենաց՝ և ժամանակին զոր ունե-
ցաւ յայսմիկ աշխարհի՝ բարեպէս շահե-
ցուցեալ իցէ , ըստ 'ի փառս այ գործելով
զամ, և ըստ պատուիրանաց Տն իւրոյ դնա-
լով՝ կենցաղավարեալ իցէ , ընդունի ըզ-
վարձս բարեաց՝ լինելով երանեցեալ և
քաղաքացի վերինն Եդեմի : Իսկ եթէ զքան-
քար կենաց և ժամանակի իւրոյ չարաչար
'ի գործ ածելով՝ ունայնութեց ծխս իցէ
հետևեալ , և կամ զքանքար Տն իւրոյ ,
որ էր կեանքն և ժամանակն , թաղու իւր
համարելով՝ 'ի հեշտութիս և 'ի փափկու-
թիս մարմնոյ իցէ վատնեալ և սպառեալ ,
իսկոյն կապանօք անլուծից կապեցեալ՝ ար-
կանի 'ի յաւիտենական բանտն դժոխոց :
Ո՜վ այսպիսի մեծագոյն չար վերաժամա-
նէ վատ ծառայիցն՝ յայսմանէ . զի զքան-

քարն կենաց, որ ոչ է իւրեանց, այլ Տ՟ն իւրեանց, 'ի ձեռս իւրեանց լինելով՝ համարին իւրեանց. և այսպէս խաբեցեալք՝ վատնեն զժամանակն և զկեանսն իւրեանց ուր և հաճին՝ և ոչ կամին. զի 'ի դատարկաքանել, 'ի յուտել, և 'ի յըմպել հեշտութեան աղագաւ՝ և ոչ 'ի փառս ա՟յ և ի՟ պատուէրանաց նորա. 'ի գնել և 'ի խլաձառել՝ ոչ զի ըստ ա՟յ ապրիցեն, այլ զի ագահութ՟ բաւարարիցեն: Ըստ այսմ իմա և զայլոց՝ որք ամենեքեանք են ունայնութ՟իք ունայնութեանց, և վատնեցմունք քանքարաց Տ՟ն, զորոյ մեծաւ խստութ՟բ պահանջեսցէ Տ՟ր զհամար:

Դարձեալ գիտելի է. զի որպէս եթէ ո՟մն մեծատուն տայցէ 'ի ձեռս միոյ աղքատագունեղի ծառայի իւրոյ զտասն քանքար, և առաքիցէ յօտար աշխարհ, զի այնու արարեալ զվաճառականութի՝ շահեցուսցէ զայն, և ծառայն 'ի ձեռս իւր տեսանելով զքանքարսն՝ համարիցի թէ իցէ իւր. և այնու զընաւն վատնիցէ 'ի գործս անառակութեան, յոյժ յիմար համարի այնպիսի վատ ծառայն, մանաւանդ մինչ գիտէ, զի 'ի ձեռանէ Տ՟ն իւրոյ փախչիլ ոչ կարէ, ըստ այսմ օրինակի՝ և առաւել յիմարագոյնք են այնոքիկ՝ որք զկեանս և զժամանակն զորս յա՟յ առեալ ունին 'ի ձեռս իւրեանց, համարին զայնս գոլ յատուկ ստացուած իւրեանց. և այնու վատնեն

նեն 'ի յունայնութիւն , և 'ի մեղս ։

8 ։ Ունայնութ̃է ունայնութ̃եց ասաց Ժողովողն· ամ̃ ինչ սնոտի և անցաւոր է ։

Այս վճիռ իմաստնոյն 'ի սկզբան գրոյն ասացեալ եղև 'ի նմանէ ո՞չ զբնաբան · և 'ի վ̃ր նորին շարայարեաց զայսքան վար_ դապետութի̃ մինչև հասոյց զբանն իւր առ այն տեղին՝ թէ հոգին վերադառնայ առ Ա̃Ծ առ 'ի տալ զհամար գործոյ իւրոյ։ Ուստի որպէս թէ 'ի վերջն հասուցեալ զբանն , կրկնէ զբնաբանն՝ և զսկիզբն բանից իւրոց ։ Իբրու թէ ասիցէ · մինչ կեանն ոչ այնպէս վարեցեալ լինի 'ի փառս Տ̃Ն և ըստ պատուիրանաց նր̃ , զի յորժամ հոգին դառնայցէ առ Ա̃Ծ շահեցուցիչ քանքարաց կենաց և ժամանակին գտա_ նիցի , և այնու ընդունակ և արժանաւոր երանութե̃ , այնպիսի կեանքն և վարուց կենաց՝ և ունեցեալք նորին , թէ թա_ գաւորութի̃ իցէ , թէ հարստութի̃ , և թէ փափկութի̃ , բնաւ̃քն են ունայնու_ թիւք ունայնութե̃ց · մ̃ր կարի մեծագու_ նեղ ունայնութիւք , և գումարք և կամ կոյտք ունայնութե̃ց · և հետևաբար դա_ տապարտութե̃ց հոգւոյ առիթք և պատ_ ճառք · և յաւիտենական ողբոց և տան_ ջանաց նիւթք և հրաւիրակք ։

9։ Ո՜ է եղև ժողովողն իմաստուն. և զի ուսոյց գիտութիւն ամ մարդոյ։ և ունկն քննէ զզարդ առակաց։

Ասել կամի զայս ժողովողն, թէ նա՝ որ զայս ամ ձեզ քարոզեաց, եղև յոյժ իմաստուն, զի գիտաց զաւազումն. նաև ուսոյց զգիտութիւն օրինաց, իրաւանց, և հանձարոյ՝ ամ մարդոյ։ զի ոչ միայն բերանով քարոզեաց, այլ և 'ի գիրս եհեղ զբանս իւր, զի նաև առ ամ հեռաւորսն տարածեսցի։ Արդ՝ այս ամ, թէ թէ գիտութիւն, և թէ ուսուցանելն, գիտէք արդեօք թէ ուստի եղև 'ի ժողովողն. եթէ ոչ գիտէք, ասացից ձեզ։ Յայնժամ եղև, զի սիրեաց զիմաստութիւն. և 'ի յունկն իւր որքանիցս հասանէր բան խրատու, կամ իմաստութեան 'ի ձեռն առակաց՝ և օրինակաց, քննէր զայնս մտօք. թէ զզարդն՝ որ էր բոլոր ուժն և իմացուածն առակաց՝ և բանից՝ քննէր. և այնու եղև իմաստուն։ Ուրեմն նաև դուք ով ունկնդիրք, զայս ամ զոր ասացի ձեզ 'ի ձեռն առակաց և նմանաբանութեանց, պարտիք զներքին ուժն բանից՝ և առակաց որք զարդ նց, քննել՝ ը հասանելն բանից իմոց 'ի յունկս ձեր. ոպ զի և դուք իմաստնանայցէք։

Այս բոլոր բան նոյն է ընդ այսմիկ, ոպ թէ ասիցէր սաղոմոն. տեսանէք դուք զիս որ ուսուցանեմ զձեզ, գոլ իմաստուն.

և

և ասէք , թէ ժողովողն եղև իմաստուն և ուսուցիչ ․ բայց ծանիք , զի ունկն է քննօղ զզարդ առակաց ։ Վ͞ս ամենայն ոք որ զլուծեալն քննէ , և զուժն և զզօրութիւն բանիցն հանդերձ պարագայիւքն մտածէ , լինի իմաստուն՝ և կարօղ ուսուցանելոյ նաև զայլս ։

Այլ աստ գիտելի է ․ զի սողոմոն իրաւի զոր ինչ ՚ի մանկութե͞ն , կամ ՚ի մեծութե͞ն լսէր , վ͞ս զբանս հանճարոյ և խրատուց , միշտ մտօք քննէր զայնս՝ հանդերձ պարագայիւքն ։ Նաև զոր ինչ ՚ի միտս իւր յաստուծուստ ներհեղեալ տեսանէր՝ ըդ բնաւսն ըստ ա͞մ պարագայիցն քննէր՝ և մտածէր ․ և այսու գերազանց գտաւ ։ Որդ՝ թէպէտ այլք մարդիք քննելով զբանս՝ ոչ կարէին հաւասարիլ սողոմոնի՝ որքան առ այս , զի ՚ի միտս սողոմոնի գոյր նաև յա͞յ ներհեղեալ գիտութիւն ․ բայց եթէ ո͞ք նա քննէր այնպէս քննիցէին , լինէին՝ և լինիլ կարէին ըստ սեռի իւրեանց , վ͞ս ըստ բնականի թէութեանց իւրեանց՝ այնքան իմաստունք , որքան սողոմոն ՚ի բնականայ իւրոց վերաշահելով ( բացառոցեն զներհեղեցեալն յաստուծուստ ) եղև իմաստուն ։ Այլ որքան առ այս իմացեալ լինի զօրութեան մեկնութեան՝ յորում մեկնեցաւ իբրու ասել ․ դուք ևս քննեցէք զբանս , և այնու լինիք նաև դուք իմաստունք և ուսուցիչք ։

Այլ

Այլ առ 'ի քննել զզարդ առակաց, որ զգօ_
րութիւն բանից և խրատուց, նախ պիտոյ է
տեսանել և քննել զբանն զոր լսէ․ արդեօք
ուղիղ իցէ, կամ թիւր․ որ արդեօք հա_
մաձայնի բանի, թէ տարաձայնի ։ Այ_
կայն բանն զոր դնէ, և բաղդատէ 'նմա
զլուծեալն՝ պարտի գոլ բան և բանակա_
նութիւն, կամ բնական լոյս ընդհանրա_
կան և պարզ, և ազատ 'ի մասնաւորէ բա_
նէ յառաջացելոյ 'ի մարմնոյ և յարենէ ։

Երկրորդ՝ քննելի է լուծեալ բանն որքան
առ այս, թէ առ որպիսի վախճան վերա_
բերի․ առ բարի և որ վախճան, թէ առ
ունայն և կամ առ վատթար վախճան․ և
եթէ իցէ առ բարի վախճան, քննելի է
տակաւին․ թէ առ որպիսի բարի վախ_
ճան․ արդեօք առ այս, թէ առ այն․ և
կամ արդեօք առ միջական վախճան, թէ
առ վերջին ։

Երրորդ՝ քննելի է, թէ որպիսի պարա_
գայիւք ասացեալ լինի բանն և խրատն․
որ զի ըստ այնց պարագայից 'ի գործ ա_
ծիցեն ։ Քանզի ոմանք բանք և խրատք
ըստ անձին, ըստ տեղւոյն, և ըստ ժամա_
նակին լինին 'ի գործ ածելիք․ զորս 'ի
լսելն պարտիմք քննել ։ որգոն․ մինչ լսեմք,
թէ յանդիմանել զընկերն, և կամ դա_
նելն է չար, ոչ պարտիմք իմանալ՝ թէ
դատաւորք, և մեծաւորք, որք զյանցաւ_
որսն պատժեն, գործեն զչար․ ըստ այսմ

իմա

խնամս և զայլոց ։

Չորրորդ՝ քննելի է բանն զոր լսեմք, թէ 'ի յորս, և յորքանս տարածէ զինքն · զ̃ի զորքանս ուժս ունի · և զորքանս պարունակէ յինքեան ։ Որդոն · մինչ առնէ սէր գիրն · Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո, տայ իմանալ զի և իցէ ընկեր, որ իցէ որդի ադամայ · յորում պարունակի և թշնամին, և ոչ միայն ընտանիքն, կամ բարեկամքն · և ասելն՝ որպէս զանձն քո, ոչ տայ իմանալ, թէ ոպ̃ անձին քում տաս յմ̃ում աւուր զկերակուր, նմանապէս և յմ̃ում աւուր ամենից ընկերաց քոց տայցես · այլ թէ ոպ̃ անձին քում կամիս զբարի և ոչ զչար, այսպէս և առ ընկերն քո իցես · և 'ի հարկաւոր պիտոյութեան ընկերիդ՝ ասպնջական լինիցիս նմա որքան կարես · և այլն ։ Արդ՝ Սաղօմօն այսոքիւք, և այլովք նմանեօք միշտ քննեալ զզարդ առակաց, և զզօրութիւն բանից՝ իմաստնանայր · վասն որոյ նաև այլոց զնոյն Ճանապարհ առաջադրեաց ։

10 ։ Յոյժ խնդրեաց Ժողովողն գտանել զբանս կամաց · և գրեալ ( զ̃ի և գրեաց ) զուղղութիւն բանից ճշմարտութեան ։

Այսինքն, Սաղօմօն յմ̃է սրտէ ջանաց և աշխատեցաւ առ'ի գտանել զբանս հանճարոյ, իմաստութե̃, և ծանօթութեան իրաւանցն ա̃յ, և արդարութե̃ · որք ամե-

նե_

նքեանք էին օգտակարք առ փրկութիւն հոգւոյ մարդկանց, նաև հաճելիք. քանզի ը̃ որում ամենեքեանք հաճին և կամին երանեցեալ լինել, նոյնք բանքն գոլով առաջնորդօղք առ երանական կեանս, էին հաճելիք ամենից ըստ ինքեանց, և օգտակարք: Արդ՝ ա̃մ բան՝ որ է հաճելի և օգտակար, է բան կամաց. զի կամքն միշտ հայի առ այն որ հաճելի և օգտակար է. և որքան առ այս՝ ասէ, գտանել զբան կամաց: Եւ հետևի ասել. Եւ գրեալ ուղղութեան. իբր զբանս հաճելիս, և զօգտակարս ոչ միայն վարդապետեաց, այլ նաև գրեաց. որով իմանի գիրքս այս, նաև այլք գրեանք սաղոմոնի. և կոչէ զգրեցեալսն ուղղութիւն բանից ճշմարտութեան. իբր բանք, որք լիք են ուղղութեամբ և ճշմարտութեամբ. և զլսօղս ուղղեն առ ճանապարհն ճշմարիտ կենաց և երանութեան:

Եւ աստ գիտելի է. զի սաղոմոն առ ժողովուրդն իւր զերկուս պաշտօնս 'ի գործ ածէր. իբր զպաշտօն քարոզչի և խրատատուի, որով բարեպէս կարգաւորէր զժողովուրդն ըստ հոգւոյ, առնելով զնոսա յարմար ժողովուրդ երկնային թագաւորութեան. և զպաշտօն թագաւորի, որով բարեպէս կարգաւորէր զն̃ս առ 'ի լինել յարմար ժողովուրդ երկրային թագաւորութեան աթոռոյն դաւթի հօր իւրոյ: ըստ այսմ և երանելին յօբ զերկուս պաշտօնս

զայ_

զայսոսիկ 'ի գործ ածել 'ի ստորադրե-
ցեալ ժողովուրդս իւր :

II : Բանք իմաստնոց եբրեա պղնձեան եզանց . և
եբրեա բնական հրաշեալք . որք փոխան 'ի նշանակաց
յղ տուեալ 'ի ձեռն խորհրդոյ վարդապե-
տաց 'ի հոգւոյն [illegible] :

Բաստէն զբանս իմաստնոց իմն զբանս ծածկեալս . որք 'ի յայնց միայն որք ըստ Այ և յանծակոյս կողմանէ իմաստունքն են, խօսեցեալք լինին : Այս որոյ բանք առաքելոց, և մարգարէից . և կամ որ նոյն է, բանք Սբ գրոց են ըստ զխոյթան եզանց . քանզի ըստ խոյթանն ոչ միայն շօշափելով զմորթ եզին՝ խթէ զնա, այլ նաև ուղղէ, զի մի խոտորեսցի 'ի ճանապարհէն, և կամ զի մի ծուլանայցէ 'ի քարշելոյ ըզլուծն . այսպէս և բանն Այ խթէ զսիրտ մարդոյ և ուղղէ զնա : Ասանի բանն Այ ոչ է ըստ զբանս արտաքին գրոց՝ և արտաքին իմաստնոց . որք շօշափեն միայն ըզմորթն . յն զականջս մարդոյն՝ առանց ուղղելոյ զնա, այլ մինչ խթէ, նաև ուղղէ զմարդն 'ի յայնպիսի ճանապարհ, ընդ որ գնալ կարէ խթեցեալն 'ի յերկինս՝ առ վերջին վախճան իւր, որ է ԱԾ :

Այլ յարէ ամին . Եբրեա բնական հրաշեալք . որով կամի ասել թէ բանք իմաստնոց հոգևորաց, և կամ բանք ԱԾայինք նաև են նմանք բևեռաց . բայց ոչ են ըստ զգուլ-

և

և զբթածայր բևեռ, որ ոչ կարիցէ ընդ-հարիլ և ներսամտիլ 'ի տախտակն. որպի-սիք են բանքն արտաքին իմաստնոց, որք միայն շօշափեն զտախտակն, այ͞ս զականջս մարդոյ, բայց ոչ սևեռին 'ի ներքս տախ-տակին, այ͞ս 'ի սիրտն. այլ են սրածայրք, նաև հրացեալ բևեռք, որք մինչ հպին տախտակաց, ոչ միայն շօշափեն, այլ նաև խոցոյն սրութեամբ ծայրին և սաստկութեամբ ջերմութեան բոցակիզելով ներսամտին 'ի տախտակն, և մինչև ցներքին մասունս տախտակին, այ͞ս մինչև ցներքին մասունս սրտի մարդոյն՝ և 'ի խորս ախորժակաց նորին:

Ս͞ զի բանք ա͞ծայինք են յոյժ գործու-նեայք, և ո͞պ զսուր երկսայրի հատանողք, և ո͞պ զերկաթ հրացեալ բոցակիզողք. ըստ այնմ բանի Տ͞ն, որ ասէ. Ղուկ. 12. 49. Հուր եկի արկանել յերկիր. այ͞ս զբանն աւե-տարանին: Եւ առաքեալն ասէ. Եբր. 4. 12. Կենդանի է բանն ա͞յ, և ազդող, և հատու քան զա͞մ սուր երկսայրի. և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ, և ոգւոյ, և յօդից՝ և ուղղոյ. և քննիչ է մտաց՝ և խորհրդոց սրտից:

Եւ որքան առ այս, թէ որով կերպիւ բանք արտաքին իմաստասիրաց ոչ են գոր-ծունեայք. և բանք ա͞ծայինք են գոր-ծունեայք. նաև որքան առ այս, թէ մինչ ա͞ծային բանքն են գործունեայք, ընդէ՞ր ուրեմն ա͞մ լսօղք ոչ ուղղին, գիտելի է:

Բանք

Բանք արտաքին իմաստնոց, որք առ խրատս բարուց կենի վերաբերին, առ բանս ա՟ծ-այինս այնպէս բաղդատին, ո՟պ պատկեր իրին առ իրն : Քանզի ո՟պ բևեռն սրածայր սևեռել կարէ 'ի տախտակի . բայց գունով նկարեցեալ պատկեր բևեռին ոչ երբեք կարէ, ըստ այսմ և բանք արտաքին իմաստնոց :

Ա՟նախկին պատճառ սորին է այս . զի կեանն երանական է խորախճան իմն պատրաստեցեալ յա՟յ . ուստի միայն նոքա կարեն մտանել 'ի նա, որք կամ անմիջապէս 'ի ձեռն բանից Տ՟ն խորախճանին են հրահանգեալք . և կամ միջնորդաբար 'ի ձեռն բանից ծառայից Տ՟ն խորախճանին կոչեցեալք : Իսկ արիստոտէլ, և այլք փիլիսոփայք, ոչ էին տեարք խորախճանի երանական կենաց, և ոչ ծառայք Տեառն խորախճանին, որպիսիք էին առաքեալք, և մարգարէք : ուրեմն բանիւքն արիստոտէլի, և այլոց նմանեաց նորին՝ ոչ՛ք կարէ ուղղեցեալ լինել առ ճանապարհն երանական խորախճանին, զ՟ն արքայութեն, զոր պատրաստեաց ա՟ծ սիրողաց իւրոց :

Երկրորդն է՝ զի բանք իմաստնոց աշխարհիս թափուրք և զուրկք էին 'ի վարդապետութե երից ա՟ծաբանականաց առաքինութեց . զ՟ն հաւատոյ, յուսոյ, և սիրոյն, որ առ ա՟ծ . նաև 'ի վարդապետութէ ճշմարտի խոնարհութե . որով լինի ելանել

յեր-

յերկինս . ըստ այնմ Ղուկ. 18. 14. որ խո-
նարհեցուցանէ զանձն՝ բարձրանայ ։ Ուրեմն ոչ
կարելին ներսամտել և թափանցել՝ խորս
մարդկանց այնպէս՝ զի շարժիցեն զնո-
սա երթալ առ ած ։

Երրորդն է՝ զի բանք իմաստնոց աշխար-
հիս գոլով որպէս զպատկեր անկենդան, ընդ-
դէմ որոց առաքեալն զբանն այ ասէ գոլ
կենդանի, ոչ կարեն զշնորհս առ բերել
ումեք . և կամ զկենդանական շարժումն
ինչ տալ մարդոյն . իսկ բանք ածայինք
գոլով կենդանի՝ առ բերեն զշնորհս , և
ունին յինքեանս զշնորհ . ըստ այնմ .
Ղուկ. 4. 22. Եւ զարմանային ընդ բանս շնորհացն՝
որք ելանէին ՚ի բերանոյ նր . որ ՚ի բերանոյ Քի ։

Չորրորդն է՝ զի շարակարգութիւնք ած-
ային բանիցն ունին փայլուն կարգս, և
զկազմուածս , որովք ոչ ՚ի զարմացումն
մարմնաւոր , և կամ առ խինդ երկրաւոր և
անցական վերաձգեն զլսօղսն , այլ առ
ուրացումն երկրաւորաց և անցականաց ,
և առ բաղձանս երկնայնոց և հոգևորաց .
զոր կարգ և զկազմուած ոչ երբեք ու-
նեցան բանք իմաստասիրաց ։

Բայց որքան առ միւս մասն վերոնդելոյն՝
թէ ընդէ՞ր ուրեմն ած մարդիկք ոչ ուղղին
առ Ճանապարհն երանութեան ՚ի ձեռն գոր-
ծունէից բանիցն այ , ասելի է ։ Ամ ոք որ
ստորարկէ զինքն, վերուղղի առանց վրիպ-
ման . բայց զի ոչ ստորարկեն զինքեանս ,
վն

մն այսորիկ ոչ ուղղին ։ Այլ առ այս Տէրն մեր միշտ ասէր, Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ ։ Ա՟յ որ ստորարկէ զմիտքն բեւեռաց բանից իմոց, մտցէ 'ի սիրտ նորա գործունեայ բեւեռն բանից իմոց ։ Այլ այս բառ, լուիցէ, Ա՟յ մտցէ 'ի սիրտ նորա, այնպէս գործունեայ է, որպէս եւ այն բանն՝ զոր Ա՟ծ ասէր 'ի ստեղծանելն, եղիցի լոյս ․ եւ լինէր լոյս ։ Բայց այս է զանազանութիւն, զի 'ի ստեղծման առանց թէութեան ասէր ․ իսկ աստ թէութեամբ ․ Ա՟յ որ ունիցի ականջս լսելոյ ։ Իբրու թէ ասիցէ ․ եթէ ստորարկանես զմիտդ բանից իմոց, մտցէ բանն իմ 'ի սիրտ քո ։ Ուրեմն ընդ կատարելն թէութեան, Ա՟ծային բանքն իսկոյն թափանցեն 'ի սիրտ մարդոյն ։ Ո՟ւ որոյ համառօտապէս գիտելի է ․ զի ա՟մ ոք, որ դարձուցանելով զկամս եւ զյօժարութիւն իւր 'ի մեղաց՝ զտախտակ սրտի իւրոյ իսկապէս տարածէ առաջի հրացեալ բեւեռացն Ա՟ծային բանից, 'ի հարկէ սեւեռին 'ի նմա գործունեայ բանքն Ա՟ծայինք ․ եւ այնու ուղղեցեալ յա՟մ թիւր ճանապարհաց իւրոց՝ ուղղապէս դիմէ առ կեանսն երանական, որ է վերջին վախճան իւր ։ Այլ յարէ ․ Որք 'ի չեռան խորհրդոյ հարցապետաց ․ ( Ա՟յ իմաստութեան խորհրդականաց եւ իշխանաց ) տնկեալք են 'ի միջէ նոցունց ։ Ասէն կամի ասել՝ թէ գործունեայ բանք իմաստնոց՝ որք են բանք Ա՟ծայինք, եւ վերածօղք առ կեանսն երանական, տնկեալք եղեն 'ի

նը Cc մի_

միոջէ հողմոյ. ըստ յոյն: Իսկ մարգարէաբար խօսելով ասէ, ոսկերք եղեն ՚ի միոջէ հողմոյ, ըստ ՚ի Սիրն, որ էր հողմն բաջդնող զմանձն իւր ՚ի վ̅ր ոսկերաց: Իսկ այս միակի հողմոյն՝ որ էտ զայսօրիկ բանս, առաջադրեաց իւրոյ իշխանաց՝ և իմաստուն խորհրդականաց. ըստ ա̅մ՝ սրբոյ. և Նք ամենեքեան համաձայն հաւանեցան, և ստորագրեցին զայն, ասելով՝ թէ յոյժ բարիք են բանքս այսոքիկ. և են բանք հողմոյն: Իսկ որքան առ այս է բանն՝ զոր ասէ. ՚ի ձեռն խորհրդոց Հարզալեցւոց. ըստ խորհրդով գլխոնոց իշխանաց ոսկերք եղեն ՚ի միոջէ հողմոյ բանքն այնոքիկ գործունեայք առ ՚ի ուղևորել զմարդիկ ՚ի ճանապարհ փախճանին իւրեանց, որ է երանական կեանն:

Իսկ զի ՚ի վեր անդր զբանս իմաստնոց իմաստնի նմանեցոյց յարմարաբար և զՏ̅ն բանից՝ նմանութ̅ հողմոյ էառ: Արդ՝ ոչ եթէ թագաւոր ոմն կամիցի առ բարին իւրոյ ժողովրդեան զընդհանրական և զմիաջինաւոր մճիւ ինչ առնել, և զհրամայական ինչ արքունական գրով արտահանել. զի բանք մճայն յոմ ուրեք տարածեցեալ՝ և ժողովուրդն իւր ըստ այնմ մճոյ և կարգաւորման վարեցեալ՝ ապահովք ընկեցին ՚ի թշնամեաց, առնէ և զայս, զի զայն մճիւ նախապէս առաջադրիցէ ամենից գլխոնոց իշխանաց, և

դա_

դաւանապետաց իւրոց. ոպ̃ զի նոքա՝ որք գիտունք են, և հանձարեղք՝ ստորագրելով զայնս՝ և զինքեանս պարաճանդելով այնու կանոնաւ վարել, նաև վկայելով թէ վճիռն այնէ վճիռ արքային, խաժամուժ ամբոխից դիւրին լինիցի ստորարկելն զինքեանս այնմիկ վճռոյ: Քանզի այնու՝ ռամիկ ժողովուրդն յօժարութ̃ ստորարկէ զինքն վճռոյն, ասելով. մինչ վերնագոյնք մեր, և դաւանապետք և իշխանք ամենեքեան ստորարկին զինքեանս այսպիսեաց վճռոց և բանից՝ նաև վկայեն՝ թէ է վճիռ արքայի, հարկաւոր է զի և մեք ստորարկիցեմք զմեզ:

Արդ՝ իմաստունն ՚ի ձեռն այսպիսւոյ նմանութ̃ե կամի ցուցանել՝ թէ բանք իմաստնոց են ոպ̃ զխթան՝ և ոպ̃ զբևեռ հրայեղ. գործունեայք. զի ՚ի միոջէ հովուէ. այ̃ յայ̃. կամ որքան առ նոր օրէնս՝ ՚ի Քսէ եղեն տուեցեալք. և զայն ստորագրեցին իշխանքն գործով՝ և բանիւ, նաև վկայեցին՝ թէ այ̃ բանք են. զի Քս̃ մինչ առաջադրեաց զվճիռս իւր մմ̃ սրբոց իւրոյ, այ̃ նախահարց, և մարգարէից, և այլոց բնաւից, ամենեքեանք համաձայն ստորագրեցին զայնս բանիւ և գործով:

Այս ասէն վս̃ բարւոք իմանալոյ, ըստ զօրութ̃ե բանին մեկնեցելոյ՝ օրինակի աղագաւ, համարեա՛ թէ Քս̃ որպ̃ զարքայ արքայից արարեալցէ զժողով ինչ իշխա_

նաց իւրոց. որպէս որբոց. և զխթիւ պատգամաց՝ և բանից իւրոց՝ զորս առ փրկութին հոգւոց մարդկանց արար, առաջադրեալ իցէ նոցա, զի ստորագրեսցեն, և զհաւանութիւն տայցեն, նաև տարածեսցեն առ ամենայն ժողովուրդս Թագաւորութեան իւրոյ: և սուրբք ամենեքեանք յօժարութեամբ և համաձայնութեամբ ստորագրեցին զայնս՝ բանիւ նաև գործով. և ասացին, սոքա են ճշմարիտ միջոցք կեցութեան մարդկան: Եւ ոգւով չափ աշխատեալ տարածեցին զայնս առ այլս: Եւ յայսմիկ ժողովման՝ որ առ Ադամ հօրն և Թագաւորն ամենից, 'ի յոր ամենեքեանք սուրբք համաձայն զխթան բանիցն Աստուծոյ 'ի միտս ժողովրդեան հասուցին առ 'ի ուղղել զնոսա 'ի ճանապարհն կենաց, Առաջին նստոյն եղև Աբրահամ. որ հնազանդելով Աստուծոյ, և ընկալնլով զօրէն Թլփատութեան՝ հպեցոյց զխթան բանիցն Աստուծոյ 'ի յորդիս՝ և 'ի ծառայս իւր. և նմա հետևեցան Իսահակ, և Յակոբ, և այլք. որպէս Յովսէփ, և եղբարքն: Եւ զկնի սոցա եղև Մովսէս. որ ընկալաւ զխթան բանիցն Աստուծոյ 'ի տախտակս. և տարածեաց զայն առ ժողովուրդն իւրեանց՝ ուղղեաց զնոսա: Եւ զկնի նորա դատաւորք իւրեանց, որք 'ի պաշտօն միայն Աստուծոյ ածէին զժողովուրդն: Եւ զկնի սոցա մարգարէք. որպէս Սամուէլ. Դաւիթ. և այլք բնաւք. 'ի մէջ որոց եղև և Սա_

ղո_

դոմն · որք բազմազան բանիւք և առակօք , և նմանութ՟ գրեցին՝ և մեկնեցին զբանն ա՟յ , և զխթանն տարածեցին առ համայնս ազինս : զի Երեմիա , և այլք ոմանք ՚ի մարգարէից նաև հեթանոսաց քարոզեցին՝ և մարգարէացան · որպէս և Յոնան Նինուէացւոց :

Եւ մինչ ՚ի ձեռն սոցին ոչ ուղղեցան ազգք մարդկան , ըստ որում արժան էր , Որդին Ա՟յ մարմնացեալ , որ էր յատուկ հօրն՛ , եկն նաև գործածօղ խթանին · զի եկն ՚ի մէջ ոչխարաց , և ոչ միայն բանիւ , այլ նաև գործով զխթան բանից իւրոց , ո՟պ զհրացեալ բեւեռ՝ սևեռեաց ՚ի սիրտս մարդկանց՝ ըստ որում պիտոյ էր · և ուղղեաց զնոսա ՚ի հաւատս ճշմարիտս · և ետ ն՟ց միջոց փրկութե՛ զխորհուրդս եկեղեցւոյ :

Եւ՛ ստորագրեցին զբանն և զվճիռ միոյ հօրնէս այսորիկ ա՟մ առաքեալք , որք էին իշխանք աշխարհի · և աշակերտքն · և հետևաբար ա՟մ հարք ս՟ք , և մարտիրոսք · և ճգնաւորք , և վարդապետք , և կուսանք · նաև թագուհին ամենից սրբոց ամենօրհնեցեալ Կոյսն Մարիամ մայրն ա՟յ , ՚ի ձեռն բանից , և գործոց :

Եւ՛ մի հօրինն այս Տ՟ր մինչ մերձ էր համբառնալ յերկինս՝ ուստի եկեալ էր , ետ զգաւազանն հովուական առաքելոյն Պետրոսի , ասելովն երիցս , արածեա՛ զոչ-

խարս էմ · որպէս զի և նա զկնի մահուան թողլով զայն յաջորդաց իւրոց , այսինքն Հայրապետացն Հռոմայ , բոլոր հօտն իւր , ամ̃ քրիստոնէական ժողովուրդն՝ ա՛զ զմի հօտ 'ի ներքոյ իշխանութեան միոյ հովուի արածիցի , և խնամաւ բանից իւրոց ուղղիցի · և ամ̃ վարդապետք , և եպիսկոպոսունք որպէս զիմաստուն խորհրդականս՝ և իշխանս՝ զոր ինչ և վարդապետիցեն և քարոզիցեն՝ ընդ հրամանի և ձայնոյ միոյ հովուի քարոզեալ , զնոյն բանիցն այլ առ ամենեսեան միակերպաբար՝ և ըստ ճշմարտութեան առանց իրիք մոլորութեան և հերձուածոց տարածիցեն :

Քանզի Քս̃ հովիւն մեր , որ կամեցաւ , զի որք իւրքն են , եղիցին մի հօտ , և ունիցին զմի հովիւ , եթէ զմի՛ն երևելի գլուխ և հովիւ ոչ իցէր եդեալ յեկեղեցւոջ , ո՛չ երբէք պահանջէր զմիութիւն հօտին : Քանզի որ կամի զվախճանն , այնու իսկ կամի և զմիջոցն · արդ՝ միջոց միութեան հօտի միոյ երևելւոյ , որ լինի 'ի համագումարմանց մարդկանց , է միութիւնն հովուի միոյ , որ իցէ երևելի , և իցէ մարդ : Ուրեմն հարկաւորապէս ապացուցանի՝ թէ միութիւն եկեղեցւոյ կաթուղիկէի , որ է մի հօտ Քի̃ , պարտի ունել զմի երևելի գլուխ և հովիւ · 'ի ներքոյ որոյ իցեն այլք ամենայնք եպիսկոպոսունք և վարդապետք՝ որպէս զիմաս_

մաս_

մատուռն իշխանս , և խորհրդականս ։ Եւ՛ վասն այսորիկ ամենայն վարդապետութիւնք , և բանք , և խրատք նոցին պարտին վերահայիլ առ վճիռն փոխանորդին Քի · որպէս զի մի տարաձայնիցին · և ամենայն ջատագովութիւնք , և պարզաբանութիւնք , և գրուածք , և բանք ճշմարիտ վարդապետաց պարտաւորին ջատագովել զմիութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ , և զմիութիւն գլխոյ և հովուին նորա երևելւոյ 'ի յերկրի , որ է փոխանորդ Քի հովուին և գլխոյն ամենից՝ որ է 'ի յերկինս ։

12 ։ Եւ աւելորդ 'ի նոցանէ · որդեակ, զգո՛յշ լեր 'ի տարածանելոյ զգիրս բազումս · զի ո՛չ գոյ վախճան · և խորհրդոցն բազմաց, և ջան մարմնոյ ։

Կամի ասել · որդեակ , աւելորդ 'ի նոցանէ · այսինքն աւելի , կամ՝ անդր քան զայսոսիկ բանս իմաստնոց , որք 'ի միջէ հովուէ խորհրդով խորհրդական իշխանաց նախահարց՝ և մարգարէից տուեալք եղեն , զայլս գրեանս · այսինքն զայլս արտաքին գիրս որք են բազումք , մի ստանար · այլ զգո՛յշ լեր 'ի ստանալոյ զնոսա՝ և հետևելոյ բանից նոցա ։ Զի ո՛չ գոյ վախճան նոցա · այլ վերջին վախճան մարդոյն որ է երանութիւն , առ այն վախճանն պատկանեալ բանք ո՛չ գոն 'ի նոսա ։ Աստի անվախճանք, անպտուղք, և անօ_

դուտք են այնք ամ գրեանք, յորս ած-
ային բանից բացատրութիւնք ոչ գոն։ Նաեւ
